ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

№10 (598) / 20 ՄԱՅԻՍԻ 2023Թ. / ՇԱԲԱԹ

ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՇԼԻՔԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԸ ՏԱՐԵԿԱՆ Է 70

ISSN 1829-3468

GPM GeoProMining

ZCMC ZANGEZUR ՊՂՅՈՒՆԵԼՈՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲԸ ԳԽԱՎՈՐ ԲԱԺՆԵՏԵՐԸ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՒՄ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

15 տարի՝ Հայաստանի տնտեսության առաջատարների մեջ

GPM
GeoProMining
Ռեսուրսներ ի բարօրություն
Մենք պատմություն ենք կերտում

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈՄԱՆ ԽՈՒԴՈԼԻՅ
«ՀՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

ՎԱՐԴԱՆ ՋՀԱՆՅԱՆ
«ՀՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ

ԱՐԹՈՒՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
«ՀՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ

ԱՆԴՐԵՅ ՍԻՆՅԱԿՈՎ
«ՀՊՄԿ» ՓԲԸ գործադիր տնօրեն

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
«ՀՊՄԿ» ՓԲԸ կայուն զարգացման գծով տնօրեն

ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
«ՀՊՄԿ» ՓԲԸ տեխնիկական տնօրեն

ՍԵՐԳԵՅ ՍԻԼԻՀ
«ՀՊՄԿ» ՓԲԸ կոմերցիոն տնօրեն

ՆԻԿՈԼԱՅ ՎԵԴԵՆԻՆ
«ՀՊՄԿ» ՓԲԸ ֆինանսական տնօրեն

ԵՎԳԵՆԻ ԿՈՒՆԱԿՈՎ
«ՀՊՄԿ» ՓԲԸ արտադրության գծով տնօրեն

Поздравление Романа Худолия по случаю 70-летия создания компании ЗАО «Зангезурский ММК»

РОМАН ХУДОЛИЙ
Президент ООО «Геопромайнинг»
Генеральный директор « Зангезурской ММК» ЗАО

Уважаемые коллеги и друзья, сотрудники комбината и жители этого прекрасного региона!

70 лет назад, в далеком 1952 году была заложена надежная основа для развития экономики Советской Республики Армения. Ваши соотечественники возводили гигант промышленной индустрии-Зангезурский медно-молибденовый комбинат, на долгие годы ставший основой промышленности и экономики страны и положительно повлиявший на развитие страны и жизнь многих поколений.

Вместе с комбинатом развивался и регион, менялась инфраструктура, строились образовательные, спортивные и медицинские учреждения.

Спустя 70 лет, невозможно представить регион и развитие страны без огромного вклада системообразующего предприятия.

Сегодня, флагман национальной индустрии продолжает работать и развиваться, успешно приняв все вызовы, уверенно занимает первые позиции налогоплательщика страны, обеспечивает работу для десятков тысяч граждан, выполняет важнейшую соци-

ՌՈՄԱՆ ԽՈՒԴՈԼԻՅ

«Գեոպրոմայնինգ» ընկերության նախագահ,
«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Շնորհավորանք «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հիմնադրման 70-ամյակի առթիվ

Հարգելի գործընկերներ, ընկերներ, կոմբինատի աշխատակիցներ և այս հիասքանչ տարածաշրջանի բնակիչներ

70 տարի առաջ՝ հեռավոր 1952 թվականին, Հայաստանի Խորհրդային Հանրապետության տնտեսության զարգացման համար հուսալի հիմք դրվեց: Ձեր հայրենակիցները կառուցեցին արդյունաբերական հսկան՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, որը երկար տարիներ դարձավ երկրի արդյունաբերության ու տնտեսության հիմքը և դրական ազդեցություն ունեցավ երկրի զարգացման ու բազմաթիվ սերունդների կյանքի վրա:

Կոմբինատի հետ մեկտեղ զարգացավ մարզը՝ փոխվեցին ենթակառուցվածքները, կառուցվեցին դպրոցներ, մանկապարտեզներ, բուժհաստատություններ:

70 տարի անց անհնար է պատկերացնել տարածաշրջանն ու երկրի զարգացումն առանց կոմբինատի հսկայական ներդրման:

Այսօր հանրապետության արդյունաբերության դրոշակակիրը շարունակում է աշխատել ու զարգանալ, և հաջողությամբ ընդունելով բոլոր մարտահրավերները՝ վստահորեն զբաղեցնում է երկրի հարկատուների առաջին հորիզոնականները, աշխատանք է ապահովում տասնյակ հազարավոր քաղաքացիների համար, կատարում է կարևոր սոցիալական դեր պետության

альную роль для государства и общества.

И я искренне рад, что судьба мне дает возможность работать с Вами – прекрасным рабочим коллективом ЗММК!

Дорогие коллеги!

Нам предстоит выполнить большую работу.

В ближайшие годы в рамках стратегии развития и модернизации на комбинате планируется реализовать программу, направленную на увеличение объема производства и обеспечение роста производительности.

Само время ставит перед коллективом комбината, как и перед народом Армении, стратегически важные задачи, направленные на дальнейшее повышение конкурентоспособности национальной экономики. Нам предстоит решить такие чрезвычайно актуальные вопросы, как расширение минерально-сырьевой базы производства, производство высокотехнологичной и востребованной продукции с высокой добавленной стоимостью, увеличение производительности и эффективности производства.

Уверен, что сплоченный, высокопрофессиональный коллектив комбината, его труженики, обладающие богатым опытом и мастерством, с честью справятся с выполнением этих программных задач.

С юбилеем, уважаемые коллеги!

Искренне желаю Вам, Вашим семьям, друзьям и коллегам плодотворной работы, крепкого здоровья и семейного счастья, мира и процветания этой благодатной и богатой солнечной земле. "

և հասարակության հարաճուն զարգացման գործում:

Անկեղծորեն ուրախ եմ, որ ճակատագիրն ինձ հնարավորություն է ընձեռել աշխատել ձեզ հետ՝ ՀՊՄԿ-ի հրաշալի աշխատանքային թիմի հետ:

Հարգելի գործընկերներ

Մեզ շատ աշխատանք է սպասվում:

Առաջիկա տարիներին կոմբինատի զարգացման և արդիականացման ռազմավարության շրջանակում նախատեսվում է իրականացնել ծրագիր, որը միտված է արտադրության ընդլայնմանը և արտադրողականության աճի ապահովմանը:

Այսօր ժամանակը կոմբինատի աշխատողներին և Հայաստանի ժողովրդին առաջադրում է կարևոր ռազմավարական խնդիրներ՝ ուղղված ազգային տնտեսության մրցունակության բարձրացմանը:

Մենք պետք է լուծենք այնպիսի արդիական խնդիրներ, ինչպիսիք են արտադրության հանքահումքային բազայի ընդլայնումը, բարձր տեխնոլոգիական և պահանջված արտադրանքի ստացումը՝ բարձր հավելյալ արժեքով, արտադրության արտադրողականության և արդյունավետության բարձրացումը:

Վստահ եմ, որ կոմբինատի համերաշխ, արհեստավարժ թիմը, նրա աշխատողները, ովքեր ունեն հարուստ փորձ և հմտություններ, պատվով կկատարեն իրենց վերապահված ծրագրային առաջադրանքները:

Շնորհավորում եմ հոբելյանի առթիվ, սիրելի գործընկերներ, հարգելի քաջարանցիներ:

Սրտանց մաղթում եմ ձեզ, ձեր ընտանիքներին, ընկերներին և գործընկերներին բեղմնավոր աշխատանք, քաջ առողջություն և ընտանեկան երջանկություն, խաղաղություն և բարեկեցություն այս արգավանդ և արևոտ հողում: "

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի շնորհավորանքը «ԶՊՄԿ» ՓԲԸ 70-ամյակի առթիվ

Ս եծագույն հաճույք է մեզ համար՝ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահիս, թեմական խորհրդի անդամների, հանուր հոգևորականաց դասի և Սյունյաց աշխարհի աստվածավախ զավակների անունից, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության տնօրենությանն ու ողջ աշխատակազմին հղել մեր ջերմագին շնորհավորանքները և ամենայն բարյաց մաղթանքները կոմբինատի հիմնադրման 70-ամյակի կապակցությամբ:

Լինելով Հայաստանի հանքարդյունաբերության կարևորագույն ընկերությունը և մշտապես գլխավոր դիրքեր զբաղեցնելով Հայաստանի խոշոր հարկատուների ցուցակում՝ այն տասնյակ տարիներ քրիստոսավանդ սիրով, անմնացորդ նվիրումով և արգասավոր ծառայությամբ օրինակելի ու առաջատար է եղել ոչ միայն հանքարդյունաբերության, այլև սոցիալական, կրթական, մշակութային և բնապահպանական ոլորտներում:

Անսալով առաջնորդական տեղապահիս խնդրանքին՝ կոմբինատը մշտապես հսկայական օգնություն է ցուցաբերել Սյունյաց թեմին, աջակցել առողջական խնդիրներ ունեցող մի շարք անձանց, փրկել բազմաթիվ կարիքավոր ընտանիքներին՝ տունը կորցնելու վտանգից, հովանավորել մեծ թվով ուսանողների՝ վճարելով ուսման վարձը, նպաստել թեմին կից հոգևոր-մշակութային դպրոց ստեղծելուն:

Ուստի առ ի գնահատումն անմնացորդ ծառայության՝ ջերմապես աղոթում ենք, որ Բարձրյալ Աստված քաջառողջություն, անսահման ուժ ու եռանդ պարգևի ընկերության տնօրենությանն ու աշխատակազմին, որպեսզի նույն եռանդով, սիրով ու նվիրումով այն շարունակի ծառայել մեր հզոր պետության կայացման գործին:

Թող սյունեցիների և հանուր հայության աղոթքի ուժով կոմբինատի կենսաճանապարհը հետագայում ևս նշանավորվի կայուն զարգացմամբ և անվրդով խաղաղությամբ:

ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ՝
ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

ՎԱՐԴԱՆ ՋՀԱՆՅԱՆ.

ԱՅՑԵՔԱՐՏ

2016 թվականից սերտիֆիկացված ֆինանսական վերլուծաբան է, իսկ 2014 թվականից Սերտիֆիկացված հաշվապահների ասոցիացիայի անդամ: Ունի ֆինանսական կառավարման և ֆինանսական աուդիտի 15 տարվա փորձ և վեց տարվա փորձ՝ հանքարդյունաբերության ոլորտում՝ բարձրագույն ղեկավար պաշտոններում: Մինչև ՀՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ նշանակվելը (հոկտեմբեր 2021թ.) Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի ֆինանսական տնօրենն էր՝ 2017 թվականից: Դրանից առաջ տարբեր պաշտոններում աշխատել է Deloitte-ի ԱՊՀ ստորաբաժանման հետ (2010-2017 թթ.): Վարդան Ջհանյանը հաշվապահության, վերլուծության և աուդիտի մագիստրոսի կոչում է ստացել Մոսկվայի ազգային հետազոտական միջուկային համալսարանում (MEPHI)՝ 2009 թվականին:

«Առանց զարգացած տնտեսության մենք չենք կարող ունենալ հզոր բանակ, հզոր պետություն»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Չանգեզուրի պղնձամոլիբդենայինի հիմնադրման 70-ամյակի առիթով մեր հրապարակումներում քանիցս անդրադարձ է կատարվում ընկերությունը ղեկավարող թիմին: Լեռնագործների հետ շփումներում բազմիցս գնահատանքի խոսքեր ենք լսել ընկերության կառավարումն իրականացնող պաշտոնյաների մասին: Միևնույն ժամանակ առնչվել ենք հարցերի, որոնց պատասխաններն ընկերության ղեկավարների գործառույթների տիրույթում են: Այդ իսկ պատճառով կարևորել ենք նրանց հետ հանդիպումներն ու զրույցները:

Մեր զրուցակիցն է «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ Վարդան Ջհանյանը:

– Պարոն Ջհանյան, լրացել է Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հիմնադրման 70-ամյակը: Դա, անշուշտ, նշանակալից իրադարձություն է մեր երկրի հանքարդյունաբերության ոլորտում և առաջին հերթին ընկերության այսօրվա ու նախկին աշխատակիցների կյանքում: Այդ կապակցությամբ, անկասկած, Դուք ասելիք կունենաք՝ շնորհավորանքի խոսք: Մեր զրույցը, եթե կարելի է, սկսենք այդ շնորհավորանքով:

– 70 տարին՝ անընդմեջ գործող հանքի համար, պատկառելի ժամանակահատված է: Այս ձեռնարկությունը կրել է Հայաստանի տնտեսության առաջընթացի շատ մեծ բեռ, եղել է հանքարդյունաբերության դպրոցը, եղել է աշխատավայր մի քանի սերնդի համար և շարունակում է մնալ Հայաստանի տնտեսության հենասյունը: Շնորհավորում եմ ընկերության բոլոր աշխատակիցներին՝ կոմբինատի հոբելյանական տարեդարձի առթիվ և մաղթում, որ նրանցից յուրաքանչյուրն իրապես գնահատի իր աշխատանքը և գնահատված լինի՝ իր ստեղծած արդյունքին համահունչ:

Չանգեզուրի պղնձամոլիբդենայինի աշխատակազմի շուրջ 25 %-ը կին է, և ուզում եմ նրանց առանձնահատուկ շնորհավորանք հղել ու հատկապես շեշտել, որ պետք է կոտրենք կարծրատիպերը, թե հանքարդյունաբերությունը ծանր և միայն տղամարդկանց համար նախատեսված աշխատանք է: Մեր շարքերում բազմաթիվ

Կանայք ամեն օր ապացուցում են, որ ժամանակակից հանքարդյունաբերությունը տեխնոլոգիապես հագեցած, արժանապատիվ, հետաքրքիր և անվտանգ աշխատանք է նաև կանանց համար:

Շնորհավորում եմ և շնորհակալություն հայտնում մեր բոլոր աշխատակիցներին, ովքեր սիրում ու գնահատում են Սյունիքի բնության այս հրաշալի ռեսուրսը և սիրով, պատասխանատվությամբ կատարում իրենց գործը:

– Հիմա բուն զրույցին անցնենք. որպեսզի կենտրոնանաք Ձեր պատասխանատվության ոլորտում գտնվող և մեր լսարանին հետաքրքրող հարցերի վրա՝ կուզենայինք նախևառաջ ծանոթանալ ընկերության ղեկավար օղակի կառուցվածքին՝ կառավարման խորհուրդ, տնօրենություն...Մի քանի տարի շարունակ Սյունիքում, և ոչ միայն, հանրությանն առավել հետաքրքրող հարցերից մեկը հետևյալն էր՝ ովքե՞ր են Զանգեզուրի պղնձամոլիբդենային իրական բաժնետերերը: Մոտ երկու տարի առաջ, կարծեք, այդ հարցում հստակություն մտցվեց: Եվ...

– Կարծում եմ՝ հանքարդյունաբերության ոլորտն այսօր առավել քան թափանցիկ է, քանի որ արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակում հանքարդյունաբերության ոլորտն առավել շատ տեղեկատվություն տրամադրող ոլորտներից է, եթե ոչ՝ առավելագույն: Այստեղ գաղտնիքներ չկան, և տեղեկատվությունը հրապարակային է թե՛ պետական տարբեր հարթակներում, թե՛ ԱՃԹՆ շրջանակում:

– Ընկերության 2004 թ. մասնավորեցումից հետո, փաստորեն, առաջին անգամ «ՀՊՄԿ» ՓԲ ընկերության բաժնետեր դարձավ նաև ՀՀ կառավարությունը: Նախ՝ ինչպե՞ս եք գնահատում այդ իրողությունը, և երկրորդ՝ ի՞նչ ձևաչափով է կառավարությունը մասնակցում ընկերության կառավարմանը:

– Կառավարությունը մոտ 25 տոկոսի սեփականատերն է և այդ մասնակցությամբ չի միջամտում ընկերության ամենօրյա գործունեությանը: Կարծում եմ՝ կառավարության մասնաբաժինը դրական է ոչ միայն պետության, հետևաբար նաև ժողովրդի հետ երկրի խոշորագույն ձեռնարկության սեփականատիրությունը կիսելու առումով, այլև... վերահսկող մարմինը ներսից տեսնում է բոլոր խնդիրները: Մի բան է, երբ կառավարությունը խնդիրները տեսնում է այնպես, ինչպես հասարակությունն է տեսնում, և բոլորովին այլ բան է, երբ կառավարությունն ունի նշանակված մարդիկ, ովքեր տեսնում են օբյեկտիվ իրականությունը, կատարող լուրջ բնապահպանական ծրագրերը, սոցիալական ծրագրերը, ներդրումային ծրագրերը, գնահատում են այդ ամենը, և ընդհանուր առմամբ կարողանում ավելի համապարփակ տեսնել աշխատանքը: Ամենօրյա կառավարման առումով մեծ տարբերություն չեմ տեսնում. կառավարումը, ինչպես և նախկինում, իրականացվում է հիմնական սեփականատիրոջ նշանակված ղեկավարության կողմից:

> *2021-ին պետբյուջեից պաշտպանությանն ուղղված ծախսերը եղել են* ***319 մլրդ դրամ,*** *որի կեսից ավելին ապահովել է* ***ՀՊՄԿ-ն***

– Աշխարհաքաղաքական փոփոխվող և անորոշ իրավիճակում մեր հանրապետության տնտեսվարողները բազմաթիվ խնդիրների են բախվում: Նախ՝ կարողանո՞ւմ եք հաղթահարել լոգիստիկ դժվարությունները և մատակարարումների, առաքումների հարցում անխափանություն ապահովել: Երկրորդ՝ դոլարի և եվրոյի արժեզրկման պայմաններում արդյո՞ք մեծացել են վնասների ռիսկերը. նկատի ունենք հանգամանքը, որ այդ արժույթնե-

> *...Մեր վճարած հարկերը համարժեք են պաշտպանությանն ուղղված բյուջեի կեսին, որպեսզի ավելի լավ պատկերացում լինի, թե ինչ ահռելի գումար է: Միևնույն ժամանակ, սա նաև ցույց է տալիս, թե ինչ կարևոր է եղած ռեսուրսները, այդ թվում՝ հանքարդյունաբերության ոլորտի ռեսուրսները ճիշտ օգտագործելը և զարգացած տնտեսություն ունենալը: Առանց զարգացած տնտեսության մենք չենք կարող ունենալ հզոր բանակ, հզոր պետություն:*

րով եք գլխավորապես իրացնում պղնձի և մոլիբդենի խտանյութերը:

– Ինչպես մեր ընկերությունը, այնպես էլ արտահանման ոլորտում աշխատող բազմաթիվ հայաստանյան ընկերություններ այսօր տուժում են դոլարի էժանացման հետևանքով: Երբ ընկերության եկամուտները գոյանում են ԱՄՆ դոլարով կամ եվրոյով, ծախսերը՝ աշխատավարձ, էլեկտրաէներգիայի, տրանսպորտային, լոգիստիկ և ամենօրյա այլ վճարներ, կատարվում են դրամով, ապա ընկերությունը զգալիորեն տուժում է: Ընդհանրապես դոլարի փոխարժեքի անկման հետևանքով նվազում է հայկական ապրանքների մրցունակությունը և՛ դրսի, և՛ ներսի շուկաներում, ու շատերը ստիպված թանկացնում են իրենց ապրանքները: Մեր ապրանքի դեպքում գնագոյացումը միայն մեր ցանկությունից կամ օբյեկտիվ իրավիճակից բխող պայմաններից չէ, որ կախված է. միջազգային հաստատված գներ են և, բնականաբար, դրանցից մեծ շեղումներ լինել չեն կարող: Ընդհանրապես կարող ենք արդեն իսկ արձանագրել՝ 2022-ի շահութաբերության նման մակարդակ ու հետևաբար նաև հարկային մուտքեր այս տարի ոլորտի ոչ մի ընկերություն չի ունենա, այդ թվում՝ դրամի արժևորման պատճառով:

– Որքան հիշում ենք, ընկերության նոր սեփականատերը և նոր գործադիր թիմն անդրադարձներ են կատարել ընկերությունում իրականացվելիք ներդրումային ծրագրերի վերաբերյալ: Կարո՞ղ ենք իմանալ՝ ներդրումային ի՞նչ կոնկրետ ծրագրեր կան և անցած մեկ տարվա ընթացքում որքանո՞վ են դրանք կյանքի կոչվել:

– ՀՊՄԿ-ում արդեն իսկ արվել են տասնյակ միլիոն դոլարի ներդրումներ՝ տեխնիկական վերազինման, բնապահպանական համակարգերի արդիականացման համար: Ամբողջությամբ թարմացվում է հանքաքար տեղափոխող ինքնաթափերի պարկը: Ինչ վերաբերում է ՀՊՄԿ-ից դուրս խոշոր ներդրումային ծրագրերին, ապա դա «Գեոպրոմայնինգ» ընկերությունների խմբի ղեկավարության տիրույթում գտնվող հարց է, և կարծում եմ՝ ճիշտ կլիներ, որ դրան, առիթի դեպքում, խմբի ղեկավարությունը պատասխաներ:

– Եվ, իհարկե, ընկերության դերակատարությունը մեր պետական բյուջեի համալրման գործում: Հարցազրույցներից մեկում Դուք նշել եք երկրի պաշտպանունակության ամրապնդման գործում ՀՊՄԿ-ի դերակատարության մասին: Եվ նույնիսկ օրինակ եք բերել՝ 2021-ին պետբյուջեից պաշտպանությանն ուղղված ծախսերը եղել են 319 մլրդ դրամ, որի կեսից ավելին ապահովել է

ՀՊՄԿ-ն: Ենթադրում ենք, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը շարունակում է առաջնահերթ համարել երկրի և, իհարկե, Սյունիքի պաշտպանունակության ամրապնդումը:

– Նախ դիտարկենք այն գործոնները, որոնք հնարավոր են դարձրել այդ ավելացումը՝ ՀՊՄԿ-ի հարկերի առումով: Առաջինը՝ պղնձի, մոլիբդենի գների բարձրացումն է, ինչը սկսվել է նախանցյալ տարի և շարունակվել 2022-ի առաջին կիսամյակում: Երկրորդը՝ «Հարկային օրենսգրքում» պետական տուրքեր կոնցենտրատների արտահանման համար՝ սահմանված լրացուցիչ ռոյալթին էր, ինչը նույնպես նպաստել էր աճի դինամիկային: Այդ դրույթը երկարաժամկետ առումով խնդիրներ էր ստեղծում ոլորտի համար, և լավ է, որ փոփոխվեց: Կարճաժամկետ կտրվածքում դա կնպաստի հարկային մուտքերի որոշակի կրճատմանը, բայց ոլորտի կողմից կայուն տնտեսական ներդրման առումով այդ փոփոխությունն անհրաժեշտ էր:

Եվ, անշուշտ, որոշակի վարչարարական բարեփոխումները նույնպես նպաստել են, որ մոտավորապես նույն արդյունահանման պայմաններում հարկային մուտքերը բարելավվեն:

Ինչ վերաբերում է պաշտպանության ոլորտին, ես ընդամենն օրինակ էի բերել, որ մեր վճարած հարկերը համարժեք են պաշտպանությանն ուղղված բյուջեի կեսին, որպեսզի ավելի լավ պատկերացում լինի, թե ինչ ահռելի գումար է: Միևնույն ժամանակ, սա նաև ցույց է տալիս, թե ինչ կարևոր է եղած ռեսուրսները, այդ թվում՝ հանքարդյունաբերության ոլորտի ռեսուրսները ճիշտ օգտագործելը և զարգացած տնտեսություն ունենալը: Առանց զարգացած տնտեսության մենք չենք կարող ունենալ հզոր բանակ, հզոր պետություն: Ես սա առիթ ունեցել եմ ասելու՝ եթե Հայաստանը ՀՊՄԿ-ի հզորության ևս մեկ կամ երկու ծրագիր ունենար, կունենայինք որակապես այլ տնտեսություն:

– 2020 թ. նոյեմբերի 9-ից և մասնավորապես այդ տարվա դեկտեմբերի 18-ից հետո Սյունիքի շուրջ ռազմաքաղաքական նոր իրավիճակ է ստեղծվել: Ավելին, շարունակվում են անորոշությունները մեր տարածաշրջանի շուրջ: Արդյո՞ք ստեղծված վիճակում ռիսկային չեք համարում ընկերությունում կատարվող ներդրումները, արդիականացմանն ուղղված քայլերը:

– Ոչ, մենք դա համարում ենք մեր բնականոն աշխատանքը՝ Հայաստանի ինքնիշխան սահմանների մեջ, և այդ հարցում՝ ներկա իրավիճակում, մեզ համար չկան անորոշություններ: Ընդհակառակը՝ Սյունիքում շարունակում ենք կատարել ներդրումներ և ամեն կերպ նպաստել տարածաշրջանի զարգացմանը: Կոմբինատն արդիականացվում է, և շարունակելու ենք զարգացնել հանքարդյունաբերությունը՝ լավագույն տեխնոլոգիաներ ներգրավելով: Նման գործելաոճն ինքնին, եթե նույնիսկ հաշվի չառնենք արդեն իսկ մեծ օգուտ բերող հարկերը, այս ձեռնարկության զարգացումը դարձնում է մարզի համար կարևոր ռազմավարական գործոն, որն ապահովում է հանրության զբաղվածությունը, ապահովում է ներդրումներ, տնտեսական աճ և դառնում մարզն ամրացնող կարևոր հենասյուն:

– Արտադրանքի ծավալներ, արտահանման ծավալներ. մի քանի թվեր այդ մասին, որոնց օգնությամբ կարող ենք պատկերացում կազմել ընկերության ներկայիս ամբողջական նկարագրի վերաբերյալ:

– Անցյալ տարի արդյունահանման ծավալը համապատասխանել է լիցենզիայով նախատեսված ծավալին՝ 22 միլիոն տոննա հանքաքար, ինչը 20 %-ով ավելին էր նախորդ տարվա ցուցանիշից. իհարկե, մեր ունեցած թույլտվություններին սահմաններում: Ապագայում նախատեսում ենք ընդլայնել ծավալները, բայց դա արդեն նոր լիցենզավորման կարիք կունենա: ՀՊՄԿ-ն հսկա է, որի բոլոր հնարավորությունները պետք է օգտագործել՝ պահպանելով, իհարկե, կայուն զարգացման, բնապահանական բոլոր չափանիշները:

– Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը հսկայական տնտեսություն է և, բնականաբար, չեն կարող չլինել թերություններ, դժվարություններ, բացթողումներ, որոնք Ձեզ, որպես գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, անհանգստացնում կամ մտահոգում են: Այդ մասին կուզենայինք իմանալ:

– Ինչ խոսք, արդյունաբերական հսկան, որի գործունեությունն արդեն իսկ առնչվում է բազմաթիվ ռիսկերի հետ, դժվարություններ չի կարող չունենալ: Սա բազմաշերտ և ընդգրկուն ոլորտ է՝ հատկապես ռիսկերի կառավարման առումով: Հենց դրանով էլ բարդ, ժամանակատար և ծախսատար է ժամանակակից հանքի շահագործումը: Սակայն կառավարման ճիշտ կազմակերպման դեպքում հնարավոր է ունենալ անխափան, կայուն և համաշխարհային լավագույն չափորոշիչներին համապատասխանող ձեռնարկություն: Մենք հիմա ինչ-որ իմաստով բարեփոխումների փուլ ենք անցնում, որն ամենօրյա ռեժիմով նոր, կարևոր, երբեմն հրատապ որոշումների անհրաժեշտություն է ենթադրում: Մենք տեսնում ենք 70-ամյա հանքի երիտասարդացած ապագան, և տեսնում ենք, որ հանքարդյունաբերության միջազգային փորձի ներդրմանը կարող ենք շատ շուտով հասնել, ինչը, իհարկե, մեծ ծավալի ջանքեր և ժամանակ է պահանջում:

– Կուզենայինք քննարկել նաև բնապահպանական խնդիրները. հանքարդյունաբերությունն այդ իմաստով ամենախոցելի և ամենաքննադատվող ոլորտն է:

– Բնապահպանությունը և կայուն զարգացումը հանքարդյունաբերության ոլորտում շատ տարողունակ թեմա են, և կարելի է մանրամասն ներկայացնել, թե հատկապես ինչ է անում այսօր ՀՊՄԿ-ն՝ բնապահպանական մարտահրավերների առումով: Բայց, եթե ամենակարճ պատասխանը տամ, ապա հայաստանյան օրենսդրությամբ նախատեսված բնապահպանական բոլոր պահանջները մենք կատարում ենք: Եվ այդքանով չենք բավարարվում, այլ հետևում ենք համաշխարհային միտումներին՝ բնապահպանական ռիսկերը նվազագույնի հասցնելու առումով: Պետք է ասեմ՝ միշտ չէ, երբ համացանցով կամ որևէ լրատվամիջոցով ներկայացվող խնդիրը համապատասխանում է իրականությանը: Իհարկե, չենք էլ կարող պնդել, թե խնդիրներ չկան, կան, բայց դրանք լուծելի են: Ընդ որում՝ լուծումները, ինչպես արդեն ասացի, մեծ ծախսեր են պահանջում, բայց բնապահպանական հարցերի լուծման համար երբեք ու որևէ գումար չի խնայվում: Շուտով կհայտարարվի մի քանի մեծածավալ ծրագրի մասին, որ այս ուղղությամբ իրականացվում է:

– Ադրբեջանը, փաստորեն, Հայաստանի նկատմամբ բնապահպանական տեռոր է կիրառում՝ պնդելով՝ հայկական հանքերը՝ թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում, շահագործվում են բնապահպանական լուրջ խախտումներով, և ներկայացնում են, թե դա է իրենց կողմից Լաչինի միջանցքը փակելու շարժառիթը:

– Երբ ասում եմ, որ մեր երկրի բնապահպանական խնդիրները միշտ չէ, որ ներկայացվում են գրագետ ու օբյեկտիվ ձևով, հենց դա նկատի ունեմ: Հիմա յուրաքանչյուր կեղծ տեղեկատվություն վերածվում է թշնամու կողմից սադրանքի առիթի: Ստացվում է՝ ինքներս մեր տնտեսության կարևորագույն ոլորտը վարկաբեկում ենք: Մինչդեռ, վստահաբար կարող եմ ասել, հայկական հանքավայրերը հարևանների համեմատ շատ ավելի բարձրակարգ կառավարում ունեն և բնապահպանական շատ ավելի խիստ չափանիշներով են առաջնորդվում: Ոլորտում եղած բոլոր խնդիրները պետք է վեր հանվեն գրագետ և նպատակային՝ եղած հարցերին լավագույն լուծումներ տալու, ոչ թե անհարկի, անտեղյակ և ապատեղեկատվական աղմուկով վնասելու թե՛ երկրի, թե՛ կոնկրետ այս լրջագույն ոլորտի համբավը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԱՐԹՈՒՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ.

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային իսկապես Հայաստանի տնտեսության գոհարն է»

Իր գործունեության յոթ տասնամյակը բոլորած Զանգեզուրի կոմբինատը շարունակում է աշխատանքային երթը դժվարություններով լեցուն մեր օրերում՝ ծանրակշիռ ներդրում ունենալով երկրի պետական գանձարանում և Սյունիքում սոցիալ-տնտեսական ներդաշնակություն ապահովելու գործում: Հանքարդյունաբերական հսկայի հավասարակշռված և արդյունավետ գործունեությունը պայմանավորված է նաև ընկերության նոր բաժնետերերի, ղեկավար թիմի ողջամիտ աշխատանքով: Ուստի և կոմբինատի հիմնադրման 70-ամյակի առիթով կարևոր համարեցինք զրույցների շարքը ընկերության ղեկավարների հետ:

Մեր զրուցակիցն է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Արթուր Նիկողոսյանը, ով շուրջ 30 տարվա մասնագիտական փորձ ունի լեռնամետալուրգիայի ոլորտում:

– Պարոն Նիկողոսյան, Ձեր ներկայիս կարգավիճակում առաջին հարցազրույցն է մեր պարբերականին, և չենք կարող չօգտագործել առիթն ու մեր երախտագիտությունը չհայտնել. Ձեր աջակցությամբ 2021-ին հրատարակվեց «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի՝ Շուշիին նվիրված համարը, Ձեր աջակցությամբ 2022-ին հրատարակվեց «Սյունյաց երկիր» թերթի բացառիկ համարը՝ նվիրված Արցախյան 3-րդ պատերազմում նահատակված 228 սյունեցիներին: Դրանք

ԱՅՑԵՔԱՐՏ

Արժանացել է քաղաքացիական ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճանի (2009 թ.):
2021 թվականին «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ նշանակվելուց առաջ (2017 թվական) «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ վարչական տնօրենն էր: Մինչ այդ նույն ընկերությունում զբաղեցրել է գլխավոր տնօրենի խորհրդականի պաշտոնը (2011-2017 թթ.):
Ստանձնել է մի շարք վարչական պաշտոններ՝ ՀՀ սփյուռքի նախարարության Ամերիկայի հայկական համայնքների վարչության պետ (2009-2011 թթ.), «Ակունք ֆիրմ» ՍՊԸ գլխավոր տնօրենի տեղակալ (2006-2009 թթ.), «Բելուգա» ՍՊԸ գործադիր տնօրեն (Լոս Անջելես, ԱՄՆ, 2005-2006 թթ.), «Ար ընդ Ար» ՍՊԸ գլխավոր տնօրեն (Լոս Անջելես, ԱՄՆ, 1998-2005 թթ.): Աշխատել է Լեռնամետալուրգիայի ինստիտուտում՝ ինժեներ (1996-1998 թթ.):
Արթուր Նիկողոսյանը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի լեռնամետալուրգիայի մագիստրոսի որակավորում է ստացել 2019 թվականին, ուսանել է նախ՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում բաժնում, այնուհետև՝ Լեռնամետալուրգիայի ինստիտուտի ասպիրանտուրայում (1996-1998 թթ.):

...Անցյալ տարվա կտրվածքով համայնքներում իրականացվել է ավելի քան 3 միլիարդ դրամի ծրագիր, ներառյալ՝ մարզային սուբվենցիոն ծրագրերում ՀՊՄԿ մասնակցությունը: Չկա ոլորտ, որտեղ ներդրում արած չլինենք:

իսկապես մնայուն գործեր են, որոնք պահվում են նաև մեր ազգային պահոցներում ու ընթերցվելու են գալիք սերունդների կողմից նույնպես: Մի խոսքով՝ հարգանք Ձեզ այդ ամենի համար:

– Ձեզ նույնպես շնորհակալ եմ՝ այդ կարևոր գործերը նախաձեռնելու համար: Մենք մասնակցել ենք ուժերի ներածին չափով: Կարծում եմ, իսկապես, կարևոր նախաձեռնություններ էին:

– Լրացավ Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հիմնադրման 70-ամյակը: Դա իրադարձություն է ոչ միայն հանքագործների այունիքյան ընտանիքում, այլև ամբողջ հանրապետության տնտեսական ու գործարար աշխարհում: Ձեր շնորհավորական խոսքն ընկերության աշխատակիցներին, վետերաններին և բոլոր նրանց, որոնց նվիրումի շնորհիվ կերտվել է արարման 70-ամյա ուղին:

– Ձանգեզուրի պղնձամոլիբդենայինն իսկապես Հայաստանի տնտեսության գոհարն է: Այս ձեռնարկությունը կրթել է աշխատանքի, գիտության, արդյունաբերության իրական արժեքն իմացող պրոֆեսիոնալների մի քանի սերունդ: 70 տարին պատկառելի տարիք է նույնիսկ հանքարդյունաբերական հսկայի համար: Կոմբինատն այդ տարիքին է հասել բազմաթիվ ձեռքբերումներով, հպարտ անցյալով, և վստահ եմ՝ էլ ավելի մեծ ձեռքբերումներով լի ապագայով, ու դրանում ոչ միայն մեր կոլեկտիվի, այլև Քաջարան և Կապան համայնքների մեծ ավանդը կա: Մաղթում եմ, որ հաջորդ տարիներին մենք բոլորս հպարտորեն կարողանանք ասել՝ ՀՊՄԿ-ն նաև աշխարհի ամենամոդեռն, ամենաառաջատար տեխնոլոգիաների կիրառմամբ, օրինակելի արդյունաբերողների շարքում է:

– Մեզանում քչերը գիտեն, որ Ձեր նախնիները, դեռևս 20-րդ դարասկզբին, անմիջական մասնակցություն են ունեցել մեր երկրամասի ու հատկապես Կապանի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Այդ մասին կուզենայինք մի փոքր ավելի հանգամանալից իմանալ:

– Այունիքը մայրական կողմիս հայրենիքն է, և մեր ընտանեկան պատմությունները 19-րդ դարավերջի, 20-րդ դարասկզբի Այունիքի պատմության հետ սերտորեն կապված են: Մայրս Խոջամիրյանների (Խոջամիրովների) գերդաստանից է: Մորս պապը Սմբատ Խոջամիրովն է, ով 19-րդ դարի երկրորդ կեսին Այունիքի հանքարդյունաբերության պատմության կերտողներից էր: Մասնավորապես՝ Կավարտի հանքի հայտնագործողը և դրանից սկիզբ առած մի քանի այլ հանքարդյունաբերական ծրագրերի սեփականատերը: Ընտանեկան պատմությունը, ինչպես այդ շրջանի բոլոր ձեռնարկատերերինը, հետագայում տրագիկ շրջադարձ է ունեցել՝ կուլակաթափություն, աքսոր, և այլն: Բայց մորս ընտանիքում հպարտությամբ էին հիշում, որ մեր նախնիները Հայաստանի ինդուստրիացման ակունքներում են կանգնած եղել:

Ես հանքարդյունաբերության ոլորտում պատահական մարդ չեմ, հայրս այս ոլորտում մեծ ավանդ ունի, կրթությունս նույնպես այս ոլորտում եմ ստացել: Բայց այն, որ ճակատագիրն ինձ 2011 թվականից բերեց Այունիք՝ սկզբում Ագարակի կոմբինատ, հիմա նաև՝ ՀՊՄԿ, ինձ համար խորհրդանշական է և պարտավորեցնող:

– Երբ Ձանգեզուրի կոմբինատի բաժնետոմսերի մեծ մասն անցավ նոր սեփականատիրոջը, երբ ընկերության ղեկավարումը վստահվեց Ձեր թիմին, անմիջապես ասեկոսեներ շրջանառվեցին, թե իբր աշխատողների կրճատումներ են լինելու, թե իբր ինչ-ինչ գործող սոցիալական ծրագրերից եք հրաժարվելու...

Իհարկե, ընկերությունն անմիջապես հերքեց այդ խոսակցությունների հավաստիությունը:

Ընկերությունը միշտ էլ սոցիալական որոշակի պատասխանատվություն է կրել մարզի և մասնավորապես ազդակիր Քաջարան, Կապան համայնքներում:

Հետաքրքիր է՝ որքա՞ն ներդրումներ է կատարել ընկերությունը նշված համայնքներում իրականացվող սուբվենցիոն (և ոչ միայն) ծրագրերում՝ ասենք՝ 2022-ի կտրվածքով:

Ներկայումս սոցիալական ի՞նչ ծրագրեր է իրականացնում ընկերությունը Այունիքի մարզում և մասնավորապես ազդակիր համայնքներում:

Առավել ուշագրավ ծրագրերից մի քանիսը...

– Եթե խոսենք թվերով, ապա անցյալ տարվա կտրվածքով համայնքներում իրականացվել է ավելի քան 3 միլիարդ դրամի ծրագիր, ներառյալ՝ մարզային սուբվենցիոն ծրագրերում ՀՊՄԿ մասնակցությունը: Չկա ոլորտ, որտեղ ներդրում արած չլինենք: Անցյալ տարի հիմնանորոգվեց Կապանի մարզադաշտը, իրականացվեցին բնակելի շենքերի նորոգման, մարզային ենթակառուցվածքների բարեկարգման մի շարք ծրագրեր: Ինձ համար առանձնապես գնահատելի են կրթական ոլորտում մեր ներդրումները, երիտասարդ տաղանդների աջակցությունից մինչև մարզական և մշակութային ծրագրերը, մեր նպատակը երկարաժամկետ արժեքների ստեղծումն է:

Ընդհանրապես, ես կուզեի, որ սոցիալական ներդրումների արդյունավետությունը չափվեր ոչ թե գումարով, այլ ստեղծած սոցիալական, տնտեսական արժեքով: Սոցիալական ծրագրերը չպետք է ինքնանպատակ լինեն: Կարելի է պարզապես փող բաժանել բնակիչներին, բայց դա ոչ միայն սոցիալական արժեք չի ստեղծում, այլև վնաս է թե՛ համայնքի, թե՛ երկրի համար, քանի որ արժեզրկում է աշխատանքը: Մենք պետք է բարեգործական ծրագրերից անցում կատարենք դեպի երկարաժամկետ արժեք, տնտեսական հնարավորություններ ստեղծող ծրագրերի: Հայտնի այլաբանության օրինակով՝ ձուկ բաժանելու փոխարեն ձուկ բռնել սովորեցնենք:

– Դուք համեստորեն շրջանցում եք չափազանց կարևոր մի հարց կամ մի երևույթ, որից արդարացիորեն հրաժարվեցիք ...Ձանգեզուրի կոմբինատը փաստորեն դադարեց քաղաքական գործիք կամ մահակ լինելուց այս կամ այն խմբի կամ ուժերի ձեռքում, որին մարզը բախվեց 2015-16-ից սկսած: Դա իսկապես դրվատելի է, և լիահույս ենք՝ շարունակական է լինելու՝ որքան էլ դժվար լինի նման «վարքագիծը»:

– Չէի ցանկանա որևէ քաղաքական ենթատեքստ քննարկել: Ընդհանրապես կարծում եմ, բիզնեսը՝ արդյունավետ լինելու համար, պետք է ապաքաղաքական լինի: Միակ արդյունքը պետք է լինի արդյունավետ աշխատանքը՝ բաժնետերերի, պետության, աշխատակիցների և համայնքի համար արժեքների ստեղծումը:

– Հանրությանն ամենաշատը հետաքրքրող հարցերից մեկը հետևյալն է՝ ի՞նչ սկզբունքով կամ կարգով է կատարվում նոր աշխատողների ընդունելությունը: Տեղյակ ենք՝ հենց սկզբից նախապատվություն եք տվել ՀՀ զինված ուժերից զորացրվածներին, Արցախյան 3-րդ պատերազմի մասնա-

19

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ.

«Ուզում ենք՝ մեր ծրագրերը լինեն ոչ միայն բարեգործական՝ ֆինանսական աջակցության տեսքով, այլ դառնան կայուն զարգացման հիմք»

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հիմնադրման 70-ամյակի առիթով հանդիպումների և հրապարակումների շարքը շարունակում ենք: Մեր զրուցակիցն է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ կայուն զարգացման գծով տնօրեն, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Արմեն Ստեփանյանը:

– Պարոն Ստեփանյան, Դուք համակարգում եք «ՁՊՄԿ» ՓԲ ընկերության կայուն զարգացման ճյուղը, և բնապահպանական, աշխատանքային անվտանգության ու կառավարչական խնդիրներին անդրադառնալու առիթ կունենանք ապագայում: Այսօր մեր զրույցի թեման «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամն է, որն արդեն իսկ հեղինակավոր կառույց է ոչ միայն Զանգեզուրի կոմբինատի տիրույթում, այլև ամբողջ Սյունիքի մարզի սոցիալական ոլորտում:

Կուզենայինք նախևառաջ ծանոթանալ 2015 թվականին ստեղծված հիմնադրամի նպատակներին, գործունեության հիմնական ուղղություններին և առաքելությանն ընդհանրապես:

– Հիմնադրամի հիմնական նպատակն ու առաքելությունը սոցիալական զարգացման, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացումն է: Մենք մանրամասն ընտրում ենք բոլոր ծրագրերը և նախապատվություն տալիս այն նախաձեռնություններին, որոնք բարեգործական բնույթից բացի կարող են նաև ապահովել կայուն և շարունակական զարգացում: Առողջապահություն, կրթություն, սպորտ, մշակույթ. համայնքային զարգացման տարբեր ծրագրեր ունենք: Անցած տարվա ընթացքում հիմնադրամն իրականացրել է գրեթե երեք միլիարդ դրամի ամենատարբեր ծրագրեր:

Անձամբ ինձ համար շատ կարևոր են երեխաների և երիտասարդ սերնդի համար կատարվող ներդրումները. առողջապահությունը, մշակույթը, սպորտը պետք է հնարավորինս մատչելի և հասանելի լինեն երիտասարդներին, ու մեր ծրագրերը պետք է աջակցեն այնպիսի միջավայրի ձևավորմանը, որ երիտասարդները մնան համայնքում, իրենց ապագան կապեն Սյունիքի հետ:

Այս առումով կարևոր եմ համարում բարեգործությունից՝ երկարաժամկետ սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքային ծրագրերին անցնելը: Բարեգործությունը դեռ երբեք և ոչ մի տեղ երկարաժամկետ բարիք չի ստեղծել: Մենք պետք է խրախուսենք այնպիսի ծրագրեր, որոնք ստեղծում են կայուն արժեք, աշխատատեղ, զբաղվածության հնարավորություն, տալիս են կրթություն: Նոր ծրագրերի պարագայում շեշտը փորձում ենք դնել համայնքային զարգացման ավելի կայուն՝ լայնածավալ ծրագրերի վրա, որոնց արդյունքում համայնքը կունենա լրացուցիչ եկամուտ ստեղծելու հնարավորություն, ոչ թե կստանա փոքր ֆինանսական օգնություն: Վստահ եմ՝ արդյունքներն ավելի գոհացուցիչ կլինեն կայուն ծրագրերի դեպքում, և մեծամասնությունը կնգտի հենց նման ծրագրեր ունենալ, ոչ թե բարեգործական օգնության սպասել:

– Հիմնադրամը գործունեության կարևոր ոլորտներ է ընդգրկում, ինչը, բնականաբար, ֆինանսական լուրջ ծախսեր է ենթադրում: Ֆինանսական ի՞նչ աղբյուրներից է ձևավորվում հիմնադրամի բյուջեն:

– Հիմնադրամի միակ նվիրատուն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է, ամբողջ բյուջեն ձևավորվում է բացառապես կոմբինատի ներդրումից: Կարծում ենք՝ արդյունավետ կլինի, եթե հիմնադրամին հանգանակություններ անեն նաև ՁՊՄԿ-ի կապալառու կազմակերպությունները, հատկապես նրանք, որոնք իրենց գործունեությունը ծավալում են Սյունիքում:



Արմեն Ստեփանյանը շուրջ 22 տարվա փորձ ունի բնապահպանական, սոցիալական և առողջապահական ու անվտանգության կառավարման, կայուն զարգացման և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտներում: Մինչև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավար թիմին միանալը (2022 թ.)՝ եղել է «Պետրոպավլովսկ» ԲԲԸ (Ռուսաստանի Դաշնություն) շրջակա միջավայրի կառավարման գծով տնօրենը: 2007-2021 թթ. աշխատել է «Լիդիան Ինթերնեյշնլ» ընկերությունում՝ կայուն զարգացման գծով ավագ փոխնախագահ: Հանքարդյունաբերության

Մինչև 2023 թվականը ՁՊՄԿ-ն սոցիալական պատասխանատվության շրջանակում տարբեր ծրագրեր էր իրականացնում նաև հիմնադրամից դուրս: Դա հսկայական ներդրում էր Սյունիքի զարգացման ուղղությամբ: 2023 թվականից սկսած բոլոր ներդրումներն իրականացվելու են բարեգործական հիմնադրամով:

– Հիմնադրամը ժամանակին ստեղծել է մի քանի ընկերություն՝ «Գանձասար-Կապան ֆուտբոլային

ոլորտ տեղափոխվելուց առաջ աշխատել է Հայաստանի միջուկային անվտանգության պետական կարգավորման կոմիտեում և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում: Արմեն Ստեփանյանը տեխնիկական գիտությունների թեկնածու է, ունի Բիզնես կառավարման մագիստրոսի կոչում՝ Հայաստանի ամերիկյան համալսարանից, ճարտարագիտության մագիստրոսի կոչում՝ շրջակա միջավայրի ճարտարագիտության ոլորտում, և բակալավրի կոչում՝ քիմիական ճարտարագիտության ոլորտում՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանից: Մասնակցել է միջազգային տարբեր դասընթացների՝ բնապահպանական, սոցիալական կառավարման, առողջապահական և անվտանգության, մարդու իրավունքների և կառավարչական ոլորտներում: Գիտական ինը հոդվածի և Հայաստանի Հանրապետության երեք պատենտի հեղինակ է:

ակումբ» ՍՊԸ, «Քաջարանի կինոթատրոն» ՍՊԸ...

Ուրիշ ի՞նչ ենթակառույցներ է ստեղծել հիմնադրամը, և արդյո՞ք այդ ընկերությունները կամ կառույցները շարունակում են գործել:

– Այն կազմակերպությունները, որոնք ստեղծվել են կամ ձեռք են բերվել հիմնադրամի աջակցությամբ և հիմա շարունակում են գործել, ստանում են կայուն ֆինանսավորում: Դրանց շարքում են «Սյունիք» հեռուստատեսությունը, «Սյունիք» ֆուտբոլային ակումբը, Սյունիքի օդակայանը, այլ կազմակերպություններ, և դրանց գործունեությունից շահույթ չենք ստանում: Միևնույն ժամանակ հետաքրքրված ենք, որ հիմնադրամի հովանավորության ներքո գտնվող ընկերությունները կարողանան ինքնուրույն աշխատել, և դրա համար մեր ջանքերն ուղղված են զարգացման ծրագրերին: Իդեալական տարբերակն այն է, երբ այդ կազմակերպությունները ժամանակի ընթացքում կայանան, ձեռք բերեն ինքնուրույնություն և աջակցության կարիք չզգան, դեռ ավելին՝ իրենք աջակցեն այլ նորաստեղծ կազմակերպություններին: Դա է պատճառը, որ մեզ համար կարևոր է, թե ինչպես են կառավարվում մեր հովանավորության ներքո գտնվող ընկերությունները, որքանով հասցեական և արդյունավետ են ծախսվում հատկացված գումարները, ինչ հիմքեր են ստեղծվում հետագա զարգացման համար:

– Ի՞նչ ճակատագիր ունեցավ «Սյունիք» օդանավակայանի կառուցումը:

– «Սյունիք» օդանավակայանի վերակառուցման ծրագիրն ամբողջությամբ իրականացվել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ ֆինանսավորմամբ: 2020 թ. նոյեմբերից օդանավակայանը ՀՀ ՔԱԿ-ի կողմից ստացել է համապատասխան սերտիֆիկատ և, կարելի է ասել, պատրաստ է շահագործման: Բայց, ինչպես հայտնի է, կան մի շարք խնդիրներ, որոնք այժմ թույլ չեն տալիս, որ օդանավակայանը գործարկվի: Պետք է սպասել. այս պահին ամենակարևոր հարցն անվտանգությունն է, և քանի դեռ որևէ բան կարող է խանգարել դրան՝ օդանավակայանի շահագործումը պետք է հետաձգվի:

– Դատելով հիմնադրամի հաշվետվություններից՝ ծախսերի ամենամեծ պատառն ուղղված է եղել սպորտին: Մի փոքր հանգամանալից՝ սպորտին ցույց տրվող աջակցության և դրա արդյունքների մասին:

– Մենք համախմբում ենք սպորտի նկատմամբ հետաքրքրություն ունեցող երիտասարդներին, նրանց առաջնորդող մարզիչներին և առողջ ապրելակերպով հետաքրքրված ոչ պրոֆեսիոնալներին: Մենք նախանձախնդիր ենք, որպեսզի առողջ ապրելակերպն ու սպորտը մարզի բնակիչների համար դառնան մշակույթ և համարվեն առաջնային:

Սյունիքում ու հատկապես Կապանում ֆուտբոլային հարուստ ավանդույթներ կան, և սխալ կլինի այդ ներուժը չօգտագործել: Այդ հանգամանքն ակնառու է, և կատարված ընդհանուր ներդրումներն արդեն արդյունք են տալիս: Բացի պրոֆեսիոնալ թիմից, «Սյունիք» ֆուտբոլային ակումբում պարապում են մարզի ավելի քան 300 երեխա ու պատանի: Հպարտ եմ հատկապես այն փաստով, որ ակումբը ֆուտբոլով զբաղվելու հնարավորություն է տալիս նաև հաշմանդամություն ունեցող անձանց:

Լուրջ հաջողություններ են գրանցում նաև մենապայքարային մարզաձևերը: Միայն մեկ օրինակ՝ փետրվարին Խորվաթիայում տեղի ունեցավ քիք-բոքսինգի Եվրոպայի գավաթի խաղարկությունը, Հայաստանից միայն Կապանի ակումբն էր մեկնել Եվրոպա, և մեր տղաները միանգամից տասը մեդալ բերեցին, որից՝ երկու ոսկի, մեկ արծաթ և յոթ բրոնզ:

– Բնակչության առողջության պահպանումը, սոցիալական աջակցությունը հիմնադրամի գործունեության այն ոլորտ-

ներից են, որ առավելապես հետաքրքրում են մարդկանց: Այդ մասին կուզենայինք իմանալ, նաև այն մասին, թե ովքե՞ր կարող են լինել տվյալ ծրագրերի շահառուներ:

– Այո, առողջապահությունը մեզ համար ամենաառաջնահերթ դիտարկվող ոլորտն է: Կարծում եմ՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինն իր աշխատակիցների համար լավագույն առողջապահական փաթեթ առաջարկող ընկերություններից է Հայաստանում, եթե ոչ՝ լավագույնը: Ընդ որում՝ փաթեթները ներառում են ընտանիքի բոլոր անդամներին: Հիմնադրամը ֆինանսավորում է բոլոր այն ծախսերը, որոնք ներառված չեն առողջապահական փաթեթում: Այսինքն մտածված է այնպես, որ յուրաքանչյուր պարագայում աշխատակիցն ու նրա ընտանիքի անդամները կարողանան ստանալ բարձրակարգ առողջապահական ծառայություն: Ընկերության աշխատակիցները տարին մեկ անգամ անցնում են բժշկական համապարփակ հետազոտություն: Դա էապես բարձրացնում է հիվանդությունների կանխարգելման ցուցանիշը: Եվ արվում է մի քանի նպատակով՝ ընկերությունն ուզում է, որ մեզ մոտ աշխատելու ձգտեն երկրի և մարզի լավագույն կադրերը, լավագույն մասնագետները. աշխարհում ընդունված է կադրերին նաև այս կերպ խրախուսել: Բացի այդ, լավագույն բուժումը կանխարգելումն է: Որակյալ առողջապահական ծառայությունը լավ առողջության գրավականն է: Լավ առողջության համար անհրաժեշտ են ներդրումներ: Հակառակ տարածված միֆերի, կյանքի տևողությունը կախված է առաջին հերթին որակյալ առողջապահությունից: Կուսական բնության մեջ ապրող մեր նախնիների կյանքի միջին տևողությունն ընդամենը 100 տարի առաջ մոտ 50 տարի էր: Այսօր 70 տարի է, և դա հնարավոր է դարձել որակյալ առողջապահության շնորհիվ:

Մենք լուրջ ներդրումներ ենք անում նաև մարզի առողջապահական ոլորտի զարգացման ուղղությամբ, ինչը մարզի բնակիչներին հնարավորություն է տալիս՝ խնդիրների դեպքում բուժում ստանալ այստեղ և չմեկնել մայրաքաղաք:

Առանձին ծրագրեր կան հաշմանդամություն ունեցող անձանց ու սոցիալապես անապահով խավերի համար:

– Ուրիշ ի՞նչ ծրագրեր է իրականացնում հիմնադրամը: Հետաքրքիր է հատկապես կրթության և մշակույթի ոլորտը:

– Հիմնադրամի միջոցներով առաջին հերթին ֆինանսավորվում են աշխատակիցների և նրանց ուսանող զավակների կրթավճարները՝ բոլոր մասնագիտություններով: Դա շատ կարևոր նախաձեռնություն եմ համարում, քանի որ կրթավճարները բարձր են, և միշտ չէ, որ ծնողները կարողանում են դա ապահովել իրենց զավակների համար: Բայց, միևնույն ժամանակ, անարդար է, երբ լավ սովորող և վատ առաջադիմություն ունեցող ուսանողները հավասար ֆինանսավորում են ստանում: Սկսել ենք վերանայել մեր մոտեցումը և հրաժարվել բոլորին, ամբողջ ծավալով ու բոլոր մասնագիտություններով ֆինանսավորելու գործելաոճից և կկիրառենք բարձր առաջադիմություն ունեցողներին խրախուսելու սկզբունքի գործելակերպը: Ամբողջական ֆինանսավորում կստանան ուսանողները, ովքեր լուրջ մոտեցում ունեն կրթությանը: Լավ սովորելը որպես երախտագիտություն ենք ընդունում և, կարծում եմ, կշարունակենք նրանց հետ մեր համագործակցությունը: Այդպես ավելի արդար և ավելի նպատակային կլինեն մեր ներդրումները, բացի այդ՝ ուսանողները շահագրգռված կլինեն լավ սովորել:

– Ենթադրում ենք՝ հիմնադրամը ծրագրեր է իրականացրել և իրականացնում Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված այունեցիների ընտանիքների, վիրավորների աջակցության ուղղությամբ: Նույնը՝ նաև 2022 թ. սեպտեմբերյան իրադարձություններից տուժածների առումով: Ի՞նչ կկամենայիք ասել այդ ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

– ՀՊՄԿ-ն միշտ՝ դեռևս 2016 թվականի քառօրյա պատերազմից սկսած, բավականին մեծ աշխատանքներ է իրականացնում այդ ուղղությամբ, դա մեր պարտքն ու պարտականությունն ենք համարել և համարում, ու դրան վերաբերվում ենք մեծ պատասխանատվությամբ և հոգատարությամբ: Առ այսօր ՀՊՄԿ հիմնադրամի աջակցությունից օգտվում է 47 ընտանիք, և հատկացվել է ավելի քան 377 միլիոն դրամ: Այլ աջակցություն ևս ցուցաբերվում է, բայց չէի ցանկանա շատ մանրամասներ ներկայացնել, ուղղակի կարող եմ ասել՝ սերտորեն համագործակցում ենք մարզպետարանի հետ և աշխատում ենք Ձեր նշած խնդիրների լուծմանն ուղղված բոլոր հայտերը բավարարել:

– 2022 թ. դեկտեմբերի 12-ից հայոց Արցախը բլոկադայի մեջ է. շրջափակված է Արցախը Հայաստանի Հանրապետությանը կապող միակ մայրուղին՝ Լաչինի միջանցքը: Եվ բազմաթիվ արցախցիներ մինչև հիմա չեն կարողանում Հայաստանից վերադառնալ Արցախ: Նրանց մեծ մասն ապաստան է գտել Այունիքում, մասնավորապես Գորիսում:

Որքան տեղյակ ենք՝ այդ մարդկանց ճակատագրերն անտարբեր չեն թողել նաև հիմնադրամին և ընդհանրապես «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությանը:

– Այդ հարցը ևս, բնականաբար, մեր ուշադրությունից դուրս մնալ չէր կարող, և անցած ամիսների ընթացքում մասնակցություն ենք ունեցել այդ ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանը: Այդ ծրագրերն իրականացվում են մարզպետարանի միջոցով, քանի որ դա թե՛ ավելի արդյունավետ է, թե՛ ավելի հասցեական:

– Կյանքը ցույց է տվել, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը պահանջված կառույց է Այունիքում: Արդյո՞ք ունեք ծրագրեր հիմնադրամը հզորացնելու, հիմնադրամի գործառույթների շրջանակն ու աշխարհագրությունը (Այունիքի մարզի կտրվածքով) ընդլայնելու ուղղությամբ:

– Վերանայում և մշակում ենք աջակցություն տրամադրելու ընդհանուր կանոնները, որպեսզի հնարավորինս թափանցիկ, հաշվետվողական ու հասցեական լինի բարեգործությունը: Եվ, բնականաբար, երբ արդյունքները չափելի են, կարողանում ենք գնահատել նաև ծախսերի արդյունավետությունը: Ուզում ենք՝ մեր ծրագրերը լինեն շարունակական, հնարավորինս կենտրոնացած լինեն ազդակիր համայնքներում կամ Այունիքի մարզում, և իրենց բնույթով լինեն ոչ միայն բարեգործություն՝ ֆինանսական աջակցության տեսքով, այլ դառնան կայուն զարգացման հիմք, նոր հնարավորություններ ստեղծեն, նոր հեռանկարներ բացեն շահառուների ու համայնքների համար:

– Եվ, իհարկե, օգտվելով այս զրույցի ընձեռած հնարավորությունից, մեր խմբագրակազմի երախտագիտությունն ենք փոխանցում հիմնադրամին, անձամբ Ձեզ՝ «Այունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդեսի 2022-ի գործունեությանն աջակցելու համար, որի արդյունքում հրատարակվեց հանդեսի չորս համար՝ հանրագիտարանային և սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող:

– Ուրախ ենք՝ օգտակար լինելու համար, հատկապես, որ «Այունյաց երկիր»-ը մարզի միակ տպագիր պարբերականն է, հետևաբար դա կարևոր նշանակություն ունեցող աշխատանք է, ուստի Ձեր ջանքերի համար մենք նույնպես շնորհակալ ենք:

– Ուզում ենք նաև հույս հայտնել, որ Այունիքի մշակութային ժառանգության հանդեպ և այդ ժառանգության հետագա հանրայնացման հարցում հիմնադրամի հետաքրքրվածությունը չի նվազի:

– Անշուշտ, երբեք չի նվազի:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «Մինչև 2041 թ. հանքաքարի արդյունահանումը կատարվելու է այս պահին գոյություն ունեցող բացահանքում՝ առանց այն ընդլայնելու»

Արման Վարդանյանը (ծնված 1981 թ.) մասնագիտությամբ երկրաբան է, երկրաբանական գիտությունների թեկնածու, ունի օգտակար հանածոների հետախուզման և արդյունահանման բնագավառում 21 տարվա աշխատանքային փորձ, տևական ժամանակ զբաղվել է գիտահետազոտական գործունեությամբ: 2016-ից աշխատում է ԶՊՄԿ-ում, նախ՝ ընկերության գլխավոր տնօրենի խորհրդական, ապա՝ Լեռնային պլանավորման դեպարտամենտի ղեկավար, 2022-ի մայիսից՝ ընկերության տեխնիկական տնօրեն:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեության մասին պատկերացումն ամբողջական չի լինի, եթե լույս չսփռվի Քաջարանի հանքային դաշտին ու գործող հանքավայրին, դրանց ծագումնաբանությանն ու հետազոտման պատմությանը, իրականացվող հետախուզական աշխատանքներին, բացահանքի աշխատանքների պլանավորմանն ու պայթեցումների բացասական հետևանքների նվազեցմանը, դատարկ ապարների լցակույտերի տեղի ընտրությանը և երկրաբանությանն առնչվող մյուս հարցերին:

Մեզ հետաքրքրող այդ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով զրուցեցինք «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրեն Արման Վարդանյանի հետ:

– Պարոն Վարդանյան, կուզենայինք նախևառաջ ծանոթանալ ընկերության տեխնիկական տնօրենի գործառույթներին, ո՞ր ենթակառույցներն են գտնվում տեխնիկական տնօրենի ենթակայության ներքո կամ համակարգվում Ձեր կողմից:

– Տեխնիկական տնօրենը, որպեսզի պարզ լինի, նախկին խորհրդային համակարգում՝ ձեռնարկության գլխավոր ինժեներն էր կամ գլխավոր ճարտարագետը: Համակարգում եմ լեռնատեխնիկական ծառայության, զարգացման ծրագրերի դեպարտամենտի, երկրաբանահետախուզական ծառայության աշխատանքները և լաբորատորիաների գործունեությունը:

– Ի՞նչ է իրենից այսօր ներկայացնում Քաջարանի հանքային դաշտը և՛ տարածքի, և՛ պարունակության տեսակետից:

– Հանքային դաշտը լայն հասկացություն է. Քաջարանի հանքային դաշտը զբաղեցնում է մոտ 200 քառակուսի կիլոմետր տարածք և ներառում է մի շարք հանքավայրեր ու հանքերևակումներ, այդ թվում՝ Քաջարանի պղինձ-պորֆիրային հանքավայրը:

Մեր գործունեությունն առնչվում է Քաջարանի հանքավայրին, որը զբաղեցնում է մոտավորապես վեց քառակուսի կմ տարածք:

Քաջարանի հանքավայրի պաշարները վերջին անգամ հաստատ-

...Պայթեցումների ճիշտ նախագծումը և մոդելավորումը թույլ են տալիս նվազագույնի հասցնել պայթեցումների հետևանքով առաջացող վիբրացիաները. այնպես է նախագծվում հորատանցքերի պայթեցման հաջորդականությունը, որ տվյալ բլոկի, օրինակ, 100 հորատանցքը միաժամանակ չեն պայթում, և ցանկացած երկու հորատանցքի պայթյունների միջև կա առնվազն 25 միլիվայրկյան ընդմիջում: Սա էականորեն նվազեցնում է ցնցումները բացահանքում և հարակից գոտիներում:

Վել են 2006 թվականին, վերջերս նորից վերահաշվարկ ենք կատարել, որի արդյունքները փորձաքննության փուլում են՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում: Ըստ այդ վերահաշվարկի՝ հանքաքարի գնահատված պաշարները կազմում են մոտ երկու միլիարդ տոննա:

Սրան զուգահեռ կատարվում է նաև պաշարների գնահատում միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան: Այդ աշխատանքները պատվիրվել է WSP ընկերությանը, որն այժմ լեռնահանքային ոլորտի՝ աշխարհում ամենամեծ խորհրդատվական ընկերությունն է: Սպասվում է, որ պաշարների գնահատման վերջնական հաշվետվությունը պատրաստ կլինի առաջիկայում:

– Ի՞նչ է իրենից ներկայացնում Ձեր կողմից նշված միջազգային ստանդարտը: Ի՞նչ է դա նշանակում Քաջարանի հանքավայրի համար:

– Այն կանադական ազգային ստանդարտ է, սակայն ընդունված է ամբողջ աշխարհում: Հանքավայրերի գնահատման այդ ստանդարտը մշակվել է 1997 թ. տեղի ունեցած՝ այսպես կոչված «Bre-X» սկանդալից հետո՝ հանքավայրերի չհիմնավորված գնահատականներից ներդրողներին պաշտպանելու նպատակով: Այդ ստանդարտով կանոնակարգվում է պաշարների գնահատումը՝ սկսած հորատումից, նմուշարկումից, նմուշների փաթեթավորումից, լաբորատոր անալիզների վերահսկումից մինչև տնտեսական և երկրաբանական հաշվարկներ:

Մինչ այդ՝ Կանադական «Bre-X Minerals» ընկերությունը կեղծ տվյալներ ներկայացնելով՝ Ինդոնեզիայում գնահատել էր ոսկու հսկայական հանքավայր՝ 6200 տոննա ոսկու պաշարով, ինչն այդ ժամանակվա համաշխարհային հաստատված պաշարների ութ տոկոսն էր կազմում: Ընկերության կապիտալիզացիան՝ չհիմնավորված այդ գնահատականի շնորհիվ, անցել էր վեց միլիարդ դոլարը: Կեղծիքը բացահայտվելուց հետո տեղի ունեցավ սկանդալ Տորոնտոյի արժեթղթերի բորսայում, և բազմաթիվ ներդրողներ ակնթարթորեն կորցրեցին իրենց ներդրումները:

Ի դեպ, նկարագրածս դեպքերի մասին ֆիլմ կա նկարահանված 2016 թվականին, կոչվում է «Ոսկի», մեր ոլորտով հետաքրքրվողներին խորհուրդ կտամ դիտել:

Այս պահանջներին համապատասխան պաշարների գնահատում ունենալը Քաջարանի համար կնշանակի, որ այդ պաշարների քանակն ու որակը յուրաքանչյուր միջազգային ֆինանսական ու ներդրումային կառույցի համար կլինեն միանշանակ հավաստի:

– Տարիներ առաջ, օրինակ, տեսակետ էր շրջանառվում, թե աշխարհի մոլիբդենի պաշարների մոտ ութ տոկոսը հենց այդ հանքավայրում է, թե Քաջարանի հանքավայրի շահագործումը կբավականացնի երկու հարյուր տարի և ավելի:

– 2021 թ. դրությամբ մոլիբդենի համաշխարհային պաշարները գնահատվել են մոտ 16 մլն տոննա: Քաջարանի հանքավայրում մոլիբդենի պաշարները կազմում են դրանց մոտ հինգ տոկոսը: Սակայն տարեկան մենք արտադրում ենք մոլիբդենի համաշխարհային արտադրանքի երեք տոկոսից մի փոքր ավելի:

Հայաստանն այդ ցուցանիշով աշխարհում 6-րդ տեղն է զբաղեցնում: Առաջին տեղում Չինաստանն է՝ համաշխարհային արտադրանքի ավելի քան 40 %-ով:

Քաջարանի հանքավայրը շահագործվում է արդեն 70 տարի, և, ինչպես արդեն նշեցի, Քաջարանի հանքավայրի պաշարներն այս պահի դրությամբ մոտ երկու միլիարդ տոննա են կազմում, ինչը նշանակում է, որ ներկա արտադրողականության պայմաններում հանքավայրի պաշարները կբավարարեն ևս 100 տարի, ու հանքավայրի կյանքի ընդհանուր տևողությունը կլինի 170 տարի, եթե, իհարկե, մինչ այդ նոր պաշարներ չհայտնաբերենք Քաջարանի հանքային դաշտում:

Պետք է նշեմ, որ Քաջարանի հանքավայրից օգտակար հանածոների արդյունահանման գործող թույլտվության համաձայն՝ մինչև 2041 թ. հանքաբարի արդյունահանումը կատարվելու է այս պահին գոյություն ունեցող բացահանքում՝ առանց այն ընդլայնելու:

– Մեր ընթերցողին կարող են հետաքրքրել նաև բացահանքում իրականացվող պայթեցումները: Որքան գիտենք, նույնպես Ձեր համակարգման ոլորտն է: Արդյո՞ք տարիների ընթացքում փոխվել է պայթեցումների տեխնոլոգիական պրոցեսը:

– Այո, հորատապայթեցման աշխատանքների նախագծումները ևս կատարվում են մեզ մոտ՝ լեռնատեխնիկական ծառայության պլանավորման և նախագծման բաժնում: Կարելի է ասել՝ դա շահագործման սկիզբն է, ամեն ինչ սկսվում է այդտեղից:

Ըստ նախօրոք հաստատված արդյունահանման պլանի՝ առանձնացվում են օպտիմալ պայթեցման բլոկներ տվյալ ամսվա համար, և կազմվում է դրանց պայթեցման ժամանակացույցը: Պայթեցնողներն ըստ անձնագրի սխեմայի՝ կատարում են լիցքավորում, և պլանավորված օրն իրականացնում պայթեցումը:

Մի խոսքով՝ մենք նախագծում ենք, բացահանքում էլ իրականացվում է:

Բավականին պատասխանատու գործ է և՛ մեզ համար, և՛ բացահանքի:

Տեխնոլոգիական պրոցեսի մեջ, անշուշտ, փոփոխություններ կատարվել ու կատարվում են. նոր նյութեր, պայթեցման նոր միջոցներ՝ գործընթացն ավելի անվտանգ դարձնող և ավելի քիչ հետևանքներ առաջացնող: Այժմ փորձնական ներդնում ենք այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտան մինչև 20 % պակաս պայթուցիկ կիրառելով ստանալ նույն արդյունքը: Բացի դա, պայթեցումների ճիշտ նախագծումը և մոդելավորումը թույլ են տալիս նվազագույնի հասցնել պայթեցումների հետևանքով առաջացող վիբրացիաները. այնպես է նախագծվում հորատանցքերի պայթեցման հաջորդականությունը, որ

20

ԱՐԹՈՒՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ.

«Զանգեզուրի պղնձամոլիբդենայինն իսկապես Հայաստանի տնտեսության գոհարն է»

13

կիցներին, ինչը, միանշանակ գնահատելի է: Բայց, դատելով վերջին իրադարձություններից, դեռևս կան զորացրվածներ կամ 44-օրյա պատերազմի մասնակիցներ, ովքեր կուզենային կենսաթոշակի անցած լեռնագործների տեղը զբաղեցնել, ասել է թե՝ աշխատանքի ընդունվել:

– Անցյած տարվա ընթացքում մոտ 500 նոր աշխատակից է միացել կոմբինատին, որոնցից 45-ը՝ նոր զորացրված երիտասարդներ: ՀՊՄԿ-ն միշտ եղել է տեղի երիտասարդների համար ամենացանկալի գործատուն, երկարամյա լավ մասնագիտական կարիերա կերտելու լավագույն հնարավորությունը, և դա այդպես է լինելու միշտ: Սակայն չէի ցանկանա, որ աշխատանքի տեղավորումը դառնար բացառապես սոցիալական խնդիր լուծելու գործիք: Թե՛ մարզի, թե՛ համայնքի, թե՛ կոմբինատի համար կարևոր է, որ այդ գործընթացը լինի թափանցիկ և հիմնված լինի մասնագիտական արժանիքների գնահատման վրա: Ես ուզում եմ, որ հարցի պատասխանը, թե ինչո՞ւ է այսինչը կամ այնինչն աշխատում կոմբինատում, լինի այդ մարդու մասնագիտական արժանիքները կամ կրթական հաջողությունները:

Այս պահին աշխատում ենք համապարփակ մարդկային ռեսուրսների քաղաքականություն մշակելու ուղղությամբ, որի հիմնական նպատակը պետք է լինի հենց այն, ինչ արդեն նշեցի:

– Ամիսներ առաջ ընկերությունը հայտարարություն տարածեց առ այն, որ մտադիր եք դպրոցականների ճամբար կառուցել և, եթե չենք սխալվում, շինարարական կազմակերպություն ընտրելու համար մրցույթ հայտարարվեց: Դա շատ կարևոր հարց է, քանզի տասնամյակներ շարունակ կոմբինատի ճամբարում են մարզի փոքրիկները հանգստացել ամառային արձակուրդներին: Ի՞նչ ընթացքի մեջ է դպրոցական ճամբարի կառուցման ծրագիրը:

– Ծրագիրն ընթացքի մեջ է: Մասնավորապես իրականացվում է նախագծերի մրցույթ: Ներկայացված տարբերակներից լավագույնն ընտրելուց հետո արդեն կանցնենք հաջորդ փուլին: Սա այն նախագիծն է, որն իսկապես օգտակար, արդյունավետ և ընդունելի պետք է լինի ողջ համայնքի համար, և շտապողականություն չենք դրսևորում: Ուզում ենք, որ ներկայացվի և հաղթի իրապես լավագույն նախագիծը:

– Եվ վերջին թեման, որ կուզենայինք արծարծել. մի քանի խոսք, խնդրեմ, ընկերության կողմից անցկացվող մրցույթների մասին՝ և՛ նյութատեխնիկական մատակարարման, և՛ բեռնափոխադրումների, և՛ ամենատարբեր ծառայությունների մատուցման առումով. թափանցիկություն, օբյեկտիվություն, տեղական հնարավորությունների օգտագործում...

– Թափանցիկությունը, գնումների, մատակարարումների մրցույթների օբյեկտիվությունը նախ և առաջ անհրաժեշտ են հենց ընկերությանը, հենց աշխատանքի արդյունավետության, լավագույն առաջարկը լավագույն գնով ապահովելու համար: Դա նախ և առաջ կոմբինատի բաժնետերերի, հետևաբար նաև՝ պետության շահից է բխում, քանի որ որքան արդյունավետ աշխատի ընկերությունը, այնքան մեծ կլինի տնտեսական արդյունքը, այդ թվում՝ հարկային մուտքերի տեսքով: Այդ առումով մենք մտադիր ենք հիմնավոր լուծում տալ խնդրին և այժմ աշխատում ենք գնումների ու մատակարարումների մրցույթների ավտոմատացված, թվայնացված առցանց համակարգի ստեղծման վրա: Հույս ունեմ, որ մինչև այս տարվա կեսը կգործարկենք համակարգը, որի արդյունքում հետայսու բոլոր մրցույթները թափանցիկ և հասանելի կլինեն բոլորի համար, իսկ ընտրության չափանիշը կլինի մեկը՝ լավագույն գին-որակ համադրությունը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ.
«Մինչև 2041 թ. հանքաքարի արդյունահանումը կատարվելու է այս պահին գոյություն ունեցող բացահանքում՝ առանց այն ընդլայնելու»

19 տվյալ բլոկի, օրինակ, 100 հորատանցքը միաժամանակ չեն պայթում, և ցանկացած երկու հորատանցքի պայթյունների միջև կա առնվազն 25 միլիվայրկյան ընդմիջում: Սա էականորեն նվազեցնում է ցնցումները բացահանքում և հարակից գոտիներում:

– Ինչպե՞ս եք հաշվարկում ցնցումների ազդեցությունը... Հատկապես ամռանը շատ է խոսվում պայթեցման հետևանքով առաջացած փոշու տարածման մասին: Արդյո՞ք այսօրվա տեխնոլոգիաները հնարավոր են դարձնում շատ թե քիչ մեղմել փոշու ազդեցությունը և տարածման շրջանակները:

– Ցնցումների ազդեցությունը, վիբրացիան նախագծման փուլում հաշվարկվում են հատուկ ծրագրով, այսինքն՝ պայթեցումը որքան հեռավորության վրա ինչ ազդեցություն կունենա: Ուստի և՝ բնակավայրերին մոտ գտնվող բլոկներն ավելի փոքր են լինում, հորատանցքի տրամագիծը՝ նույնպես, լիցքերն ավելի քիչ են լինում, որպեսզի հետևանքներն ավելի մեղմ լինեն:

Դրանից զատ՝ ընկերությունը նախաձեռնել է սեյսմիկ մոնիթորինգի համակարգի նախագծում, հետագայում՝ ներդրում: Այդ համակարգի տվիչները (датчики) կտեղադրվեն Քաջարան քաղաքում և գյուղում, բնակելի շենքերում և տներում, որպեսզի ամեն մի պայթեցումից առաջացած ցնցումները գրանցվեն տվյալ կետերում ու վերահսկվեն:

Արդյունքում կունենանք ստույգ չափված տվյալներ՝ ի՞նչ ազդեցություն են ունենում պայթեցումները տարբեր կետերում:

Փոշու ազդեցության մասին. փոշի կա, ճիշտ եք: Ընկերության այս տարվա բյուջեով պլանավորված է ձեռք բերել այսպես կոչված ջրային թնդանոթներ, որոնք տեղակայվելու են պայթեցման հրապարակների անմիջական հարևանությամբ: Յուրաքանչյուր պայթեցումից անմիջապես հետո այդ «թնդանոթները» մեծ ճնշման տակ ջուր են ուղղելու դեպի պայթեցված բլոկ, ինչի հետևանքով առաջացած փոշին անմիջապես նստելու է՝ չհասցնելով վերև բարձրանալ: Այս մեթոդի ներդրումից հետո՝ պայթեցումների հետևանքով փոշու մակարդակը գրեթե կզրոյանա:

– Ընկերության քննադատները հաճախ են հայտարարում, թե բացահանքի շահագործման տեղամասերը որոշում եք ընտրովիության սկզբունքով՝ հարուստ երակներին նախապատվություն տալով: Արդյո՞ք գործնականում հնարավոր է նման մոտեցմամբ իրականացնել բացահանքի շահագործումը, թե՞ դա անհիմն խոսակցություն է:

– Նախ՝ երակներ կամ հարուստ երակներ չկան հանքավայրում: Եղել են ժամանակին՝ 50-60-ական թվականներին: Այդ ժամանակ էլ արդյունահանվել են՝ ստորգետնյա շահագործմամբ: Դրանից հետո շահագործումն իրականացվել է բաց եղանակով: Իսկ բաց եղանակով շահագործման ժամանակ հանքանյութը հանվում է ամբողջապես: Տրամաբանական չէ և հնարավոր չէ՝ մի մասը հանել, մյուսը՝ ոչ:

Հիմա այդ երակները, ինչպես նշեցի, չկան, վերևի հորիզոններում էին դրանք:

Սակայն հանքավայրի ներսում, հատկապես հանքավայրի հարավային մասում կան բարդ կառուցվածքով տեղամասեր, որտեղ հանքաքարի մեջ առկա են դատարկ ապարների գոտիներ: Եվ եթե այդ դատարկ գոտիները չհանենք, ապա չենք կարող խորանալ ու հանույթ իրականացնել:

Ներկայումս և՛ հանքաքարն է հանվում, և՛ դատարկ ապարների գոտիները: Եթե այդպես չարվի՝ բացահանք, որպես այդպիսին, չի առաջանա, կլինեն ուղղաձիգ պատերով փոսեր, որոնք պարզապես կփլվեն:

Այնպես որ՝ այսպես կոչված հարուստ երակների շուրջ խոսակցությունները մասնագիտական տեսակետից անհեթեթ են:

– Ձեր ղեկավարման ներքո է գտնվում նաև զարգացման ծրագրերի դեպարտամենտը, ինչը բավականին հետաքրքիր ոլորտ է: Փոքր-ինչ ներկայացրեք, խնդրեմ, դեպարտամենտի գործառույթները:

– Եթե համառոտ ասեմ, ապա ընկերության արտադրության զարգացման հետ կապված բոլոր ծրագրերը՝ որպես տեխնիկական առաջադրանք, ձևավորվում և փաստաթղթավորվում են այդտեղ: Այնուհետև այդ ծրագրերի հետ կապված բոլոր նախագծային աշխատանքներն ուղեկցվում և վերահսկվում են այդ դեպարտամենտում: Այդտեղ են նաև վերահսկվում ընկերության կողմից ձեռք բերվող բոլոր սարքավորումների տեխնիկական պահանջներին համապատասխանությունը և կատարվում բոլոր սարքավորումների հաշվառումները:

Այժմ ընկերության համար բոլոր նախագծային աշխատանքները կատարում են կապալառու ընկերությունները, սակայն զարգացման ծրագրերի դեպարտամենտում նախաձեռնել ենք սեփական կոնստրուկտորանախագծային բյուրոյի ձևավորում՝ նախագծային աշխատանքների ծավալի մի մասը մեր ուժերով կատարելու նպատակով:

– Եվ վերջին հարցը, որ նաև ներկայումս հանրային քննարկումների, իրարամերժ կարծիքների տեղիք է տալիս. տարեկան որքա՞ն հանքաքար հանելու թույլտվություն ունի Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը:

– Ըստ հաստատված նախագծի և արդյունահանման գործող թույլտվության՝ ընկերությանը թույլ է տրված արդյունահանել և վերամշակել տարեկան 22 միլիոն տոննա հանքաքար, ու այս ծավալը մենք երբևէ չենք գերազանցել:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Ընկերության այս տարվա բյուջեով պլանավորված է ձեռք բերել այսպես կոչված ջրային թնդանոթներ, որոնք տեղակայվելու են պայթեցման հրապարակների անմիջական հարևանությամբ: Յուրաքանչյուր պայթեցումից անմիջապես հետո այդ «թնդանոթները» մեծ ճնշման տակ ջուր են ուղղելու դեպի պայթեցված բլոկ, ինչի հետևանքով առաջացած փոշին անմիջապես նստելու է՝ չհասցնելով վերև բարձրանալ: Այս մեթոդի ներդրումից հետո՝ պայթեցումների հետևանքով փոշու մակարդակը գրեթե կզրոյանա:

ՁՊՄԿ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ՝
ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ

Զանգեզուրի պղնձամոլիբդենային ու Քաջարան քաղաքը երկվորյակներ են և միասին են անցել 70-ամյա ճանապարհը

Կոմբինատի հոբելյանը, անշուշտ, իրադարձություն է նաև Քաջարան քաղաքի համար, որը, կարծեք, դարձել է լեռնահանքային արդյունաբերության յուրօրինակ մայրաքաղաք ամբողջ հանրապետությունում: Այդ կապակցությամբ զրուցեցինք Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի հետ:

– Պարոն Փարամազյան, նախ՝ Ձեր շնորհավորանքը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 70-ամյակի կապակցությամբ:

– Քաջարանցիներիս համար մեծ պատիվ է, որ Հայաստանի թիվ մեկ հանքարդյունաբերական ընկերությունը Քաջարանում է, որը ներկայիս արտադրական ծավալներին է հասել և դարձել երկրի թիվ մեկ հարկատուն՝ առաջին հերթին աշխատավոր քաջարանցիների շնորհիվ՝ հիմնադրման ժամանակներից մինչև այսօր: Ու մեր պապերի բնօրրանը քաղաքի կարգավիճակ է ստացել հենց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի շնորհիվ: Ուստի ուզում եմ շնորհավորել կոմբինատի ստեղծման ակունքներում կանգնած բոլոր երախտավորներին, կայացման և հզորացման յոթ տասնամյակ ընդգրկող ճանապարհն անցած բոլոր արժանավորներին: Նրանց մեծ փորձի շնորհիվ է, որ այսօր քաջարանցին շարունակում է աշխատել ու արարել Քաջարանում և կոմբինատում:

Ուզում եմ շնորհավորել բոլոր քաջարանցիներին, որովհետև նրանցից ամեն մեկը՝ թե արմատներով ու թե հիշողություններով կապված է ընկերության հետ:

Առանձնահատուկ խոնարհվում եմ կոմբինատի ստեղծման և կայացման գործում իրենց մեծ ներդրումն ու ավանդն ունեցած այն արժանավորների առջև, որոնցից շատերն արդեն հեռացել են երկրային կյանքից, որոնց անունները ոսկե տառերով են գրված Քաջարանի տարեգրության մեջ:

Շնորհավորում եմ վաստակած հանգստի անցած բոլոր լեռնագործներին, ովքեր պատրաստ են (հարկ եղած դեպքում) իրենց փորձով և գործով աջակցել մերօրյա հերթափոխին:

Շնորհավորում եմ ՁՊՄԿ ինժեներատեխնիկական և ղեկավար անձնակազմին՝ Ռոման Խուդոլիի գլխավորությամբ:

Վստահաբար կարող եմ ասել՝ կոմբինատի հոբելյանն իրադարձություն է նաև ողջ երկրի համար, որովհետև հանրապետությունում չկա մի ոլորտ, որ 70 տարվա ընթացքում իր մասնակցությունն ու աջակցությունը ցուցաբերած չլինի:

– Տարիներ շարունակ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն ակտիվ դերակատարություն է ունեցել և ունենում Քաջարանում, նաև խոշորացված ամբողջ համայնքում իրականացված և իրականացվող սոցիալական ու համայնքային զարգացման ծրագրերում:

Փորձեք ամփոփել 2022-ին Քաջարան համայնքում իրականացված ներդրումները, որը, ըստ մեր ունեցած տեղեկությունների, կազմում է 1.5 մլրդ դրամ:

– «ՁՊՄԿ» ՓԲ ընկերության դերը շատ մեծ է և անուրանալի՝ համայնքում իրականացվող մշակութային, կրթական, սոցիալական, քաղաքաշինական և ամենատարբեր ոլորտների ծրագրերում:

Կարող եմ թվարկել 2022 թ. Քաջարան համայնքում սուբվենցիոն ծրագրերով իրականացված աշխատանքները, որոնց շոշափելի մասնակցություն է ունեցել ՁՊՄԿ-ն. դրանցից են՝ Գեղի-Գեղավանք ներհամայնքային ճանապարհի, Մ2 միջպետական ճանապարհից դեպի Խաչինա բնակավայր տանող ճանապարհի, Քաջարան քաղաքի տարբեր շենքերի բակերի, Բաբիկավան բնակավայրի բակերի և Քաջարան քաղաքի Գայ ու Խանջյան փողոցներից դեպի Մ2 մայրուղի ձգվող անցուղու հիմանորոգումները:

Շենքերի էներգաարդյունավե-

Մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի բացումը Քաջարանում

Տության բարձրացման ծրագրում ևս ՀՊՄԿ-ն՝ համայնքի, պետության և ՄԱՀԾ-ի հետ միասին, իր մեծ մասնակցությունն ունի:

Մի կարևոր հանգամանք. նշված ծրագրերը պետք է իրականացվեին 2021-ին, սակայն հասկանալի պատճառներով կատարվեցին 2022-ին: Դրանք են՝ Քաջարան համայնքի Գետիշեն, Ձագիկավան, ք. Քաջարան բնակավայրերի ջրամատակարարման ու համայնքի գրեթե բոլոր գյուղական բնակավայրերի փողոցային լուսավորության համակարգերի կառուցումը և մեքենասարքավորումների ձեռք բերումը, որում անուրանալի մասնակցություն ունի «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը: Նաև մշակութային, սոցիալական, կրթական, սպորտի, առողջապահության բնագավառներում են նշանակալից «ՀՊՄԿ» ՓԲ ընկերության ներդրումները:

Բազմաթիվ ներդրումներ էլ ընկերությունն իրականացրել և իրականացնում է սեփական ծրագրերով ու իր ենթակայության ներքո գտնվող համայնքային հաստատություններում՝ մարզադպրոց, մարզադաշտ, նախակրթարան, մշակույթի պալատ:

Ընկերության հիմնադրամի միջոցներից բազմաթիվ ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել և ցուցաբերվում համայնքի բնակիչներին, ինչպես և սպորտի, կրթության, առողջապահական ոլորտներին՝ լուծում տալով բազմաթիվ խնդիրների:

Իհարկե, կան նաև քաղաքաշինական ծրագրեր, որոնք բացառապես համայնքի միջոցներով են իրականացվել, այն է՝ Քաջարան քաղաքի տարբեր փողոցների և շենքերի խաղահրապարակների կառուցումը, համայնքապետարանի շենքի մի մասի հիմնանորոգումն ու տարածքի բարեկարգումը, մի քանի շենքի մասնակի վերանորոգման աշխատանքները, նստարանների ձեռք բերումը և այլն: Դրանք էլ առանց ՀՊՄԿ աջակցության անհնար կլիներ իրականացնել:

Ընդհանուր առմամբ ՀՊՄԿ-ի հետ առողջ համագործակցության շնորհիվ և համատեղ միջոցներով կարողանում ենք կյանքի կոչել համայնքի առջև ծառացած խնդիրները:

– Իսկ ի՞նչ ծրագրեր են իրականացվում ընթացիկ տարում և՛ Քաջարան քաղաքում, և՛ համայնքի գյուղական բնակավայրերում:

– 2023 թվականը Քաջարանում նույնպես կարող ենք համարել ծրագրերի իրականացման տարի: Ըստ ծրագրի՝ կհիմնանորոգվեն քաղաքի մի շարք բակեր, մայթեր ու աստիճանավանդակներ: Կհիմնանորոգվեն Գեղի-Գեղավանքի, Լեռնաձոր-Փուխրուտ-Կաթնառատի, գ. Քաջարանցի ներհամայնքային ճանապարհները: Կավճուտ բնակավայրի համար նոր ջրագիծ կկառուցվի: Քաջարան քաղաքի թիվ 1 ՆՈՒՀ-ի համար նոր շենք կկառուցվի: Եվ համայնք-պետություն սուբվենցիոն ծրագրերում կրկին շոշափելի է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության ներդրումը:

2022 թ. մեկնարկած աշխատանքների մի մասը նույնպես տեղափոխվել է 2023 թվական:

Համայնքապետարանում գործում է սոցիալական աջակցության ծրագիր, որը հիմնականում ուղղված է միայնակ կենսաթոշակառուներին, սահմանափակ կարողություններով անձանց, զոհված ազատամարտիկների ընտանիքներին՝ առաջնահերթությունը տալով հիվանդություն ունեցողներին:

Առհասարակ համայնքն առաջիկա 5 տարվա համար ունի ռազմավարական ծրագիր, որը կյանքի կոչելուց հետո կունենանք հիմնովին վերափոխված և նոր ենթակառուցվածքներով հագեցած Քաջարան:

– Ինչպե՞ս եք գնահատում Քաջարանի տեղական ինքնակառավարման մարմինների և «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության ներկայիս ղեկավարության համագործակցությունը:

– Որպես համայնքի ղեկավար կարող եմ փաստել՝ համագործակցությունը «ՀՊՄԿ» ՓԲ ընկերության ղեկավարության հետ ամուր հիմքերի վրա է, և յուրաքանչյուր հարց քննարկում ենք միասին ու խնդիրներին լուծում տալիս փոխհամաձայնությամբ: Արդյունքում շահում է համայնքը, ինչը նաև տրամաբանական է, որովհետև երբ ասում ենք Քաջարան՝ հասկանում ենք կոմբինատ, երբ ասում ենք կոմբինատ՝ հասկանում ենք Քաջարան. դրանք իրարից առանձնացնելն ուղղակի հնարավոր չէ:

Եվ փառք Աստծո, որ այդ համագործակցությունն ամուր հիմքերի վրա է, ու վստահաբար կարող եմ ասել՝ այն ավելի կամրանա, որովհետև երկկողմանի համագործակցության հիմքում համայնքի և համայնքի բնակիչների շահն է:

– Որոնք են, ըստ Ձեզ, համայնքի

Հանգստյան գոտու և պուրակի հանդիսավոր բացում՝ Քաջարանի Գետափնյա և Աբովյան փողոցներում

2022 թ-ի դեկտեմբերի 3-ին, Քաջարանը հյուրընկալեց ՌԴ նախագահի աշխատակազմի օտարերկրյա պետությունների հետ միջտարածաշրջանային և մշակութային կապերի վարչության պետ Իգոր Մասլովին և «Մոսկվայի տուն» Մոսկվայի մշակութային-գործարար կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանին

առջև ծառացած առավել մտահոգող խնդիրները, որոնց լուծման գործում ակնկալում եք կոմբինատի աջակցությունը:

– Հիմնականում աշխատատեղերի ապահովման խնդիրն է, որովհետև չենք կարող պատկերացնել, թե քաջարանցին, առանց կոմբինատում աշխատելու, ինչպես պետք է ապրի Քաջարանում: Խոսքն առաջին հերթին վերաբերում է զինվորական ծառայությունից վերադարձած երիտասարդներին ու այն ընտանիքներին, որոնցում աշխատող չկա կոմբինատում: Այդ հարցերը քննարկել ենք «ՀՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիի ու ընկերության ղեկավար կազմի հետ:

Եվ մի կարևոր խնդիր նույնպես՝ բնակֆոնդի խնդիրը…

Քաջարանը Հայաստանի եզակի քաղաքներից է, որտեղ անշարժ գույքի՝ հիմնականում բնակարանի նկատմամբ մեծ պահանջարկ կա: Քանի որ այստեղ կայուն աշխատատեղեր են՝ հիմնականում բարձր աշխատավարձով, ուստի արտագաղթի խնդիր չկա, և առաջիկայում նշված հիմնախնդրին լուծումներ տալու համար հանդես կգամ առաջարկներով՝ ի շահ երիտասարդ ընտանիքների:

– Անշուշտ, հարյուրավոր, նույնիսկ հազարավոր երախտավորների անուններ կարելի է տալ, ովքեր անցած տասնամյակներում ակտիվ մասնակցություն են ունեցել Քաջարան քաղաքի, նաև կոմբինատի կառուցմանն ու զարգացմանը: Եվ, այդուհանդերձ, կուզենայինք լսել քաղաքի երախտավորներից մի քանիսի անունը, որոնց պարտավոր են հիշել նաև գալիք սերունդները:

– Դուք ճիշտ եք, կարելի է տալ հազարավոր երախտավորների անուններ և ազգանուններ, որովհետև գրեթե բոլորն էլ քրտինք են թափել՝ կոմբինատի ստեղծման և կայացման յոթ տասնամյակի ճանապարհին, բայց կանդրադառնամ խորհրդային հասարակարգի փլուզման և անկախության ձեռքբերման ժամանակաշրջանին, երբ սկսվեց նաև Արցախյան ազատամարտը:

Մինչև այսօր էլ հիշում ենք՝ այդ տարիներին հանրապետությունում գրեթե բոլոր գործարաններն ու ֆաբրիկաները փակվել էին ու դրանց գույքը օտարվել, բայց ՀՊՄԿ հսկա ձեռնարկությունը բացառիկներից էր Հայաստանում, որ պահպանվեց ու պատերազմից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, անխափան վերագործարկվեց: Այդ առիթով է, որ ուզում եմ տալ այն երախտավորի անունը, ում շնորհիվ նույնիսկ մեկ դետալ այդ տարիներին չպակասեց կոմբինատից: Այդ երախտավորը կոմբինատի տվյալ ժամանակաշրջանի տնօրեն Ֆրունզե Հմայակի Պետրոսյանն էր՝ մարդ և մետալուրգիայի ոլորտի ռահվիրա, ում դասերով նաև քաջարանցին պահպանեց կոմբինատը, որն էլ դարձավ այդ տարիների մեր երկրի տնտեսության լոկոմոտիվը:

Գործարկումից հետո՝ 1990-ականների երկրորդ կեսին, կոմբինատի կայունությունն ապահովեց մեր մյուս երախտավորը՝ Ռոման Շմավոնի Նավասարդյանը, ով որպես Ֆրունզե Պետրոսյանի հետևորդ՝ պատվով և արժանապատվորեն կատարեց տնօրենի պարտականությունները՝ օգտագործելով նախորդ տարիների փորձն ու ավանդույթները:

1990-ականների վերջից և 2000-ականների սկզբից՝ ձեռնարկության նորամուծությունները, վերազինումը և ծավալների մեծացումն իր ուսերին վերցրեց հանքարդյունաբերության մյուս երախտավորն ու հրամանատարը՝ երջանկահիշատակ Մաքսիմ Անուշավանի Հակոբյանը, ում ինժեներական հարուստ փորձն ու մասնագիտական կարողությունները դարձան նաև կադրերի թրծման դարբնոց՝ հսկա ընկերության հետագա կայացման ու զարգացման ճանապարհին:

Եվ առհասարակ, ինչպես արդեն նշեցի, անցած 70 տարում բոլորն էլ կոմբինատի կառուցման և կայացման գործի երախտավոր են, որովհետև ամեն մի ժամանակաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է ունեցել, բայց աշխատասեր և աշխատավոր քաջարանցին այդ ամենն արժանապատվորեն հաղթահարեց:

Եվ ուրեմն փառք ու պատիվ բոլորին, ովքեր այս մեծ ժառանգությունը թողել են մեզ ու գալիք սերունդներին, որպեսզի կարողանանք պահել ու պահպանել մեր բնակավայրը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ԶՊՄԿ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ՝ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ

Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի՝ Կապան համայնքի համար ունեցած կարևորության մասին

Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի անցած 70-ամյա ճանապարհը, նաև ներկան հնարավոր չէ պատկերացնել առանց Կապան քաղաքի և համայնքի գյուղերի հետ համագործակցության: Մյուս կողմից՝ կոմբինատի շնորհիվ է տասնամյակների ընթացքում Կապան քաղաքում, նաև մերձակա գյուղերում լուծում ստացել սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին առնչվող բազմաթիվ հարցեր: Այսօր էլ Կապան համայնքի հարյուրավոր բնակիչներ աշխատում են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում:

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության 70-ամյակի կապակցությամբ զրույց ունեցանք Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի հետ:

– Պարոն Փարսյան, մեր զրույցը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 70-ամյակի առիթով է: Հանքարդյունաբերական այդ ձեռնարկության հիմնադրումը ժամանակին մեծ իրադարձություն է եղել հատկապես Կապանի շրջանի կյանքում: Այնպես որ կոմբինատի հոբելյանը նշանակալից իրադարձություն է դիտարկվում նաև Կապանի տարածաշրջանում:

– Այո, Դուք իրավացի եք, 70 տարվա գործունեության պատմություն ունեցող կոմբինատի հոբելյանը կարևոր ու նշանակալի իրադարձություն է նաև Կապան համայնքի համար: Բոլորս գիտենք, որ այսօրվա Կապանը կառուցվել է հանքարդյունաբերության շուրջ և դրա շնորհիվ, ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ այսօր հանքարդյունաբերության կենտրոններից է: Ավելորդ չեմ համարի ևս մեկ անգամ ընդգծել կոմբինատի առանձնահատուկ դերն ու նշանակությունը համայնքի սոցիալ-տնտեսական և նույնիսկ կենցաղային կյանքում: Միայն այն հանգամանքը, որ հազարավոր կապանցիներ աշխատում են ընկերության ամենատարբեր օղակներում՝ համեմատաբար բարձր աշխատավարձով, արդեն իսկ խոսում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կարևորության և անհրաժեշտության մասին: Ուստի, պատեհ առիթից օգտվելով, իմ անկեղծ շնորհավորանքներն եմ հղում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բոլոր տարիների նվիրյալներին՝ ի դեմս գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիյի, ընկերության հոբելյանական տարեդարձի կապակցությամբ:

Վստահ եմ՝ ընկերության պատասխանատու գործելաոճի և աշխատակիցների սրտացավ աշխատանքի շնորհիվ կպահպանվի ու էլ ավելի կզարգանա Կապանի և ընդհանրապես Հայաստանի տնտեսության համար հիմք հանդիսացող հանքարդյունաբերության ոլորտը:

– Ապրիլի 6-ին մենք ականատես եղանք համագործակցության հուշագրի ստորագրման՝ Կապանի համայնքապետարանի և «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության միջև: Նոր որակի և մասշտաբի այդ համագործակցության վերաբերյալ մեր պարբերականը դիրքորոշում հնչեցրել է: Բայց կուզենայինք Ձեր գնահատականը լսել և ծանոթանալ հուշագրի համառոտ բովանդակությանը:

– Կապանի համայնքապետարանի և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի միջև համագործակցության հուշագրի կնքումն ինքնին հիշարժան իրադարձություն էր, քանի որ առաջին անգամ պաշտոնապես տարիների համագործակցությունն արձանագրվեց հուշագրի տեսքով: Սրանով մենք հիմք ենք դնում ավելի բարձր մակարդակի և որակի համագործակցության, որը, կարծում եմ, ամրագրվելու է պատմության էջերում: Եվ ինչպես պարոն Խուդոլին նշեց իր խոսքում՝ սա բարեգործություն չէ, սա համագործակցություն է, որն արտահայտում է մեր փոխադարձ ձգտումն ու կամքը՝ համայնքային նշանակության հանրային խնդիրների լուծման գործում: Այս համատեքստում մենք շատ բարձր ենք գնահատում կոմբինատի կորպորատիվ, սոցիալական պատասխանատվության մակարդակը և այդ շրջանակում բարի կամքի դրսևորումը:

Ստորագրված փաստաթուղթն ընդգծում է մեր փոխգործակցության հետագա ամրապնդման կարևորությունն ու անհրաժեշտությունը, ինչը պարտավորեցնում է գործուն քայլեր կատարել դրանով նախատեսված առաջնահերթությունների իրականացման ուղղությամբ՝ Կապան համայնքի համաչափ զարգացումն ապահովելու համար:

Հուշագիրը ենթադրում է ամենատարբեր ոլորտներում համագործակցություն, որը ներառում է տնտեսական, սոցիալական, քաղաքաշինական, կրթության, մշակույթի, սպորտի և երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտները: Այն գործելու է հինգ տարի ժամկետով՝ յուրաքանչյուր տարվա համար նախատեսված գործողությունների պլանով:

– Կապանում բոլորիս աչքի առաջ

քաղաքաշինական բնույթի, և ոչ միայն, մեծածավալ աշխատանքներ են կատարվում վերջին տարիներին: Եվ, այդուհանդերձ, մարզկենտրոնի առջև դեռևս բավականին խնդիրներ են ծառացած: Որո՞նք են համայնքին ներկայումս առավել մտահոգող խնդիրները, որոնք տեղ չեն գտել համագործակցության հուշագրում, սակայն լուծման կարիք ունեն և այդ հարցում ակնկալում եք կոմբինատի աջակցությունը:

– Այո, ճիշտ եք նկատել, Կապան համայնքում բազմաբնույթ ու բազմաոլորտ աշխատանքներ են իրականացվում, և գերակշիռ մասը, իհարկե, քաղաքաշինական բնույթի է: Այդ աշխատանքների իրականացման գործում առարկայական մասնակցությունն է ունեցել և շարունակում է ունենալ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, ինչպես սուբվենցիոն ծրագրերի շրջանակում համայնքի մասնաբաժնում իր մասնակցությամբ, այնպես էլ առանձին ծրագրերի ամբողջական ֆինանսավորմամբ: Իհարկե, բոլորը չեմ թվարկի, բայց այդ ծրագրերի շարքում կցանկանայի առանձնացնել հենց քաղաքի կենտրոնական հրապարակի երգող շատրվանը, որը ինքնատիպ գեղեցկությամբ, լուսաձայնային ժամանակակից համակարգով չի զիջում մայրաքաղաքին: Կարևոր ծրագրերի շարքում է նաև քաղաքի գլխավոր մշակութային կենտրոնը, որի առաջին մասնաշենքի շինաշխատանքներն արդեն իսկ ավարտին են հասցվել, ընթացքի մեջ է երկրորդ մասնաշենքի և բացօթյա հատվածի նորոգումը, իսկ երրորդ մասնաշենքի՝ համերգային մեծ դահլիճի հետագա նորոգման և ջեռուցման ապահովման համար ձեռք ենք բերել պայմանավորվածություն: Առաջիկայում ակնկալում ենք նաև Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգու բարեկարգման և կարուսելների արդիականացման հարցում ՀՊՄԿ-ի աջակցությունը, որի վերաբերյալ ևս ունեցել ենք քննարկում ու նախնական պայմանավորվածություն:

Իսկ ինչ վերաբերում է համագործակցության հուշագրում տեղ չգտած խնդիրներին, ապա ասեմ, որ այդպիսիք գրեթե չկան. փորձել ենք հնարավորինս բոլոր ուղղությունները ներառել, որպեսզի բաց հատված չմնա: Բայց հուշագրում ունենք նաև կետ, որտեղ նշվում է՝ կողմերը կարող են համագործակցել երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում, ինչը մեզ հնարավորություն է տալիս հանդիպումների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպմամբ քննարկել և իրականացնել նաև այն խնդիրներն ու նախագծերը, որոնց լուծման համար տվյալ ժամանակահատվածում անհրաժեշտություն է առաջացել:

Հուշագիրն ենթադրում է ամենատարբեր ոլորտներում համագործակցություն, որը ներառում է տնտեսական, սոցիալական, քաղաքաշինական, կրթության, մշակույթի, սպորտի և երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտները:

– Համայնքի ո՞ր բնակավայրերն են համարվում ՀՊՄԿ-ի ազդակիր: Արդյո՞ք ազդակիր բնակավայրերը, որոնց մեծ մասը սահմանամերձի կարգավիճակ ունի, իրենց առավել հուզող հոգսերով ներառվել են հուշագրի մեջ:

– ՀՊՄԿ–ի ազդակիր բնակավայրեր են համարվում Այունիքը, Աճանանը, Սևաքարը, Ըրկենանցը, Չափնին, Արծվանիկը և Կապան քաղաքը: Հուշագիրը վերաբերում է Կապան համայնքին առհասարակ, բայց մենք համագործակցության շրջանակում առանձնակի դիտարկում ենք նաև ազդակիր բնակավայրերին վերաբերող խնդիրները: Յուրաքանչյուր տարվա համար կոմբինատի հետ նախանշել ենք գործողությունների պլան, որտեղ ազդակիր բնակավայրերի խնդիրները տեղ են գտել ըստ առաջնահերթության: Օրինակ, այս տարի արդեն իսկ մեկնարկել է Սզնակ, Դիցմայրի բնակավայրերում խմելու և ոռոգման ջրի, իսկ Այունիք, Բարգուշատ բնակավայրերում միայն ոռոգման ջրի ապահովման ծրագիրը, որը գտնվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման փուլում: Հույս ունենք, որ արդեն հաջորդ տարի ծրագիրը կյանքի կկոչվի, և համայնքի սահմանամերձ բնակավայրերի բնակիչները կապահովվեն շուրջօրյա անխափան ջրամատակարարմամբ:

– Կա մի հարց, որ տասնամյակներ ի վեր քննարկվել ու քննարկվում է...

Այունիքը դարեր շարունակ, նաև այսօր, հզոր է եղել իր գյուղական բնակավայրերով՝ հազարամյակների խորքից եկող: Կապանի տարածաշրջանում հանքարդյունաբերական երկու խոշոր ընկերություն է գործում: Դուք հնարավոր համարո՞ւմ եք և՛ հանքարդյունաբերության, և՛ գյուղական բնակավայրերի միաժամանակյա, զուգահեռ ու ներդաշնակ զարգացումը՝ ոչ թե միմյանց խանգարելով, այլ իրար լրացնելով:

– Նախորդ հարցի պատասխանով փոքրիշատե անդրադարձա այդ հարցին, բայց փորձեմ ավելի հստակեցնել: Քանի դեռ հանքարդյունաբերությունը համարվում է մեր տարածաշրջանի տնտեսության գերակա ճյուղը և մեր զարգացման գրավականը, կամա թե ակամա, պայմանավորված է տարածքում գործող հանքարդյունաբերական ձեռնարկությունների կայուն աշխատանքով, ապա հանքարդյունաբերությունը և մնացած ոլորտներն իրարից տարանջատել կամ մեկը մյուսին որպես խանգարող հանգամանք դիտարկելը, կարծում եմ, առնվազն խելամիտ չի լինի: Եվ հենց Այունիք բնակավայրում նախատեսվող աշխատանքները վկայակոչելով՝ կասեմ, որ հանքարդյունաբերությունը դիտարկում ենք որպես հնարավորություն, որը պետք է օգտագործենք համայնքի կայուն և համաչափ տնտեսական զարգացումն ապահովելու, համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրները լուծելու համար:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ՁՊՄԿ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ՝
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ

Հուշագիր՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության և Սյունիքի մարզպետարանի միջև

Փետրվարի 1-ին Սյունիքի մարզպետարանը (ի դեմս մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի) և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը (ի դեմս գլխավոր տնօրեն Ռ. Խուդոլիյի) կնքել են համագործակցության հուշագիր՝ հաշվի առնելով զարգացման արդի փուլում Սյունիքի մարզի սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրներն ու ծառացած մարտահրավերներին դիմագրավելու կարողությունների ձևավորման խիստ անհրաժեշտությունը:

Նախատեսվում է համագործակցությունն իրականացնել առողջապահության, սոցիալական ապահովության, կրթության, մշակույթի և սպորտի, տնտեսական, բնապահպանական բնագավառներում:

Հուշագրով կողմերը համաձայնել են համագործակցել նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող համապատասխան ոլորտներում մշտադիտարկման իրականացման, այդ ոլորտների վերաբերյալ խորհրդակցությունների, հանդիպումների, այլ միջոցառումների կազմակերպման, փորձի փոխանակման, նորարարական դրամաշնորհային ծրագրերի համատեղ մշակման և իրականացման ու այլ հարցերի շուրջ:

ՁՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիյը մասնավորապես ասաց. **«Շատ կարևոր է, որ սոցիալական օգնությունը լինի նպատակային և միտված լինի կայուն զարգացմանը, իսկ դրա համար ուղղությունների և նպատակների համատեղ համակարգումն անհրաժեշտություն է: Չհամակարգված սոցիալական ծրագրերն ունենում են կարճաժամկետ ազդեցություն, և տարիներով ծախսված զգալի գումարները չեն ապահովում կայուն արդյունք: Այս հուշագիրը հնարավորություն է ընձեռում նախանշել ռազմավարական ուղղությունները և համատեղել ջանքերը՝ թիրախային ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Ինձ համար հատկապես կարևոր է սոցիալական և բնապահպանական կայունության կարևորության գիտակցումը և այդ ուղղությամբ համատեղ աշխատանքը: Խնդիրները շատ են, բայց մեր լուծումները պետք է կենտրոնանան ոչ թե արագ, այլ կայուն, երկարաժակետ ու ռազմավարական արդյունքների վրա»**:

Հուշագիրը գործում է հինգ տարի ժամկետով՝ յուրաքանչյուր տարի հաստատված, ընթացիկ տարվա համար նախատեսված գործողությունների պլանով:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի համայնքային ներդրումները 2022-ին կազմել են մոտ 3,5 մլրդ դրամ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն հրապարակել է Քաջարան և Կապան համայնքներում 2022 թ. իրականացրած սոցիալական ներդրումների ծրագրերը:

Երկու խոշորացված համայնքում ՁՊՄԿ-ն իրականացրել է ընդհանուր առմամբ ավելի քան 3 միլիարդ 400 միլիոն ՀՀ դրամի ներդրում՝ տարբեր սոցիալական և համայնքային զարգացման ծրագրերում:

Կապան խոշորացված համայնքում իրականացվել է ավելի քան 1 միլիարդ 919 միլիոն ՀՀ դրամի ներդրում, այդ թվում՝ ենթակառուցվածքների զարգացման և սոցիալական շինարարության, առողջապահական և այլ ծրագրերում՝ ավելի քան 525 միլիոն դրամ: Ավելի քան 1, 5 միլարդ դրամի ներդրումներ իրականացվել են կրթության զարգացման, սպորտի, մշակույթի, ինչպես նաև սոցիալական աջակցության ամենատարբեր ծրագրերում:

Քաջարան խոշորացված համայնքում իրականացվել է ավելի քան 1 միլարդ 514 միլոն դրամի ներդրում, որից ավելի քան 900 միլիոն դրամ ներդրվել է ենթակառուցվածքների զարգացման, սոցիալական և այլ շինարարական ծրագրերի մեջ: Մոտ 600 միլիոն դրամ ներդրվել է սոցիալական աջակցության, կրթական, մշակույթի և սպորտի զարգացման ծրագրերում:

ԲԱՑԱՀԱՆՔ



Բացահանքը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային առանցքային օղակ

Աշխարհաքաղաքական փոփոխությունների մեր օրերում Հայաստանի Հանրապետությունը շարունակում է փորձությունների ենթարկվել: Դրա հերթական վկայությունը սեպտեմբերի 13-14-ին մեր հանրապետության հանդեպ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիան էր:

Ռազմաքաղաքական ներկա մարտահրավերներին դիմակայելու ուղղություններից մեկն էլ, անտարակույս, երկրի տնտեսության հնարավորինս կայուն ընթացքի ապահովումն է, տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների անխափան գործունեության կազմակերպումը:

Ուսումնական գործընթացը՝ մանկապարտեզից մինչև բուհ, պետք է շարունակվի թույլատրելի որևէ ձևով, գյուղացին աշնանային ցանքսը պետք է կատարի՝ որտեղ հնարավոր է, ձմռանն ընդառաջ ճանապարհների նախապատրաստումը չպետք է կանգ առնի, այլապես...

Այդ ամենի տեսանկյունից չափազանց կարևոր է Զանգեզուրի կոմբինատի անխափան գործունեության ապահովումը, որը ոչ միայն հանրապետության թիվ 1 հարկատուն է, այլև Սյունիքի մարզի խոշորագույն գործատուն, երկրամասի սոցիալ-տնտեսական հավասարակշռության և անցնցում ընթացքի կարևոր երաշխավորը:

Օրեր առաջ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիյը (մարզային իշխանության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ) ԶՊՄԿ-ի պատրաստակամությունը հայտնեց՝ աջակցելու առաջացած խնդիրների լուծմանը, ինչը, անշուշտ, դրվատելի է:

Իսկ ինչպե՞ս են գործերը Զանգեզուրի կոմբինատում...

Հարցի պատասխանը ստանալու համար 2022թ. սեպտեմբերի 20-ին մեր ստեղծագործական խումբն այցելեց ընկերության առանցքային օղակներից մեկը հանդիսացող բացահանքը, որը 3708 մ բարձրության Ալուկ լեռնագագաթի հյուսիսահայաց ստորոտում է, 2100 մ և ավելի բարձրության վրա:

Գրեթե մի ամբողջ օր Քաջարանի հանքավայրում շրջագայելուց, արտադրական գործընթացներին ծանոթանալուց և բացահանքի աշխատակիցների հետ շփումներից հետո մեր պատկերացումն ավելի ամբողջացավ հանքարդյունաբերական հսկայի մերօրյա գործունեության մասին: Հանքագործների հետ բազմաթիվ հանդիպումներից, զրույցներից առանձնացնենք բացահանքի պետ Արմեն Հարությունյանի հետ զրույցը, որ ներկայացնում ենք ստորև:

– Պարոն Հարությունյան, սեպտեմբերի 13-14-ին մենք ազգովի, և հատկապես Սյունիքում, նոր փորձության ենթարկվեցինք, որի հետևանքները դեռ շարունակում ենք կրել... Արդյո՞ք այդ օրերին և հիմա բացահանքի աշխատանքներում դադար կամ պարապուրդ է եղել, արդյո՞ք խուճապի դեպքեր են նկատվել, թե՞...

– Լարված այդ օրերին և դրանից հետո մեր աշխատանքների ռիթմը չի խախտվել: Բնականաբար, շատ մտահոգված ենք եղել և մնում ենք մտահոգ, բայց խուճապի ոչ մի նշան:

Մեր աշխատակիցներից շատերն առաջին իսկ օրը կամավորագրվեցին ու մեկնեցին պաշտպանելու Սյունիքի սահմանները. նրանց աշխատավարձերը, բնականաբար, կպահպանվեն: Կարողացել ենք նրանց փոխարինողներ գտնել, որպեսզի աշխատանքը չտուժի:

Իհարկե, պետք է աշխատենք ամենալարված պայմաններում անգամ, քանզի երկրի համար ներկայիս ծանր վիճակում տնտեսությունն է, որ կարող է մեր դիմադրության հիմքերի հիմքը լինել, և դա գիտակցում են բոլոր լեռնագործները:

– Հիմա՝ արտադրական գործընթացի մասին. նախ՝ ներկայացրեք Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բացահան-

Հանքագործների հետ բազմաթիվ հանդիպումներից, զրույցներից առանձնացնենք բացահանքի պետ Արմեն Հարությունյանի հետ զրույցը:

ՔԸ:

– Քաջարանի բացահանքը զբաղեցնում է 6 քառակուսի կմ տարածք: Մեր խնդիրն է՝ապահովել հանքաքարի անխափան մատակարարումը հարստացուցիչ ֆաբրիկա:

Դեպի հանքաքարի բլոկներ հասանելիություն ստանալու համար, պարբերաբար անհրաժեշտություն է առաջանում հեռացնել օգտակար հանածո չպարունակող, այսպես կոչված «դատարկ» ապարները. դրանք ուղարկում ենք «դատարկ» ապարների լցակույտեր, իսկ հանքանյութը՝ ջարդման տեղամաս:

– Ինչպե՞ս է որոշվում՝ ապարը դատա՞րկ է, թե՞ հանքանյութ է պարունակում:

– Հանքավայրի ամբողջ տարածքը հասցեագրված է՝ ամեն մի քառակուսի մետրի կտրվածքով:

Աշխատանքները սկսում ենք հետախուզական-որոնողական գործողություններից՝ կատարելով հետախուզական հորատումներ, որի արդյունքում ամեն մի հորատանցքից վերցված նյութն ուղարկվում է լաբորատորիա, հետազոտվում և ճշտվում, թե որտեղ ինչ կա: Ընդ որում՝ լաբորատորիան կոմբինատի կառույցներից է և համալրված է բարձրակարգ մասնագետներով:

Միայն դրանից հետո են պայթեցման համար նախապատրաստական աշխատանքներ տարվում և պայթեցումներ կատարվում:

Պայթեցումից հետո էլ, ասենք, A հատվածից ստացված հանույթն ուղարկում ենք հետագա մշակման, B հատվածից ստացվածը՝ լցակույտ:

Այդ ամենը կատարվում է ժամանակակից բարձող մեխանիզմներով, որոնցից ամենափոքրի շերեփը 6, ամենամեծինը՝ 22.5 խորանարդ մ տարողություն ունի:

– Բարձող մեքենաներ, էքսկավատորներ..., դրանք, որքանով տեսնում ենք, բավականին ժամանակակից են:

– Խորհրդային տարիներից մնացած էքսկավատորներ էլ կան, բայց հիմնականում ամերիկյան «Կատարպիլլեր» ֆիրմայի արտադրանք են՝ հակադարձ շերեփով և ուղղահայաց շերեփով: Ունենք և՛ անվավոր, և՛ թրթուրավոր բարձող մեքենաներ:

Իսկ հանքանյութը տեղափոխելու համար ունենք երեք տեսակի մեքենա՝ 90, 130 և 180 տոննա բեռնատարողությամբ:

Եղանակային պայմանները մեզ չեն խանգարում. մառախուղ կլինի, թե անձրև ու ձյուն, աշխատում ենք. օգտագործվող մեքենաներն այդ հնարավորությունը տալիս են:

– Տարիներ շարունակ հանքանյութի տեղափոխման հիմնական միջոցը «Բելազ» մակնիշի մեքենաներն էին...

– Հիմա էլ բելառուսական արտադրության «Բելազ»-ներ ունենք, բայց մեծամասամբ ամերիկյան ֆիրմայի մեքենաներ են, որոնք ավելի հուսալի են:

– Կարելի՞ է ենթադրել, որ այդ մեքենաները տվյալ ոլորտի վերջին խոսքն են:

– Ամենավերջինը չեն, բայց լավագույններից են:

Հորատման տեխնիկան, օրինակ,

– 90, 130, 180 տոննա տարողությամբ մեքենաները վարելու համար վարորդը պետք է ունենա թույլտվություն: Անգամ 90 տոննա տարողությամբ մեքենայի վարորդը չի կարող վարել 130 տոննա տարողությամբ մեքենան, իսկ 180 տոննա տարողությամբ մեքենայի վարորդը կարող է վարել ավելի ցածր բեռնատարողությամբ մեքենաներ: Պետք է քննություն հանձնել և ստանալ թույլտվություն...

Հանքավայրի ներսի ճանապարհների երկարությունը մոտ 42 կմ է, որի 80 տոկոսն օգտագործվում է անընդհատ: Իսկ մեզ մոտ շուրջօրյա աշխատանք է: Դա նշանակում է, որ ճանապարհները պետք է որևէ դժվարություն չհարուցեն: Ընդ որում՝ ճանապարհները ժամանակ առ ժամանակ փոփոխվում են՝ հանքուղիների փոփոխությանը համահունչ:

ավելի շատ ռուսական արտադրության է: Հիմնականում օգտագործում ենք «СБШ-250», քանզի դրանք աշխատում են հոսանքով և սպասարկումը բավականին էժան է: Օգտագործում ենք նաև «Атлас копко» ֆիրմայի արտադրանք, որն ավելի արագաշարժ է:

– Մենք հիմա կանգնած ենք հանքավայրի ամենաբարձր կետերից մեկում՝ դիտակետում, և տեսնում ենք անթիվ անհամար հանքաճյուղեր, ճանապարհներ՝ ճյուղավորված... Այդ ճանապարհների պահպանվածության բարձր մակարդակը չէր կարելի չնկատել:

– Հանքավայրի ներսի ճանապարհների երկարությունը մոտ 42 կմ է, որի 80 տոկոսն օգտագործվում է անընդհատ: Իսկ մեզ մոտ շուրջօրյա աշխատանք է: Դա նշանակում է, որ ճանապարհները պետք է որևէ դժվարություն չհարուցեն: Ընդ որում՝ ճանապարհները ժամանակ առ ժամանակ փոփոխվում են՝ հանքուղիների փոփոխությանը համահունչ:

Առաջացած խնդիրներն այսօրվա ղեկավարությունը լուծում է օպերատիվորեն, հետևողականորեն. դա շատ կարևոր հանգամանք է, այլապես դժվար կլինի խոսել որևէ հաջողության մասին:

– Մենք բավականին երկար շրջեցինք բացահանքի տարածքում, ճանապարհներին՝ ամենուրեք ջուր էր ցանված, փոշու ոչ մի հետք... Կարծում ենք՝ հանքում աշխատողի համար այդ հանգամանքն ամենևին էլ երկրորդական չէ:

– Վեց ջրցան մեքենա ունենք, որոնք աշխատում են՝ պայմանավորված եղանակային պայմաններով: Ավելի շոգ եղանակներին ջուրը ցանում ենք 20 րոպեն մեկ և հետևում, որ փոշի չլինի: Դա, ճիշտ նկատեցիք, կարևոր է մարդկանց առողջության պահպանման համար:

– Մենք արդեն խոսեցինք բացահանքում օգտագործվող մեքենաների մասին, որոնք՝ եթե անգամ գիտության և տեխնիկայի վերջին խոսքը չեն, ապա ամենաարդիականներից են: Դա նշանակում է, որ բախվում եք կադրերի պատրաստման խնդրին: Ավելի պարզ արտահայտվենք՝ «Բելազ»-ի վարորդը, օրինակ, դժվար թե կարողանա միանգամից վարել 180 տոննա տարողությամբ ամերիկյան արտադրության բեռնատարը: Ի՞նչ անել:

– 90, 130, 180 տոննա տարողությամբ մեքենաները վարելու համար վարորդը պետք է ունենա թույլտվություն: Անգամ 90 տոննա տարողությամբ մեքենայի վարորդը չի կարող վարել 130

Ութոնանա տարողությամբ մեքենան, իսկ 180 տոննա տարողությամբ մեքենայի վարորդը կարող է վարել ավելի ցածր բեռնատարողությամբ մեքենաներ: Պետք է քննություն հանձնել և ստանալ թույլտվություն...

Իսկապես, այդ մեքենաները վարելն ամեն վարորդի բանը չէ: Նստել 5-6 մ բարձրության վրա գտնվող ղեկի մոտ և վարել 360 տոննա ընդհանուր քաշով (բեռնված լինելու դեպքում) մեքենա՝ ցեխ կլինի, ձյուն կլինի, սառույց կլինի... Ընդ որում՝ այդ մեքենաների ավտոդողերը կապրոնից են, ռետինե չեն... Մի խոսքով՝ չափազանց բարդ և պատասխանատու գործ է:

– Եվ որտե՞ղ են վարորդները պատրաստվում, դասընթացներ անցնում:

– Եվ դրսից են դասընթացավարներ գալիս, և՛ մեզ մոտ կան...

Այդ ամենը միայն խոշոր բեռնատարների վարորդներին չի վերաբերում, այլ նաև բոլոր բարձողներին՝ հակադարձ կլինի, թե՝ ուղղահայաց, բոլորն են անցնում դասընթացներով:

Ի վերջո դա բավականին պատասխանատու գործ է՝ մարդը 8 ժամ գործի մեջ է, ինքը պիտի կարողանա չվնասել վստահված տեխնիկան, դիմացի տեխնիկան, պիտի չափազանց ուշադիր լինի, մի փոքր «ատամը» կարող է հանքանյութի հետ հասնել ջարդման արտադրամաս և խնդիրներ առաջացնել ու արտադրությունը կանգնեցնելու պատճառ հանդիսանալ:

Պատահական չէ, որ, օրինակ, տասը հոգի կարող է մասնակցել փորձաշրջանի, բայց երկուսը կամ երեքն արդարացնեն ու դառնան մեքենավար կամ օպերատոր:

– Եվ որպեսզի բացահանքի մասին մեր պատկերացումն ամբողջանա՝ այսպիսի հարցի պատասխան կուզենայինք իմանալ՝ օրական որքա՞ն հանքաքար եք արդյունահանում:

– Դատարկ ապարների հետ միասին՝ խոսքն օրական 100 հազար տոննայի մասին է:

– Հսկայածավալ այդ աշխատանքը կատարելու համար քանի՞ մարդ է ընդգրկված:

– Բացահանքում ներկայումս աշխատում է 402 հոգի, բայց կան և առանձին ծառայություններ՝ ճանապարհային տեղամաս, փոխադրամիջոցների վերանորոգման ավտոհավաքակայան, բուժպասարկում, որոնք իմ ղեկավարության ներքո չեն:

Մի ուշագրավ փաստ՝ աշխատողների մոտ 10 տոկոսը կանայք են՝ բուժքույրեր, օպերատորներ, հանդերձապահներ, հավաքարարներ...

– Աշխատանքների անվտանգության ապահովման հարցին կուզենայինք անդրադառնալ. հարյուրավոր մարդիկ, մեծաքանակ տեխնիկա, պայթեցումներ, լեռնազանգվածներ... Այդ ամենը, անտարակույս, ենթադրում է կարգապահություն, անվտանգության հստակ կանոններ և այդ կանոնների անվերապահ պահպանում: Կարողանո՞ւմ եք գլուխ բերել:

– Հանքարդյունաբերության մեջ առաջին խնդիրն անվտանգությունն է: Մեր բոլոր աշխատանքները կատարվում են անվտանգության աշխատակիցների հսկողությամբ: Արտադրական անվտանգության աշխատակիցները հանքում են ամեն օր: Մենք նույնիսկ մեր անվտանգության ինժեներն ունենք հանքում, ով ամեն րոպե տեղում է...

Այստեղ, իսկապես, անվտանգ աշխատանք չկա՝ սկսած հորատումներից, պայթեցումներից, բարձելուց մինչև հանքանյութի փոխադրում... Բոլոր այդ աշխատանքներն իրական վտանգ են ներկայացնում, ինչի համար էլ պարբերաբար հրահանգավորումներ ենք կատարում՝ ամիսը մեկ անգամ, եռամսյակը մեկ անգամ, նայած թե որ աշխատանքի մասին է խոսքը: Կա նաև ամենօրյա հրահանգավորում. աշխատակիցը եկավ գործի, ստանում է հրահանգավորում և նոր միայն անցնում իր պարտականությունների կատարմանը:

– Մեծ թվով տեխնիկա, աշխատանք լեռնազանգվածի հետ... Հավանաբար մեքենաների սպասարկման խնդիր էլ ունեք: 24 ժամ աշխատող մեքենան, բնականաբար, նորմալ սպասարկում է պահանջում:

– Օպերատորների, մեքենավարների աշխատանքով էլ շատ բան է պայմանավորված... Նույն մեքենան ես էլ կվարեմ, Դուք էլ կվարեք: Մեկիս մեքենան շուտ կփչանա, մյուսինը չի փչանա կամ ուշ կփչանա. դա կախված է մեքենավարից, նրա վարպետությունից: Նաև այդ հանգամանքն ենք հաշվի առնում նրանց վարձատրելիս: Այո, շատ կարևոր է, թե ոնց է պահպանվում մեքենան, ոնց է կատարվում բարձումը...

Ինչ վերաբերում է ընթացիկ նորոգումներին, ունենք փոխադրամիջոցների ավտոհավաքակայան, որն էլ զբաղվում է այդ հարցերով:

– Դուք նշեցիք վարձատրության չափորոշիչներից մեկը, ուրիշ ի՞նչ կարող եք ասել վարձատրության վերաբերյալ, չէ՞ որ խոսքը ոչ սովորական պայմաններում աշխատող մարդկանց վարձատրության մասին է:

– Մենք այս պահին գտնվում ենք 2150 մ բարձրության վրա: Վարորդներից յուրաքանչյուրն օրական 22-23 անգամ 180, 260 կամ 360 տոննանոց մեքենայով բարձրանում է 400 մ և նույնքան էլ իջնում... Բազմաթիվ ռիսկեր կան՝ ճնշման հնարավոր բարձրացում, անվտանգության հարցեր, ծանրաբեռնվածություն, եղանակային պայմաններ...

Իհարկե, այդ մարդիկ պետք է լավ վարձատրվեն: Իհարկե, բացահանքում աշխատողը պետք է ավելին ստանա, քան գրասենյակային աշխատողը: Ի վերջո մարդը ստանում է այնքան գումար, որքան աշխատում է:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ և
ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

ԲԱՑԱՀԱՆՔ

1830 հորիզոնականում. հայացք ներսից...

2022 թ. սեպտեմբերի 20-ին Զանգեզուրի պղնձամոլիբդենային բացահանք կատարած այցելության ընթացքում հերթական կանգառը լեռնահանքի 1830 հորիզոնականն էր...
Այդտեղ և՛ հորատման աշխատանքներ էին կատարվում, և՛ պայթեցումներ նախապատրաստում...
Մեզ նախևառաջ հետաքրքրում էին հանքագործների տրամադրությունը, նրանց մտածումները և՛ կոմբինատի, և՛ մերօրյա անցուդարձի, և՛ անցած-գնացած օրերի մասին: Այդ հարցերի վերաբերյալ ուշագրավ պատասխաններ ստացանք լեռնագործների ու հատկապես Ապրես Գալստյանի հետ զրույցի ընթացքում: Ավելի ճիշտ՝ նրանց պատասխանները, կարծեք, յուրօրինակ պատուհան բացեցին, որտեղից կարելի է դիտարկել Զանգեզուրի կոմբինատի ներքին կյանքի, մարդկային հարաբերությունների, աշխատանքային առօրյայի, նաև ավանդույթների պատկերը:
1960 թ. ծնված Ապրես Գալստյանը 1983-ին ավարտել է Պոլիտեխնիկ ինստիտուտը՝ ինժեներ-մեխանիկի որակավորմամբ: Երկար տարիներ աշխատել է Կապանի ավտոնորոգման գործարանում, իսկ 1996-ից՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: 2004-ից բացահանքում է, տարբեր աշխատանքներ է կատարել, ներկայումս էլ բացահանքի մեխանիկական կառավարչության ղեկավարն է: Դա մի ստորաբաժանում է, որը զբաղվում է մեխանիզմների վերանորոգմամբ և շահագործմամբ:
Մեզ հետաքրքրող առաջին հարցը համահունչ էր զրուցակցի անցած ճանապարհին՝ ***«Հարգելի Ապրես, 1983-ից առնչվում եք հանքարդյունաբերությանը, իսկ 28 տարի շարունակ՝ անմիջապես ՀՊՄԿ-ին: Փորձենք հետադարձ հայացք ձգել՝ արդյո՞ք շատ բան է փոխվել տարիների ընթացքում»:***

– Եթե վերցնենք Քաջարանը, ապա տարիներ առաջ աշխատում էինք փոքր մեքենաներով, սկզբից՝ «Կռազ»-ներով, հետո՝ 25 տ տարողությամբ «Բելազ»-ներով, հետո՝ 30, 40, 55 տոննանոց... Հիմա, ինչպես տեսնում եք, աշխատում ենք «Կատերպիլլեր» ֆիրմայի ավտոհնքնաթափերով: Շատ բան է փոխվել՝ հանույթի ծավալը, աշխատողների քանակը. եթե առաջ 1300 հոգի էին աշխատում, ներկայումս՝ մոտ 5 հազար...

– Ասում եք շատ բան է փոխվել. արդյո՞ք մարդը նույնպես փոխվել է, արդյո՞ք գործի հանդեպ վերաբերմունքն ու պատասխանատվությունն էլ են փոխվել:

– Կոմբինատը դառնում է 70 տարեկան, յոթ տասնամյակ առաջ չկային այնպիսի մասնագետներ, ինչպիսիք այսօր:

Մեծ հայրենականից հետո Կապանի, Գորիսի շրջանների գյուղերից մարդիկ, նաև որբացած երեխաներ, եկել-հավաքվել են այստեղ՝ Քաջարանում, ընտանիք կազմել, մասնագիտություն ձեռք բերել, հետո՝ աստիճանաբար խորացել մասնագիտության մեջ: Այդպիսի սկիզբ է ունեցել կոմբինատը...

Ժամանակի ընթացքում բարելավվել են աշխատանքի պայմանները, երբեմնի ձեռքի աշխատանքը մեքենայացվել է, արտադրողականությունն է բարձրացել, աշխատանքի վարձատրությունն է բարձրացել, մարդկանց սոցիալ-կենցաղային հոգսերի հանդեպ վերաբերմունքն է փոխվել...

– Ձեր խոսքերից եզրակացնում ենք՝ և՛ Դուք եք գոհ ու բավարարված, և՛ ընտանիքդ. ճի՞շտ նկատեցինք:

– Իմ անունից կարող եմ ասել՝ լիովին բավարարված եմ...

Ասածս հիմնավորող մի քանի փաստ վկայակոչեմ. ուսանող զավակիդ ուսման վճարը փոխանցում են, գնում ես բժշկական հետազոտության, անգամ սրտի վիրահատության կամ ստենտավորման՝ վճարում են: Վերջերս՝ սիրտս են ստենտավորել. միայն ներկայացել եմ, մնացած հոգսերից ազատված եմ եղել...

Ընկերության ուշադրության կենտրոնում են ոչ միայն հանքագործն ու նրա ընտանիքը, այլև մանկապարտեզը, դպրոցը: Այնպես որ՝ շատ բան է փոխվել և՛ սոցիալական, և ապահովագրական իմաստով:

Տեսեք՝ մեր ընկերությունը երկրի թիվ 1 հարկատուն է: Բազ-

Գարուն Պողոսյան

Դերենիկ Ալավերդյան

Արտաշես Աբրահամյան

մաթիվ գործոններով է դա պայմանավորված, որոնցից մեկն էլ կոլեկտիվի համախմբվածությունն է, մարդու հանդեպ ուշադրությունը:

– Դուք պատասխանատու պաշտոն եք զբաղեցնում բացահանքում՝ մեխանիկական կառավարչությունն եք գլխավորում: Կարողանո՞ւմ եք (ծառայության աշխատակիցների հետ մեկտեղ) անընդհատ նորացվող տեխնիկային համահունչ քայլել, տիրապետել նորություններին:

– Ամեն ինչ մարդուց է կախված, եթե մարդ չի ուզում սովորել, եթե ձգտում չկա, ապա ոչինչ չի ստացվի: Ավելին՝ եթե մարդը, ինժեները չկարդա, չսովորի, իր վրա չաշխատի՝ դարձյալ հաջողության չի հասնի: Ինքնակրթությունն այս պարագայում հատկապես պարտադիր պայման է, անկախ այն բանից, թե սկզբնական կամ մասնագիտական ինչ կրթություն ունի: Մարդը մեզ մոտ է գալիս աշխատելու, արդյունք տալու, ուրեմն և պարտավոր է տեխնիկական առաջադիմությանը հաղորդակից լինել:

– Վաստակաշատ հանքագործ եք, ճանապարհի անցած մասնագետ, ի՞նչ կուզենայիք ասել Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի հիմնադրման 70-ամյակի կապակցությամբ:

– Անշուշտ, շնորհավորանքի խոսք ունեմ, բայց նախևառաջ մաղթանքներ. հայոց աշխարհին՝ արժանապատիվ խաղաղություն, եթե չլինի խաղաղություն ու եթե չունենանք պաշտպանված հայրենիք՝ չի լինի ոչ ստեղծագործ աշխատանք, ոչ առաջադիմություն: Այնուհետև՝ մեր երկրին հզորացում եմ ցանկանում: Ամենագլխավորը՝ թև ու թիկունք լինենք հայ զինվորին, մեր բանակին: Թող շնորհավոր լինի մեր կոմբինատի փառահեղ տարեդարձը:

* * *

Բացահանքի այդ հորիզոնականում հանդիպեցինք նաև պայթեցնող **Գարուն Պողոսյանին**, ով տվյալ տեղամասում 15 տարվա աշխատանքի փորձ ունի: **Դերենիկ Ալավերդյանին** հանդիպեցինք,

ով 2012-ից աշխատում է բացահանքում: Նախկին փականագործը 2019-ից բարձման տեղամասի էներգետիկն է՝ բարձրագույն կրթությամբ: Նաև **Արտաշես Աբրահամյանին** հանդիպեցինք, ով հորատման հաստոցի օպերատոր է, ՀՊՄԿ-ում աշխատում է 1998 թվականից:

Նրանք նույնպես ցանկացան մեր թերթի միջոցով կոմբինատի հիմնադրման 70-ամյակի կապակցությամբ շնորհավորանքի խոսք հղել իրենց գործընկերներին, լեռնագործների նախորդ սերունդներին, ընկերության այսօրվա պատասխանատուներին:

Զրույցի ընթացքում պարզվեց նաև, որ այդտեղ սերնդափոխությունն առաջնահերթ հարցերից է: Բազմաթիվ են հանքագործների դինաստիաները. որոշ դեպքերում գործ ունենք միևնույն գերդաստանի երեք սերնդի ներկայացուցիչների հետ:

Չէր կարելի չնկատել հարգանքն ու պատկառանքը հանքագործների նախորդ սերունդների ներկայացուցիչների հանդեպ, որոնց տասնամյակների ջանքերի ու նվիրական աշխատանքի շնորհիվ է կերտվել կոմբինատի փառապանծ կենսագրությունը: **Արտաշես Աբրահամյանը, օրինակ, հիշում է ոչ վաղանցյալի գործընկերներին՝ Վլադիկ Գրիգորյանին, Ռուբիկ Գրիգորյանին, Գևորգ Զաքարյանին, Էդիկ Առաքելյանին, որոնց հետ մշտական կապի մեջ է: Հիշում է նաև իր երեք աշակերտին, որոնցից մեկը՝ Արսեն Օհանջանյանը, Արցախյան երրորդ պատերազմում վիրավորված ազատամարտիկ է և արդեն իսկ տիրապետում է ընտրած մասնագիտությանը:**

Մի տպավորություն և.ս. բոլորն ունեն Զանգեզուրի կոմբինատի՝ երկրի տնտեսության մեջ ունեցած առանձնահատուկ դերի գիտակցում: Բոլորի մեջ կա մտահոգություն երկրի ու մասնավորապես Սյունիքի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Յուրաքանչյուրն այն համոզմունքին է, որ հզոր տնտեսությամբ կարող է երկիրը դիմագրավել մերօրյա սպառնալիքներին ու մարտահրավերներին, որ հզոր թիկունքով կարող է ամուր լինել երկրի սահմանը, որ կայուն տնտեսությամբ կարող ենք ապահովել հայոց զինվորի տիրական ներկայությունը մեր վտանգված պետական սահմաններին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆԻ ԲԱԲԱԽՈՂ ՍԻՐՏԸ



Հարստացուցիչ ֆաբրիկան, որ հանքարդյունաբերական հսկայի բաբախող սիրտն է

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայում ենք... Շրջում ենք բոլոր տեղամասերում, շփվում աշխատակիցների հետ, մասնագետների օգնությամբ ծանոթանում ոլորտի մեքենասարքավորումներին, որոնց մի մասն արդիական է ու տեղադրվել է նաև ընթացիկ տարում: Շրջում ենք՝ փորձելով ամբողջական պատկերացում կազմել ֆաբրիկայի մասին, որը, կարծեք, մի ինքնատիպ և ամբողջական ձեռնարկություն է հանքարդյունաբերական հսկայի կազմում, շրջում ենք՝ հիացմունք ապրելով, որ հանքանյութի հարստացման առաջադեմ տեխնոլոգիաները, նորագույն աղացներն ու ֆլոտացիոն մեքենաներն արդեն հասանելի են ՀՊՄԿ ընկերությանը...

Մեզ ուղեկցում և արտադրական գործընթացի վերաբերյալ բացատրություններ է տալիս **ֆաբրիկայի պետ Անդրանիկ Ավազյանը:**

Շրջայցի վերջում ֆաբրիկայի պետի հետ զրույցով փորձեցինք ընդհանրացնել մեր տեսածն ու լսածը, նաև ստանալ հետաքրքրող հարցերի պատասխանը:

– Պարոն Ավազյան, նախ՝ շնորհակալություն հետաքրքիր շրջագայության և հանգամանալից պարզաբանումների համար: Հիմա փորձենք մեր զրույցին մասնակից դարձնել ընթերցողին: Ի՞նչ է իրենից ներկայացնում հարստացուցիչ ֆաբրիկան. սկսենք տեխնոլոգիական գործընթացի սկզբից և հասնենք դրանց տրամաբանական ավարտին:

– Ինքնաթափ մեքենաներով հանքաքարը բացահանքից բերվում է հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամաս, լցվում հանքաքարի ընդունիչ զետեղարաններ: Ջարդումն իրականացվում է խոշոր, միջին և մանր կոնային ջարդիչներով:

Ջարդված հանքաքարի պահեստներից՝ թիթեղավոր սնուցիչների և փոխադրաժապավենների միջոցով տեղափոխվում է մանրացման տեղամասեր:

Մանրացված ապարախյուսը պոմպերով մղվում է հիդրոցիկլոններ, որտեղ դասակարգումից հետո ավելի խոշոր մասնիկները, ավազներն ուղղվում են երկրորդ փուլի մանրացման, իսկ անհրաժեշտ չափսերով մասնիկները մղվում են պղինձ-մոլիբդենային կոլեկտիվ խտանյութի ֆլոտացման փուլ, որտեղ տրվում են համապատասխան ազդանյութեր և հաջորդող պրոցեսներում արդեն կոլեկտիվ խտանյութից առանձնացվում են պղնձի և մոլիբդենի խտանյութերը:

Կարծում եմ՝ ընթերցողին հետաքրքիր չեն լինի տեխնոլոգիական գործընթացների բոլոր բարդ մանրամասները, միայն ասեմ, որ որոշ ֆլոտացիոն հարստացման փուլեր անցնելուց հետո պղնձի և մոլիբդենի պատրաստի խտանյութերն ուղղվում են ջրազրկման, որից հետո ֆիլտրվում են և որպես ապրանքային խտանյութ առաքվում սպառողին:

– Ըստ երևույթին կարող ենք փաստել՝ ֆաբրիկան ոչ միայն կոմբինատի առանցքային արտադրական օղակն է, այլև

բազմաթիվ տեխնոլոգիական գործընթացների համակցություն...

– Ճիշտ նկատեցիք՝ հանքանյութերի ֆիզիկաքիմիական հատկությունների տարբերությունների վրա հիմնված տեխնոլոգիական գործընթացների փոխկապակցված մի ամբողջական համակարգ է հարստացուցիչ ֆաբրիկան: Տասնյակից ավելի չափորոշիչներ կան, որոնք պետք է վերահսկվեն և պահպանվեն...

– Սովորաբար, երբ խոսվում է կոմբինատին առնչվող տեխնիկական առաջադիմության մասին, բոլորը մտովի (ակամա) սևեռվում են ֆաբրիկայի վրա: Հարստացուցիչ ֆաբրիկայի տեխնիկական հագեցվածության մասին կուզենայինք իմանալ, որքանո՞վ են արդիական գործածվող մեքենասարքավորումները:

– 2011 թվականին, երբ շահագործման հանձնվեց կիսաինքնամանրացման և գնդաղացների տեղամասը, տեղադրվեցին «FLSmidth» դանիական ընկերության սարքավորումներ. այդ ընկերությունը զբաղվում է գիտահետազոտական աշխատանքներով, օգտակար հանածոների հարստացման բնագավառի մեքենասարքավորումների նախագծմամբ և արտադրությամբ, ներդրմամբ և մոդեռնացմամբ: Տվյալ ընկերությունը մասնաճյուղ ունի աշխարհի ավելի քան 60 երկրում:

Հիմա վերազինման գործընթաց է... Ինքնաղացման և գնդաղացների տեղամասում բավականին հին սարքավորումներ են մինչև այժմ օգտագործվում: Ներկայումս դրանք հերթականությամբ փոխելու և նորացնելու նախագիծ է իրականացվում: Եվ դա կատարվում է այնպես, որ արտադրական գործընթացը չխափանվի: Այժմ միևնույն տեղամասում ընթանում են ավելի բարձր արտադրողականությամբ աղացամեքենայի մոնտաժման աշխատանքներ: Հետևաբար՝ մոտ ապագայում մեկ սխեմա կհանվի և կփոխվի, որից հետո միայն հաջորդաբար կիրականացնենք մյուսների փոխարինումը նորերով: Եվ այդպես շարունակ...

Ֆաբրիկայի արտադրողականության բարձրացման և ընդլայնման ծրագրի շրջանակում՝ նախագծման փուլում են նաև նոր ֆլոտոմեքենաների ձեռքբերումն ու ներդնումն արտադրությունում:

– Աշխատակիցների քանակով էլ, կարծեք, ընկերության ամենամեծ օղակն է հարստացուցիչ ֆաբրիկան:

– Այժմ հարստացուցիչ ֆաբրիկայում աշխատում է 637 մարդ: Կազմակերպչական-կառուցվածքային փոփոխություններ են տեղի ունեցել, և որոշ տեղամասերի ենթակայություն փոխվել է: Օրինակ, տեխնիկական կանոնակարգման կառավարչությունը և այլն:

Ֆաբրիկան, հիրավի, կոմբինատի ամենախոշոր արտադրամասն է, աշխատանքը շուրջօրյա է՝ առանց դադարի, շաբաթ-կիրակի և տոն օրեր չկան, ութժամյա գրաֆիկով, օրը երեք հերթափոխով: Ամիսը մեկ էլ ֆաբրիկան կանգնեցվում է պլանային վերանորոգման:

– Դժվա՞ր է ֆաբրիկայում աշխատանքի ընդունվելը, արդյո՞ք նեղ մասնագետներ են միայն պահանջվում:

– Ցանկալի է, որ մասնագիտական աշխատանք կատարող սկսնակներն ունենան համապատասխան կրթություն՝ հարստացման, մետալուրգիայի գծով: Իսկ սպասարկման կառավարչությունում աշխատակիցներ ընդունելիս կարևորվում են փորձը, մասնագիտական հմտությունները:

Որոշ մասնագետներ էլ պետք է ունենան համապատասխան վկայական, որից հետո տեղում փորձնական առաջադրանք են ստանում, և գործնական աշխատանքում լավագույն որակներ դրսևորած թեկնածուներին առաջնություն է տրվում: Այդ ամենը կատարվում է նախնական հարցազրույցով անցած թեկնածուների հետ:

– Հարստացուցիչ ֆաբրիկայի ոչ դյուրին աշխատանքային տեղամասերում նաև կանանց տեսանք...

– Կանայք հիմնականում աշխատում են որպես խտացուցիչի ապարատավար, ռեագենտ լուծող, հանդերձապահ, գործավար, փաթեթավորող և այլն: Ունենք նաև սնիչի մեքենավարներ, ովքեր ապահովում են ջարդման տեղամասից հանքաքարի մատակարարումն աղացամեքենաներին. դա բարդ աշխատանք է կանանց համար՝ ֆիզիկական ջանքեր պահանջող, բայց նրանք հաջողությամբ են իրականացնում իրենց պարտականությունները:

122 կին է աշխատում ֆաբրիկայում:

– Եվ, այդ բոլորով հանդերձ, ո՞վ է հարստացուցիչ ֆաբրիկայի գլխավոր դեմքը, առանցքային դերակատարը:

– Հարստացուցիչ ֆաբրիկայի յուրաքանչյուր աշխատակցի դերն էլ կարևոր է: Տեխնոլոգիական հերթափոխերի անձնակազմը վերահսկում և կառավարում է պլանային ցուցանիշները, տեխնոլոգիական պարամետրերի իրականացումն ու բարելավումը:

Արտադրության սպասարկման անձնակազմն էլ ապահովում է տեխնոլոգիական սարքավորումների անընդհատ և անխափան աշխատանքային ռեժիմը, ժամանակին ու որակյալ վերանորոգման աշխատանքների իրականացումը և պարապուրդները նվազագույնի հասցնելուն միտված գործողությունները:

– Այդքան մեքենասարքավորումներ, տեխնոլոգիական պրոցեսներ... Աշխատանքի անվտանգության ապահովումը, կարծում ենք, առաջնահերթ խնդիր է:

– Լեռնահանքային արդյունաբերությունը, աշխատանքի անվտանգության տեսակետից, բազմաթիվ ռիսկեր է պարունակում: Պատահական չէ, որ ամեն օր բոլորին կրկին անվտանգ, անփորձանք աշխատանք եմ մաղթում: Առաջինը՝ անվտանգություն, հետո՝ արտադրություն, այսինքն՝ հենց ինքը՝ անվտանգ արտադրություն: Ամեն անգամ հորդորում եմ՝ չշտապել, հարկ եղած դեպքում դիմել օգնության, հետևել անվտանգության կանոններին: Աշխատանքի անվտանգության հարցում երկրորդական հարցեր և մանրուքներ չկան ու չեն կարող լինել:

– Աշխարհում խառը ժամանակներ են, կարողանո՞ւմ է ընկերությունը ժամանակին տեղ հասցնել անհրաժեշտ ռեագենտները, չէ՞ որ անխուսափելի են լոգիստիկ դժվարությունները:

– Լոգիստիկան շատ կարևոր խնդիր է մեր օրերում, ուստի և (խելամիտ պլանավորման շնորհիվ) միանգամից մի քանի ամսվա կամ նույնիսկ մեկ տարվա պաշար ենք նախապես պատվիրում ու ձեռք բերում, որ խնդիրների առաջ չկանգնենք: Նկատի ունեմ հատկապես ստրատեգիական նշանակության նյութերը՝ ռեագենտներ, գնդեր, պահեստամասեր...

– Շուրջօրյա աշխատանք՝ կապված հանքաքարի վերամշակման հետ, փոշի, բայց... մաքրություն ամբողջ Ֆաբրիկայում, ինչը չէր կարելի չնկատել: Օդափոխությունն էլ, կարծեք, պատշաճ մակարդակի վրա է...

– Տարածքի մաքրությունը կարևոր պայման է աշխատանքի անվտանգ կազմակերպման և նորմալ աշխատանքային մթնոլորտ ապահովելու համար: Աշխատակիցները սովորել են, գիտեն, որ իրենց հերթափոխից հետո հաջորդ հերթափոխն է գալու, ուրեմն և ամեն ինչ մաքուր վիճակում պիտի լինի: Ասել է թե՝ յուրաքանչյուրն իր հերթափոխի ժամանակ իր տարածքը պետք է մաքուր պահի և այդպես էլ հանձնի:

Օդափոխության գործող համակարգերը նախագծվում է բարելավել, առաջնայինը ռեագենտային բաժինն է: Ավելի հզորացված, կատարելագործված համակարգ պետք է ներդրվի, ինչը նախագծման փուլում է:

* * *

Մեր շրջայցի ընթացքում, աշխատակիցների հետ շփումներում, վերստին համոզվեցինք, թե որքան կարևոր է ֆաբրիկայի կառավարումը, մեքենասարքավորումների նորոգումը, վթարային իրավիճակների կանոնավոր վերացումը: Մի քանի տեղ ականատես եղանք վերանորոգման աշխատանքների, հանդիպեցինք նաև ֆաբրիկայի մեխանիկական կառավարչության ղեկավար Էրիկ Ավագյանին,

Հարստացուցիչ ֆաբրիկայի յուրաքանչյուր աշխատակցի դերն էլ կարևոր է: Տեխնոլոգիական հերթափոխերի անձնակազմը վերահսկում և կառավարում է պլանային ցուցանիշները, տեխնոլոգիական պարամետրերի իրականացումն ու բարելավումը:

ով պատասխանեց մեր ստեղծագործական խմբին հետաքրքրող հարցերին:

– Հարգելի Էրիկ, լինելով ֆաբրիկայի բոլոր տեղամասերում՝ տեսանք, զգացինք, թե որքան կարևորություն ունեն տեխնիկական սպասարկումը, վերանորոգումները, անսարքությունների վերացումը և մեքենասարքավորումների անխափան գործունեության ապահովումը:

– Ֆաբրիկայի տեխնիկական սպասարկումը և մեխանիկական վերանորոգումները կատարվում են մեխանիկական կառավարչության կողմից, որն ունի 195 աշխատակից: Մենք ունենք վերանորոգումների ժամանակացույց օրվա, ամսվա, տարվա կտրվածքով:

Աշխատանքների ծավալը շատ մեծ է, ընդ որում՝ աշխատանքները կատարվում են և՛ հերթափոխով, և՛ ցերեկային վերանորոգող անձնակազմով: Հերթափոխով աշխատողների մեջ կա առանձին խումբ, որը վերանորոգում է աղացները, լուծում մյուս խնդիրները, որ առաջանում են 24 ժամվա ընթացքում: Ցերեկային խումբը վերանորոգումներն իրականացնում է ըստ ժամանակացույցի, ըստ առաջացած վթարային դեպքերի:

Վթարային դեպքերը, կարելի է ասել, վերջին տարիներին զգալիորեն պակասել են, և ամեն ինչ բավականին սահուն է ընթանում:

– Մենք տեսանք ժամանակակից և ավելի հզոր աղացամեքենաներ. ե՞րբ են ներդրվել:

– Ներդրվել են 2022 թվականին: Այդ ժամանակ էլ շահագործման է հանձնվել երկու նոր աղաց, ևս մեկը նախապատրաստում ենք շահագործման:

Ձեռք բերման ու ներդրման փուլում են ևս վեց ժամանակակից ու հզոր աղաց:

– Նոր տեխնիկա, նոր լուծումներ... Արդյո՞ք դժվար չեն դրանց տիրապետելը, առավել ևս ծագող

Էրիկ Ավագյան

խնդիրներն ու անսարքությունները վերացնելը:

– Ֆաբրիկայի տեխնիկական վերազինումն անընդհատ իրականացվող գործընթաց է: Եվ ուրեմն՝ ձգտում ենք զուգահեռաբար տիրապետել նոր տեխնիկային ու տեխնոլոգիաներին: Դրա համար, իհարկե, և՛ վերապատրաստումներ են իրականացվում, և՛ փորձի փոխանակումներ, և՛ տեսական գիտելիքների յուրացում...

– Ներդրվող տեխնիկան հավանաբար նաև համապատասխան պահեստամասերի ձեռքբերման խնդրի առաջ է Ձեզ կանգնեցնում, չէ՞ որ խոսքը տվյալ տեխնիկայի կանոնավոր գործունեության ապահովման, վերանորոգման մասին է, որով պայմանավորված է ամբողջ ընկերության ներդաշնակ աշխատանքը:

– Տվյալ տեխնիկան տրամադրող գործարանը և՛ երաշխիքային ժամկետներ ունի, և՛ շահագործման թույլտվության ժամկետ: Այսինքն՝ մինչև վերանորոգման հասնելը որոշակի ժամանակով պատասխանատվություն է կրում արտադրող ձեռնարկությունը:

Պահեստամասերն էլ նրանց միջոցով ենք ձեռք բերում՝ մեր համապատասխան մասնագետների հետ քննարկելուց հետո:

– Արդյո՞ք հարստացուցիչ ֆաբրիկայի մեխանիկական կառավարչության բոլոր աշխատակիցները մասնագետներ են, թե՞ ստիպված եք լինում սովորեցնել:

– Մեխանիկական ծառայությունում, օրինակ, չի կարող աշխատել ոչ մասնագետը:

Ինքս 15 տարի է՝ աշխատում եմ ՃՊՄԿ-ում, յոթերորդ տարին է՝ աշխատում եմ հարստացուցիչ ֆաբրիկայում, իսկ ֆաբրիկայի գլխավոր մեխանիկի պարտականությունները կատարում եմ վերջին երկու տարում: Ասելս այն է, որ մեխանիկական սպասարկման թիմում ընդգրկվելու համար պետք է լավագույնս տիրապետել ֆաբրիկայի ամբողջ գործընթացին:

* * *

Կեսօրը վաղուց էր թեքվել դեպի երեկո, երբ բաժանվեցինք ֆաբրիկայի աշխատակիցներից: Ժամերի ընթացքում հասցրել էինք լինել գրեթե բոլոր տեղամասերում և ընդհանուր առմամբ ծանոթանալ տեխնոլոգիական գործընթացներին՝ հանքաքարի ջարդումից-մանրացումից մինչև պղնձի և մոլիբդենի ապրանքային խտանյութի ստացում:

Հեռացանք տպավորված. ֆաբրիկան, առանց չափազանցության, հանքարդյունաբերական այդ ընկերության բաբախող սիրտն է, ավելին՝ այնտեղ են միմյանց հաղորդակցվում-փոխկապակցվում արտադրության բոլոր արյունատար անոթները, ինչի շնորհիվ էլ ստացվում են պղնձի և մոլիբդենի բարձորակ խտանյութեր:

Տպավորված էինք կոլեկտիվի և բազմաճյուղ գործընթացների հստակ աշխատանքով ու կազմակերպական մակարդակով:

Տպավորված էինք մասնագետների վարպետությամբ, նորագույն մեքենասարքավորումները կառավարելու-շահագործելու նրանց արհեստավարժությամբ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Անալիտիկ կամ քիմիական լաբորատորիան, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի հայելին է

Տարիների ընթացքում քանի անգամ անդրադարձել ենք «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գործունեությանը: Բայց երբեք առիթ չենք ունեցել լուսաբանելու ընկերության քիմիական լաբորատորիայի առօրյան, որ հիմա անալիտիկ լաբորատորիա է կոչվում:

2022 թ. նոյեմբերի 3-ին մեր ստեղծագործական խումբն այցելեց լաբորատորիա, որտեղ էլ, լաբորատորիայի ղեկավար Արման Ոսկանյանի օգնությամբ, ծանոթացանք կատարվող աշխատանքներին:

Մեզ համար գրեթե անծանոթ գործողություններին մանրամասն ծանոթանալուց հետո հարցազրույց ունեցանք Արման Ոսկանյանի հետ, ով բարձրագույն կրթությամբ քիմիայի մասնագետ է և ունի լեռնահանքային արդյունաբերությունում աշխատելու տարիների փորձ:

– Պարոն Ոսկանյան, ի՞նչ է իրենից ներկայացնում անալիտիկ լաբորատորիան, ե՞րբ է հիմնադրվել, ի՞նչ գործառույթներ է իրականացնում:

– Սկզբնապես կոչվում էր քիմիական լաբորատորիա, հիմա՝ անալիտիկ լաբորատորիա: Ստեղծվել է պղնձամոլիբդենային կոմբինատը հիմնադրվելուց առաջ, երբ դեռևս իրականացվում էին երկրաբանական-հետախուզական աշխատանքներ:

Լաբորատորիան իր բնույթով անալիտիկ է. ընդ որում՝ անալիզները բաժանվում են երկու խմբի՝ քանակական և որակական:

Առաջին լաբորատորիան կառուցվեց 1951 թվականին: Այդ ժամանակ պարզվեց, թե ինչ բաղադրություն ունի հանքավայրը: Լաբորատորիայի կատարած աշխատանքների հիման վրա 1953 թ. կառուցվեց առաջին փորձնական հարստացուցիչ ֆաբրիկան:

Մեծ է լաբորատորիայի դերն ու նշանակությունը կոմբինատի գործունեությունը կազմակերպելու գործում: Լաբորատորիայում կատարվում են երկրաբանական և հետախուզական նմուշների, հարստացուցիչ ֆաբրիկա մտնող հանքաքարի, հարստացման արդյունքում ստացված միջանկյալ արտադրանքի, պատրաստի արտադրանքի և պոչանքների քիմիական փորձարկումներ: Հիմնականում որոշվում են մոլիբդենի և պղնձի զանգվածաբաժինները, անհրաժեշտության դեպքում՝ նաև պահանջվող խառնուրդների զանգվածաբաժինները:

Լաբորատորիայում է որոշվում հարստացուցիչ ֆաբրիկայի տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող հակազդիչների ակտիվությունը:

Կատարված փորձարկումների արդյունքներով հաշվում և իմանում ենք հարստացուցիչ ֆաբրիկայում հանքաքարից խտանյութի կորզման աստիճանը, որը կոմբինատի ամենակարևոր ցուցանիշն է, իսկ կորզումը՝ նպատակը:

Լաբորատորիան եղել և մնում է հանքարդյունաբերական մեր ընկերության հայելին:

Տարիներ առաջ լաբորատորիայում աշխատում էր 51 հոգի, հիմա՝ 113, որից 97-ը՝ կին: Կա աշխատանքների հստակ բաժանում, և յուրաքանչյուր ոք գիտի իր անելիքը:

– Կարելի՞ է ասել՝ լաբորատորիայի գործունեության հիմքում առավելապես գիտական աշխատանքն է, կարելի՞ է ենթադրել, որ հիմնականում մասնագետներ են ընդգրկված աշխատանքում:

– Տարիներ առաջ լաբորատորիայում աշխատում էր 51 հոգի, հիմա՝ 113, որից 97-ը կանայք են: Կա աշխատանքների հստակ բաժանում, և յուրաքանչյուր ոք գիտի իր անելիքը: Իրականացվում են մասնագիտական դասընթացներ, լաբորանտների գիտելիքների բարձրացմանը միտված աշխատանքներ:

Նոր տեխնոլոգիաները նաև նոր պահանջներ են առաջադրում կադրերին: Ինժեներատեխնիկական անձնակազմը հիմնականում քիմիական կրթություն ունի: Նոր ընդունվողները հնարավոր է ոչ մասնագետներ լինեն, որոնց, բնականաբար, վերապատրաստում ենք: Բայց վերահսկողությունը պարտադիր կարգով վերապահում ենք բարձրագույն կրթությամբ մասնագետներին:

– Հիմա Ձեր օգնությամբ կուզենայինք ծանոթանալ լաբորատորիայի կառուցվածքին:

– Լաբորատորիայում գործում են տարբեր բաժիններ, յուրաքանչյուրը՝ գործունեության հստակ շրջանակներով:

Այսպես՝ տեխսպասարկման խումբ, ատոմա-աբսորբցիոն խումբ, քիմիական մշակման անալիզի խումբ, էքսպրես անալիզի խումբ, ռենտգենոֆլուորեսցեն և տիտրման անալիզի խումբ, քիմիական ռեագենտների անալիզի խումբ, ինդուկցիոն պլազմային անալիզի խումբ, ոսկու հարգորոշման անալիզի խումբ, նմուշների պատրաստման և քարի տեսակարար կշռի անալիզի խումբ: Ընդամենը՝ ինը բաժին կամ խումբ:

– Կարո՞ղ ենք գոնե ընդհանրական պատկերացում կազմել, թե որ բաժինը կամ խումբն ինչ գործառույթներ է իրականացնում հիմնականում:

– Քիմիական մշակման բաժնում երկրաբանական, հետախուզական, հանքաքարի և պոչանքի նմուշները ենթարկվում են քիմիական մշակման, այնուհետև ատոմա-աբսորբցիայի և ինդուկցիոն պլազմայի բաժիններում որոշում են պահանջվող տարրերի զանգվածաբաժինները:

Էքսպրես բաժինը, որ աշխատում է շուրջօրյա, ունի ֆաբրիկայի տեխնոլոգիական գործընթացը վերահսկելու գործառույթ: Այդ բաժնում՝ համեմատաբար արագ մեթոդներով, կատարվում են քիմիական և ռենտգենոֆլուորեսցենային փորձարկումներ, և արդյունքներից ելնելով՝ համապատասխան միջամտություն է ցուցաբերվում ֆաբրիկայի տեխնոլոգիական գործընթացին:

Տիտրման և XRF ռենտգենոֆլուորագենտային բաժնում իրականացվում են պատրաստի արտադրանքի՝ մոլիբդենի և պղնձի խտանյութերի նմուշների փորձարկումներ:

Ամենաճշգրիտ ստանդարտ մեթոդներով որոշվում են մոլիբդենի և պղնձի պարունակությունները, խոնավության, յուղայնության, այլ տարրերի պարունակությունը:

– Այդ աշխատանքները որակյալ կատարելու համար, անշուշտ, արդիական տեխնիկական միջոցներ են պահանջվում, այլապես ոչ ճշգրիտ արդյունքներ կունենաք՝ դրանից բխող հետևանքներով:

Լուսանկարում՝ Էմմա Առուստամյանը

– Լաբորատորիայում ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները: Ամենագլխավորը՝ ձեռք են բերվել ժամանակակից և ճշգրիտ անալիզատորներ, բարձր ճշգրտության էլեկտրոնային կշեռքներ, էլեկտրոնային մուֆելային վառարաններ, չորացման պահարաններ, որակյալ ռեակտիվներ և ստանդարտ նմուշներ, որոնք էլ ապահովում են կատարվող աշխատանքների ճշտությունը:

Ձեռք ենք բերել ինդուկցիոն պլազմային անալիզատոր, որը մոտ 52 էլեմենտի անալիզի հնարավորություն ունի: Հիմնել ենք ոսկու անալիզի (հայտորոշման) լաբորատորիա: Կարելի է ասել՝ քայլում ենք համաշխարհային չափանիշներին համաչափ: Չկա գործիք, որի կարիքը լինի, ու մենք չունենանք:

Տեխնիկական հագեցվածությամբ տարածաշրջանի լավագույն լաբորատորիան է:

– Մի հարց՝ բացահանքին առնչվող: Արդյո՞ք լաբորատորիայի տված գնահատականով է որոշվում, թե հանքաքարի հանույթը բացահանքի որ հատվածում պիտի իրականացվի:

– Տվյալ գործողությունը երկրաբանների պատասխանատվության տիրույթում է, նրանք են նմուշարկումներ անում և բերում նմուշների պատրաստման լաբորատորիա, որն առանձին բաժանմունք է: Նմուշները չորացվելուց, մանրացվելուց հետո (մանրացվածության աստիճանը՝ մոտ 75 միկրոն) բերվում են անալիտիկ լաբորատորիա, և մենք որոշում ենք անհրաժեշտ տարրերի պարունակությունը:

Արդյունքներից ելնելով է որոշվում, թե ինչ քանակի և ինչ բաղադրության հանքաքար պետք է մտնի ֆաբրիկա: Նաև որոշում ենք պոչանքներում առկա պղնձի ու մոլիբդենի պարունակությունը, պարզում, թե որքանով են կարողացել կորզել մոլիբդենը և պղինձը:

Մեր սարքավորումները հիմնականում վերջին սերնդի սարքավորումներ են: Նոր սարքավորումներ ձեռք բերելու դեպքում՝ տվյալ ընկերության ներկայացուցիչներն այցելում են մեզ և աշխատակիցների հետ համապատասխան դասընթացներ կազմակերպում:

– Եվ այդ պրոցեսում հավանաբար պարզում եք, թե հանքանյութի մեջ ուրիշ ի՞նչ մետաղներ կան:

– Ունենք տեխնիկական այնպիսի զինվածություն, որ կարողանում ենք (հարկ եղած դեպքում) պարզել Մենդելեևի աղյուսակում գտնվող բոլոր էլեմենտների առկայության չափը:

Լուծում ենք այն խնդիրները, որոնք երկրաբանական դեպարտամենտի կողմից դրվում են մեր առջև: Եթե առաջադրվի, օրինակ, 52 էլեմենտի անալիզ, ապա ի վիճակի ենք անելու: Հիմա երկրաբանական անալիզներում 37 էլեմենտի անալիզ ենք անում:

– Դուք քանիցս ակնարկեցիք, որ ընկերության լաբորատորիան լավագույնն է տարածաշրջանում, որ այն զինված է նորագույն տեխնիկայով, որ տրված տեղեկությունները ճշգրիտ են... Փորձեք մի փոքր բացել այդ ամենը:

– Իսկապես, մեր տված արդյունքները ճշգրիտ են, որոնք բազմիցս հաստատվել են միջազգային ճանաչում ունեցող լաբորատորիաների կողմից: Այնպես որ՝ չափազանց պատասխանատու աշխատանք ենք կատարում, յուրաքանչյուր տված թվի համար պատասխանատվություն կրում:

– Իսկ քիմիական ռեագենտների հետ լաբորատորիան առնչություն ունի՞:

– Ինքը՝ լաբորատորիան, իր աշխատանքների համար օգտագործում է ռեագենտներ, բայց դրանք այն չեն, ինչ Դուք նկատի ունեք:

Բայց մենք ստուգում ենք նաև արտադրություն ուղարկվող ռեագենտները: Նաև միջանկյալ ստուգման ենք ենթարկում հարստացման ընթացքում կիրառվող ռեագենտների լուծույթների պարունակությունը:

Նախկինում լաբորատորիան այդ փորձարկումները զուտ քիմիական մեթոդով էր իրականացնում: Հիմա՝ վերազինվելուց հետո, և՛ փորձարկումների ընթացքն է կրճատվել, և՛ աշխատանքն է թեթևացել, և՛ ավելի անվտանգ է դարձել, և՛ վերջնական արդյունքներն ավելի ճշգրիտ են արտացոլվում:

Լուսանկարում՝ Մարինե Մկրտչյան

– Ու քանի՞ նյութ կամ ռեագենտ եք օգտագործում Ձեր առջև դրված խնդիրները լուծելու համար:

– Հիմնական օգտագործվող նյութերն են ազոտական թթուն և աղաթթուն, բայց կան այլ նյութեր ևս: Դրանք նախկինում բերվում էին 20 կամ նույնիսկ 60 լիտր տարողությամբ տարաներով: Ներկայումս՝ 2.5 լիտրանոց շշերով. այսինքն՝ մարդկանց շփումը քիմիական նյութերի հետ նվազագույնի է հասցվել, աշխատանքն ավելի անվտանգ է դարձել:

Մեկ անգամ ևս շեշտեմ՝ աշխատանքի անվտանգությունը մեզ մոտ առաջնահերթ խնդիր է: Ցանկացած քիմիական փորձարկում տարիներ շարունակ կատարվում էր տարբեր մեթոդներով, բայց մեթոդներն էլ փոխվել են. զուտ քիմիական անալիզը վերափոխվել է ֆիզիկաքիմիականի:

– Նորից միջազգային չափանիշների մասին. ի՞նչ ասել է միջազգային չափանիշ լաբորատորիայի պարագայում:

– Մեր ոլորտում նշանակում է որակ և ճշգրիտ արդյունք: Դա երևում է այն ժամանակ, երբ ամսական մեկ կամ երկու անգամ նմուշները վերահսկման համար ուղարկում ենք ուրիշ լաբորատորիա՝ մեր աշխատանքը ստուգելու, ինքներս մեզ ստուգելու նպատակով:

Այն նյութերը, որոնց հետ աշխատում ենք, պետք է ունենան միջազգային չափանիշներին համապատասխան որակական ցուցանիշներ:

Լաբորատորիան էլ պետք է համապատասխանի միջազգային ստանդարտներին՝ անհրաժեշտ կառավարման համակարգի մշակմամբ և ներդրմամբ:

– Կարողանո՞ւմ եք շփվել աշխարհի ճանաչված լաբորատորիաների հետ:

– Հետևում ենք ոլորտի զարգացումներին, փոփոխություններին: Դրական, հաջողված փորձը ձգտում ենք ներդնել մեզ մոտ: Ժամանակի հետ պահանջները նույնպես մեծանում են: Մեր առջև դրվում է անալիզի արդյունքներն արագ ներկայացնելու պահանջ:

Մեր սարքավորումները հիմնականում վերջին սերնդի սարքավորումներ են: Նոր սարքավորումներ ձեռք բերելու դեպքում՝ տվյալ ընկերության ներկայացուցիչներն այցելում են մեզ և աշխատակիցների հետ համապատասխան դասընթացներ կազմակերպում:

Մի խոսքով՝ բազմաթիվ առաջարկություններ ենք ստանում, բայց պիտի տեղում որոշենք՝ որքանով են դրանք համապատասխանում մեր պահանջներին:

– Այունիքում կամ հանրապետությունում կա՞ն հանքարդյունաբերական ձեռնարկություններ, որոնք օգտվում են Ձեր լաբորատորիայի ծառայությունից:

– Այո, դրսից էլ ենք պատվերներ ստանում...

Ի դեպ, նոր տեխնոլոգիաներ ներդնելուց հետո անալիզների ինքնարժեքը բավականին իջել է:

– Ի՞նչ կարևոր խնդիրներ ունի լաբորատորիան ներկայումս:

– Լաբորատորիայի շենքը պետք է վերանորոգենք, վերազինենք: Դրանից հետո կդիմենք հավատարմագրման՝ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2019 սերտիֆիկատ ստանալու համար:

Դա հնարավորություն կտա դրսից

Դժբախտ դեպքեր, փառք Աստծո, չեն եղել, հետևում ենք անվտանգությանը, նաև ընկերության անվտանգության բաժինն է ամենօրյա հսկողություն իրականացնում:

Օրական երկու հազար նմուշի անալիզ անելու հնարավորություն ունենք, դա շատ մեծ ծավալ և նուրբ աշխատանք է...

ավելի շատ հաճախորդներ ունենալ: Մյուս կողմից՝ մեր տված արդյունքներն ավելի ընդունելի կլինեն միջազգային ասպարեզում:

– Գո՞հ եք Ձեր աշխատանքից:

– Սիրում եմ աշխատանքս...

Երբ 2003-ին Կապանի կոմբինատում ընդունվեցի աշխատանքի՝ որպես հալորդ ոսկու հարգորոշման բաժնում, բարդ աշխատանք էր: Մարտուն Հակոբյանն էր տնօրենը, շատ ենք չարչարվել... Ժամանակի ընթացքում տեխնիկական առաջադիմությունն իրենն ասել և ասում է:

Ավելի դյուրին է մասնագետների հետ աշխատելը: Հիմա, ասում են, քիմիական ֆակուլտետներում դիմորդներ շատ քիչ են լինում: Երբ քիմիայի մասնագետ է մեզ մոտ աշխատելու գալիս՝ ուրախանում ենք, մյուսներին ստիպված ենք լինում սովորեցնել:

– Ձեր և երկրաբանների միջև, ենթադրում ենք, անխուսափելի կլինեն հակասությունները:

– Երբեմն վիճելի հարցեր են առաջանում, բայց դրանք հակասություն անվանել չի կարելի:

Ենթադրենք նրանց ուղարկած տվյալ նմուշի ցուցանիշը չի համապատասխանում մեր անալիզի արդյունքներով ստացված թվին, ստիպված ենք լինում այդ ամբողջ խմբաքանակը վերադարձնել կրկնակի փորձաքննության... Նման հարցեր...

– Ուրիշ ի՞նչ առանձնահատկություններ ունի լաբորատորիան, որոնց կցանկանայիք անդրադառնալ:

– Լաբորատորիայի նորմալ գործունեության համար կարևոր են մաքրությունը, աշխատանքի անվտանգությունը, պատասխանատվությունը, օդափոխությունը, հակահրդեհային պաշտպանությունը...

Եթե քիմիական նյութերի հետ ես շփվում, ապա պարտավոր ես դիմակ, ակնոցներ և ձեռնոցներ կրել...

Դժբախտ դեպքեր, փառք Աստծո, չեն եղել, հետևում ենք անվտանգությանը, նաև ընկերության անվտանգության բաժինն է ամենօրյա հսկողություն իրականացնում:

Օրական երկու հազար նմուշի անալիզ անելու հնարավորություն ունենք, դա շատ մեծ ծավալ և նուրբ աշխատանք է, այնպես որ՝ ամեն ինչ պետք է ճիշտ կազմակերպել: Չմոռանամ ասել՝ Կապանում էլ ունենք լաբորատորիա, որը որոշում է ներկրվող ռեագենտների պարունակությունները:

Էքսպրես լաբորատորիան էլ գտնվում է հարստացուցիչ ֆաբրիկայում և աշխատում է շուրջօրյա գրաֆիկով:

* * *

Լաբորատորիայում շրջագայելիս և աշխատակիցների հետ շփվելիս զրույց

Լաբորատորիայում շրջագայելիս և աշխատակիցների հետ շփվելիս զրույց ունեցանք լաբորատորիայի գլխավոր ինժեներ Աշխեն (Նելլի) Դավթյանի հետ:

ունեցանք լաբորատորիայի փորձառու ինժեներ Աշխեն (Նելլի) Դավթյանի հետ, ով 30 տարի շարունակ զբաղեցնում է քիմիական լաբորատորիայի գլխավոր ինժեների պաշտոնը: Պարզվում է՝ տիկին Աշխենը պատրաստվում է առաջիկայում վաստակած հանգստի անցնել:

Եվ, բնականաբար, մեզ հետաքրքրեց՝ մի՞թե պրոֆեսիոնալներին այդքան հեշտությամբ բաց են թողնում:

– Երբ 1984-ին լաբորատորիայում ընդունվել եմ աշխատանքի՝ ինձ շատ լավ են վերաբերվել, ու տարիների ընթացքում կայացել եմ, իմ պարտականությունների կատարման մեջ հմտացել: Եվ հետագայում իմ փորձը սիրով փոխանցել եմ երիտասարդներին, – պատմում է Աշխեն Դավթյանը: *– Այսպիսի մի կարգ է գործել և գործում լաբորատորիայում՝ չլինի մեկը, որ իր սեփականությունը կամ իր մենաշնորհը համարի տվյալ սարքավորման շահագործումը կամ տվյալ մեթոդի կիրառումը: Յուրաքանչյուր ոք իր իմացածը պետք է փոխանցի մյուսներին և հատկապես երիտասարդներին: Ես այդ սկզբունքով ու նման մթնոլորտում եմ աշխատել: Եվ հիմա լաբորատորիայում կան բավականին լավ երիտասարդ մասնագետներ, կարող ուժեր, ովքեր լավագույնս են տիրապետում տեխնոլոգիաներին: Ասելս այն է, որ ինձնից հետո նրանք շարունակելու են գործս, շարունակելու են ավանդույթները, և ոչ մի բան չի տուժելու: Դրանից ես ինձ լավ եմ զգում, բավարարված:*

Լաբորատորիան միշտ մեր տունն է եղել: Գործընկերներիս նաև մի հորդոր եմ հղել՝ ներսի թերությունները վերացնել սեփական ուժերով և այդ բացը դուրս չհանել:

Լաբորատորիան, որ հասել է այս մակարդակի ու ճանաչման, նախևառաջ Գրենիկ Փարամազյանի շնորհիվ է: Նա է եղել հիմնադիրը, տարածաշրջանում ճանաչված մասնագետ էր 1980-ականներին, ով երկար տարիներ ղեկավարել է լաբորատորիան:

1992-ից լաբորատորիայի ղեկավարումը ստանձնել է Ռիմա Սարգսյանը. գիտելիքներով հարուստ, խստապահանջ ղեկավար էր:

Թև թևի տված ապահովել ենք լաբորատորիայի պատշաճ գործունեությունն ու առաջընթացը: Այնպես որ՝ կուզենայի լաբորատորիայի պատմության մեջ մշտամնա տեղ զբաղեցնեին Գրենիկ Փարամազյանի և Ռիմա Սարգսյանի անունները:

Աշխեն (Նելլի) Դավթյանը դրվատանքով է խոսում նաև լաբորատորիայի ներկայիս ղեկավարի՝ Արման Ոսկանյանի մասին:

– Մենք սիրով ընդունեցինք Արման Ոսկանյանին, շատ համեստ մարդ է, հրաշալի անձնավորություն, բոլորի հոգսերն իրենը համարող, բարությամբ լցված:

* * *

Լաբորատորիայի բաժիններին ծանոթանալուց, աշխատակիցների հետ շփվելուց և հարցազրույցից հետո ինքներս հանգեցինք հիմնավոր հետևության՝ անալիտիկ լաբորատորիան բացառիկ դեր ու նշանակություն ունի Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, այն իսկապես ուղեցույց է ընկերության համար և աշխատանքների ընթացքն ու արդյունքներն արտացոլող հայելի:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Զանգեզուրի կոմբինատն առերեսվում է բնապահպանական ռիսկերի հետ և դրանք կառավարելուն, մեղմելուն միտված հիմնավոր քայլեր ձեռնարկում

Ընդերքօգտագործումն առհասարակ ենթադրում է շրջակա միջավայրին առնչվող հետևանքներ, հնարավոր ռիսկեր և միջավայրի հնարավոր փոփոխություն:

Պատահական չէ, որ Սյունիքի մարզում և հատկապես Կապանի ու Քաջարանի տարածաշրջանում բնապահպանական թեմաները, տարիներ ի վեր, եղել ու մնում են հանրության ուշադրության կենտրոնում:

Զրույցի ենք հրավիրել ՓԲ ընկերության բնապահպանության բաժնի պետ Հասմիկ Մկրտումյանին:

Հասմիկ Մկրտումյանը հանքարդյունաբերության ոլորտում ավելի քան 21 տարվա աշխատանքային փորձ ունի, որից յոթը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում: Միաժամանակ դասավանդել է Կապանի Եվրոպական ակադեմիայում: Անդամակցում է ՀՀ ԱԻՆ «ԱՌՆԱՊ» հիմնադրամին և ունի մասնագիտական ներդրում տարածաշրջանի աղետների, ռիսկերի գնահատման գործում: Ավարտել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետը, ունի քիմիկ-էկոլոգի որակավորում: Ավարտել է նաև Բնապահպանական կառավարման համակարգի դասընթացը, ունի համապատասխան որակավորում:

– Տիկին Հասմիկ, կուզենայինք նախևառաջ համառոտաբար ծանոթանալ բնապահպանության ոլորտում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի որդեգրած ռազմավարությանը: Նորություն ասած չենք լինի, եթե փաստենք՝ բնապահպանության ոլորտում առկա իրավիճակը, այդ ոլորտում ընկերության քաղաքականությունը հանրությանն առավել մտահոգող և հետաքրքրող հարցերից են:

– Ժամանակները փոխվում են՝ իրենց հետ բերելով նոր հանձնառություններ, նոր մոտեցումներ և առաջնահերթություններ...

Ընկերության ներկայիս ղեկավարությունը լրջորեն մտահոգված է բնապահպանական խնդիրներով և իր հետ բերել է նոր ու թարմ մտքեր, փորձ, նոր գործելակերպ, որոնք համահունչ են ժամանակի առաջադրած խնդիրներին, մարտահրավերներին:

Մեր բաժինը եղել և մնում է անկաշկանդ՝ սեփական նախաձեռնությունների, միջոցառումների իրականացման մեջ, սակայն կան նոր պահանջներ, կա վճռականություն՝ անելու նույնիսկ անհնարինը՝ բնապահպանական հնարավոր ռիսկերը մեղմելու գործում:

Գաղտնիք չէ, որ ընկերությունը բնապահպանական առումով թիրախային խմբում է, ուստի և պետք էր նոր ու թարմ ավյուն ներարկել աշխատանքներին, ավելի շատ և արդյունավետ միջոցառումներ իրականացնել, ավելի խիստ պահանջներ ներկայացնել, կատարողականությունը նոր աստիճանի բարձրացնել:

– Բնապահպանությունը, այդ բոլորով հանդերձ, թանկ հաճույք է և լուրջ ներդրումներ է ենթադրում: Կարո՞ղ եք այս տարվա բյուջեի կամ գալիք տարվա բյուջեի օրինակով ասել, թե ներդրումային ինչ քայլեր են ձեռնարկվում այդ ոլորտում:

– Նախկինում իշխում էր մտայնությունը, նաև գիտության մեջ, թե բնապահպանությունը սոսկ ծախս է: Այսօր բնապահպանությունը մի նոր կաղապարում է տեղավորվել. այն կայուն զարգացման քաղաքականության կարևորագույն մաս է: Իսկ կայուն զարգացումն այլևս ծախս չէ: Եվ ուրեմն՝ այն ներդրումները, որ կատարվում են բնապահպանության ոլորտում՝ կայուն զարգացման երաշխիք են:

Եվ հիմա, կարծեք, բոլորն են գիտակցում՝ կայուն զարգացման մեջ ներդրումներ անելը կանխում է հետագա խնդիրներն ու ծախսերը, հետևաբար՝ տնտեսական հաշվարկի մեջ նման ներդրումներն իբրև առավելություն են դիտարկվում:

Մի քանի փաստական տվյալ... Թափոնների կառավարման միջոցառումների շրջանակներում 2018-2021 թթ. ընթացքում ծախսվել է 221.6 մլն դրամ: Մշտադիտարկումների միջոցառումների իրականացման համար 2019-22 թթ. ծախսվել է մոտ 302 մլն դրամ: Կատարվել են նաև մեծ ծավալի կանաչապատման աշխատանքներ ընկերության ազդակիր համայնքներում: Ընկերության նախաձեռնությամբ նախատեսվում է իրականացնել անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ շուրջ 20 հա տարածքում:

– Բնապահպանությունը մեր կյանքի ամեն մի բնագավառում իր առանձնահատկություններն ունի, իրեն բնորոշ խնդիրները: Որո՞նք են, ըստ Ձեզ, առավել կարևոր թիրախային հարցերն ընկերությունում՝ բնապահպանական տեսակետից:

– Թիրախային հարցերը սովորաբար ընտրում ենք նախորդ տարիների

տվյալների վերլուծությունից: Դրա համար կատարում ենք ռիսկերի գնահատում և հասկանում, թե տվյալ ռիսկը կամ խնդիրը որքանով կարող են ազդել շրջակա միջավայրի, հանրության առողջության, ընկերության կայուն զարգացման և, իհարկե, ընկերության բիզնեսի վրա: Նաև հաշվի ենք առնում արտաքին ազդակներն ու դրանց հնարավոր ազդեցությունը մեր գործունեության վրա:

Միևնույն ժամանակ ունենք խնդիրներ, որոնք մշտապես մեր ուշադրության կիզակետում են: Դրանք են, օրինակ, ռեսուրսների, նաև ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, էներգախնայողությունը, դատարկ ապարների պահպանման կայունությունը: Մեծ ուշադրություն ենք դարձնում նաև էկոհամակարգի ու կենսաբազմազանության ուսումնասիրմանը: Գլոբալ առումով հիմնական ջանքերն ուղղված են միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը պահելուն:

Մեր ուշադրության կենտրոնում է նաև պոչամբարային տնտեսության արդյունավետ շահագործումը և դրա համապատասխանեցումը միջազգային լավագույն փորձին:

– Ի դեպ՝ պոչային տնտեսության, ավելի ճիշտ՝ Արծվանիկի պոչամբարի մասին: Նախորդ ղեկավարությունը քանիցս հայտարարեց, թե մոտենում ենք մի եզրագծի, որին պետք է հաջորդի նոր պոչամբարի կառուցումը: Պոչամբարի ներկա վիճակը և հեռանկարը...

– Արծվանիկի պոչամբարը շահագործվում է գործող նախագծին համապատասխան: Ընկերությունը ռեսուրսներ չի խնայում պոչամբարում բնապահպանությանը և անվտանգությանն ուղղված հարցերի լուծման համար: Համապատասխանաբար իրականացվում են հողի բերրի շերտի հանման, պատվարի ռեկուլտիվացման և կայունությանն ուղղված միջոցառումները:

– Գիտե՞ք, բնակչության զգալի մասի մեջ այնպիսի տպավորություն է ձևավորված, թե Քաջարանում իրականացվող հանքարդյունաբերությունը մարդկանց առողջությանն ուղղակիորեն վնասող իրողություն է: Հետաքրքիր է՝ արդյո՞ք մշտադիտարկվում են հանքարդյունաբերության ռիսկերը, արդյո՞ք բնակչության առողջական վիճակին անդրադառնում է այդ ամենը:

– Նմանատիպ հարցադրումներն արվում են հանքարդյունաբերական բոլոր ձեռնարկությունների պարագայում: Եվ շատ մտահոգություններ առաջ են գալիս իրազեկվածության պակասից, նաև լիազոր մարմինների կողմից վիճակագրական տվյալները չներկայացնելուց ու դրանց վերլուծության բացակայությունից: Եվ, հետևաբար, բեռը մնում է ընկերության վրա...

Հիմա խնդրին մոտենանք այլ տեսակետից՝ եթե ընկերության գործունեության արդյունքում առաջ են գալիս մարդկանց առողջության վրա ազդող գործոններ, ապա թիրախային կետը, նախևառաջ, ինքներս պետք է լինենք՝ ընկերության աշխատակիցներս: Նաև բնակչության այն հատվածը, որն իր վրա է կրում օդի, ջրի կամ հողերի աղտոտվածության ազդեցությունը:

Կարող եմ ասել՝ օդի աղտոտվածության առումով ռիսկերը մեզանում բացակայում են. օդի որակի վերահսկման սարքավորումներ ունենք բացահանքի տարածքում, պոչամբարի տարածքում, և տվյալները ցույց են տալիս, որ սահմանված նորմերից շեղումներ չկան:

Մենք արել ենք նաև էկոհամակարգերի բաղադրիչների ուսումնասիրություն. վերցրել ենք նմուշներ հողից, ջրից, օդից, մարդկանց կողմից օգտագործվող վայրի և ընտանի բույսերից ու հետազոտություններ կատարել:

Հետազոտություններն արել ենք նախնական փուլով ու հիմա աշխատում ենք մասնագետների հետ, որպեսզի կատարենք բնակչության առողջության նախնական գնահատում և պարզենք դրա փոխկապակցվածությունն ընկերության գործունեության հետ:

Նախնական գնահատումն ուրիշ ուսումնասիրություններ էլ կպահանջի: Ու երբ որ տվյալները կամբողջանան, երբ որ լիազոր մարմնի հետ պայմանավորվածություն կունենանք, այդ տեղեկատվությունը հասանելի կդարձնենք հանրությանը: Մյուս կողմից՝ պետք է ընդունել փաստը, որ ընդերքօգտագործումն առհասարակ միջավայրի փոփոխություն է ենթադրում: Եվ հանրությանն ասել, թե դա անդրադարձ չի ունե-

Կանում մարդկանց վրա՝ ճիշտ չի լինի: Ուստի և կարևոր է, որ ընկերությունն ուսումնասիրի իր հնարավոր ազդեցությունները և դրանց նվազեցման, մեղմացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկի: Իսկ եթե հնարավոր չէ չեզոքացնել ազդեցությունը, ապա պետք է այն կառավարել:

Եվ ենթադրել, թե մի օր ունենալու ենք շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն չունեցող ընդերքօգտագործում, իրատեսական չէ: Բայց և իրատեսական է, որ մոտ ապագայում ունենալու ենք ընդերքօգտագործում, որը մարդկանց ու համայնքների բնականոն կյանքին չի վնասելու:

Մենք միջավայրի փոփոխությունը պետք է անենք այնպես, որ դա լինի թույլատրելի, չխախտի բնապահպանական կայունությունը տվյալ տարածքում, և մարդը վիզուալ առումով որևէ խնդրի չբախվի:

– Զանգեզուրի կոմբինատը նախկինում ունեցել է պոչամբարներ, որոնք կոնսերվացված են և ռեկուլտիվացված: Հիմա ընկերությունն առնչություն ունի՞ դրանց հետ, թե՞ այլևս դուրս են Ձեր գործառույթների տիրույթից:

– Ընկերությունն իր նախաձեռնությամբ շարունակում է հետևողական լինել, որ փակված պոչամբարներում մակերևույթային ջրերի հոսքերը կառավարվեն, ռեկուլտիվացիոն և կուլտիվացիոն գործընթացները շարունակվեն այնպես, ինչպես պլանավորված է: Պարբերաբար իրականացնում ենք ստուգայցեր, որպեսզի համոզված լինենք, որ թե ռելիեֆի, թե կենսաբազմազանության, թե ֆիզիկական առումով փոփոխություններ չկան կոնսերվացված պոչամբարներում: Դա, կրկնում եմ, կատարվում է ընկերության նախաձեռնությամբ:

– Տարիներ շարունակ լսում ենք, թե բացահանքում կատարվող պայթեցումներից հետո փոշու ամպերը գալիս և բավականին լուրջ նստվածք են տալիս հատկապես Քաջարան քաղաքի, Քաջարանց գյուղի վրա: Այդ մասին Ձեր նկատառումները կուզենայինք իմանալ, նաև փոշու ազդեցությունը մեղմելուն միտված քայլերը:

– Հանքավայրում կատարվող պայթեցումներից առաջացող հիմնական բնապահպանական խնդիրներն ու ռիսկերը երկուսն են՝ տատանումներ և փոշու առաջացում-տարածում:

Փոշու առաջացման ազդեցությունը պատկերացնելու համար իրականացնում ենք մշտադիտարկում. տեղադրված երկու սարքավորում ունենք, որոնցից մեկը՝ քամու ուղղությամբ, երբ փոշին կարող է բերել Քաջարան քաղաք: Երկրորդը՝ Քաջարանց գյուղի ուղղությամբ քամու համար:

Դրանք աշխատում են մշտապես՝ 24 ժամ: Ավստրալիական կազմակերպության կողմից վերահսկվող այդ սարքավորումներից ստացված տեղեկատվությունը պարբերաբար տրամադրվում է մեզ: Բայց մենք այդ ամենը փոփոխելու, դրանց վրա որոշակիորեն ազդելու հնարավորություն չունենք:

Սարքավորումներից ստացվող տեղեկությունները ցույց են տալիս, որ մենք մնում ենք սահմանված նորմերի մեջ, իսկ թույլատրելի սահմանն ամրագրված է օրենքով:

Դրանով, իհարկե, չենք սահմանափակվում: Կա նաև վիզուալ ազդեցություն. մարդ տեսնում է, որ պայթեցումներից փոշի է բարձրանում, որ գրունտային ճանապարհներից նույնպես փոշի է առաջանում... Ուստի և՝ մշտապես իրականացնում ենք ճանապարհների ջրում (չորային եղանակներին):

Բայց հիմա դիտարկում ենք մի շարք այլ նախագծեր ու տարբերակներ ևս, որպեսզի բարձրացնենք փոշու չեզոքացման արդյունավետությունը: Նման մեթոդներ կան, հիմա մեր բաժնի աշխատակիցները զբաղվում են դրանով:

Ինչ վերաբերում է տատանումներին... Չափումներն իրականացվել են և՛ ամենադանդաղ, և՛ ամենահինտենսիվ պայթեցումների ժամանակ: Ընդ որում՝ և՛ Քաջարանի, և՛ Կապանի ուղղությամբ:

– Լցակույտերի մասին. ինչպե՞ս եք որոշում դրանց տեղը, որքանո՞վ են դրանք վնասում շրջակա միջավայրին, բնությանը:

– Դատարկ ապարները հավաքում ենք այն տարածքներում, որոնք սահմանված են նախագծով և անցել են օրենքով



սահմանված բոլոր փորձաքննությունները: Նախագիծը ներկայացվել է ՇՄԱԳ փորձաքննության, տրվել է դրական եզրակացություն, ինչը նշանակում է՝ լցակույտերի վայրերի ընտրությունը հավանության է արժանացել լիազոր մարմնի կողմից:

– Հանրային կարծիք կա առ այն, թե պոչամբարներում, լցակույտերում կան չկորզված մետաղներ, որոնք ճառագայթելու հատկություն ունեն և վնասում են շրջակա միջավայրին, նաև մարդկանց առողջությանը:

– Նախ ֆիքսենք՝ մեր ընկերության հանքաքարի մեջ ռադիոակտիվ նյութեր չկան: Իսկ ի՞նչ է նշանակում կորզել: Հանքաքարից կորզվում է նրա կորզելի մասը, այսինքն՝ կորզվում է այն միներալոգիական կազմը, որի կորզման արդյունքում գործունեությունը կարող է լինել տնտեսապես շահավետ:

Անշուշտ, կան հանքանյութեր, որոնք տեխնիկական և շահավետության առումով հնարավոր չէ կորզել, հենց դրանք են պոչամբար տեղափոխվում:

Տեսակետ կա, որ պոչամբարները թափուկակույտեր չեն, այլ տեխնածին հանքավայրեր: Ապագա սերունդները միգուցե և նոր տեխնոլոգիաներով դրանց կորզելի մասը վերստին գնահատելու և կորզումն իրականացնելու հնարավորություն ունենան...

Այնպես որ՝ դրանք պոչամբարներ տեղափոխելը վատնում չէ. պարզապես ունենք կորզման՝ տնտեսապես շահավետության շեմ, որով և առաջնորդվում է ընկերությունը: Իսկ եթե այդ շեմը չպահպանենք, խնդիրներ կունենանք պետական մարմինների հետ:

– Տեղափոխվենք ջրային ռեսուրսների ոլորտ. Ողջի, Նորաշենիկ, Գեղի գետեր, Գեղիի ջրամբար... Որքանո՞վ է հաջողվում պահպանել դրանց անաղարտությունը: Նորաշենիկի հատվածում երբեմն-երբեմն վթարների ենք ականատես լինում:

– Նախ՝ մենք հետևում ենք միջազգային փորձին և կարևորություն տալիս ջուրը խնայող տեխնոլոգիաների կիրառմանը, քանզի ջրային պաշարները նվազում են:

Հնարավոր բոլոր ուղղություններով իրականացնում ենք ջրի խնայողություն և ջրային ռեսուրսների ռացիոնալ կառավարում:

Այո, խնդիրներ ունենք մակերևույթային ջրերի անաղարտության ապահովման ոլորտում: Մտածել, թե ոչինչ չի արվում, իրականությանը չի համապատասխանում: Մտածել, թե բոլոր միջոցները ձեռնարկված կամ ներդրված են ու ամեն ինչ աշխատում է արդյունավետ՝ դա էլ ճիշտ չի լինի: Ուստի և՝ իրականացնում ենք ջրերի մշտադիտարկում... Աշխատանքները կատարում ենք երկու անկախ լաբորատորիայի միջոցով:

Ներկայումս իրականացվում է պոչամբարային տնտեսության խողովակաշարերի, վթարային ավազանների վերակառուցում, որը թույլ չի տա ֆորսմաժորային իրավիճակներում պոչատարից ունենալ արտահոսք դեպի Ողջի գետ:

Նորաշենիկի մասով. մեր կողմից գետ ուղարկված պարզվածքը գետի աղտոտվածության ֆոնը չի փոխում, հետևաբար՝ ավելի չի վատացնում ջրի վիճակը:

Ներկայումս առկա խնդիրների լուծման համար երեք նախագիծ է իրականացվում, նաև երկու ուսումնասիրություն:

– Մեր զրույցի ընթացքում վերստին նկատեցինք՝ բնապահպանության ոլորտում աշխատանքները կազմակերպելու համար բավականին տեխնիկական միջոցներ և սարքավորումներ եք օգտագործում...

– Դուք ճիշտ նկատեցիք... Մեր ամենօրյա աշխատանքի ընթացքում կիրառվող գործիքները շատ են ու թանկարժեք, բայց ավելի թանկարժեք են պլանավորված ու ձեռք բերվելիք գործիքները, որոնք ձեռք կբերենք 2023-ին:

Եթե հնարավորությունները թույլ տան կյանքի կոչել 2023-ի նախատեսումները, ապա կունենանք տեխնիկական այնպիսի հագեցվածություն, որը թույլ կտա, օրինակ, դրոնով իրականացնել վիզուալ մշտադիտարկում, դաշտային պայմաններում իրականացնել քարտեզագրական միջոցառումներ:

– Այսինքն՝ առանց տեխնիկական միջոցների այսօր հնարավոր չէ պատկերացնել արդյունավետ բնապահպանություն:

– Իհարկե: Բայց ոչ մի անգամ նույն կետում չենք կանգնում: Մեր սկզբունքը շարունակականության ապահովումն է: Եթե այսօր հասել ենք մի նշաձողի, ապա հաջորդ տարվա համար ավելի բարձր նշաձող ենք դնում: Դրանք արտահայտվում են ոչ միայն սարքավորումների տեսքով: Թափոնների կառավարման ոլորտում, օրինակ, վերջին 2-3 տարվա ընթացքում ունենք առանձին շինություններ, որտեղ հավաքում ենք առանձնացված թափոնները: Ունենք, այսպես ասած, սեղմող սարքեր, որոնք մեծ քանակությամբ թափոնները ճզմում են, ծավալը փոքրացնում, իրացման հնարավորությունը մեծացնում: Հետևաբար՝ այդ ոլորտում նույնպես պլանավորում ենք լրացուցիչ ներդրումներ, ինչը կտա աշխատանքի և՛ արագ, և՛ արդյունավետ կազմակերպում:

– Ընկերությունում կա՞ն թափոններ, որոնք պետք է տեղափոխել և հատուկ վայրերում հողով ծածկել:

– Թափոնների կառավարման լավագույն փորձը հետևյալն է՝ ձգտել չառաջացնել թափոններ: Իսկ եթե դա չի հաջողվում, ուրեմն պետք է հնարավորինս նվազեցնել, առաջացած թափոնները վերամշակել և դրանից ինչ-որ նյութեր ստանալ:

Վերջին տարբերակը վնասազերծումն է՝ ոչնչացնում ես թափոնը կամ ընդհանրապես թաղում: Լավագույն փորձը դա է, և մենք ձգտում ենք դրան...

Մենք ձեռք ենք բերել այն տեխնիկական միջոցները, որոնք հնարավորություն են տալիս թափոնների արդյունավետ կառավարում:

Ի՞նչ ենք արել. առաջին հերթին սկսել ենք տարանջատել բոլոր տիպի թափոնները: Ամենավտանգավորը սնդիկային լամպերն են, որոնք վտանգավորության առաջին դասին են պատկանում: Բայց քանի որ Հայաստանում դրանց իրացման հնարավորություն չկա, որդեգրել ենք դրանց փոխարինումը «լեդ» լամպերով:

Մարտկոցները, որ երկրորդ դասի թափոններից են, տարանջատում ենք կենցաղային աղբից ու վերամշակման հանձնում լիցենզավորված կազմակերպություններին: Վերամշակման ենք հանձնում նաև բոլոր

45

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Տնկարանային տնտեսությունը

Զանքարոյունաբերության հսկան՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն իր առաջնահերթություններից է համարում շրջակա միջավայրի պահպանությունը, Քաջարան քաղաքի, ազդակիր համայնքների կանաչապատումն ու բարեկարգումը: Վերջին մի քանի տարում այդ միտումն ավելի է խորացել, համենայն դեպս Քաջարանը տարեցտարի ավելի կանաչապատ ու ակնահաճո տեսք է ստանում: Այդ ամենին է միտված ձեռնարկության տնկարանային տնտեսության հիմնադրումը, որը գտնվում է Կապան-Նորաշենիկ ճանապարհի ձախ կողմում՝ Քաշունի գետի հարևանությամբ:

Հինգ հազար քառակուսի մետր տարածություն է զբաղեցնում տնկարանը, որը նախատեսված է ծառերի, թփերի, ծաղիկների աճեցման համար: Տարիներ առաջ այդտեղ ամայի տարածություն էր, որն ընկերության աշխատակիցների և հատկապես Ռաֆիկ Հովհաննիսյանի ջանքերով, ով տնկարանային տնտեսության և Քաջարան քաղաքի կանաչապատման համակարգողն է, դարձավ բուրաստան:

Ռաֆիկ Հովհաննիսյանն ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը՝ գիտնական-գյուղատնտեսի որակավորմամբ: 1981-ից գյուղատնտեսության ոլորտում տարբեր պաշտոններ է վարել, 2008 թվականից Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում է, 2010-ից ընկերության բնապահպանության բաժնում՝ որպես մասնագետ, չորս տարի հետո՝ 2014-ին ընկերության աշխատակիցների հետ մեկտեղ հիմնել է ձեռնարկության տնկարանային տնտեսությունը:

Ռաֆիկ Հովհաննիսյանը 2014-ին ընկերության աշխատակիցների հետ մեկտեղ հիմնել է ձեռնարկության տնկարանային տնտեսությունը:

Շատ շուտով, թեպետ մեծ դժվարությամբ, տնկարանը դարձել է լավագույններից մեկն իր տեսակային կազմով և բույսերի աճողունակությամբ:

Տնկարան մտնելով՝ մի այլ աշխարհում ես հայտնվում, այդտեղ քիչ հանդիպող ծառատեսակներ են աճում, նաև այնպիսիք, որ մեզանում չեն հանդիպում ու նորություն են՝ ճապոնական սերկևիլ,

հուդայածառ, օճառածառ, պիխտա, սպիտակ թխկենի, դեղին ակացիա, ալբիցիա, սիրիական վարդ և այլն:

Ինչպես տեղեկացնում է տնկարանային տնտեսության ղեկավարը, ոռոգման ջրի խնդիրը հիմնովին լուծված է: Որպեսզի հողը չթունավորվի, տնկարանում պարարտանյութ չեն օգտագործում, նաև սրսկումներ չեն կատարում, ավելի ստույգ՝ միայն սրսկում կատարվում է տերևակերների դեմ պայքարելու նպատակով, քանզի այլ ճանապարհով հնարավոր չէ վնասատուից ազատվել: Տնկարան նաև տեխնիկա չի մտնում, բոլոր աշխատանքները (փխրեցում, քաղհան, առուների քաշելը, ոռոգում և այլն) կատարվում են ձեռքով՝ ութ աշխատակցի միջոցով: Եվ դեռ, խնդիր է դրվել բանվորների թիվն ավելացնել:

– Մայիսից հետո այստեղից տնկի դուրս չի գալիս, որովհետև կպչողականությունը ցածր է լինում՝ 20-30 տոկոս, երեք տարի ծառ ենք աճեցնում, որ հետո չորանա՞. երկրորդ ծառատունկը լինում է հոկտեմբերի վերջից՝ հիմնականում նոյեմբեր ամսին, – մանրամասնում է զրուցակիցս: *– Չգույշ պիտի քայլել տնկարանում, այստեղ ամեն քայլափոխի յուրաքանչյուր տնկի արմատներ է ձգում մայր հողում: Երբ տնկին դառնում է 15-20 սմ, տեղափոխում ենք դպրոցական հողամաս, որտեղ մեկ-երկու տարի մնալուց հետո՝ մեկ մետր 20 սմ, իսկ որոշները երկու մետր հասակ ունենալուց հետո տեղափոխվում են կանաչապատման ենթակա տարածքներ:*

37 տեսակի տնկի է աճում այդտեղ, դրանց երկարությունը 25 սմ-ից հասնում է երկու մետրի, որից հետո տեղափոխվում է մշտական գրանցման վայր: Ընդ որում՝ տնկիներ հատկացվում են մարզի համայնքներին, նախևառաջ կոմբինատի ազդակիր բնակավայրերին:

2018 թվականից ի վեր 24 հազար ծառ, թուփ ու տնկի մշտական գրանցում են ստացել, 30 հազարից ավելին սպասում են իրենց վերջնական հանգրվաններին: Տնկարանային տնտեսությունը նաև անտառվերականգնման աշխատանքներ է կատարում: Քաջարանի մոտակա Սպիտակ ջուր (Սախկարսու) տարածքում 3,7 հեկտար անտառվերականգնման աշխատանքներ են կատարել:

14-16 հազար տնկի պատրաստ է անտառվերականգնման համար. դրանք ավանդական ծառատեսակներ են՝ երկու տեսակի կաղնի, թխկի, հացենի, փռշնի, որոնք մեր տարածաշրջանին բնորոշ են, որոնց սերմերն իրենք են հայթայթում, երբեմն Հայաստանի տարբեր վայրերից:

– Չկա այնպիսի մի ծառատեսակ՝ մեր բնաշխարհին բնորոշ, որ մեզ մոտ չլինի, – ասում է գյուղատնտեսը:

Նաև ռեկուլտիվացիայի ենթակա տարածքներում են աշխատանքներ կատարվում. 2,5 հեկտար կորնգան են ցանել, և շատ ընտիր է ստացվել:

Ռաֆիկ Հովհաննիսյանը միևնույն ժամանակ հավելում է, որ իրենց տնտեսությունն ընդլայնելու նպատակով ևս երկու հազար մետր տարածք է հատկացվել, մնում է ցանկապատել ու ոռոգման ջուր անցկացնել...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Չանգեզուրի կոմբինատն առերեսվում է բնապահպանական ռիսկերի հետ և դրանք կառավարելուն, մեղմելուն միտված հիմնավոր քայլեր ձեռնարկում

43 տիպի յուղերը, քիմռեագենտների պարկերը, շինարարական պարկերը, յուղի ֆիլտրերը, անվադողերը, ռետինը... Տարանջատում ենք մետաղի ջարդոնը, փայտը, թուղթը, պլաստիկե նյութերը, անվտանգության պարագաները... Այսինքն՝ ճիշտ մենեջմենթի դեպքում՝ վերջում թաղելու բան չի մնում: Ներկայումս ունենք դասակարգված 35 թափոն, բոլորն էլ կառավարվում են...

– Ձեր պատասխաններից տպավորություն ենք ստանում, որ բնապահպանության ոլորտում, այսպես ասած, ազգային դպրոց, ազգային ավանդույթներ չկան: Երևույթը և խնդիրները միևնույնն են աշխարհի մասշտաբով: Հասցնո՞ւմ եք ծանոթանալ միջազգային փորձին:

– Խորհրդային տարիներին փակ շրջանակներում իրականացվող ընդերքօգտագործում է եղել, և չենք նկատել, թե աշխարհն ուր է գնում:

Օրերից մի օր բացել ենք մեր աչքերը և տեսել, որ աշխարհը շատ է առաջ գնացել: Ու սկսել ենք հետևել աշխարհի փորձին: Հիմա մի քայլ առաջ ենք եկել, հույս ունեմ, որ երբևէ կհավասարվենք միջազգային լավագույն փորձին...

– Մեկ ուրիշ տպավորություն էլ ստացանք Ձեր պատասխաններից. բնապահպանական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար ընկերությունը պարտադրված է, կամա ակամա, համագործակցել գիտական հաստատությունների, գիտական հանրույթի հետ:

– Միանշանակ... Այդ շփումները կան տարբեր ձևաչափերով: Դա որևէ ֆորմատի և ինստիտուցիոնալ մակարդակի չէ, բայց համագործակցում ենք տարբեր ձևաչափերով:

Հանրապետության մի շարք բուհեր ունեն մեր ոլորտին առնչվող ամբիոներ, ֆակուլտետներ: Ժամանակ առ ժամանակ, անհրաժեշտության դեպքում, պայմանագրային հիմունքներով համագործակցում ենք:

– Արդյո՞ք բնապահպանության ոլորտին առնչվող խնդիրներին, կատարվող աշխատանքներին, ռիսկերին՝ բնակչությանն իրազեկ դարձնելու անհրաժեշտություն չեք տեսնում:

– Որպես ռազմավարություն՝ ընկերությունն իր առջև նման խնդիր է դրել: Կարծում եմ՝ կատարվածը պետք է ցույց տալ հանրությանը և չսպասել, թե մարդիկ վաղ թե ուշ այդ մասին կիմանան:

Հիմա մենք շատ բան ունենք արած-դրած՝ շնորհիվ մեր աշխատակիցների, որն արժեր պարբերաբար ներկայացնել հանրությանը: Այս հարցազրույցը ևս փաստում է, որ մենք թափանցիկ գործելակերպի կողմնակից ենք և կարևորում ենք բնակչության իրազեկումը, մեր կատարածի հանրայնացումը:

– Փորձենք ամփոփել մեր զրույցը...

– «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը որդեգրել է ընդերքօգտագործման ոլորտում միջազգային լավագույն փորձին ընդօրինակելու և հասնելու քաղաքականություն: Դա և՛ տեխնոլոգիական, և՛ աշխատանքի անվտանգության ապահովման, և՛ բնապահպանական ոլորտներում:

Մեր կոլեկտիվը ներդրել է իր բոլոր ունակություններն ու հնարավորությունները՝ հասնելու դրան: Երբ մեր ներուժը բավարար չլինի՝ կներառենք այլ ռեսուրսներ:

Այո, ուզում ենք հասնել միջազգային լավագույն չափորոշիչներին, և դրա համար ընկերությունը չի խնայում տեխնիկական ու ֆինանսական միջոցներ, մարդկային ջանքեր:

Այդ ամենի արդյունքում, վերջի-վերջո, ունենալու ենք ընդերքօգտագործման մի միջավայր, որն աչքի է ընկնելու արտադրության կազմակերպման բարձր կուլտուրայով և մարդկանց նորմալ ապրելու համար անհրաժեշտ պայմաններով:

ԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԵՎ
ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվտանգության ապահովում. իմաստավորված գործելակերպ

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում աշխատակիցների առողջության պահպանումը և աշխատանքի անվտանգության ապահովումը գերակա ուղղություն են: Ընկերությունում առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության ապահովման ուղղությամբ կատարվող աշխատանքների, ինչպես և առկա վտանգների ու ռիսկերի մասին է զրույցը «ՀՊՄԿ» ՓԲԸ Աշխատանքի անվտանգության բաժնի պետ Արթուր Աղայանի հետ:

– Պարոն Աղայան, նախ՝ ներկայացրեք, խնդրեմ, ընկերության Աշխատանքի անվտանգության բաժնի հիմնական խնդիրները, անելիքները:

– Աշխատանքի անվտանգության թիմի կարևորագույն խնդիրն է՝ ձևավորել անվտանգ վարքագիծ ընկերության աշխատակիցների շրջանում և հասնել անվտանգ միջավայր ձևավորելուն: Այսինքն՝ ստեղծել աշխատողի կյանքը, առողջությունը, արժանապատվությունն ապահովող պայմաններ: Ավելի կոնկրետ՝ ստեղծել անվտանգ պայմաններ յուրաքանչյուր աշխատակցի համար, գնահատել ու վերացնել վտանգները, ռիսկերը, որոնք կարող են վնասել մարդուն՝ ֆիզիկական, մտավոր կամ հոգեբանական տեսանկյունից՝ քանզի յուրաքանչյուր ոք իրավունք ունի ունենալ աշխատանքի ապահով, անվտանգ միջավայր: Ընդ որում՝ վտանգները կամ ռիսկերը, որոնք նկատում ենք, կարող են և անտեսանելի լինել աշխատակիցների համար: Իրականացնում ենք նաև խորհրդատվություն՝ առաջարկելով գաղափարներ, լուծումներ՝ ծագող թերությունները շտկելու, վերացնելու համար:

Արթուր Աղայանը ծնվել է 1968 թ. Կապան քաղաքում: Ավարտել է Պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ինժեներ-մեխանիկի որակավորմամբ: 1986-88 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1991-94 թթ. աշխատել է «Լադա» սերվիսում՝ գլխավոր տնօրենի տեղակալ: 2011-15 թթ. «Դինո գոլդ մայնինգ» ընկերության ստորգետնյա հանքի գլխավոր մեխանիկն էր: 2015-ից աշխատում է «ՀՊՄԿ» ՓԲԸ-ում՝ նախ՝ Աշխատանքի անվտանգության բաժնի պետի տեղակալ, 2016-ից՝ նույն բաժնի պետ: 2015-19 թթ. մասնակցել է մի շարք միջազգային դասընթացների՝ ստանալով սերտիֆիկատներ:

– Աշխատանքի անվտանգութ-

յան ապահովումը, ենթադրում ենք, կանոնակարգվում է ՀՀ օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, հանրապետական գերատեսչությունների հրահանգներով: Փորձենք բացել դրանց շրջանակը:

– Մեր գործունեությունը, բնականաբար, կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես «Տեխնիկական անվտանգության պետական կարգավորման մասին» օրենքով:

Աշխատանքի անվտանգության բաժնի գործունեության հիմքում ընկած են նաև միջազգային չափանիշները: Երևի քչերն են տեղյակ, որ մեր ընկերությունը վերջերս ձեռք է բերել միջազգային սերտիֆիկատ՝ ըստ ԻՍՕ-45001 միջազգային ստանդարտի: Այն իրենից ներկայացնում է միջազգային չափանիշներով կազմված հարցաշար, որին պիտի համապատասխանի մեր գործունեությունը: Հարցաշարը կարգավորում է առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության ոլորտի կարևորագույն խնդիրները: Եվ, իհարկե, ժամանակ առ ժամանակ, տեսչական մարմինների կողմից անց են կացվում ստուգումներ՝ գործող օրենքների, ենթաօրենսդրական ակտերի, պաշտոնական հրահանգների կատարման ընթացքը և այդ ամենին մեր գործունեության համապատասխանությունը ճշտելու նպատակով:

– Ուշագրավ է, որ ձգտում եք աշխատանքները կազմակերպել միջազգային չափորոշիչներին համապատասխան, որի վկայությունը նաև Ձեր իսկ հիշատակած սերտիֆիկատն է: Դուք արդեն ընդհանուր գծերով ներկայացրիք, թե ինչ ասել է ԻՍՕ-45001 սերտիֆիկատը: Ուրիշ ի՞նչ նկատի ունեք միջազգային փորձ, միջազգային ստանդարտներ ասելով, որոնց հետևում է ընկերությունը:

– Կարելի է ասել՝ աշխարհում գործող հանքարդյունաբերական ձեռնարկությունները, որոնք աշխատում են մեր ընկերության ռեժիմին նման կերպով, ձգտում են, որ չլինեն միջադեպեր ու դժբախտ պատահարներ: Ավելին, աշխարհում չկա հանքարդյունաբերական որևէ ընկերություն, որ զերծ լինի հնարավոր վտանգներից ու ռիսկերից: Մեր ընկերությունն էլ այդ առումով բացառություն չէ, բայց մեր ընկերության հմուտ թիմն անում է հնարավորը՝ չեզոքացնելու վտանգները և պատշաճորեն կառավարելու ռիսկերը:

Միջազգային փորձ ասելով նկատի են առնվում բոլոր այն մոտեցումները, որոնք առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության ապահովման ոլորտում հանգեցրել են նշանակալի կամ շոշափելի դրական արդյունքների: Բայց, որքան էլ առաջադեմ լինի փորձը, այն պետք է կիրառելի լինի տվյալ ընկերությունում ու տվյալ միջավայրում: Այսինքն՝ մենք կարող ենք վերցնել միջազգային որևէ ստանդարտ և փորձարկել տեղում՝ համոզվելու համար՝ որքանո՞վ է այն կիրառելի ընկերությունում և ներկայիս միջավայրում՝ ելնելով տեղանքի առանձնահատկություններից, աշխատանքի մեթոդաբանությունից, մարդկային մտածելակերպից:

Ընդունելի է միջազգային այն փորձը, որը նպաստում է աշխատակիցների մտածելակերպի, վարքագծի փոփոխմանը: Ի վերջո միջազգային փորձի կիրառման նպատակն է՝ փոխել աշխատակիցների վարքագիծը, դրդել նրանց՝ մտածել և գործել անվտանգ, քանզի յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում ոչ միայն իր, այլև շրջապատի նկատմամբ:

Գիտե՞ք՝ մարդիկ կարող են տարիներ շարունակ մտածել նույն կերպ, աշխատել նույն ոճով՝ համոզված լինելով, որ դա ճիշտ և անվտանգ վարքագիծ է: Բայց երբ դու նրա ուշադրությունը հրավիրում ես նրբությունների վրա, ինքը ձգտում է վերափոխվել:

Այսպես ընդհանրացնենք՝ միջազգային ստանդարտների կարևորագույն պահանջը մարդկանց մեջ անվտանգության մշակույթի և վարքագծի ձևավորումն է:

Հայաստանի օրենսդրությունը չունի վտանգների բացահայտման և ռիսկերի գնահատման պահանջ, այն փոխառվել է միջազգային փորձից: Ուստի մեր ընկերությունը, ինչպես ասացի, վերցրել է միջազգային ստանդարտը, որով և առաջնորդվում է:

– Տեղափոխվենք ավելի գործնական ու առարկայական դաշտ. արդյո՞ք չափելի են աշխատանքի անվտանգության ոլորտում ընկերության կատարած գործերը: Եթե այո, ապա որո՞նք են գլխավոր ցուցանիշները:

– Նախ՝ աշխատանքի անվտանգության մեր բաժնում չկա անհատական գործունեություն, կա միայն կոլեկտիվ, թիմային աշխատանք, որն էլ հաջողությունների գրավականն է: Օրենքի պահանջները, միջազգային ստանդարտները թղթի վրա, անշուշտ, գեղեցիկ են, բայց դրանք ոգևորիչ են դառնում, երբ վերածվում են կոնկրետ գործերի:

Օրինակ, 2016 թ. ունեցել ենք ֆիզիկական վնասվածքներ պատճառած 20 դեպք, 2020-ին՝ 5, 2021-ին՝ 3, այն էլ՝ միջին թեթև ծանրության: Դա արդեն չափելի արդյունք է:

Նման արդյունքներ ունենալու կամ պատահարները բացառելու համար իրականացվում են տարբեր միջոցառումներ՝ զրույց աշխատակիցների հետ, իրազեկվածության բարձրացմանը միտված դասընթացներ, ուսումնական վարժանքներ՝ արտակարգ իրավիճակներում մարդկանց պատրաստվածությունը ստուգելու նպատակով և այլն:

Այդքանով հանդերձ՝ թիմը միայնակ չի կարող դրական արդյունք ապահովել, եթե չաշխատի արտադրության կազմակերպիչների հետ: Այսինքն՝ աշխատանքի ռեալ անվտանգության կարելի է հասնել միայն բոլորիս համատեղ ջանքերով:

Ու մինչ աշխատողից կպահանջենք անվտանգության կանոնների կատարում, նրա համար ապահովում ենք անվտանգ գործունեության դաշտ. պետք է ապահովված լինի անվտանգության պահպանիչ միջոցներով, պետք է անցած լինի համապատասխան դասընթացներ ու որակավորված լինի...

– Դուք՝ թիմով և արտադրության ղեկավարներով, աշխատողների համար ապահովում եք գործունեության անվտանգ դաշտ... Իսկ այդ միջոցառումները, դրանց համապատասխանությունը գործող օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին, միջազգային ստանդարտներին, պաշտոնական հրահանգներին՝ արդյո՞ք վերահսկվում կամ ստուգվում են իրավասու այլ կառույցների, ասենք՝ տեսչական մարմինների կողմից:

– Ընկերությունն ունի շուրջ 240 արտադրական վտանգավոր օբյեկտ, որոնք ենթարկվում են ամենամյա պարտադիր տեխզննության՝ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Կան աշխատանքներ, որոնք կատարելու համար, գործող օրենսդրության համաձայն, պետք է թույլտվություն տրվի: Մասնավորապես՝ թույտվություն պետք է ստանան պայթեցնողները, կռունկավարները, առասանողները...

Մասնագետների այդ խմբի հետ ամեն տարի դասընթացներ ենք վարում...

Տարեկան մի քանի անգամ տեսչական մարմիններն են ստուգման գալիս, մեկ անգամ էլ աուդիտ է անցկացվում արտասահմանյան կազմակերպությունների կողմից: Ի վերջո աշխատում ենք յուրաքանչյուրի հետ. ունենք դասընթացների երկու սենյակ, տարեկան մոտ երեք հազար հոգու համար դասընթաց ենք կազմակերպում:

– Որքան տեսնում ենք՝ թիմը մեծ առաքելություն ունի, բայց գործնական աշխատանքները պատշաճ իրականացնելու համար բաժնի յուրաքանչյուր աշխատակից պետք է գիտելիքների, իմացության որոշակի պաշար ու հմտություններ ունենա, ոլորտի նորություններին իրազեկ լինի...

– Աշխատանքի անվտանգության մեր թիմը ձևավորվել է մարդկանցից, ովքեր տարիներով աշխատել են ընկերության արտադրամասերում, ովքեր ծանոթ են այս կամ այն արտադրամասի նրբություններին՝ հանքագործ են,

էներգետիկ...

Բացի այդ՝ պարբերաբար ունենում ենք հյուրեր արտասահմանից, ովքեր մեզ հետ՝ տեղում, անց են կացնում դասընթացներ: Հետաքրքիր է նրանց փորձին, պահանջներին ծանոթանալը...

Մեկ օրինակ. մենք տեղյակ չէինք՝ ինչ է վտանգների բացահայտումը և ռիսկերի գնահատումը: Դրսից եկավ մասնագետ, և նրա օգնությամբ կարողացանք յուրացնել այդ թեման: Հետևում ենք նաև ոլորտի գիտական նվաճումներին, դրանց վերաբերյալ հրապարակվող նյութերին, անգամ օտարալեզու հրապարակումներին, որոնք թարգմանվում և տրամադրվում են ինժեներներին: Աշխատում ենք տեղի փորձառու մասնագետների հետ նույնպես: Այդ ամենի շնորհիվ թիմի անդամները, ինժեներները, հետևաբար և մյուս աշխատակիցներն ավելի իրազեկ ու հմուտ են դառնում:

– Աշխատանքի անվտանգություն ասվածը տարողունակ հասկացություն է... Կենտրոնականաք Ձանգեզուրի կոմբինատի վրա. որո՞նք են հիմնական ռիսկերն ու ենթադրյալ վտանգները:

– Ռիսկերն ունեն կատեգորիաներ՝ ֆիզիկական, քիմիական, մեխանիկական, բնական: Վերջինս մեզ մոտ այնքան էլ տարածված չէ, բարեբախտաբար բնական աղետներ քիչ ենք ունենում:

Ֆիզիկական ռիսկերն են շատ, որոնք կարող են հանգեցնել ֆիզիկական վնասվածքների. սայթաքել-ընկնել, սարքավորմանն անզգուշորեն դիպչել, ձեռքը թողնել պտտվող սարքի արանքում...

Քիմիական ռիսկերը հիմնականում առաջանում են քիմիական նյութերի հետ աշխատելու ընթացքում, որոնք կարող են հանգեցնել գլխապտույտի, գլխացավի, շնչահեղձության, թունավորման...

Բացահանքում ռիսկերը փոքրինչ տարբերվում են այլ տեղամասերի վտանգներից: Այստեղ կան տրանսպորտային միջոցներ, որոնք կարող են վթարի ենթարկվել, մեկը մյուսին բախվել: Կան հանքաստիճաններ, որոնք, սխալ շահագործման դեպքում, կարող են փլուզվել:

Աշխատանքի անվտանգության մեր թիմը ձևավորվել է մարդկանցից, ովքեր տարիներով աշխատել են ընկերության արտադրամասերում, ովքեր ծանոթ են այս կամ այն արտադրամասի նրբություններին՝ հանքագործ են, էներգետիկ...

Որոշակի վտանգներ են ներկայացնում էլեկտրական սարքավորումները, էլեկտրական լարերը...

Ինչպես ասացի՝ մեծ ուշադրություն ենք դարձնում առաջին բուժօգնության կազմակերպմանը միտված դասընթացներին: Դրանք են հիմնական ռիսկերը, որոնք պատշաճ կերպով վերահսկվում և կառավարվում են:

– Դուք ներկայացրիք հիմնական ռիսկերը, առանձին կանգ առաք բացահանքի վրա: Մենք օրեր առաջ եղել ենք այնտեղ և կարծում ենք՝ լրջագույն ռիսկեր պարունակող գործընթացներից մեկն էլ պայթեցումներն են:

– Մեր ընկերությունում հանքաբարի հանույթն իրականացվում է բաց եղանակով, այսինքն՝ պայթեցման միջոցով: Պայթեցման աշխատանքները տեղի են ունենում գրեթե ամեն օր՝ ժամը 16-17-ի սահմաններում:

Այդ ժամանակահատվածում, եթե Դուք լինեք բացահանքում, կլսեք ձայնային ազդանշաններ: Մեկ երկար ազդանշանը զգուշացնում է, որ մինչև տասը րոպեն պայթեցում կլինի. դրանից հետո բոլորը պետք է լքեն տարածքը՝ 500 մ շառավղով:

Հաջորդող երկու երկար ձայնային ազդանշանը հիշեցնում են, որ մնացել է հինգ րոպե. դա ստուգողական ազդանշան է՝ վստահ լինելու, որ տարածքում ոչ ոք չկա: Բացի այդ, այնտեղ կան հսկիչ կետեր, որոնք վերահսկում են գործընթացը:

Միայն այդ աշխատանքները կատարելուց հետո է տարածքը փակվում և պայթեցում իրականացվում: Ընդ որում՝ պայթեցման աշխատանքները ձայնագրվում են: Պայթեցումից հետո դանդաղեցված ընթացքով լսում ենք ձայնագրությունը՝ պարզելու՝ արդյո՞ք նախատեսված բոլոր պայթեցումներն են կատարվել. եղել են դեպքեր, երբ նախատեսված պայթեցումը տեղի չի ունեցել: Այդ ամենից հետո հնչում է երեք կարճ ազդանշան, ինչը նշանակում է՝ տարածքն անվտանգ է:

– Հետաքրքիր սկզբունք եք որդեգրել. աշխատանքի անվտանգության ապահովումն այնպիսի խնդիր է, որի լուծմանը պետք է մասնակցի յուրաքանչյուր ոք, իսկ դա նշանակում է հետևողական աշխատանք բոլոր հանքագործների հետ՝ ըստ ոլորտների:

– Պարբերաբար դասընթացներ ենք կազմակերպում: Դրանք նաև կոնկրետ ուղղվածություն ունեն՝ ըստ ոլորտների: Օրինակ, եթե մարդ աշխատում է 1,8 մ և ավելի բարձրության վրա, ապա պետք է ամրագոտի կրի: Նրանց հետ էլ տարեկան մեկ-երկու անգամ դասընթացներ ենք

վարում, գործնական պարապմունքներ անցկացնում:

Տարեկան մոտ 1800-2000 հոգու առաջին օգնության կերպն ենք ուսուցանում: Առաջին օգնություն՝ վնասվածքի, օձի խայթոցի, էլեկտրահարման, ուշագնացության և այլ դեպքերում: Այդ գիտելիքներն ու հմտությունները մարդուն օգնում են նաև առօրյա կյանքում:

Կան թեմաներ, որոնք հավասարապես արծարծվում են բոլոր խմբերի հետ կազմակերպվող դասընթացներում: Օրինակ, անհատական պաշտպանիչ միջոցներ կրելու ձևերը և առանձնահատկությունները, առաջին օգնության ցուցաբերումը, առասանների հետ տարվող աշխատանքները:

Կան մասնագիտություններ, որոնք հատուկ դասընթացներ են պահանջում՝ կռունկավարներ, պայթեցնողներ, արտադրական վտանգավոր օբյեկտները շահագործող պատասխանատու անձինք, ճնշման տակ աշխատող անձինք... Այդ մարդիկ տարին մեկ անգամ անցնում են գիտելիքների ստուգում: Իսկ ամեն ինչ սկսվում է մարդուն աշխատանքի ընդունելուց, երբ նա հրահանգավորվում է:

Հրահանգավորում ենք նաև այցելուներին: Եթե որևէ մեկը (ոչ մեր աշխատակից) մտնում է ընկերության տարածք, նրա անվտանգության համար նույնպես մենք ենք պատասխանատվություն կրում: Ուստի և՝ մինչև տարածք մտնելը հրահանգավորում ենք, ծանոթացնում ռիսկերին:

– Իսկ եթե աշխատակիցը, այս կամ այն պատճառով, չի հետևում ներկայացվող պահանջներին...

– Նման դեպքերում կիրառվում է կարգապահական տույժ՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի. նկատողություն, խիստ նկատողություն կամ այլ միջոց: Հասկանում եմ՝ մեր մոտեցումը խիստ է, բայց երբ վերլուծում ենք խախտումների պատմությունը՝ պարզվում է, որ դրանք մեծամասամբ անպատժելիության հետևանք են:

Ձեռնարկվող միջոցառումները թույլ են տալիս փոփոխել ոչ կարգապահ աշխատակիցների վարքագիծը, խուսափել կրկնվող խախտումներից:

– Քանիցս անդրադարձաք դասընթացներին, տեղեկատվության տրամադրմանը, որոնք միտված են բարձրացնելու աշխատակիցների իմացությունն ու գիտակցությունը և, իհարկե, փոխելու նրանց վարքագիծը: Ուրեմն և չափազանց կարևոր է դասընթացների ծրագրերի մշակումը:

– Եվ պետականորեն առաջադրված հարցեր կան, և՛ մենք ենք թեմաներ առաջադրում՝ տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով: Ունենք 182 պաշտոնական հրահանգ, ամեն մի

Կան մասնագիտություններ, որոնք հատուկ դասընթացներ են պահանջում՝ կռունկավարներ, պայթեցնողներ, արտադրական վտանգավոր օբյեկտները շահագործող պատասխանատու անձինք, ճնշման տակ աշխատող անձինք...

մասնագիտության համար կա պաշտոնական ուղեցույց. դրանց պահանջները նույնպես ներառվում են ուսումնական ծրագրերում:

– Գործնական ի՞նչ նշանակություն ունի արտահագուստը:

– Ամեն մի աշխատող ունի պաշտպանիչ միջոցներ, որոնցից է արտահագուստը: Ու եթե պաշտպանիչ միջոցները ճիշտ ես ընտրում, ապա հետո դյուրին է լինում պահանջներ ներկայացնելը: Տարիներ առաջ չկար անհատական պաշպանիչ միջոցներ կրելու մշակույթ, բավարարվում էինք ինժեներական լուծումներով, վարչական վերահսկողությամբ: Հիմա, կարելի է ասել, այդ մշակույթը ձևավորված է:

Ամենակարևորը՝ ՀՊՄԿ-ի ղեկավարությունը ոչինչ չի խնայում անհատական պաշտպանիչ միջոցների խնդիրն ըստ պատշաճի լուծելու համար: Եվ դա, հավատացեք, դրական արդյունքներ ունեցավ: Շատ պատահարներ կանխվեցին ու կանխվում են հենց այդ միջոցների շնորհիվ:

– Խոսենք կորոնավիրուսի օրերին ընկերության գործունեության, ձեռնարկված միջոցառումների մասին:

– Հիմա արդեն կարող եմ փաստել՝ մեր թիմը հաղթող դուրս եկավ համաճարակի դեմ պայքարից. նվազագույն թվով հիվանդներ ունեցանք...

Ախտահանիչ միջոցներով օգնում էինք նաև մարզի բուժհաստատություններին: Մինչև այսօր էլ օգտագործում ենք այդ ժամանակ ձեռք բերված ախտահանիչ նյութերը:

Համաճարակի ժամանակ՝ ամեն օր, ախտահանիչ միջոցներ ենք տրամադրել արտադրամասերին, ախտահանվել են տեղամասերը, բազրիքները, տրանսպորտային միջոցները, գրասենյակները: Հետևել ենք առողջապահական գերատեսչությունների հրահանգներին՝ սոցիալական հեռավորություն ենք պահպանել, ժամանակավորապես դադարեցրել ենք դասընթացները, խուսափել մարդկային կուտակումներից, հիվանդներ լինելու դեպքում երբեմն ամբողջական տեղամասեր ենք փակել, տարածքներ ախտահանել:

– Իսկ կորոնավիրուսից հետո՞, չէ՞ որ մարդկանց առողջությանն առնչվող ռիսկերն ամեն օր և ամեն տեղամասում կարող են զգալ տալ:

– Սննդի ոլորտի աշխատակիցները վեց ամիսը մեկ բուժզննում են անցնում: Բուժզննում են անցնում հյուրանոցում, մանկապարտեզներում աշխատողները, նաև կոմբինատի վտանգավոր տեղամասերի աշխատակիցները:

Տարեկան մոտ երկու հազար մարդ է բուժզննում անցնում, այն էլ՝ մեր բաժնի հսկողությամբ, երբեմն հիվանդություններ են բացահայտվում, որը նկատի ենք ունենում...

– Որոշ բարդ սարքավորումներ աշխատեցնելու համար, հավանաբար, առանձին հրահան-

գավորումներ եք կատարում...

– Նախքան նման սարքավորման շահագործելու իրավունք ստանալը՝ աշխատողը երեք ամիս կատարում է օգնականի պարտականություն՝ վարպետի հսկողությամբ: Իսկ մինչ աշխատանքի ընդունվելը, ինչպես ասացի, անձն անցնում է համապատասխան ներածական հրահանգավորում:Ընթացքում՝ երեք ամիսը մեկ, տվյալ տեղամասի ղեկավարը դարձյալ հրահանգավորում է աշխատակցին: Այսինքն՝ որոշակի նախապատրաստական փուլեր անցնելուց հետո է մարդն անցնում այդ կարգի մեքենասարքավորումներ բանեցնելուն:

– Մեր նախնական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խնդիրներ եք ունենում նաև կապված աղմուկի և լուսավորության, գազերի, փոշու, վիբրացիայի հետ:

– Անվտանգության բաժինը պարբերաբար չափումներ է իրականացնում այդ ուղղությամբ, ավելի ճիշտ՝ վեց ամիսը մեկ: Ընդ որում՝ դա օրենսդրական պահանջ է, որի նպատակն է՝ ապահովել թույլատրելի սահմանները և նվազեցնել դրանց բացասական ազդեցությունն աշխատակիցների վրա: Անհրաժեշտության դեպքում ձեռնարկվում են ուղղիչ գործողություններ՝ աղմուկի մակարդակի նվազեցման, լուսավորության բարելավման, փոշու և վիբրացիայի վտանգավորությունն իջեցնելու համար:

– Առավել կարևոր են, կարծում ենք, հրդեհավտանգ իրավիճակները: Հատկապես հուլիս-օգոստոս ամիսներին մեր երկրամասում հրդեհների հավանականությունը մեծանում է:

– Հրդեհային պաշտպանության համար բոլոր արտադրամասերում և աշխատանքային տեղամասերում տեղադրված են անհրաժեշտ հակահրդեհային վահանակներ, կրակմարիչներ և ավազով լցված արկղեր: Անց ենք կացնում կրակմարիչների օգտագործման գործնական դասընթացներ: ժամանակ առ ժամանակ անց են կացվում նաև ուսումնական վարժանքներ: Այդպիսի մի վարժանք էլ անցկացվեց 2022-ի հունիսի 1-ին:

– Բազմաթիվ խնդիրներ, մեծ տարածք, երկու հարյուրի հասնող օբյեկտներ... Ձեր փոքրաթիվ թիմն ինչպե՞ս է հասցնում լինել բոլոր տեղամասերում և իրականացնել վերահսկողություն:

– Աշխատանքի անվտանգության ապահովումը բոլորի գործն է, պատասխանատուն բոլորն են՝ ստորաբաժանման ղեկավարից մինչև բանվոր: Բաժնում յուրաքանչյուրն ունի իրեն ամրագրված տեղամաս, և պարբերաբար փոխվում են տեղամասերը. դա նշանակում է՝ բաժնի ամեն մի աշխատող պետք է իրազեկ լինի արտադրամասի աշխատանքի անվտանգության խնդիրներին:

– Պատկերացնել կարելի է, թե որքան ծախսատար է աշխատանքի անվտանգության պատշաճ կազմակերպումը:

– «Գեոպրոմայնինգ»-ի գլխավոր կարգախոսը մարդու առողջության հանդեպ հոգատարությունն է: Դա նշանակում է՝ մեր առջև ծառացած խնդիրների լուծման ճանապարհին որևէ դժվարություն չկա:

– Ուլորտի կառավարումը, դատելով Ձեր պատասխաններից, անհնար է պատկերացնել առանց վերլուծական աշխատանքի՝ հիմնված վիճակագրական տվյալների, հաշվետվությունների վրա:

– Կատարված աշխատանքների վերլուծումը, տեղ գտած թերությունների ու բացթողումների պատճառների վերհանումը մեզ համար անկյունաքարային ուղղություն է:

Սովորաբար տարեսկզբին կազմում ենք աշխատանքային պլան ամբողջ տարվա համար, որը, հարկ եղած դեպքում, փոփոխության է ենթարկվում կամ լրացվում: Օրենքով սահմանված պահանջները, որ պլանի մաս են կազմում, կատարվում են ըստ ժամանակացույցի՝ առանց հետաձգումների: Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն ենք տալիս՝ ամենամսյա, եռամսյա, վեցամսյա, տարեկան:

Բացթողումներին, թերություններին անդրադառնում ենք, կարելի է ասել, ամեն շաբաթ՝ ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն պարոն Ստեփանյանի կողմից անցկացվող խորհրդակցությունում (առկա կամ հեռավար տարբերակով). դա շատ կոնկրետ և օգտակար աշխատանք է:

Վերլուծական աշխատանքների հիմք են դառնում նաև ամենօրյա ստուգայցերի ընթացքում ի հայտ եկած խնդիրները: Ի դեպ, ընկերության արտադրական տարածքում իրականացվում են ամենօրյա ստուգայցեր՝ աշխատանքի անվտանգության ինժեներների կողմից:

Աշխատանքի անվտանգության բաժնի յուրաքանչյուր ինժեներ էլ ստուգայց է իրականացնում իր պատասխանատվության ներքո գտնվող տարածքներում: Հայտնաբերված թերությունների հիման վրա կազմվում են զեկույցներ՝ թերությունների վերացման հստակ ժամանակացույցով: Անցկացվում են նաև կրկնակի ստուգումներ՝ պարզելու՝ արդյո՞ք ձեռնարկվել են վտանգների վերացման վերաբերյալ առաջարկված գործողությունները:

– Կան հաստատուն կամ մշտական ռիսկեր, բայց կան և նոր ծագող ռիսկեր. նոր տեխնիկա է ներդրվում, նոր հանքուղի է բացվում... Ինչպե՞ս է կատարվում վտանգների ու ռիսկերի բացահայտումը:

– Ռիսկերի գնահատումը, որպես կանոն, իրականացնում ենք տարին մեկ անգամ կամ այն դեպքերում, երբ լինում է տեխնոլոգիական փոփոխություն, երբ նոր տեխնիկայի ներդրում է կատարվում, երբ ենթակառուցվածքային փոփոխություններ են տեղի ունենում, երբ նոր նյութեր են օգտագործվում տեխնոլոգիական պրոցեսում:

Նորահայտ ռիսկերի ու վտանգների մասին գրավոր տեղեկացնում ենք արտադրամասի ղեկավարներին՝ կից միջոցառումներով և դրանց իրականացման ստույգ ժամկետներով:

– Ընկերության տարածքում քայլելիս մեր աչքից չվրիպեցին զգուշացնող վահանակները...

– Առողջության պահպանման և անվտանգության ապահովման անբաժանելի ու կարևոր մաս են անվտանգության նշանները: Դրանք տեղադրված են ընկերության բոլոր արտադրամասերում, արտադրական տարածքներում: Դրանք լինում են պարտադրող, արգելող, նախազգուշացնող, կարգավորող, ցուցող, հրդեհային անվտանգությանն ու էվակուացիային առնչվող:

Մեր բաժնի ինժեներներն ու տեխնիկական սպասարկման մասնագետները տիրապետում են նշանների պատրաստման հմտություններին:

Ի դեպ, ընկերությունը ձեռք է բերել համապատասխան սարքավորում, հատկացվել է հատուկ սենյակ՝ աշխատանքները կազմակերպելու համար:

**– Մենք չխոսեցինք լեռնափրկարարար

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

ԱՐԱՅԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ. «Մենք բաց ենք բոլոր լրատվամիջոցների համար և սիրով կաջակցենք ԶՊՄԿ-ի աշխատանքները լուսաբանողներին»

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության առաջատարն են: Չորս հազար վեց հարյուր աշխատակից ունեցող ընկերության գործունեությամբ են պայմանավորված Սյունիքի մարզի և հատկապես Քաջարան ու Կապան համայնքների սոցիալ-տնտեսական ներդաշնակ վիճակը, զարգացման հեռանկարը:

Այդ ամենով է բացատրվում այն մեծ ուշադրությունը, որ առկա է հանրության մեջ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի հանդեպ, ինչն էլ պահանջում է ակտիվ շփումներ հասարակության ամենատարբեր խավերի հետ, թափանցիկ գործելակերպ, հանրապետության և հատկապես մարզի համար նշանակություն ունեցող ձեռնարկումների պատշաճ հանրայնացում, առկա կամ ծագող հարցերի վերաբերյալ պարզաբանումների կամ արձագանքների կազմակերպում և այլն:

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գործունեության այդ ոլորտին ծանոթանալու համար զրուցեցինք ընկերության լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ Արայիկ Մարգարյանի հետ:

– Պարոն Մարգարյան, Դուք նոր դեմք եք «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունում և առաջին անգամ եք շփվում մեր լսարանի հետ, ուստի և ողջամիտ կլիներ, որ նախ ներկայանայիք:

– Այո, ընկերությունում և մարզում նոր մարդ եմ, սակայն մեդիաոլորտում աշխատում եմ ավելի քան քսան տարի: Տարբեր հեռուստաընկերություններում եղել եմ լրագրող՝ «Արմենիա», «Կենտրոն», «ԱՐ»... Որոշ հեռուստաընկերություններ, որտեղ աշխատել եմ նախկինում, այսօր այլևս չկան: 2010 թվականից աշխատում եմ Հանրային հեռուստաընկերությունում: Տասնյակից ավելի հեռուստանախագծերում խմբագիր եմ եղել: Այսօր էլ «Հանրային»-ի հետ որոշակի համագործակցություն կա, և պահպանվում են բարեկամական հարաբերությունները: Մի քանի տարի դասավանդել եմ ԵՊՀ-ում, սակայն շատ արագ հասկացա, որ մանկավարժությունը հատուկ տաղանդ է պահանջում, որը չունեմ:

– Ինչ է իրենից ներկայացնում «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության լրատվության և հասարակության հետ կապերի բաժինը. գործառույթներ, խնդիրներ, առաջնահերթություններ, ռեսուրսներ...

– Ինչպես անվանումն է հուշում, բաժինն ամենօրյա ռեժիմով ապահովում է ԶԼՄ-ների և հասարակության հետ կապը, իրական ժամանակում հետևում է սոցցանցերում և մամուլում ընկերությանն առնչվող թեմաներին, անհրաժեշտության դեպքում արձագանքում է դրանց: Վերջին շրջանում դիտարկում ենք նաև ադրբեջանական մամուլը, որտեղ էականորեն աճել են ԶՊՄԿ-ին վերաբերող հոդվածները: Սահմանային Ողջի գետի թեման մեր հարևանները փորձում են օգտագործել էկոլոգիական համատեքստում և միջազգային աղմուկի համար հող նախապատրաստել: Բազմաթիվ են հրապարակումներն այն մասին, որ պատրաստվում են միջազգային դատարան դիմել ու փոխհատուցում պահանջել Հայաստանից: Բացահայտ հայտարարվում է, որ հայցադիմումին կցելու են գետն աղտոտելու մասին հայկական մամուլում տեղ գտած հրապարակումներն ու նույն թեմայով հայկական ՀԿ-ների զեկույցները: Օգտվելով առիթից՝ իմ լրագրող գործընկերներին կոչ եմ անում այս թեմայով հրապարա-

> *Յուրաքանչյուր շաբաթ ադրբեջանական մամուլում 20-40 անգամ հիշատակվում է ընկերության անվանումը:*

Կումներ անելիս ավելի երկար մտածել և իրականության ու փաստերի վրա կառուցել հոդվածները, որպեսզի ակամա չօգնեն թշնամուն: Յուրաքանչյուր շաբաթ ադրբեջանական մամուլում 20-40 անգամ հիշատակվում է ընկերության անվանումը: Մեր բաժինը նաև մշակում է ընկերության կարճաժամկետ և երկարաժամկետ մեդիառազմավարությունը, լուսաբանում իրականացված սոցիալական ծրագրերը, կարևոր իրադարձությունները:

– Թափանցիկ գործելակերպը մեր ժամանակներում կարևոր չափորոշիչ է նաև տնտեսվարող սուբյեկտների համար:

Զանգեզուրի կոմբինատի գործունեությունը, խոստովանենք, հատկապես 2014-20 թթ., թափանցիկության առումով խոցելի է եղել:

Ընկերության նոր սեփականատերը, նոր ղեկավար թիմը, ինչպես տեսնում ենք, կոմբինատի գործունեությունը տեսանելի դարձնելու համար ձերբազատվել են բազմաթիվ կարծրատիպերից, արհեստական սահմանափակումներից: Եվ, այդուհանդերձ, թափանցիկ գործելակերպը բացարձակ հասկացություն կամ արժեք չէ, կան բազմաթիվ տեղեկություններ, որոնց գաղտնիությունը նույնիսկ օրենքով է պաշտպանված:

Փորձեք լույս սփռել հարցի վրա՝ ընկերության ղեկավարությունն ինչպե՞ս է պատկերացնում թափանցիկություն ասվածը:

– Անկեղծ ասած, ես չեմ հետևել, թե մինչև 2020 թվականն ինչ քաղաքականություն է վարել ընկերությունը թափանցիկության առումով: Իմ առջև խնդիր է դրված աշխատել թափանցիկ ու ընկերության գործունեությունը մատչելի դարձնել հասարակության բոլոր խավերին: Հանրությունը շատ քիչ բան գիտի մեր սոցիալական ծրագրերի մասին, պատկերացում չունի, թե ընդհանրապես ինչով է զբաղվում ընկերությունը: Հիմա մենք քննարկում ենք զբոսաշրջիկներին կամ հետաքրքրված մարդկանց խմբերին բացահանք և հարստացուցիչ ֆաբրիկա հրավիրելու հարցը: Առաջարկելու ենք շրջայց կատարել ու մոտիկից տեսնել ու զգալ լեռնագործների, հանքագործների աշխատանքը: Ուզում ենք, որ լրատվամիջոցներն ընկերության մասին տեղեկատվությունը կարողանան անմիջապես ընկերությունից ստանալ:

– Մեր հանրապետությունում լրատվական դաշտը միատարր չէ, ինչը և բնական պիտի համարել: Լրատվամիջոցների տարբեր սեփականատերեր, տարբեր շահեր, քաղաքական տարբեր կողմնորոշումներ, երկրի անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ տարբեր ընկալումներ...

Ո՞ւմ հետ եք գերադասում աշխատել, արդյոք պատրա՞ստ եք աշխատել (կամ աշխատում եք) բոլոր այն լրատվամիջոցների հետ, որոնք սահմանված կարգով հավատարմագրվում են ընկերությունում:

– Ընկերության գործունեությունը լուսաբանելու համար հավատարմագրում անհրաժեշտ չէ: Յուրաքանչյուր լրագրող, բլոգեր, քաղաքացի կարող է ՀՊՄԿ-ի մասին մեզ հարց ուղղել, հրապարակում պատրաստել: Մենք համագործակցում ենք բոլորի հետ, պատասխանում ենք բոլոր հարցումներին, ու եթե պարզաբանման կարիք կա, ապա կապ ենք հաստատում: Ընկերությունը սիրելի կամ ոչ ցանկալի լրատվամիջոցներ ու լրագրողներ չունի: Համագործակցելիս ՀԼՄ-ի քաղաքական ուղղվածությունը հաշվի չենք առնում, ու այս թեմայով մի դիտարկում անեմ՝ ընկերությունն ապաքաղաքական է: Այս առումով ընկերությունը և մասնավորապես մեր բաժինը կաշկանդված չեն, աշխատում ենք բոլորի հետ:

«Ընդերքից բարձունքներ» հանդեսը լույս է տեսնում 2015 թվականից: Մինչ իմ՝ բաժնի ղեկավար դառնալն այն տպագրվում էր եռամսյա հաճախականությամբ: Վերջին մի քանի համարները պատրաստելիս փորձում ենք փոխել պարբերականությունը և այն ամսագիր դարձնելու նպատակ ունենք:

– Պարբերաբար, գրեթե ամեն շաբաթ, լրատվական դաշտում հրապարակումների ենք հանդիպում՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինին առնչվող: Ընդ որում՝ և՛ դրական, և՛ բացասական շեշտադրումներով կամ ուղղվածությամբ:

Բացասական հրապարակումները (մեղմ ասած) երբեմն սուբյեկտիվ ընկալումների կամ անտեղյակության կամ նույնիսկ դիտավորության արդյունք են լինում:

Ինչպե՞ս եք վերաբերում քննադատական հոդվածներին: Անանուն կամ կեղծ ստորագրությամբ հրապարակումներին իրեն հարգող որևէ մեկը չի արձագանքի, ուստի և այդ կարգի հորինվածքներին չենք անդրադառնում: Իսկ մյուս դեպքերում... Ի՞նչ գործելակերպ եք որդեգրել՝ արձագանքե՞լ, հերքե՞լ, հակառա՞կն ապացուցել, թե՞ լռելյայն հետևել:

– Ապատեղեկատվության, ստի ու մանիպուլյատիվ հրապարակումների դեպքում Դուք նկարագրեցիք մեր գործողությունների ամբողջական փաթեթը՝ որոշ դեպքերում անտեսում ենք, որոշ դեպքում՝ արձագանքում, իսկ երբեմն էլ հերքում տարածում: Այնպիսի հոդվածները, որտեղ փաստեր կան, մենք վերլուծում ենք ու հետևություններ անում: Գրություններ ենք ուղարկում համապատասխան բաժիններ և ներկայացնում հոդվածում տեղ գտած բացթողումների մասին հիշատակումները: Ցավոք, այդպիսի դեպքերը շատ չեն: Մենք հատկապես

գնահատում ենք որակյալ հոդվածները: Դրանք մեզ իսկապես ստիպում են ավելի լավ աշխատել, իսկ բամբասանքներն ու ասեկոսեները մեզ հիասթափեցնում են, որովհետև, ինչպես արդեն նշեցի, ադրբեջանական քարոզչամեքենան դրանք կարող է օգտագործել ընկերության ու Հայաստանի դեմ:

– Դուք գլխավորում եք ընկերության հասարակության հետ կապերի բաժինը:

Հանրության հետ կապն առհասարակ ենթադրում է բնակչությունից, ընկերության աշխատակիցներից ստացած դիմումնամակների հետ տարվող աշխատանք:

Տեղյակ ենք՝ դա չի մտնում Ձեր գլխավորած բաժնի գործառույթների մեջ:

Այդ բոլորով հանդերձ՝ կուզենայինք գոնե համառոտ պատկերացում կազմել դիմում-նամակների հետ կատարվող աշխատանքների մասին, քանզի առանց դրա հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել հանրության հետ կապերի վերաբերյալ:

– Նամակներն ու դիմումներն ընկերություն գալիս են ամենատարբեր ճանապարհներով, և դրանցով զբաղվում է սոցիալական բաժինը: Այն նամակները, որ գալիս են սոցիալական մեդիայի մեր էջերով, քանի որ մեր բաժինն է վարում ընկերության սոցիալական էջերը, այդ դիմումներն ու բողոքները հավաքվում են մեզ մոտ: Նշեմ, որ դրանք շատ չեն (ամսական 5-ից 10 դիմում) ու բովանդակությամբ էլ բազմազան չեն. հիմնականում վերաբերում են աշխատանքի ընդունվելու կարգին: Դրանք փոխանցվում են համապատասխան բաժիններ, որոնք գործող կարգերով ընթացք են տալիս: Ես միայն մեկ բան պիտի ընդգծեմ՝ ոչ մի դիմում, կոռեկտ ու ամբողջական տեղեկությունով նամակ կամ առաջարկ ուշադրությունից դուրս չի մնում:

– Ընկերության բարեգործական հիմնադրամին է պատկանում «Սյունիք» մարզային հեռուստաընկերության օգտագործման արտոնագիրը, որը, ի դեպ, բավականին պատասխանատու հանգամանք է:

Տվյալ հաճախականությամբ աշխատող մարզային հեռուստաընկերությունները, ըստ գործող օրենքի, տվյալ մարզի բնակչության հետաքրքրությունները (լրատվական դաշտում) բավարարելու բացառիկ առաքելություն ունեն:

Արդյո՞ք «Սյունիք»-ին հաջողվում է պատշաճ ձևով իրականացնել իր այդ առաքելությունը:

– «Սյունիք» հեռուստաընկերությունն այս օրերին վերազինվում է, գույքագրվում են ընկերության տեխնիկատնտեսական կարիքները: Թարմացվում է լիցենզիոն պարտավորություններից բխող հաղորդաշարերի, նախագծերի պատրաստման համար անհրաժեշտ մասնագետների ցանկը: Այս վերջինը լուրջ խնդիր է, ու մարզում դժվարությամբ ենք կարողանում գտնել մասնագետներ: Մենք պլանավորում ենք ներգրավել երիտասարդների, ովքեր դասընթացների ու պրակտիկայի շնորհիվ մասնագետներ կդառնան և կաշխատեն «Սյունիք» ՀԸ-ում: Իսկ

Ապատեղեկատվության, ստի ու մանիպուլյատիվ հրապարակումների դեպքում Դուք նկարագրեցիք մեր գործողությունների ամբողջական փաթեթը՝ որոշ դեպքերում մենք անտեսում ենք, որոշ դեպքում՝ արձագանքում, իսկ երբեմն էլ հերքում ենք տարածում:

Իմ առջև խնդիր է դրված աշխատել թափանցիկ ու ընկերության գործունեությունը մատչելի դարձնել հասարակության բոլոր խավերին: Հանրությունը շատ քիչ բան գիտի մեր սոցիալական ծրագրերի մասին, պատկերացում չունի, թե ընդհանրապես ինչով է զբաղվում ընկերությունը

ինչ վերաբերում է ընկերության այս պահի գործունեությանը, ապա պետք է գոհունակությամբ նշեմ, որ այն արտադրանքը, որը մեր ուժերով ենք ստեղծում, ամբողջությամբ կամ հիմնականում միտված է սյունեցու հետաքրքրությունները բավարարելուն: Այն, ինչ չենք կարողանում անել հեռուստատեսությամբ, փորձում ենք լրացնել syunik.tv կայքով, որը լիարժեք լրատվական ռեսուրս է ու հիմնականում անդրադառնում է մարզի առօրյային:

– Ընկերությունը, որքան տեղյակ ենք, նաև տպագիր թողարկում ունի՝ «Ընդերքից բարձունքներ» վերտառությամբ: Ներկայացրեք, խնդրեմ, այդ հանդեսը:

– «Ընդերքից բարձունքներ» հանդեսը լույս է տեսնում 2015 թվականից: Մինչ իմ՝ բաժնի ղեկավար դառնալն այն տպագրվում էր եռամսյա հաճախականությամբ: Վերջին մի քանի համարները պատրաստելիս փորձում ենք փոխել պարբերականությունը և այն ամսագիր դարձնելու նպատակ ունենք: Այն կորպորատիվ տեղեկատու է, որն անդրադառնում է ընկերության ներսում տեղի ունեցած իրադարձություններին և աշխատակիցներին հետաքրքրող տեղեկություն է տրամադրում: Տարածվում է միայն ընկերության ներսում և ընկերությանը պատկանող ձեռնարկություններում: Մեր հեռահար երազանքն է, որ այս հանդեսը դառնա ոչ միայն ՀՊՄԿ-ի, այլ նաև հանքարդյունաբերության ոլորտը ներկայացնող լուրջ ու գիտական ամսագիր, որտեղ կտպագրվեն լավագույն մասնագետների հոդվածները:

– Լրացել է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հիմնադրման 70-ամյակը: Լրատվական դաշտում ինչպե՞ս եք պատրաստվում նշել հոբելյանը, մանավանդ որ խոսքը ոչ միայն կոմբինատի ներկայի, այլև անցած փառավոր ճանապարհի, հանքագործների մի քանի սերնդի գործունեության մասին է: Կարծում ենք՝ արժեր օգտվելով հոբելյանի առիթից, ի մի բերել և ընթերցողին ներկայացնել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին նվիրված գրքերի, թերթային հատուկ թողարկումների, հեռուստատեսային հատուկ թողարկումների մատենագիտական ցանկը. դա իսկապես հետաքրքիր ձեռնարկում կլիներ: Որքան տեղյակ ենք, տասնամյակների ընթացքում կոմբինատի մասին բազմաթիվ հետաքրքիր ու բովանդակալից, առայսօր անգերազանցելի, գրքեր, հանդեսներ և թերթային համարներ են հրատարակվել, որոնց էջերում պարփակված են կոմբինատի փառավոր ուղու մասին վկայություններ, վավերագրեր...

Ձեր կարծիքը...

– Տարբեր միջոցառումներ, այդ թվում տեղեկատվական նյութերի տպագրություն ծրագրվում են և այժմ ընթացքի մեջ են: Բայց ես ուզում եմ ընդգծել, որ մենք բաց ենք բոլոր լրատվամիջոցների համար, անկախ հոբելյանից, և սիրով կաջակցենք կոմբինատի աշխատանքները լուսաբանողներին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հանքագործների շահերի և իրավունքների պաշտպանության դիրքերում. ահա արհմիութենական կազմակերպության տեղն ու դերը

Տիգրան Սարգսյան. ծնվել է 1971 թ. Քաջարան քաղաքում:
1977-88 թթ. սովորել է Քաջարանի Ե. Չարենցի անվան N 1 միջնակարգ դպրոցում: 1988 թ. ընդունվել է աշխատանքի «ԶՊՄԿ» ՓԲԸ-ում՝ փականագործ: 1989-1991 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել աշխատանքը ԶՊՄԿ-ում: 1993-1998 թթ. հեռակա կարգով սովորել և ավարտել է «ՄՅՈՒԴ» իրավաբանական ինստիտուտն ու ստացել իրավագետ-իրավաբանի մասնագիտություն:
1993-1998 թթ. համատեղությամբ աշխատել է դպրոցում՝ պատմության ուսուցիչ: 1998թ-ից տեղափոխվել է «ԶՊՄԿ» ՓԲԸ նյութամատակարարման բաժին՝ ինժեներ և աշխատել մինչև 2021թ.:
1999-2021 թթ. արհմիութենական ակտիվ գործունեություն է ծավալել՝ լինելով կոմբինատի վարչության արհկոմի նախագահ: 2021 թ. սեպտեմբերի 17-ին կոմբինատի արհմիության արտահերթ համաժողովում ընտրվել է ԶՊՄԿ արհկոմի նախագահ:

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության ներդաշնակ գործունեության երաշխիքներից է կոմբինատի արհմիութենական կազմակերպությունը:
Կազմակերպության գործունեությանը ծանոթանալու նպատակով հարցազրույցի ենք հրավիրել ընկերության արհկոմի նախագահ Տիգրան Սարգսյանին:

– Պարոն Սարգսյան, մեր ժամանակներում հազվադեպ են ընկերությունները, կազմակերպությունները, հիմնարկները, որտեղ գործում են արհմիութենական կազմակերպություններ: Բացառիկներից է «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունը: Հանքագործների կոլեկտիվի ո՞ր մասն է ընդգրկված ընկերության արհմիութենական կազմակերպությունում:

– Մեզ մոտ բացառիկ իրավիճակ է՝ աշխատակիցների գրեթե հարյուր տոկոսն անդամակցում է ընկերության արհմիութենական կազմակերպությանը:

Անդամակցության հիմքում բացառապես կամավորությունն է: Երբ ընկերությունում ընդունվում են աշխատանքի, քաղաքացուն ծանոթացնում են ոչ միայն ներքին կարգապահական կանոններին, այլև ընկերության ու արհմիության միջև կնքված կոլեկտիվ պայմանագրին: Եվ ապագա աշխատողը հնարավորություն է ունենում կողմնորոշվելու:

– Որո՞նք են արհեստակցական միության նպատակները:

– Նախ՝ ներկայացնել ու պաշտպանել աշխատողների աշխատանքային, սոցիալական շահերն ու իրավունքները: Այնուհետև՝ սոցիալական գործընկերության տարբեր մակարդակներում ապահովել աշխատողների և գործատուի շահերի համաձայնեցումը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում: Ապա՝ գործատուի հրավերով մասնակցել արտադրական ծրագրերի մշակմանը և դրանց կենսագործմանը, գործատուին ներկայացնել առաջարկություններ՝ աշխատողների աշխատանքի և հանգստի պայմանների բարելավման, ձեռքի աշխատանքի թեթևացման, արտադրական նորմերի վերանայման, աշխատանքի վարձատրության չափի և կարգի վերաբերյալ...

– Տեսնում ենք՝ բավականին լուրջ լիազորություններ են, գործառույթներ. կարողանո՞ւմ եք կյանքի կոչել ոչ դյուրին այդ նպատակները:

– Նախ՝ ընկերության ղեկավարության և գլխավոր սեփականատիրոջ մեջ առկա է արհմիութենական կազմակերպության դերի կարևորության պատշաճ գիտակցում: Դա շատ կարևոր է, քանզի այդ ընկալման և փոխգործակցության շնորհիվ հաջողում ենք կյանքի կոչել մեր նպատակները:

Մի տեսակ կապող օղակ ենք դարձել ընկերության և աշխատողների միջև: Գործատուի հետ համագործակցում ենք արհմիության անդամին առնչվող բազմաթիվ հարցերում՝ աշխատանքային կարգապահության խախտումից մինչև պարգևատրում և խրախուսում...

2023 թ. ապրիլին լրանում է մեր կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը, և ներկայումս նախապատրաստական աշխատանքներ ենք տանում նոր պայմանագրի մշակման ուղղությամբ:

Սոցիալական ու արտադրական ծրագրերի մշակմանն արիմիության մասնակցությանը քիչ առաջ անդրադարձա: Դրանից զատ՝ մասնակցում ենք ընկերության բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատանքին. ինքս, որպես արիկոմի նախագահ, խորհրդի անդամ եմ:

– Արիմիության անդամի սոցիալական վիճակը, որքան հասկանում ենք, կազմակերպության գլխավոր մտահոգություններից է: Կարո՞ղ եք թվային արտահայտությամբ որոշակի պատկերացում տալ այդ ուղղությամբ արիկոմի գործունեության մասին:

– Ամսական մոտ 13-14 մլն դրամի ֆինանսական օգնություն ենք տրամադրում: 2022-ի անցած ժամանակաշրջանում մինչև հիմա օգնություն ենք տրամադրել 2227 աշխատակցի:

Մեր ուշադրության կենտրոնում է լեռնագործների հանգստի կազմակերպումը: Նույն տարում, ասենք, 1116 ուղեգիր է հատկացվել՝ Ջերմուկի, Արզնիի, Դիլիջանի հանգստյան տներում ու առողջարաններում հանգստանալու նպատակով: Ընդ որում՝ ուղեգրեր հատկացվում են նաև լեռնագործների ընտանիքների անդամներին (1116-ից 442-ը տրամադրել ենք աշխատակիցներին, մնացածը՝ նրանց ընտանիքի անդամներին՝ ծնողներին, երեխաներին): Ըստ կոլեկտիվ պայմանագրի՝ սահմանված են նաև լրացուցիչ սոցիալական երաշխիքներ այն աշխատակիցների համար, ովքեր ամուսնանում են, երեխա են ունենում, զորակոչվում են բանակ:

– Սոցիալական աջակցության ծրագրերում ի՞նչ տեղ են զբաղեցնում Արցախյան պատերազմների մասնակիցները:

– Արցախյան 3-րդ պատերազմի ընթացքում զոհվել է ՀՊՄԿ-ի 19 աշխատակից: Արիմիութենական կազմակերպությունն օգնում է նրանց ընտանիքներին: Այդ ընտանիքներին դրամական օգնություն ենք ցույց տալիս նաև Մայիսի 9-ի և Ամանորի կապակցությամբ:

Մեր ուշադրության կենտրոնում է Քաջարանում Հայրենական մեծ պատերազմի միակ կենդանի վետերան 100-ամյա Արշալույս Թադևոսյանը:

Համագործակցում ենք ԵԿՄ տեղական բաժանմունքի հետ, անհրաժեշտության դեպքում օգնում պատերազմների հետևանքով հաշմանդամ դարձած անձանց:

2021 թվականին, երբ կոմբինատի ղեկավարումը ստանձնեց նոր թիմը, առաջարկեցինք լուծել բանակից զորացրված երիտասարդների զբաղվածության խնդիրը, և այսօր՝ պարտադիր զինվորական ծառայությունն ավարտած 83 երիտասարդ՝ ընկերության աշխատակից են:

– Ենթադրում ենք, որ ընկերության վետերաններն ու կենսաթոշակառուները նույնպես արիմիության ուշադրության կենտրոնում են:

– Մոտ հինգ հարյուր և մի քիչ ավելի կենսաթոշակառու ունենք: Միայն այս տարվա ընթացքում կարողացել ենք օգնել նրանցից 360-ին՝ տրամադրելով 100 հազարական դրամ: Դա օգնություն չէ սոսկ, այդկերպ նաև ամրապնդում ենք կապն ընկերության աշխատակիցների հետ, ովքեր տասնամյակներ շարունակ մասնակցել են կոմբինատի պատմության կերտմանը:

– Եվ ինչպե՞ս է արիկոմը հայթայթում այդքան ֆինանսական միջոցներ:

– Կազմակերպության ֆինանսական միջոցները հիմնականում գոյանում են անդամավճարներից, ինչպես նաև, կոլեկտիվ պայմանագրի համաձայն, ֆինանսական միջոցներ է տրամադրում գործատուն: Անդամավճարը կազմում է աշխատողի աշխատավարձի մեկ տոկոսը:

Ընկերության ներսում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը... մեծամասամբ դրական է: Մարդիկ գիտակցում են՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային ը երկրի համար չափազանց կարևոր նշանակություն ունի, ուստի և պետք է աշխատանքային կայուն ընթացք ունենա:

Ամսական ֆինանսական օգնությունը կազմում է մոտ	14,000,000 Դ
2022-ի տարեսկզբից օգնություն է տրամադրվել աշխատակիցներին	2,227
Ուղեգիր է հատկացվել՝ Ջերմուկի, Արզնիի, Դիլիջանի հանգստյան տներում ու առողջարաններում հանգստանալու նպատակով	1,116

– Նման ծավալի ֆինանսական միջոցների տրամադրման դեպքում, որքան էլ սոցիալական աջակցության նպատակով է, չի կարող չառաջանալ արդարության, ճիշտ և ողջամիտ բաշխման խնդիր:

– Կոնկրետ սկզբունք ենք որդեգրել՝ ըստ արտադրամասերի լիմիտավորել ենք օգնության չափերը:

Գումարը բաշխում է արտադրամասի արհմիութենական կազմակերպության կոմիտեն. արտադրամասերի արհկոմի նախագահները մեր ներկայացուցիչներն են սկզբնական օղակներում: Եվ նրանք են ծագող խնդիրներն ուսումնասիրում ու ներկայացնում:

Ներքին օղակում ավելի լավ գիտեն՝ ում խնդիրն է առաջնային, ումը՝ երկրորդական: Չնախատեսված դեպքերում որոշում է ընդունվում կոլեգիալ կարգով:

Կարևոր մի հանգամանք ևս՝ մասնագիտական կամ այլ տոների կապակցությամբ մեդալներով, պատվոգրերով ու դրամական պարգևներով խրախուսվում են երկար տարիների աշխատանքային ստաժ ու հմտություններ ունեցող աշխատակիցներ: Իսկ 30 և ավելի տարիներ աշխատանքային ստաժի դեպքում՝ արհկոմի հատկացրած հանգստյան ուղեգիրը լրիվ անվճար է:

– Աշխատողների սոցիալական պաշտպանության, աջակցության հարցերում, ինչպես տեսնում ենք, ակտիվության պակաս չկա, ինչը գնահատելի է: Իսկ իրավունքների պաշտպանության ոլորտո՞ւմ...

– Կոլեկտիվ պայմանագրով համաձայնության ենք եկել գործատուի հետ, որ աշխատողների իրավունքների խախտման դեպքերում հարցերը քննարկվեն նաև արհմիութենական կազմակերպության հետ: Կարող եմ ասել՝ այդ պայմանավորվածությունը գործում է:

– Կա՞ն աշխատանքային իրավունքի խախտման դեպքեր, որոնց հանգուցալուծմանն արհկոմը մասնակցություն է ունեցել:

– Եթե աշխատողն ազատվում է սեփական դիմումի համաձայն, մենք այդտեղ անելիք չունենք: Իսկ եթե աշխատողի հետ պայմանագիրը լուծվում է կարգապահական խախտումների հետևանքով, ապա պարտադիր ներգրավվում ենք և աշխատողի իրավունքների պաշտպանությանը միտված քայլեր ձեռնարկում: Նման դեպքերում մեր խնդիրն է՝ նախ՝ պարզել, թե որքանով է հիմնավոր գործատուի որոշումը: Հիմնավոր լինելու դեպքում, բնականաբար, ձեռնպահ ենք մնում հետագա միջամտությունից:

Գործատուն պարտադիր մեր համաձայնությունն է ստանում, երբ առաջ է գալիս արհմիության ներկայացուցչական մարմիններում ընտրված անձանց աշխատանքային պայմանագրերը լուծելու հարցը: Իրավունքների պաշտպանության խնդիր միայն աշխատանքից ազատվելու դեպքերում չէ, որ առաջանում է:

Մեկ այլ առանցքային հարց և.ս. 2012 թվականից տարակարգի բարձրացման քննություններ ընկերությունում չէին կազմակերպվել: Դա համընդհանուր խնդիր էր, որը լուծում ստացավ: Ընկերությունում ձևավորվել է մշտական գործող հանձնաժողով, որն իրականացնում է գործընթացը. տարեկան մեկ անգամ աշխատակցին հնարավորություն է տրվում տարակարգի բարձրացման քննություն հանձնել, հաջողելու դեպքում՝ աշխատավարձի բարձրացումն ապահովված է:

Արհեստակցական կազմակերպությունը համագործակցում է ընկերության բոլոր օղակների, ստորաբաժանումների հետ: Պարբերաբար շրջայցեր ենք իրականացնում արտադրական օղակներ, ավելի խորքային ծանոթանում աշխատակիցների պահանջներին, խնդիրներին և փորձում գտնել լուծումներ:

Առանց չափազանցության՝ աշխատողների իրավունքների պաշտպանության առումով ընկերության արհմիութենական կազմակերպությունը պահանջված օղակ է:

– Հազարավոր այունեցիների հետաքրքրող հարց՝ ի՞նչ ճակատագիր է սպասվում վաղուց փակված և հիշողություն դարձած դպրոցականների ճամբարին:

– Գործն ընթացքի մեջ է: Նոր ղեկավարության, անձամբ Ռոման Խուդոլիի կողմից բարձրացված առաջին հարցերից է: Հայտարարված է մրցույթ՝ ճամբարի նախագծման համար, մրցույթից հետո էլ, կարծում եմ, կմեկնարկի շինարարությունը: Ըստ իմ ունեցած տեղեկության՝ 2024-ին կունենանք դպրոցականների ճամբար՝ ժամանակակից և լավագույն պայմաններով, ընդ որում՝ ճամբարը կգործի ամբողջ տարին: Մի խոսքով՝ լուրջ նախագիծ է:

– Մենք բավականին հանգամանալից զրուցեցինք աշխատակիցների սոցիալական պաշտպանության ուղղությամբ արհկոմի ծավալած գործունեության մասին: Մի հարց, այնուամենայնիվ, դուրս մնաց: Նկատի ունենք լեռնագործների առողջական խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը: Գաղտնիք չէ՝ մի կողմից հիվանդությունների աճի ենք բախվում, մյուս կողմից՝ բուժական ծառայությունների սակագների բարձրացման:

– Ընկերության բոլոր աշխատակիցները ներառված են առողջության ապահովագրական փաթեթում:

Նախկին ապահովագրական փաթեթը վերանայվել է, քանզի որոշ հիվանդություններ ներառված չէին: Արդյունքում ապահովագրական նոր պայմանագիր է կնքվել՝ աշխատակիցներին առավել հարմար պայմաններով: Իսկ առավել մեծ ծախսեր պահանջող հիվանդությունների դեպքում քայլ է անում ընկերության բարեգործական հիմնադրամը:

– Սոցիալական պաշտպանությանը միտված ակտիվ քաղաքականություն, աշխատողների իրավունքների պաշտպանություն... Այդ բոլորը, կարծում ենք, պիտի որ դրական լուրջ ազդեցություն ունենա ոչ միայն հանքագործների, այլև ամբողջ Քաջարան համայնքի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Կուզենայինք՝ իշխող մթնոլորտին Ձեր անդրադարձով ավարտել մեր զրույցը:

– Քաղաքականությունը, կուսակցական գործելակերպը վերջին ժամանակաշրջանում դուրս են մղվել կոմբինատից, ինչը բավականին դրական երևույթ է: Քաղաքականության հետ նաև բամբասանքն է դուրս մղվում ու դադարում խանգարող գործոն լինել:

Ընկերության ներսում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը... մեծամասամբ դրական է: Մարդիկ գիտակցում են՝ Չանգեզուրի պղնձամոլիբդենայինը երկրի համար չափազանց կարևոր նշանակություն ունի, ուստի և պետք է աշխատանքային կայուն ընթացք ունենա: Մարդիկ գիտակցում են նաև, որ իրենց բարեկեցությունը կախված է կոմբինատի կանոնավոր աշխատանքից, ուստի և պետք է աշխատել բարեխղճորեն:

Այսինքն՝ եթե կոմբինատի ղեկավարությունը, արհկոմն իրենց ձեռքը պահում են ընկերության զարկերակին, ապա բարոյահոգեբանական մթնոլորտը խաթարող լուրջ պատճառներ չեն կարող լինել, իսկ մենք գնում ենք հենց այդ ճանապարհով...

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

Հանքագործի և մետալուրգի օրը վերածվեց տոնակատարության

2022 թ. հուլիսի երրորդ կիրակին նախկին Խորհրդային Միության որոշ երկրներում նշվում է որպես հանքագործի և մետալուրգի օր: Ավանդույթը ձևավորվել է անցյալ դարի 50-ականներին և շարունակվում է մեր օրերում: Քանզի հանքարդյունաբերությունը եղել և շարունակում է մնալ մեր երկրի տնտեսության լոկոմոտիվը: Հանրապետությունից արտահանվող ապրանքների թվում ամենամեծ չափաբաժինը ձևավորում է հանքահումքային արտադրանքը՝ կազմելով արտահանման գրեթե 40 տոկոսը:

Հուլիսի 15-ին և 16-ին Քաջարանում ու Ագարակում անցկացվեցին տոնին պատշաճող միջոցառումներ:

Տարին Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի համար հոբելյանական է. դեռևս անցյալ դարի 30-ական թվականներից Չանգեզուրի պղնձահանքերում սկսվեցին երկրաբանական-որոնողական գործընթացները: 1940-ականներին սկսվեց Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի շինարարությունը, իսկ 1952-ին ձեռնարկությունը տվեց սերիական առաջին արտադրանքը. ուղիղ 70 տարի առաջ...

Քաջարանում կայացած միջոցառմանը մասնակցում էին Կապանի և Քաջարանի համայնքապետեր Գևորգ Փարսյանը, Մանվել Փարամազյանը, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, 1994-1998 թթ. Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ղեկավարած Ռոման Նավասարդյանը, վաստակաշատ լեռնագործներ, հանրապետության տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Քաջարանի մշակույթի պալատի առաջին հարկում Կապանի երկրագիտական թանգարանի աջակցությամբ կազմակերպվել էր տարածաշրջանի մետալուրգիայի պատմությանն առնչվող ցուցահանդես, որին ծանոթանալուց հետո միջոցառման մասնակիցները տեղ զբաղեցրին մշակույթի պալատի դահլիճում:

Տոնի առթիվ առաջինը շնորհավորելու պատիվը վերապահվեց «Գեոպրոմայնինգ» ընկերությունների խմբի նախագահ, Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիյին, ով նախ ներկայացրեց հանքարդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության տնտեսության մեջ: Բանախոսն այնուհետև անդրադարձավ «Գեոպրոմայնինգ» ընկերությունների խմբի գործունեությանը, որի առաջատար ձեռնարկություններից է Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: Այս համատեքստում Ռ. Խուդոլիյը նշեց, որ անցած տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ հանրապետության պետբյուջե կոմբինատի կողմից չորս անգամ ավելի գումար է մուծվել:

«Մենք աշխատում ենք ոչ թե արտադրական ցուցանիշների կամ շահույթի համար, այլ Հայաստան երկրի ապագայի և մարդկանց կենսամակարդակը բարելավելու նպատակով», – ասաց Ռ. Խուդոլիյը և սահուն անցում կատարեց Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ու նրա աշխատակիցների գործունեությանը: Ամենամեծ արժեքը նա համարեց մարդկանց և այն կոլեկտիվը, որտեղ նրանք աշխատում են: Բանախոսը տպավորված էր մշակույթի պալա-

Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատների մի ստվար խումբ աշխատակիցներ տոնի առթիվ արժանացան «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ մեդալի և դրամական պարգևի:

Ստի առաջին հարկում կազմակերպված՝ հանքարդյունաբերությանը նվիրված ցուցահանդեսից, ինչը վկայում է, որ մեր լեռնաշխարհում մետաղների արդյունահանմամբ մարդիկ զբաղվել են հազարամյակներ առաջ: Իսկ մեր օրերում նորագույն տեխնոլոգիաները հնարավորություն են տվել ավելի զարգացնել դարերի խորքից եկող ավանդույթները. *«Մենք ունենք հավակնոտ ծրագրեր, որոնց համար արժե լրջորեն աշխատել և կյանքի կոչել»,* – ասաց ձեռնարկության գլխավոր տնօրենը և շնորհավորեց բոլորին տոնի առթիվ՝ նրանց ընտանիքներին մաղթելով բարեկեցություն, խաղաղ երկինք, ընտանեկան երջանկություն:

Ցուցադրվեց տեսաֆիլմ Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատների աշխատակիցների մասնակցությամբ, էկրանից հնչեցին կարծիքներ նաև երկու կոմբինատի ապագայի վերաբերյալ:

Հանքագործի և մետալուրգի օրվա առթիվ ներկաներին բարեմաղթանքներ հղեց «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նորանշանակ նախագահ Վարդան Ջհանյանը. *«Հանքարդյունաբերությունն ապահովում է Հայաստանի համախառն արտադրանքի տասը տոկոսը, հանրապետությունից արտադրանքի արտահանման մոտ 40 տոկոսը: Քչերն են պատկերացնում այս թվերի իմաստը. դրանք նշանակում են շատ կարևոր մի բան, այս թվերի հետևում հիվանդանոցներն ու դպրոցներն են, որոնք կառուցվում են մեր երկրում, ուսուցիչների, բժիշկների աշխատավարձերն են, մեր բանակի ներուժն ու հզորությունը: Իսկ այս ամենն արարում են հանքարդյունաբերության ոլորտի մարդիկ՝ իրենց մասնագիտական հմտություններով, աշխատանքի մեջ ներդրած ջանքերով, գիտելիքներով»:*

Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատների մի ստվար խումբ աշխատակիցներ տոնի առթիվ արժանացան «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ մեդալի և դրամական պարգևի: Քաջարան քաղաքի պատվավոր քաղաքացի Վիլյուշա Խաչատրյանը հրապարակեց իր շնորհավորական ուղերձը՝ մասնագիտական տոնի առթիվ:

ՎԱՐԴԱՆ ՋՀԱՆՅԱՆ
«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ

ՎԻԼՅՈՒՇԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Քաջարան քաղաքի պատվավոր քաղաքացի

Վաստակաշատ լեռնագործը ներկայացրեց ոչ դյուրին ճանապարհը, որ անցել են իր տարեկից հանքագործները, մանավանդ ձեռնարկության տեխնիկական զինվածությունը՝ այն արտահայտելով թվերի լեզվով: Պարզ եղավ նաև առաջընթացը. հինգ տոննա բեռնատարողություն ունեցող ինքնաթափիչ տարիներ հետո փոխարինելու եկավ 180 տոննանոցը, մեկ խորանարդ մետր շերեփի տարողություն ունեցող էքսկավատորը հուշ դարձավ, այժմ բայց հանքում գործում են շատ ավելի հզոր էքսկավատորներ՝ ութ խորանարդ մետր և ավելի շերեփի տարողություն ունեցող, շարք մտան ինքնամանրացման հզոր աղացներ և խոր փորման հաստոցներ: Վ. Խաչատրյանն անդրադարձավ նաև կոմբինատի մարդկանց, ձեռնարկության ղեկավարներին, մասնավորապես արժանին հատուցելով Ֆրունզե Պետրոսյանին, ով երկու անգամ նշանակվել է կոմբինատի տնօրեն՝ ընդհանուր առմամբ պաշտոնավարելով 18 տարի, տասը տարի ղեկավարել է հանրապետության գունավոր մետալուրգիայի վարչությունը:

«Աշխատանքը երջանկության հայրն է», – այսպիսի խոսքերով ավարտեց ուղերձը՝ զգալի աշխուժություն առաջացնելով դահլիճում:

Հանդիսությունն ավարտվեց Քաջարանի արվեստի դպրոցի սաների և ժողգործիքների անսամբլի ելույթներով:

Իսկ երբ օրը երեկոյացավ, «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ վարչական շենքի հարակից հրապարակում տեղի ունեցավ տոնական համերգ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՁՊՄԿ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ՝
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ

Սիսիանում վերագործարկվեց քարի արդյունահանման և մշակման ընկերությունը

2022թ. օգոստոսի 23-ին նշանակալից իրադարձության մասնակիցը եղանք Սիսիան քաղաքում. գործունեության երեք տարվա դադարից հետո վերագործարկվեց քարի արդյունահանման և մշակման VH Stone ընկերությունը: Մինչ տոնակատարության բուն ընթացքին անդրադառնալը՝ հետադարձ հայացք ձգենք ընկերության անցած ճանապարհին:

«Վ ի էյչ սթոուն» ՍՊ ընկերությունը (դա ընկերության սկզբնական անվանումն էր) հիմնադրվել է 2000 թվականին՝ Գառնիկ Հովակիմյանի կողմից (Սիսիանի քաղաքապետն էր 1996-99 թվականներին): Հետագայում մի քանի անգամ փոխվել են սեփականատերերը: 2015-ին դարձել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի դուստր ձեռնարկություն, սակայն 2019-ին դադարեցվել է ընկերության գործունեությունը:

Ձեռնարկությունն ի սկզբանե զբաղվել է բնական քարերի՝ գրանիտի, տրավերտինի, բազալտի, մարմարի, տուֆի (հրաբխային և ֆելզիտային) արդյունահանմամբ ու մշակմամբ:

Որպես հումք օգտագործվել է Շենաթաղի գրանիտը, Շաքիի բազալտը, իսկ Բռնակոթում հետազոտվել է ֆելզիտի հանքավայրը:

Սկզբից ի վեր հիմնական շեշտը դրվել է Սիսիանի բնաշխարհի քարատեսակների արդյունահանման և մշակման վրա, բայց քարի հումքի ներմուծման աշխարհագրությունն ընդգրկուն էր՝ Արցախից մինչև Նոյեմբերյան:

2008 թվականին ընկերությունը վերակառուցվել-վերազինվել է պարսիկ մասնագետների աջակցությամբ, ովքեր էլ տեղադրել-կարգաբերել են քար մշակող ժամանակակից սարքավորումներ, որոնք հնարավորություն են ընձեռել ամսական մինչև 20 հազար քառակուսի մետր երեսապատման սալիկներ արտադրել: Ընթացքում բարեկարգվել է ընկերության զբաղեցրած 2,7 հեկտար տարածքը:

Արտադրանքը հիմնականում սպառվում էր արտերկրում, այն լայն կիրառություն ուներ շինությունների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարդարման աշխատանքներում և արտահանվում էր հատկապես Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, ԱՄՆ:

Ընկերությունը մասնակցել է մի շարք ցուցահանդեսների, արտադրանքը ցուցադրվել է Մոսկվայում, Հունգարիայում, Իտալիայում: Այդ ժամանակ VH Stone ընկերությունն արդեն իսկ լուրջ դերակատարություն ուներ Սիսիանի տարածաշրջանի սոցիալական ոլորտում:

* * *

Հարուստ անցյալ..., բայց և անորոշ ու սառեցված վիճակ էր քարերի մշակման այդ ձեռնարկությունում մինչև վերջին ժամանակներս...

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության նոր սեփականատերն ու նոր թիմը, դատելով ընկերության վերջին ամիսների գործունեությունից, սոցիալական որոշակի պարտավորություն են ստանձնել ոչ միայն Քաջարան ու Կապան համայնքներում, այլև մարզի ամբողջ տարածքում, ինչը, անշուշտ, քաջալերանքի արժանի գործելակերպ է:

Այդ ռազմավարության շնորհիվ էր, որ դեռևս այս տարվա ապրիլին խնդիր դրվեց վերագործարկել VH Stone ընկերությունը: Եվ աստիճանաբար սկսեցին վերագործարկմանը միտված աշխատանքները, որոնք էլ հաջողությամբ պսակվեցին:

Ներկայումս արդեն ընկերությունում կա 40 աշխատատեղ՝ հա-

Ընկերության բակում կազմակերպվել էր ներկայումս մշակվող քարատեսակներից պատրաստվող արտադրատեսակների ցուցահանդես՝ երեսապատման սալիկներ, եզրաքարեր, քիվեր, ճաղավանդակներ, տարբեր տեսակի շինաքարեր



մալրված հիմնականում տեղացի փորձառու մասնագետներով, իսկ ամսական արտադրողականությունը հասել է 2500 քառակուսի մետր սալիկների արտադրության:

Օգոստոսի 23-ի տոնական օրը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ ղեկավար անձնակազմն ավելի վաղ էր ժամանել Սիսիան՝ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիյ, գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյան, գլխավոր տնօրենի տեղակալ Արթուր Նիկողոսյան, ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյան: Նրանք հետաքրքրվում էին ոչ միայն տոնակատարության նախապատրաստության ընթացքով, այլև հընթացս քննարկում ընկերության գործունեությանն առնչվող հարցեր:

Ընկերության բակում կազմակերպվել էր ներկայումս մշակվող քարատեսակներից պատրաստվող արտադրատեսակների ցուցահանդես՝ երեսապատման սալիկներ, եզրաքարեր, քիվեր, ճաղավանդակներ, տարբեր տեսակի շինաքարեր, որոնք արդեն իսկ պահանջարկ ունեն ՌԴ-ում, Հարավային Կորեայում և ԵՄ երկներում: VH Stone -ի վերագործարկման առիթով ընկերություն էին այցելել բազմաթիվ հյուրեր:

Հանդիսավոր արարողությունը սկսվեց ընկերության բակում կազմակերպված հանրահավաքով: Նախ ելույթ ունեցավ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին, ով արտադրամասի բացումը գնահատեց իբրև ՓԲ ընկերության և ՀՀ կառավարության համագործակցության հերթական դրսևորում, որը կոչված է որոշակիորեն լուծելու Սիսիանի բնակչության զբաղվածության խնդիրը, ինչպես և արդյունավետորեն օգտագործելու տեղական հումքային ռեսուրսները: Նա հավաստիացրեց, որ ընկերությունն արդեն իսկ ունի 120 աշխատատեղի ու ամսական 5 հազար քառակուսի մետր սալիկների արտադրության ներուժ: Այնուհետև ելույթներ ունեցան Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, VH Stone ընկերության տնօրեն Նիկոլայ Վիդենին, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը:

Գեղեցիկ կատարումներով հանդես եկան Սիսիանի «Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի պարային համույթի սաները:

Հաջորդեց արտադրամասի մուտքի ժապավենը կտրելու արարողությունը, որը կատարեցին գլխավոր տնօրենը, Սյունիքի մարզպետը և Սիսիանի համայնքապետի պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանը:

Ներկաները շրջայց կատարեցին արտադրամասում: Այնտեղ ականատես եղանք արտադրության հրաշալի տեսարանների՝ ժամանակակից մեքենասարքավորումներ, քարի մշակման տարբեր փուլեր, արտադրական բարձր կուլտուրա և, իհարկե, անվտանգության կանոնների խստագույն պահպանում... Իսկ պատրաստվող արտադրանքի հումքն առայժմ Շաբեի անդեզիտային բազալտի հանքավայրից է: Ի դեպ, իրականացվում են ծրագրեր տարածաշրջանում նոր քարահանքեր շահագործելու, ինչպես և հանրապետության տարբեր վայրերից այլ քարատեսակներ ներկրելու ուղղությամբ: Վերջում, իհարկե հյուրասիրություն էր, որը նախևառաջ շփումների հնարավորություն ընձեռեց հյուրերին և ընկերության աշխատակիցներին:

Ընկերության վերագործարկման արարողությանը մասնակցում էին նաև Ազգային ժողովի սյունեցի պատգամավորներ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից՝ Կարեն Համբարձումյան, Դավիթ Դանիելյան, Մարինա Ղազարյան, Արմեն Խաչատրյան, Նարեկ Ղահրամանյան: Տոնակատարությանը ներկա էին նաև ՀՀ նախկին փոխվարչապետ, ներկայումս ՔՊ կուսակցությունից Երևանի համայնքապետի թեկնածու Տիգրան Ավինյանը, «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանը, ՀՀ ԶՈՒ բանակային կորպուսի հրամանատար Արտակ Բուդաղյանը, մարզի իրավապահ մարմինների ներկայացուցիչներ:

24.08.2022

ՏՐԱՆՍՊՈՐՏ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՕՂԱԿԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ. «Արտադրության ծավալների մեծացմանը զուգահեռ ավելացվում են նաև տրանսպորտի դեպարտամենտի հնարավորությունները»

Զանգեզուրի կոմբինատի բնականոն աշխատանքների ապահովման համար կարևոր նշանակություն ունի ընկերության տրանսպորտի դեպարտամենտի գործունեությունը, որի աշխատանքներին ծանոթանալու համար զրուցեցինք կառույցի ղեկավար Ալեքսանդր Ալավերդյանի հետ, ով դեպարտամենտը ղեկավարում է 2022 թվականի ապրիլից, իսկ մինչ այդ՝ 18 տարի, աշխատել է «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերությունում՝ զբաղեցնելով տնտեսագիտական բաժնի պետի, անվտանգության ծառայության պետի, ապա կոմերցիոն տնօրենի տեղակալի (տրանսպորտի և պահեստների հարցով) պաշտոնները: Ծնվել է Քաջարան քաղաքում 1976-ին, ավարտել է Գրիգոր Մագիստրոսի անվան համալսարանի տնտեսագիտական բաժինը:

– Պարոն Ալավերդյան, ի՞նչ է իրենից ներկայացնում «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության տրանսպորտի դեպարտամենտը, և ի՞նչ խնդիրներ են դրված դեպարտամենտի առջև:

– Տրանսպորտի դեպարտամենտը բաղկացած է երեք ենթակառույցից՝ տրանսպորտի, հատուկ ծրագրերի բաժիններ և վառելիքաքսայուղային ծառայություն:

Բաժնի մեջ են մտնում № 1 և № 2 ավտոհավաքակայանները, ավտոտնտեսության վերանորոգման արտադրամասը: Հատուկ ծրագրերի բաժինը և վառելիքաքսայուղային ծառայությունը՝ որպես ստորաբաժանումներ, ենթակա ստորաբաժանումներ չունեն:

№ 1 ավտոհավաքակայանը սպասարկում է արտադրությանը, հիմնականում՝ հատուկ տեխնիկայով և բեռնատար մեքենաներով:

№ 2 ավտոհավաքակայանը հիմնականում ներառում է մարդատար և ուղևորափոխադրող մեքենաներ, փոքր բեռնատարներ՝ «ՈՒԱԶ» մակնիշի և «Փիքափներ», որոնք ընկերությունում կատարում են տարբեր ծառայություններ:

Վերանորոգման արտադրամասն այդ երկու ավտոհավաքակայանի վերանորոգումներն է կատարում:

Վառելիքաքսայուղային ծառայության հիմնական ֆունկցիաներն են՝ վառելիքի ստացումը, պահպանումը և բաշխումն ըստ արտադրամասերի:

Հատուկ ծրագրերի բաժինը զբաղվում է պոչամբարի ռեկուլտիվացիայով, պոչամբարի հետ կապված մյուս խնդիրների լուծմամբ, ինչպես և սոցիալական ծրագրերի իրականացմամբ, եթե համայնքապետարանների դիմումներով ինչ-որ տեխնիկական աշխատանքներ, բեռնափոխադրումներ կատարելու անհրաժեշտություն է լինում:

– Արդյո՞ք օգտագործվող տրանսպորտային միջոցներն ընկերությանն են պատկանում, թե՞ նաև այլ կազմակերպությունների կամ մասնավոր անձանց միջոցներն են:

– Գրեթե բոլոր տրանսպորտային միջոցները և տեխնիկան պատկանում են կոմբինատին, բացառություն է ավտոաշտարակը. երբ մեր մեքենան անսարք է եղել՝ վարձակալել ենք: Առհասարակ, երբ հատուկ տեխնիկայի կարիք ենք ունենում՝ վարձակալում ենք: Օրինակ, ծանր տրանսպորտային միջոցներ կամ էքսկավատորներ տեղափոխելու համար:

Նաև ավտոբուսներ, որոնք կոմբինատի աշխատողներին Կապանից, Բաբիկավանից և այլ բնակավայրերից տեղափոխում են Քաջարան՝ աշխատանքի, հետ տանում. մի մասը պատկանում է «Լավ ընկեր» ՍՊԸ-ին:

– Ինչպե՞ս կամ ի՞նչ սկզբունքով են ընտրվում տրանսպորտային միջոցներ ունեցող ընկերությունները կամ մասնավոր անձինք:

– Հիմնականում ընտրվում են տրանսպորտային միջոցներ ունեցող ընկերությունները, որոնք ունեն համապատասխան լիցենզիա՝ ուղևորափոխադրումներ կատարելու համար, որովհետև դա պարտադիր պայման է: Մյուս բոլոր դեպքերում նախապատվությունը տալիս ենք մեքենայի տեխնիկական վիճակին, նկատի ենք ունենում նաև առաջարկվող վարձավճարի չափը:

– Տեխնիկական ի՞նչ միջոցներից կամ մեքենաներից է հիմնականում բաղկացած ընկերության ավտոհավաքակայանը:

– Ժամանակակից տեխնիկա-

կան միջոցներ են: Հատուկ տեխնիկան հիմնականում ամերիկյան Cat, չինական XCMG և ռուսական արտադրության միավորներ են, մեքենաները՝ նույնպես: Ճապոնական արտադրության մեքենաներ էլ շատ ունենք:

– Տրանսպորտի դեպարտամենտին զուգահեռ ընկերությունն ունի նաև տեխնոլոգիական հավաքակայան, որը մտնում է արտադրական դեպարտամենտի մեջ:

– Տեխնոլոգիական հավաքակայանը զբաղվում է լեռնային ապարի տեղափոխմամբ. հանքաքարը և դատարկ ապարը տեղափոխում են դատարկ ապարի լցակույտեր, իսկ հանքաքարը՝ ջարդման արտադրամաս:

– Որքա՞ն աշխատող ունի դեպարտամենտը, և ի՞նչ մասնագետներ կան աշխատակազմում վարորդներից բացի:

– Տրանսպորտի դեպարտամենտում աշխատում է 505 աշխատող, վարորդներից բացի կան վերանորոգող մեխանիկներ, ելքի մեխանիկներ, գործակարգավարներ (դիսպետչերներ), շահագործման բաժնի աշխատակիցներ: Տնտեսագետները և նորմավորողներն այլ կառույցի մեջ են լինում, բայց մեր արտադրամասում են աշխատում: Նաև առաջատար ինժեներներ, ովքեր գլխավորապես զբաղվում են պահեստամասերի խնդրով, նոր պահանջագրեր, գնման հայտեր կազմելով և այլն: Ունենք նաև հերթափոխի պետեր, ավտոմեքենաներ լիցքավորողներ...

– Տրանսպորտի դեպարտամենտի կանոնավոր գործունեությունը հնարավոր չէ պատկերացնել առանց ավտոտնտեսության վերանորոգման արտադրամասի: Այդ մասին...

– Ավտոտնտեսության վերանորոգման արտադրամասի ուժերը քիչ են՝ համեմատած ընդհանուր տնտեսության մակարդակին, ինչի համար էլ համագործակցում ենք այլ կազմակերպությունների հետ: Այն, ինչ չենք հասցնում կամ երբ չենք ունենում համապատասխան մասնագետներ, դիմում ենք «Աժդանակ», «Միգ Մոթոր», «Տոյոտա Երևան» և այլ ընկերությունների, որոնք կարող են ավելի արագ կազմակերպել նորոգումները:

– Տրանսպորտի դեպարտամենտն այն ոլորտն է, որն անընդհատ արդիականացման պահանջ ունի: Ի՞նչ ընթացքի մեջ է արդիականացման գործընթացը, և ի՞նչ ծրագրեր ունեք այդ ուղղությամբ: Հատկապես ո՞ր երկրների տրանսպորտային միջոցներն են պահանջված՝ նկատի ունենալով մեր տեղական պայմաններն ու առանձնահատկությունները:

– Արդիականացումն անընդհատ կատարվող գործընթաց է: Երբ դիտարկում ենք վերջին տարիների դինամիկան, ապա ակնհայտ է դառնում, որ լուրջ փոփոխություններ կան:

Հիմնականում ձեռք են բերվում ռուսական և չինական արտադրության մեքենաներ, որոնց և՛ շահագործման պայմանները, և՛ վերանորոգումն ավելի մատչելի են, քան գերմանական նույնանման մեքենաները:

– Սովորաբար տրանսպորտի ոլորտի թիվ 1 խնդիրը համարվում է մեքենաների անվտանգ շահագործումը: Հաջողո՞ւմ եք ապահովել տրանսպորտային միջոցների անվտանգ շահագործումը:

– Մեքենաների անվտանգ շահագործումն իսկապես կարևորագույն խնդիրն է:

Ամենօրյա ռեժիմով՝ ելքի մեխանիկներից սկսած, արտադրամասի պետերով, շահագործման բաժնի պետերով անընդհատ հետևում են...

Աշխատանքի անվտանգության բաժնի հետ պարբերաբար հրահանգավորումներ են իրականացվում, և, փառք Աստծո, կարողանում ենք ապահովել տեխնիկայի անվտանգ շահագործումը:

Կայուն զարգացման դեպարտամենտի հետ համագործակցելով, անվտանգ շահագործումն ապահովելու համար, ձեռք ենք բերել անվտանգության գոտիներ (նման գոտիներ չունեցող մեքենաների համար), որպեսզի մարդիկ ավելի անվտանգ աշխատեն:

– Դուք արդեն նշեցիք, որ դեպարտամենտում ընդգրկված են 500-ից ավելի աշխատակից: Եվ ինչպե՞ս եք իրականացնում կադրերի ընտրությունը:

– Եթե վարորդ ենք ընդունում, ապա պարտադիր առաջնահերթություն է տրվում այն մարդկանց, ովքեր ունեն աշխատանքային փորձ, ովքեր աշխատանքային նախկին վայրից դրական բնութագիր են ներկայացնում. դրանք դիտարկվում են որպես առավելություն:

Մեխանիկներին ու մնացած այլ կադրերին ևս նույն մեթոդով ենք աշխատանքի ընդունում:

Այլ մոտեցումներ էլ ունենք. օրինակ, մեխանիկներ ընտրում ենք մեր վարորդներից, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և աշխատանքի ընթացքում ցուցաբերել են մասնագիտական կարողություններ, գործնական հատկանիշներ:

– Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ Քաջարան ու Կապան համայնքների բնակիչներից շատերը ժամանակ առ ժամանակ, ինչ-ինչ հարցեր լուծելու և հատկապես բեռնափոխադրումների համար, տրանսպորտային միջոց են խնդրում ընկերությունից՝ աջակցության կարգով: Կարողանո՞ւմ եք օգտակար լինել մարդկանց:

– Քաջարան, Կապան համայնքներից նման դիմումներ շատ են լինում՝ և՛ սոցիալապես անապահով խավերից, և՛ սովորական քաղաքացիներից:

Օգնում ենք նրանց, անգամ Երևան բեռներ փոխադրելու հարցում, եթե կոմբինատում ազատ մեքենա է լինում կամ մեքենան դատարկ է գնում մայրաքաղաք: Նման դեպքերում անհրաժեշտ է դիմել տնօրենությանը և թույլտվություն ստանալ:

Երբեմն տեխնիկա են ուզում հողամասում աշխատանքներ կատարելու համար, որը ոչ միշտ է բավարարվում՝ մեր ծանրաբեռնվածությունը նկատի ունենալով:

Դիմումներ են լինում գերեզմանոցներում աշխատանքներ կատարելու, սգո առիթների համար. նման դեպքերում պարտադիր կարգով օգնություն ենք ցույց տալիս:

– Ի՞նչ սկզբունքով է նոր տեխնիկան բաշխվում:

– Ստացված նոր տեխնիկան, եթե եկել է փոխարինելու հինին, ապա տրամադրվում է տվյալ հին տեխնիկայի վարորդին:

Եթե ստացել ենք տեխնիկա ու պետք է հատկացնենք որևէ վարորդի, ապա հարցը թողնում ենք արտադրամասի պետի, նրա տեղակալի, շահագործման գծով մասնագետի և մեխանիկների հայեցողությանը. հիմնականում նրանք գիտեն, թե ով է արժանի, գիտեն, թե մինչ այդ ով ինչպես է շահագործել իրեն ամրակցված մեքենան:

– Եվ, իհարկե, պրոբլեմներ, խնդիրներ, ծրագրեր... Արդյո՞ք դեպարտամենտի ներկա վիճակը բավարարում է ընկերության օրավուր աճող պահանջներին:

– Պրոբլեմներն ամենօրյա են... Ծրագրերն ավելի շատ կապված են ավտոտնտեսության վերանորոգման արտադրամասի, վառելիքաքսայուղային ծառայության արդիականացման հետ:

Մեր երկու ավտոհավաքակայանի համար ավելի հարմար տարածք գտնելն ու նոր հավաքակայաններ կառուցելն անհրաժեշտություն է: Բայց այս տարվա համար առաջնահերթ է ավտոհավաքակայանի և տեխնոլոգիական ավտոհավաքակայանի համար վառելիքաքսայուղային ծառայության նոր լիցքակետերի կառուցումը:

Ներկա դրությամբ դեպարտամենտը կարողանում է լիովին բավարարել ընկերության պահանջները, բայց արտադրության ծավալների մեծացմանը զուգահեռ ավելացվում են նաև տրանսպորտի դեպարտամենտի հնարավորությունները:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Լիզա Իսրայելյան. *ծնվել է 1984 թ. Քաջարան քաղաքում: Ավարտել է տեղի Եղ. Չարենցի անվան թիվ 1 միջն. դպրոցը:*
2001-2006 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի տեսական տնտեսագիտություն բաժինը, ստացել տնտեսագետի մասնագիտություն:
2006 թվականից աշխատանքի է անցել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ կադրերի բաժնի տեսուչ, 2008-ից՝ կադրերի բաժնի պետի տեղակալ, 2015 թվականից ընկերության կադրերի բաժնի պետ:

Ընկերության ամենագլխավոր և ամենաթանկ կապիտալը մարդկային ռեսուրսն է

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի և՛ բաժնետերերը, և՛ ղեկավար թիմը քանիցս հայտարարել են, որ ընկերության ամենագլխավոր և ամենաթանկ կապիտալը մարդկային, կադրային, մասնագիտական ռեսուրսն է, քանզի առանց դրա հնարավոր չէ պատկերացնել հանքարդյունաբերական հսկայի բնականոն ընթացքը, նաև սերնդափոխությունը: Ոլորտի աշխատանքներին ծանոթանալու համար զրուցեցինք «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության վարչական դեպարտամենտի մարդկային ռեսուրսների բաժնի ղեկավար Լիզա Իսրայելյանի հետ:

– Հարգելի Լիզա, մեր զրույցը սկսենք ընկերության մարդկային ռեսուրսների բաժինը, նաև բաժնի գործառույթները ներկայացնելով:

- ՄՌԿ բաժնի գործառույթների շրջանակը շատ լայն է, ընդգրկում է աշխատողներին վերաբերող հարցերի մեծ շարք: Վերջերս ավելացել են բաժնի գործառույթները, հետևաբար՝ նաև աշխատակազմը:

Այժմ իրականացվում են հետևյալ գործառույթները՝ աշխատակազմի համալրում (ընտրություն, հարցազրույցների կազմակերպում) և ռոտացիա, աշխատաժամանակի հաշվառում, գործարքային աշխատավարձի հաշվարկ, փոխհատուցումներ, պարգևատրումներ, կադրային փաստաթղթաշրջանառություն (պայմանագրեր, հրամաններ, արձակուրդների տրամադրում, կենսաթոշակներ, հաստիքացուցակներ, զանազան հաշվետվություններ), և սա մի փոքր մասն է այն ամենի, ինչով զբաղվում ենք: Այդ ամենն իրականացվում է փորձառու թիմի՝ թվով 35 աշխատողի նվիրական աշխատանքի շնորհիվ:

– Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը նախևառաջ սոցիալական խնդիր է լուծում տարածաշրջանում, ավելի ստույգ՝ բնակչության զբաղվածության խնդիր, ինչը չափազանց կարևոր առաքելություն է: Որքա՞ն աշխատող ունի ընկերությունը ներկայումս: Կուզենայինք ծանոթանալ նաև աշխատողների թվաքանակի դինամիկային:

– Այնքան էլ համաձայն չեմ հարցադրման այն հատվածին, թե ընկերությունը նախևառաջ սոցիալական խնդիր է լուծում: Այո, ՁՊՄԿ-ն սոցիալական բարձր պատասխանատվություն ունեցող ընկերություն է, սակայն բոլորս պետք է գիտակցենք, որ այն նախևառաջ բիզնես է: Իհարկե, բազմաթիվ առանձնահատկություններով, բայց բիզնես է, որի հիմնական նպատակը բարձր արդյունավետությամբ ու եկամտաբերությամբ աշխատելն է: Իսկ սա բխում է բոլորիս շահերից՝ պետություն, բաժնետերեր, աշխատակիցներ, համայնք: Սա նշանակում է, որ ընկերությունը չի կարող իրեն թույլ տալ անվերջ ավելացնել աշխատակիցների քանակը: Մենք ունենք նաև խնդիր՝ ընտրել բարձր արդյունավետությամբ, գիտելիքներով ու փորձով աշխատակիցների: Այս պահին ՁՊՄԿ-ն ունի 4600 աշխատակից: Վերջին մեկ տարում մեր գործընկերների թիվն ավելացել է 200 մարդով:

Մենք գիտակցում ենք, որ լուրջ ազդեցություն ունենք հանրապետությունում և հատկապես մարզում՝ որպես խոշոր հարկատու և գործատու, սակայն կարևոր է, որ բոլորը գիտակցեն՝ ՁՊՄԿ-ն ներգրավում է այնքան աշխատակցի, որքան թույլ են տալիս արտադրական ծավալները և բիզնեսի տրամաբանությունը:

Նոր աշխատակիցներ ընտրելիս առաջնորդվում ենք հստակ սկզբունքներով:

Եթե համալրման ենթակա հաստիքը որևէ մասնագիտական հմտություն, կրթություն չի պահանջում, ապա հավասար պայմաններում գտնվող թեկնածուներից նախապատվություն ենք տալիս համայնքի այն ընտանիքներին, որոնք կոմբինատում աշխատող չունեն: Ինչպես նաև համայնքի զորացրված, ինչ-ինչ պատճառներով չզորակոչված երիտասարդներին:

Առաջնային են նաև ազդակիր համայնքների բնակիչները: Սակայն այդ ամենի հետ պետք է նշել նաև, որ աշխատանքի համար դիմելուց շատ ցանկալի է, բացի սոցիալական վերոնշյալ խմբերին պատկանելը, ունենալ (տիրապետել) կամ գոնե ցանկություն ունենալ ձեռք բերել մասնագիտություն, որով դիմումատուն կարող է առավելագույն օգուտ բերել ընկերությանը:

Ժամանակակից երիտասարդների հետ շփվելիս հաճախ չես հանդիպի նրանց, ովքեր պատրաստակամ են դառնալ էլեկտրամոնտյոր, կռունկավար, խառատ և այլն: Թեկնածուի այդպիսի մոտեցումը հավելյալ խոչընդոտ է, որ նա դրական պատասխան ստանա:

Ընկերությունը ներկայումս կարիք ունի բարձր որակավորում ունեցող էլեկտրագազաեռակցողների, խառատների, մի խոսքով՝ լավ արհեստավորների:

Տարիներ առաջ ընկերությունում ներդրվել է վարպետ-դաստիարակների «ինստիտուտ»-ը, որը փորձում ենք կիրառել, քանի որ այն իրեն արդարացրել է միշտ:

Հմուտ, փորձառու մասնագետները ներգրավվում են կրթական գործընթացի մեջ ու իրենց համար պատրաստում գործնական փորձառություն ձեռք բերած գործընկեր: Սակայն եկեք հաշվի առնենք՝ երիտասարդների կողմից պետք է լինի պատրաստակամություն:

Ի դեպ, տարիների ընթացքում ընկերությունում ամենապահանջված մասնագիտությունների ցանկը գրեթե չի փոխվում:

– Ընկերությանը հետաքրքրող մասնագետների պատրաստման նպատակով համագործակցո՞ւմ եք բուհերի, միջին մասնագիտական կրթօջախների կամ արհեստագործական ուսումնարանների հետ:

– Համագործակցում ենք ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի հետ, ունենք պայմանագիր, ըստ որի ուսանողները պրակտիկա են անցնում մեր ընկերությունում, ուսանողների մի մասը մեր աշխատակիցներն են, ովքեր կրթությունը համատեղում են աշխատանքի հետ: Այդ երիտասարդները, բնականաբար, մեծ հեռանկար ունեն ընկերությունում:

Քաջարան քաղաքում գործող արհեստագործական պետական ուսումնարանի հետ համագործակցության նմանատիպ պայմանագիր ունենք: Վերջինս պատրաստում է եռակցողներ, կարողդերձակներ, խոհարարներ, որոնք նույնպես մեր պոտենցիալ գործընկերներն են:

– Վերջերս տեղեկացանք, որ ընկերությանը կից ուսումնական կենտրոն է հիմնադրվել: Ո՞րն է հիմնական նպատակը. նոր ընդունվողներին կամ սկսնակներին պատրաստե՞լը, թե՞ գործող աշխատակիցների մասնագիտական վարպետության բարձրացումը:

Անցած տարի դրական արձագանք էր գտել աշխատակիցների տարակարգերի բարձրացմանը միտված ատեստացիան, որը 2013 թվականից հետո չէր կազմակերպվում: Որքանո՞վ է արդյունավետ և մասնագիտական առումով հագեցած անցնում ատեստավորումը:

– Ուսումնական կենտրոնը ոչ թե ընկերությանը կից է, այլ վարչական դեպարտամենտի կազմում:

Նպատակները շատ են. նախևառաջ պետք է դասընթացներ կազմակերպել մեր բազմահազարանոց թիմին նոր միացողների համար: Աշխատողների մասնագիտական դասընթացների կազմակերպումը նույնպես արդիական է, մոտիվացնող ու շատ անհրաժեշտ:

Անկասկած, կարևոր են նաև ատեստավորումները, որոնք վերջերս վերսկսվել են, իսկ ուսումնական կենտրոնի գործունեությամբ պայմանավորված՝ կներառվեն բոլոր կատեգորիաների աշխատակիցները: Ատեստավորումը, անշուշտ, անհրաժեշտ է բոլորի համար, քանի որ օգնում է անընդհատ թարմացնել ամենօրյա գործառույթների ակադեմիական հիմքերը: Իսկ հաշվի առնելով նաև մեր գործունեության բնույթը՝ պարբերաբար թարմացնում է աշխատողների կողմից աշխատանքի անվտանգության նորմերի տիրապետումն ու կիրառումը:

Ուսումնական կենտրոնի շնորհիվ առաջիկայում կաշխատենք սեփական միջոցներով պատրաստել մեզ անհրաժեշտ մասնագետներ: Վստահ եմ՝ կհաջողենք:

– Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը կոչված է նախևառաջ օգտագործելու տեղի՝ Կապան և Քաջարան համայնքների մարդկային ռեսուրսները: Դուք պատկերացում ունե՞ք ազդակիր համայնքների մարդկային ռեսուրսի մասին:

– Ինքս ծնունդով Քաջարանից եմ և այստեղ եմ բնակվում, այնպես որ միանշանակ կարող եմ ասել՝ համայնքում գրեթե բոլորին ճանաչում եմ անձամբ ու ծանոթ եմ համայնքի և ընտանիքների խնդիրներին:

Կապանի մասով պետք է նշեմ՝ մեր աշխատակիցներից 1800-ը այդ համայնքից են, և այնտեղ տեղակայված մեր ստորաբաժանումների թափուր հաստիքների համալրման համար նախապատվությունը տրվում է առավելապես տեղացիներին:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ մեր ազդակիր երկու համայնքում գործազրկությունն ամենացածր ցուցանիշի վրա է գտնվում: Վստահ եմ՝ այս արդյունքը հիմնականում ՀՊՄԿ-ի ազդեցության շնորհիվ է:

– Աշխատավարձը՝ աշխատավարձ, բայց հանքագործներն ունեն նաև սոցիալական պաշտպանվածության մի քանի հնարավորություն, այդ մասին...

– Սոցիալական երաշխիքների մեծ փաթեթ է առկա. ունենք առողջության ապահովագրություն ոչ միայն աշխատողի, այլ նաև նրա ընտանիքի անդամների համար: Աշխատողներն անվճար սնվում են ճաշարանում:

ՀՊՄԿ բարեգործական հիմնադրամը փոխհատուցում է աշխատակիցների երեխաների ուսման վճարները բուհերում և ընկերության ՆՈՒՀ-երում:

Ունենք մարզահամալիր, որտեղ գործում են մի շարք մարզական խմբակներ՝ անվճար հիմունքներով: Այդ հնարավորությունից օգտվում են ինչպես երեխաները, այնպես էլ մեծահասակները:

Մշակույթի պալատում գործում են երգի ստուդիա և պարային համույթ, կազմակերպվում են տարբեր միջոցառումներ հանքագործների առօրյան առավել հագեցած դարձնելու համար:

Մինչև համաճարակը մեր աշխատողներին խումբ-խումբ ուղարկում էինք ծովափնյա հանգստի և այլն...

– Իրողությունը, որ երիտասարդները ցանկանում են աշխատանքի ընդունվել ՀՊՄԿ-ում, հասկանալի ու գնահատելի է:

Բոլորովին այլ հարց է, թե երիտասարդը որքան ժամանակում և ինչ աստիճանի է կարողանում տիրապետել նախընտրելի մասնագիտությանը, դառնալ պահանջված: Փորձառու մասնագետների դերն այդ հարցում միշտ էլ կարևոր է եղել: Զանգեզուրի կոմբինատն առանձնանում է նաև նրանով, որ կան աշխատանքային գերդաստաններ, տոհմիկ հանքագործներ, ասել է թե՝ նույն գործը կատարել է պապը, որդին, հիմա էլ՝ թոռը:

– Ճիշտ եք, մեր ընկերությունում շատ են աշխատանքային գերդաստանները: Բազմաթիվ մարդիկ իրենց մասնագիտությունը փոխանցել են որդիներին, թոռներին: Այդ գերդաստաններին շատ հարգանքով ենք վերաբերվում: Ավելին՝ ընկերությունը նրանցով հպարտանում է, որովհետև նրանք ապահովում են ավանդույթների, փորձի ու գիտելիքի շարունակականությունը, ինչը ՀՊՄԿ-ի պես ավանդապահ ընկերության համար չափազանց կարևոր է:

– Խնդիրներ, դժվարություններ... Մեր այսօրվա հանդիպման ընթացքում ականատես եղանք մարդկանց գրեթե չընդհատվող հոսքի, չդադարող հեռախոսազանգերի:

Յուրաքանչյուրի հետ համբերատար զրուցելու, նրանց լսելու, պարզաբանելու խնդիր ունեք,

ՆԱԽԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ
ՍՊՈՐՏ

Ցուցահանդես՝ նվիրված «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության 70-ամյակին

Արևային տաք գույներով էր շնչում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մշակույթի պալատի ճեմասրահը: 2022թ. նոյեմբերի 26-ին այստեղ կոմբինատի 70-ամյա հոբելյանի շրջանակում կազմակերպվել էր Հայաստանի նկարիչների միության 14 գեղանկարիչների նկարների ցուցահանդես՝ «Սյունիքյան հրաշքներ» խորագրով: Մինչ այդ գեղանկարիչները՝ Արմեն Լորենց, Ժիրայր Մարտիրոսյան, Լևոն Խաչատրյան, Հրանտ Թադևոսյան, Արամ Մաշուրյան և մյուսները եղել էին Սյունիքի տարբեր գեղատեսիլ վայրերում, նաև կոմբինատի բացահանքում և կտավին հանձնել իրենց տպավորությունները:

Ինչպես ասում են՝ պլեներ աշխատանքներ էին դրանք՝ արված բացօթյա: Լևոն Խաչատրյանը Կոտայքի մարզի Հրազդան քաղաքից է: Ցուցահանդեսում ներկայացված իր երեք նկարը կտավին է հանձնել Գորիսում և անչափ տպավորված էր զանգեզուրյան բնաշխարհով:

Ցուցահանդեսին մասնակցում էին Կապանի և Քաջարանի արվեստի դպրոցների սաները, որոնց համար գեղանկարիչ, Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի ստորաբաժանման տնօրեն Արամ Մաշուրյանը (ցուցահանդեսին ներկայացել էր հինգ գեղանկարով) վարպետաց դաս անցկացրեց:

Վերջում եղավ նվիրատվություն. գեղանկարիչները մեկական կտավ նվիրեցին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Որքան հասկանում ենք: Նաև հասկացված լինելու խնդիր ունեք, չէ՞ որ շատ դիմումատուների ստիպված եք լինում մերժել կամ բացասական պատասխան տալ: Եվ դա Ձեզ հաջողվո՞ւմ է:

- Ինչ խոսք, գերզբաղված ու գերլարված աշխատանք է:

Ճիշտ հասկացված լինելու խնդիր կա: Մարդիկ երբեմն մեկնաբանում են այնպես, ինչպես իրենք են հասկանում կամ ինչպես իրենց է հարմար: Ամենայն համբերատարությամբ լսում ու պատասխանում ենք բոլորին:

Որպես ՄՌԿ ղեկավար՝ կարևորում եմ առողջ փոխհարաբերությունները և աշխատանքային առողջ միջավայրը:

Սիրում եմ մարդկանց հետ աշխատել. երբեք չեմ ձանձրանում:

Հսկայական պատասխանատվություն է, բայց հաղթահարելի, քանզի մենակ չենք:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ
ՍՊՈՐՏ

Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի «Գտնված երազ»-ն ու «Մանկության մոլորակ»-ը

Քաջարան քաղաքում գործող մանկապարտեզներից երկուսը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ենթակայության են՝ երկուսն էլ քնարական անվամբ՝ «Գտնված երազ» և «Մանկության մոլորակ»: Վերջինս գործում է 1972 թվականից, ասել է թե՝ լրացել է նախադպրոցական այդ հիմնարկի կես դարը: Կրթօջախը տեղակայված է Տերյան փողոցում գտնվող երկհարկանի տիպային շենքում, որն այս օրերին հիմնանորոգվում է: Մանկապարտեզը 1993 թվականից ղեկավարում է նախադպրոցական կրթության և դաստիարակության նվիրյալ Ռուզաննա Առաքելյանը՝ մոտ 40 տարվա անցած ճանապարհով:

«Կյանքը սկսվում է նախադպրոցական համակարգից, աշխատում ենք անմեղ երեխաների հետ և փորձում մենք էլ նույնը մնալ, որովհետև այլ կերպ հնարավոր չէ, եթե երեխայասեր չես, չես կարող այս հաստատությունում աշխատել», – մանրամասնում է տիկին Առաքելյանը:

Մանկապարտեզը գործունեությունը սկսեց երկու խմբով, այժմ գործում է հինգ խումբ, 90 տեղանոց մանկապարտեզ 100-110 երեխա է հաճախում:

Մանկապարտեզի տարեգրության մեջ մի հիշարժան իրադարձություն կա. 2017 թվականին տնօրեն Ռուզաննա Առաքելյանը Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքում մասնակցել է միջազգային մրցույթի՝ «Վարպետություն՝ առանց սահմանների», որտեղ մեր հանրապետությունը ներկայացնող երեք մանկապարտեզից մեկի ղեկավարն էր: Իսկ ընդհանրապես մրցույթին ներկայացված էր նախկին Խորհրդային Միության երեք տասնյակից ավելի մանկապարտեզ:

Ի դեպ, տնօրենը նույն մրցույթին մասնակցեց հաջորդ տարի և.ս. այդ անգամ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման «Մանկության մոլորակ»-ի փորձն արժանացավ մասնակիցների հավանությանը, իսկ տնօրենը գնահատվեց շնորհակալագրով:

Ռուզաննա Առաքելյանին հանդիպեցինք «Գտնված երազ» նախադպրոցական ուսումնական հաստատությունում՝ իր ղեկավարած մանկապարտեզում կատարվող հիմնանորոգումների պատճառով: Միավորվել են երկու մանկապարտեզը՝ մինչև հիմնանորոգման ավարտը:

«Գտնված երազ»-ը հիմնադրվել է 1990 թվա-

«Գտնված երազ»-ը հիմնադրվել է 1990 թվականին, համեմատաբար երիտասարդ կրթօջախ է, բայց ձեռքբերումներ ունի մանուկների նախադպրոցական դաստիարակության և կրթության կազմակերպման գործում:

կանին, համեմատաբար երիտասարդ կրթօջախ է, բայց ձեռքբերումներ ունի մանուկների նախադպրոցական կրթության կազմակերպման գործում: 2016 թ. հիմնանորոգումից հետո վերստին բացեց դռները՝ հանրապետության այն ժամանակվա նախագահի, բարձրաստիճան այլ անձանց մասնակցությամբ:

Նույն թվականից կրթօջախը ղեկավարում է Նաիրա Գևորգյանը: Տնօրենը տեղեկացնում է, որ նոր է վերադարձել վերապատրաստումից՝ կոմբինատի հովանավորությամբ:

Մանկապարտեզն ունի չորս խումբ՝ մեկ կրտսեր, մեկ միջին և երկու ավագ:

Ակամայից հիշում ենք անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկի խոսքերը. մեր ողջ իմացությունը ձեռքբերովի է: Մարդկային հոգին մաքուր տախտակ է (tabula rasa), որի վրա կյանքի ընթացքում դրոշմվում են գաղափարներն՝ ըստ յուրաքանչյուրի փորձի: Մանավանդ երբ խոսքը վերաբերում է վաղ տարիքից և՛ մայրենի, և՛ օտար լեզուներ ուսուցանելուն: Բայց, այնուամենայնիվ, նախադպրոցական տարիքում նախապատվությունը պիտի տրվի խաղին, շրջակա աշխարհից տարրական գիտելիքներ ստանալուն:

Զրուցակիցս նկատում է, որ մանկանը հեռացրել են խաղից, շեշտը դրված է նրան գրաճանաչ դարձնելուն. *«Այնուամենայնիվ, անում ենք այն, ինչ մեզնից է պահանջվում, աշխատում ենք հատուկ ծրագրերով, մենք չենք որոշողը, եթե այսօր երեխան տառաճանաչ պիտի գնա դպրոց, դա մեր պարտականությունն է, պարտավոր ենք կատարել վերադասի պահանջները: Նախանշված ծրագրերը պիտի իրականություն դառնան»:*

Հընթացս տեղեկանում ենք, որ մանկապարտեզին Զանգեզուրի ՊՄԿ-ի կողմից վեց միլիոն դրամի ապրանք է հատկացվել՝ ժամանցի պարագաներ՝ բակում տեղադրելու համար՝ սղարան, կարուսել և այլն: Շուտով մանուկների առօրյան ավելի բովանդակալից կլինի և ավելի

«Մանկության մոլորակ» մանկապարտեզը 1993 թվականից ղեկավարում է նախադպրոցական կրթության և դաստիարակության նվիրյալ Ռուզաննա Առաքելյանը

«Գտնված երազ»-ը հիմնադրվել է 1990 թվականին: 2016 թվականից կրթօջախը ղեկավարում է Նաիրա Գևորգյանը

Երկու մանկապարտեզն էլ գործում են անվճար հիմունքներով: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է հոգում բոլոր ծախսերը և տարեցտարի ավելացնում իր ենթակայության ներքո գտնվող երկու մանկապարտեզին հատկացվող գումարները:

կմերձենա իր անվանը՝ մանկության մոլորակ:

«Գտնված երազ»-ը և «Մանկության մոլորակ»-ը նաև մեր օրերի համար շատ կարևոր հարց են լուծում՝ կանանց զբաղվածության խնդիրը:

«Երբ 2016 թ. «Գտնված երազ»-ը կրկին բացեց դռները, այստեղ 40 աշխատատեղ բացվեց: Երիտասարդներ կային, ովքեր կրթություն ունեին, բայց չէին աշխատում: Եվ նրանցից չորս տասնյակն ընդգրկվեց նախադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում: Այդ հանգամանքն առիթ եղավ, որ այս պարտեզն անվանենք «Գտնված երազ», այսինքն դա մի երազ էր, որ իրականություն դարձավ, – անցած օրերն է վերհիշում Նաիրա Գևորգյանը և հավելում, – *իրենց մանկապարտեզի աշխատակիցներն ընդունվեցին հարցազրույցով: Բացի այդ, նրանք օգտվում են այն բոլոր արտոնություններից, ինչ կոմբինատի աշխատակիցները՝ անվճար բուժում, սոցիալական փաթեթների տրամադրում, ուսանողների ուսման վարձի վճարում և այլն»:*

Արդեն նշեցինք, որ այս օրերին երկու մանկապարտեզը մի հարկի տակ են, միասին են իրականացնում մանուկների կրթության և դաստիարակության գործը:

«Այստեղ համերաշխ աշխատում ենք, բայց մեր օրրանը մեզ ձգում է, հուսանք, որ հիմնանորոգման աշխատանքները հնարավորինս շուտ կավարտվեն: Շնորհակալ ենք կոմբինատի ղեկավարությանը, որ ջանում է երեխաների ուսումնադաստիարակության համար իդեալական պայմաններ ստեղծել: Մեզ էլ մնում է ճիշտ դնել հիմքը, մատաղ սերնդին դաստիարակել իր հայրենիքին նվիրվածության ոգով, հայեցի լեզվամտածողությամբ», – մանրամասնում է Ռուզաննա Առաքելյանը:

Երկու մանկապարտեզն էլ գործում են անվճար հիմունքներով: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է հոգում բոլոր ծախսերը և տարեցտարի ավելացնում իր ենթակայության ներքո գտնվող երկու մանկապարտեզին հատկացվող գումարները: Դրանք ակներև են, երբ շրջում ես «Գտնված երազ»-ում՝ ճաշակով ձևավորված թեմատիկ անկյուններ, արդիական կահավորված սենյակներ, տարբեր մարզագույքով հագեցած մարզադահլիճ: Իսկ բակը կհամալրվի ժամանցի պարագաներով:

Ակամա մտաբերում ենք աստվածաշնչյան պատգամը. «Կրթիր մանկանն իր ճամփան սկսած ժամանակ, որ իր ծերության ժամանակ էլ դրանից չխոտորվի»:

Ամենավերջում եղանք «Մանկության մոլորակ» մանկապարտեզում, որը տևական ժամանակ է, ինչ «Ապառաժ» ՍՊ ընկերության շինարարներին է հանձնված: Կրթօջախի մասնաշենքից միայն պատերն են մնացել: Երևում է, որ միանգամայն այլ տեսքով կընդունի մանկավարժներին և սաներին:

– Շենքի հարևանությամբ էքսկավատորը մի փոս է բացել, այդտեղ հետագայում ապաստարան է լինելու, – տեղեկացնում են շինարարները:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022Թ.

ՆԱԽԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ
ՍՊՈՐՏ

Քաջարանյան մշակույթը՝ կոմբինատի տեսադաշտում

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը հիմնադրման օրվանից հանդես է եկել որպես քաղաքաստեղծ ձեռնարկություն, անգնահատելի ավանդ ունեցել Քաջարանի ենթակառուցվածքների կայացման և զարգացման գործում, ինչպես նաև մշակույթի ոլորտում:

Քաջարանի մշակութային ավանդույթները ձևավորվեցին քաղաքի կառուցմանը զուգընթաց՝ 50-ական թվականների սկզբներից, իսկ 1959 թվականին շահագործման հանձնվեց Քաջարանի լեռնագործների մշակույթի պալատը, որը վերածվեց տեղաբնակների առօրյայի և ժամանցի կազմակերպման հիմնական օջախի: Ստեղծվեցին գեղարվեստական ինքնագործունեության խմբեր, որոնք ելույթ էին ունենում ոչ միայն համաքաղաքացիների համար, այլև տարածաշրջանի գյուղերում, սահմանապահ զորամասերում, Արցախում, մասնակցում շրջանային և հանրապետական մրցույթ-ստուգատեսների, փառատոների: Սերո Խանզադյանի «Քաջարան» վեպի շնորհանդեսն այդ նույն պալատում է կազմակերպվել:

Քաջարանյան բեմում ելույթ են ունեցել հայ արվեստի վարպետներ, սիրված արտիստներ Վահրամ Փափազյանը, Ավետ Ավետիսյանը, Միեր Մկրտչյանը, անվանի գրողներ Վիլյամ Սարոյանը, Սերո Խանզադյանը, Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սևակը, Հրանտ Մաթևոսյանը, ժողովրդական երգիչներ Արև Բաղդասարյանը, Վաղարշակ Սահակյանը, հայտնի ասմունքող Սուրեն Քոչարյանը և ուրիշներ:

Այժմ պալատի վարիչը Նարա Մկրտչյանն է, ով ժամանակին երկու անգամ ժողովագարանների հանրապետական մրցույթ-փառատոնում արժանացել է դափնեկրի կոչման (որպես մենակատար՝ երաժշտական գործիքը՝ քանոն):

Վերջին տարիներին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի և Քաջարան համայնքի ղեկավարության համագործակցության շնորհիվ լուրջ տեղաշարժեր և առաջընթաց գրանցվեցին քաղաքի մշակութային կյանքում, մանավանդ մշակույթի պալատի գործունեության ոլորտում:

Հատկապես 2018 թվականը բեկումնային էր Քաջարանի մշակույթի պալատի կյանքում: Կոմբինատի աջակցությամբ հիմնանորոգվեց, ակնահաճո հարդարանք ստացավ լեռնագործների պալատը (նախկինում այդպես էր կոչվում), համալրվեց ժամանակակից գույքով: Ընդ որում՝ պահպանվեցին կառույցի արտաքին տեսքը, առանց խաթարելու նախաստեղծ ճարտարապետական լուծումները:

Այդ ժամանակվանից մշակույթի պալատում գործում է կինոթատրոն՝ 240 նստատեղով: Նորոգ կինոթատրոնը զինված է նորագույն տեխնիկայով, որն ապահովված է բարձրորակ կինոցուցադրություն ապահովող 4 K, Atmos՝ 3 D ձևաչափերով: Ձայնային բարձրորակ էֆեկտներն ապահովվում են Dolbi Digital բազմալիքային թվային համակարգով:

Կինոթատրոնի գործունեությունը համակարգող Իրինա Հովհաննիսյանի փոխանցմամբ՝ հետևում են կինոնորություններին, սերտ հարաբերություններ ունեն հայկական ազգային կինոկենտրոնի,

ինչպես նաև դրսի ֆիլմերի դիստրիբյուտորական ընկերությունների հետ: Մեր այցելության օրը մշակույթի պալատի կինոթատրոնում պիտի ցուցադրվեր «Անքնություն» ֆիլմը (սցենարի հեղինակ ու ռեժիսոր՝ Հարություն Ղուկասյան, պրոդյուսեր՝ Արմեն Սողոյան): Այն հոգեբանական դրամա է, թրիլեր: Գլխավոր դերերը մարմնավորել են Սամվել Թադևոսյանն ու Ինգրիտ Կոկչյանը:

Մշակույթի պալատում գործում է էլեկտրոնային գրադարան, շախմատի ակումբ, իսկ 2022 թ. օգոստոսի 21-ին, երբ Քաջարանում նշվում էր քաղաքի օրը, կոմբինատի ղեկավարության, Մեղրու սահմանապահ ջոկատի զինվորականության, մայրաքաղաքից ժամանած հյուրերի մասնակցությամբ ու Երևանում «Մոսկվայի տուն» մշակութագործարարական կենտրոնի նախաձեռնությամբ բացվեց կենտրոնի մասնաճյուղը, որը միտված է Քաջարանում ռուսաց լեզվի, ռուսական մշակույթի պրոպագանդմանը և տարածմանը: Այստեղ անց են կացվում ռուսաց լեզվի երկամյա անվճար ուսուցման դասընթացներ դպրոցականների համար: Կենտրոնը «Մոսկվայի տան» շնորհիվ հարստացվել է ռուսական գրականությամբ: Իսկ կոմբինատի օժանդակությամբ էլեկտրոնային գրադարանի գրքային ֆոնդը պարբերաբար թարմացվում է հայ և արտասահմանյան հեղինակների ստեղծագործություններով:

Մշակույթի պալատում գործում է պարի երկու համույթ՝ «Նռանե» (գեղարվեստական ղեկավար և պարուսույց՝ Մելանյա Մարտիրոսյան) և «Զանգեզուր» (գեղարվեստական ղեկավար և պարուսույց՝ Նարինե Մովսիսյան):

Այժմ պալատի վարիչը Նարա Մկրտչյանն է, ով ժամանակին երկու անգամ ժողովագարանների հանրապետական մրցույթ-փառատոնում արժանացել է դափնեկրի կոչման (որպես մենակատար՝ երաժշտական գործիքը՝ քանոն):

Արմինե Թումանյան
Քաջարանի արվեստի դպրոցի տնօրեն

Վերջերս կոմբինատի մշակույթի պալատում տեղի ունեցավ «Այունյաց երկիր» հատուկ համարի շնորհանդեսը՝ նվիրված 44-օրյա պատերազմում ընկած 228 տղաների հիշատակին: Մերօրյա պատերազմի 20-ամյա նահատակ Արտաշես Մարտիրոսյանի անունը կրող դասարանի աշակերտները հակիրճ ներկայացրեցին քաջարանցի զոհվածների կենսագրականները, մարտական ուղին, իսկ պալատի աշխատակիցները հանդես եկան երաժշտական կատարումներով: Եվս մեկ անգամ ոգեկոչվեց ընկածների հիշատակը: Վերջում 19 քաջարանցի զոհվածների ընտանիքներին հանձնվեց «Այունյաց երկիր» հատուկ համարի մեկական օրինակ:

Քաջարանի համայնքապետարանի նախաձեռնությամբ և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հովանավորությամբ վերջերս վերանորոգվել է Քաջարանի արվեստի դպրոցը (տնօրեն՝ Արմինե Թումանյան): Կրթօջախում ստեղծված բարեհարմար պայմանները գրավում են երեխաներին: Դպրոցը լավագույններից է ոչ միայն տարածաշրջանում, այլև հանրապետությունում: Հատկապես վերջին տարիներին Քաջարանի արվեստի դպրոցի սաները հաջողություններ են գրանցում՝ մասնակցելով հանրապետական, նաև միջազգային մրցույթների, վերադառնում մրցանակներով:

2018 թ. կրթօջախի տնօրեն Արմինե Թումանյանի նախաձեռնությամբ դպրոցում բացվեց թատերարվեստի բաժին: Վերջերս Բուլղարիայի Վառնա քաղաքում անցկացված «Սլավյանսկի վենեց» միջազգային փառատոնում դպրոցի թատերարվեստի բաժնի սաները (դասատու՝ Արթուր Գաբրիելյան) հաղթող ճանաչվեցին և արժանացան առաջին մրցանակի: Միջազգային փառատոնին մասնակցությունն այս անգամ ևս հնարավոր դարձավ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հովանավորությամբ և աջակցությամբ:

– *Ունեցանք հրաշալի շրջագայություն: Սա անմոռանալի տպավորություններով լի՝ իսկական հյուրախաղերի մասնակցելու մի կարևոր փորձառություն էր քաջարանցի թատերասեր երեխաների համար, և այդ հրաշալի հնարավորությունը նրանց համար ապահովեց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը,* – ասում է Քաջարանի արվեստի դպրոցի թատերարվեստի բաժնի ուսուցիչ Տիգրան Ղուկասյանը, – *երեխաներն անչափ ոգևորված էին, կարողացան իրականում ինքնադրսևորվել և զգալ մեծ բեմի վրա հանդես գալու պատասխանատվությունն ու հաճույքը:*

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ
ՍՊՈՐՏ

Սպորտային խմբակների պարապմունքներից զատ՝ մարզահամալիրում կազմակերպվում են միջարտադրամասային մրցումներ

Զանգեզուրի կոմբինատը մշտապես մարզիկների կողքին է

1985 թվականին Քաջարանում բացվեց առողջարարական կենտրոն, մարզօջախը շատ շուտով վերածվեց քաղաքի զանգվածային-առողջարարական սպորտային կենտրոնի: 2009 թվականին իրականացված հիմնանորոգումից հետո իր տեսակի մեջ լավագույններից մեկը դարձավ հանրապետությունում: 2010-ից մարզօջախը կոմբինատի մարզահամալիրի կարգավիճակ ստացավ, որի ղեկավարումը ստանձնեց ծանրամարտի ճանաչված մարզիչ, **ՀՀ վաստակավոր մարզիչ, սպորտի վարպետ Պուշկին Թևանյանը** (ծնված 1962 թ. Վերին Հանդ գյուղում): 1968 թ. երկրաշարժից հետո բնակվում էր Քաջարանում:

Մարզիկի և մարզչի օրինակելի ճանապարհ է անցել: Ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը՝ ծանրամարտի գծով (առաջին մարզիչը՝ Գագիկ Բաբայան): Բուհն ավարտելուց հետո մանկավարժական գործունեությունը սկսել է Լեռնաձորի դպրոցում՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ և ծանրամարտի մարզիչ, հետո նույն կարգավիճակով տեղափոխվել է Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց: Եղել է Քաջարանի մշակույթի պալատի տնօրեն, ղեկավարել կոմբինատի անվտանգության բաժինը՝ արագ արձագանքման խմբի պետ:

ՊՈՒՇԿԻՆ ԹԵՎԱՆՅԱՆ
ՀՀ վաստակավոր մարզիչ, սպորտի վարպետ

Կոմբինատը հոգում է, որ պատանի քաջարանցիների մարմնակրթությունը պատշաճ մակարդակի վրա լինի՝ ապավինելով «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» կարգախոսին։

Բայց իրեն սրտամոտ ոլորտը դեռահասների մարմնակրթությունն էր: Մարզչական գործունեության ընթացքում բարձրակարգ մարզիկներ է պատրաստել, որից չորսը՝ սպորտի վարպետ: Նաև աղջիկներից է ծանրամարտիկ պատրաստել (Վալենտինա Մովսիսյան), ով արդեն մարզական լուրջ արդյունքներ է գրանցել:

«Կոմբինատը հոգում է, որ պատանի քաջարանցիների մարմնակրթությունը պատշաճ մակարդակի վրա լինի՝ ապավինելով «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» կարգախոսին, – մանրամասնում է Պուշկին Թևանյանը, – *մարզահամալիրն ըստ ամենայնի կոմբինատի մի արտադրամասն է, ծառայում է կոմբինատի աշխատակիցներին և նրանց երեխաներին: Նման դեպք չկա, որ օգնության համար դիմենք, կոմբինատը գումար չհատկացնի և ոչ միայն մեզ: Վերջերս հովանավորել ենք Քաջարանի մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության և բռնցքամարտիկների թիմերի մրցումների մասնակցությունը»:*

2012-ին մարզահամալիրում ձևավորվեցին սպորտային խմբեր, որոնք համալրվեցին փորձառու մարզիչներով, այժմ այդ խմբերում պարապում է 250-300 պատանի մարզիկ: Ծանրամարտիկ-

Քաջարանի քաղաքային մարզադաշտը 2008թ. իրականացված հիմնանորոգումից հետո:

ներին մարզում է Պուշկին Թևանյանը, մյուս խմբերի մարզիչներն են ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյան (քիք բոքսինգ), կուդո (Առնոլդ Կոստանյան), թաեքվանդո (Արամ Մանուկյան), բասկետբոլ (Գոռ Առաքելյան), վոլեյբոլ (Ռոբերտ Շահնազարյան), ֆուտբոլ (Բենիամին Մանուչարյան), սեղանի թենիս (Կարեն Բեգլարյան), շախմատ (Դավիթ Քաթանյան): Այժմ մարզահամալիրը 20-ից ավելի աշխատակից ունի, որոնց միավորում է նվիրվածությունն աշխատանքի հանդեպ:

Տեղեկանում ենք, որ առավել շատ երեխաներ՝ մոտ 80 հոգի, մասնակցում է կուդոյի պարապմունքներին: Մարզահամալիր այցելածս ժամանակ ականատես եղա պատանի թենիսիստների, շախմատիստների, բասկետբոլիստների, ծանրամարտիկների պարապմունքներին: Ակամա մտածում ես, որ այդքան դեռահասներ կտրվում են փողոցի բացասական ազդեցությունից:

Սպորտային խմբակների պարապմունքներից զատ՝ մարզահամալիրում կազմակերպվում են միջարտադրամասային մրցումներ (մինի ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս, շախմատ):

Մրցումների արդյունքներն ամփոփելուց հետո կոմբինատի ղեկավարությունն իրականացնում է պարգևատրման արարողություն, աչքի ընկած թիմերն արժանանում են գավաթների, դիպլոմների, մեդալների, լինում են դրամական պարգևատրումներ: Այդ ամենը տոնական երանգներ է հաղորդում միջոցառմանը, նաև մարմնակրթության դասեր ստանում:

Այս համատեքստում կարելի է ավելացնել, որ կոմբինատի երիտասարդ աշխատակիցներն աշխատանքից հետո՝ ժամը 19-ից սկսած, օգտվում են մարզահամալիրի հնարավորություններից՝ այդպիսով իմաստավորելով իրենց ազատ ժամանակը, նաև ամրապնդում առողջությունը: Հիմնականում զբաղվում են խաղային մարզաձևերով (ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ):

...Կոմբինատի աշխատակիցներն աշխատանքից հետո՝ ժամը 19-ից սկսած, օգտվում են մարզահամալիրի հնարավորություններից՝ այդպիսով իմաստավորելով իրենց ազատ ժամանակը, նաև ամրապնդում առողջությունը:

Տեղին է նաև նշել, որ բացի մարզահամալիրի խմբակներից՝ ԿԳՄՍ նախարարության ենթակայության ներքո գտնվող Քաջարանի համալիր մարզադպրոցի չորս խմբակի՝ գեղարվեստական մարմնամարզություն, ըմբշամարտի, բռնցքամարտի, բասկետբոլի սաներն այստեղ են իրենց մարզիչների հետ մարզումներ անցկացնում: Ընդ որում՝ պարապմունքներն այնպես են կազմակերպվում, որ երկու մարզօջախի աշխատանքները չտուժեն:

Մի խոսքով հյուրընկալ մարզակառույց է կոմբինատի մարզահամալիրը, որտեղ անցկացվում են հանրապետական, մարզային մասշտաբի մրցաշարեր, առաջնություններ, «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական մանկապարտեզ» և այլ մրցույթներ:

Տևական ժամանակ է, ինչ կոմբինատի օժանդակությամբ շինարարական աշխատանքներ են ընթանում Քաջարանի մարզադաշտում, որի հարևանությամբ գտնվող շինությունը քանդվում է: Դրա տեղում լինելու է մանկական խաղահրապարակ: Խաղադաշտն էլ ունենալու է արհեստական ծածկ: Նոր տեսք են ունենալու տրիբունաները, հանդերձարանը, լինելու է նաև մարզիչների համար նախատեսված սենյակ:

Խոսելով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ-Քաջարանի մարզական կյանք» փոխհարաբերության մասին՝ արժե նշել, որ կոմբինատի տնօրինությունը մշտապես պատրաստակամություն է դրսևորել՝ հովանավորելով քաջարանցի մարզիկների (և ոչ միայն) մասնակցությունը միջազգային ու հանրապետական կարգի մրցումներին: Դեռ ավելին՝ այսօր Հայաստանի ֆուտբոլի առաջնության առաջին խմբում հանդես են գալիս կապանյան երկու թիմ՝ «Գանձասար»-ն ու «Սյունիք»-ը: «Սյունիք» ֆուտբոլային ակումբի նախագահը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանն է, ով ակումբի առջև հստակ խնդիր է դրել՝ ըստ ամենայնի ընդլայնել Սյունիքում ֆուտբոլի աշխարհագրությունը՝ ակումբի հովանու ներքո ընդգրկելով մարզի բոլոր բնակավայրերի երեխաներին, նաև կապանյան ֆուտբոլը կապանյան չափանիշներին համապատասխանեցնել:

«Սյունիք» ակումբում հանդես են գալիս կապանցի պատանի հեռանկարային ֆուտբոլիստներ, գուցե հենց նրանց է վիճակված վերածնել կապանյան ֆուտբոլի լավագույն ավանդույթները:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ՄԵԱԿՈՒՅԹ
ՍՊՈՐՏ

«Սյունիք» ֆուտբոլային ակումբի առաջին թիմը

«Սյունիք» ֆուտբոլային ակումբ. նոր հնարավորություններ և հեռանկարներ

Յոթնամյա գործունեությունից հետո «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբը նոր անվանում ունի՝ «Սյունիք»: Սա սոսկ անվան փոփոխություն չէ, քանզի ակումբը նաև նոր ղեկավար ունի՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյան:

«Սյունիք» ակումբի նոր տնօրենը հստակ խնդիր է դրել ըստ ամենայնի ընդլայնել Սյունիքում ֆուտբոլի աշխարհագրությունը՝ ակումբի հովանու ներքո ընդգրկելով մարզի բոլոր բնակավայրերի երեխաներին, նաև նպաստավոր պայմաններ ստեղծել, որ նրանք կարողանան հաճախել ակումբի մարզադաշտ, որ քաղաքի կենտրոնից բավականին հեռավորության վրա է, և այդ ուղղությամբ հասարակական տրանսպորտ չի աշխատում: Իսկ դրանք երեքն են. մեկը՝ ճիմապատ, մյուսը՝ ցանովի խոտածածկով, երրորդը՝ արհեստական ծածկով: Ակումբն այս պահին մոտ 190 սան ունի, ովքեր հանդես են գալիս տարիքային ութ տարբեր խմբերում: Մի մասն արդեն մանկապատանեկան ֆուտբոլից վստահ քայլեր է անում դեպի մեծ ֆուտբոլ:

«Սյունիք» ակումբի տնօրենի տեղակալ Արթուր Մարգարյանը, ով 17 տարի Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ներկայացուցիչն էր մարզում, 2004 թվականից «Գանձասար-Կապանի» մանկապատանեկան բաժնի ղեկավար, այնուհետև թիմի պետ, 2014 թվականից ակումբի փոխտնօրեն, նշում է, որ ակումբի ղեկավարությունը՝ հանձին Վարդան Ջհանյանի, մարզում ֆուտբոլը մասսայականացնելու և զարգացնելու նպաստավոր պայմաններ են ստեղծել, ինչը պիտի ճիշտ և նպատակային օգտագործել:

«Ակումբի տնօրենի շեշտադրումները համընկնում են մեր շեշտադրումներին: Ընդ որում՝ խոսքը ոչ միայն և ոչ այնքան մանկապատանեկան ֆուտբոլին է վերաբերում, որքան կապանյան ֆուտբոլը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելուն, – ասում է Արթուր Մարգարյանն ու հավելում, – *Սյունիքի մարզի բոլոր քաղաքներում մասնաճյուղեր ենք ունենալու՝ հաստիքային մարզիչներով: Կրկնակի ուրախանալին այն է, որ գյուղական բնակավայրերն ընդգրկված են մարզում ֆուտբոլը զարգացնելու ծրագրի մեջ»:*

Ինչպես տեղեկացնում է ակումբի մամուլի քարտուղար Աշոտ Ասատրյանը, խաղադաշտերի հարակից տարածքները բարեկարգվելու են, մարզադաշտի կողքին կկառուցվի տրիբունա, մարզադահլիճ, որի առաջին հարկում կլինեն հանդերձարաններ, խաղին պատրաստվելու և խաղից հետո հոգնածությունը թոթա-

...Կապանցի ֆուտբոլասերը մարզադաշտ հաճախելու և սիրելի թիմին երկրպագելու տասնամյակներով ձևավորված կուլտուրա ունի: Ուրեմն՝ նոր մեկնարկվող՝ ֆուտբոլի Հայաստանի առաջին խմբի առաջնության առաջին իսկ հանդիպումներից լինենք մարզադաշտում, մեր ներկայությամբ ոգևորենք նորաստեղծ կապանյան թիմին, ինչը նրանց անչափ անհրաժեշտ է: Մանավանդ որ թիմի անդրանիկ խաղից առաջ մարզամշակութային հետաքրքրական միջոցառում է լինելու, նաև այլ անակնկալներ:

«Սյունիք» ակումբի տնօրենի տեղակալ Արթուր Մարգարյանը, թիմի մարզիչ Տիգրան Գևորգյանը, ակումբի աշխատակից Աշոտ Ասատրյանը

փելու հարմարություններ: Այդ ամենը թույլ կտան, որ խաղադաշտում բարձրագույն խմբի հանդիպումներ անցկացվեն:

– Քանի որ նախապատրաստական շրջանի առաջին շաբաթն է, մանկապատանեկան խմբերից տեղափոխվող տղաները պիտի հարմարվեն պրոֆեսիոնալ լիգային: Մեր աշխատանքները, նաև մարզչական շտաբինը, հարմարեցնում ենք նոր պայմաններին: Այս փուլում մենք ավելի շատ պիտի վստահենք պատանիներին, թեկուզև նրանք խաղադաշտում սխալներ թույլ տան: Մեր խնդիրը հենց դրանք շտկելն է: Շատ շնորհալի և օժտված երեխաներ կան մեր մարզում, միայն պիտի նրանց ճիշտ ուղու վրա դնել, – պատմում է առաջին խմբի մարզիչ Տիգրան Գևորգյանը, ով մարզչական PRO կարգ ունի: Նրա փոխանցմամբ՝ օգոստոսին մեկնարկելիք Հայաստանի ֆուտբոլի առաջնությանը մասնակցող «Սյունիք» ակումբի թիմը նախնական շրջանում իր կազմում կունենա հանրապետության տարբեր թիմերից հրավիրվածներ: Ակումբի ղեկավարությունը խնդիր է դրել, որ հետագայում «Սյունիք» թիմում հանդես գան միայն տեղացի ֆուտբոլիստներ:

Հունիսի 12-ին ակումբի սաները սկսել են պարապմունքները: Օրեր առաջ ակումբի մարզաբազայում էինք. այսպես ենք անվանում, քանզի, ինչպես նշեցինք, այդտեղ երեք խաղադաշտ կա: Տեսնել էր պետք, թե ամռան տապին ինչպես են պատանի ֆուտբոլիստները հղկում տեխնիկան, կատարում մարզիչ Տիգրան Գևորգյանի հրահանգները: Տասնվեցամյա Դավիթը պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ դառնալու ճանապարհին է, ասում է՝ սովորում ենք, թե ինչպես ճիշտ տեղաշարժվել դաշտում... Արդեն 11 տարի է, ինչ ֆուտբոլ է պարապում, ակումբն իր համար ընտանիքի նման մի բան է դարձել:

...Կապանը տասնամյակներ ի վեր հայտնի է ֆուտբոլային ավանդույթներով: Քաղաքի ֆուտբոլի թիմը ստեղծվել է 1950-60-ական թվականներին «Լեռնագործ» անվամբ: Մրցում էր Խորհրդային Միության առաջնության «Բ» խմբում, թիմում հանդես էին գալիս միայն կապանցիներ..., իսկ հանդիպումներն անցնում էին լեփ-լեցուն տրիբունաների ոգևորիչ աջակցության ներքո:

Կապանյան թիմում հանդես են եկել ֆուտբոլիստներ, ովքեր հետագայում հաջողությամբ խաղացել են հանրապետության առաջատար թիմում՝ Երևանի «Արարատում»՝ Նորայր Դեմիրճյան, Ռուդիկ Ավանեսյան, Հովհաննես Չանազանյան, Արկադի Անդրեասյան և ուրիշներ: Դեռ ավելին՝ կապանյան ֆուտբոլային թիմն իր կադրերն է գործուղել Երևանի «Արարատ»՝ Ալյոշա Անտոնյան, Գագիկ Հովհաննիսյան և ուրիշներ:

Իսկ Կապանի մարզադաշտը միշտ «աչքի է ընկել» բարձր հաճախելիությամբ և մարդկանց գոնե երկու ժամ կտրել առօրյա հոգսերից: Մանավանդ որ կապանցի ֆուտբոլասերը մարզադաշտ հաճախելու և սիրելի թիմին երկրպագելու տասնամյակներով ձևավորված կուլտուրա ունի:

Ուրեմն՝ նոր մեկնարկվող՝ ֆուտբոլի Հայաստանի առաջին խմբի առաջնության առաջին իսկ հանդիպումներից լինենք մարզադաշտում, մեր ներկայությամբ ոգևորենք նորաստեղծ կապանյան թիմին, ինչը նրանց անչափ անհրաժեշտ է: Մանավանդ որ թիմի անդրանիկ խաղից առաջ մարզամշակութային հետաքրքրական միջոցառում է լինելու, նաև այլ անակնկալներ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
12 ՄԱՅԻՍԻ 2022Թ.

ՀԵՏԱՊՐՁ ՀԱՅԱՑՔ

Նրանք են գլխավորել կոմբինատի 70-ամյա երթը

ԳՐԻԳՈՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ ԲԵՁՐՈԴՆԻ
(1949-1950 թթ.)

ՇԵԳՈՒԼԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԱՍԻԼԵՎԻՉ
(1950-1951 թթ.)



ՁՈՆԵՆԿՈ ՏԻՄՈՖԵՅ ՄԱՔՍԻՄՈՎԻՉ
(1951-1954 թթ.)

ՖԵՈԴՈՍԻ ԱՆՏՈՆՈՎԻՉ ԼՈՅ *(1954-1957 թթ.)*

ՍԵՐԳԵՅ ԹԱԴԵՈՍԻ ԴՐԱՄՓՅԱՆ
(1957-1959 թթ.)

ՀՄԱՅԱԿ ՄԱՐԳԱՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ
(1959-1967 թթ.)



ՖՐՈՒՆԶԵ ՀՄԱՅԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ *(1967-1975 թթ. և 1984-1994 թթ.)*

ՀԱՄԼԵՏ ՄԱՆՎԵԼԻ ՈՍԿԱՆՅԱՆ
(1975-1979 թթ.)

ԳԵՈՐԳԻ ԱՐԱՄԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ
(1979-1984 թթ.)

ՌՈՄԱՆ ՇՄԱՎՈՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ *(1994-1998 թթ.)*

ՄԱՔՍԻՄ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ
(1998-2014 թթ.)

ՆԻԼ ՍՏԻՎԵՆՍՈՆ
(2014-2015 թթ.)

ՄՅԵՐ ՊՈԼՈՍԿՈՎ
(2015-2021 ԹԹ.)

ՊԱՐԱԳ ՅՈՒՍԱՆՆԵՍ ԲՅԱՏ
(2021-2022 ԹԹ.)

ՌՈՄԱՆ ԽՈՒԴՈԼԻՅ
(2022 Թ.- Մ/Ա)

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի առաջին երեք տնօրենները

ԳՐԻԳՈՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ ԲԵԶՐՈԴՆԻ

Ծնվել է 1914 թ., Ուկրաինական ԽՍՀ Դոմբասի մարզի Սույեժնայայի շրջանի Ռեբովկա գյուղում: Ազգությամբ ռուս է: Ավարտել է Դնեպրոպետրովսկի լեռնային ինստիտուտը՝ ստանալով լեռնային ինժեների որակավորում: Մասնագիտությամբ սկսել է աշխատել 1939 թվականից: Հայաստան է եկել 1946 թվականին: Սկզբում աշխատել է Քաջարանի փորձնական հարստացուցիչ ֆաբրիկայում՝ որպես ֆլոտատոր, իսկ 1947 թվականին գլխավորել է այն: Նա լարված հետևում էր Ֆաբրիկայի աշխատանքներին, արտադրամասերի և հանքերի բնականոն աշխատանքներին: 1948 թվականի նոյեմբերից կոմբինատի վարչության գլխավոր ինժեներն էր, իսկ 1949 թվականի մայիսի 1-ից՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենը: Նրա տնօրինության ժամանակաշրջանը հանքարտադրության, հարստացուցիչ ֆաբրիկայի գործարկումն արագացնելու, ճանապարհաշինության և բնակարանաշինության լայն թափով ծավալելու տարիներ էին: Նրա օրոք շահագործման հանձնվեց հարյուրավոր քառակուսի մետր բնակմակերես, բանավաններն ապահովվեցին խմելու ջրով, վերանորոգվեցին և շահագործման հանձնվեցին առաջին անհրաժեշտության կուլտուրակենցաղային օբյեկտները: Կյանքով լեցուն, գործին նվիրված աշխատողի կյանքի թելը կտրվեց ողբերգորեն՝ ավտովթարից:

Գրիգորի Բեզրոդնին տնօրեն աշխատեց մեկ տարի, բայց հասցրեց ժամանակակիցների շրջանում բարի անուն թողնել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԱՍԻԼԵՎԻՉ ՇԵԳՈԼԵՎ

Ծնվել է 1912 թվականին ջուլիակի ընտանիքում: Հայրը զոհվել է Առաջին համաշխարհային պատերազմում:

Մանուկ հասակից մնացել է մոր խնամքին: Սովորել և ավարտել է Նարո-Ֆոմինսկի ֆաբրիկայի ֆաբրիկագործարանային ուսումնարանը: 1935 թվականին ավարտել է Մոսկվայի լեռնային ինստիտուտի գունավոր մետաղների և ոսկու բաժինը: Հանքի ծննդավայրի հայտնաբերման մասնագետ էր:

Աշխատանքային գործունեությունն սկսել է նույն թվականից՝ սկզբում աշխատելով Նիկիրովսկի հանքի տեղամասի պետ, իսկ 1937-1941թթ. աշխատել է Բուրիաթ-Մոնղոլական հանրապետությունում՝ Ջիդինսկի վոլֆրամ-մոլիբդենի կոմբինատում, ուր եղել է հանքի տեղամասի պետ, հանքի տեխնիկական ղեկավար, լեռնային արտադրամասի պետ, հանքի գլխավոր ինժեներ, կոմբինատի արտադրատեխնիկական բաժնի պետ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին 93-րդ և 134-րդ հրետանային դիվիզիաների մատակարարման բաժնի պետն էր: Պատերազմի ավարտից հետո կրկին Ջիդինսկի կոմբինատում էր, ուր աշխատել է որպես գլխավոր ինժեներ: 1948-1949 թթ. Ուզբեկական ԽՍՀ Լյանգարի հանքվարչության գլխավոր ինժեներն էր:

1950 թվականի կեսերից մինչև 1951 թվականի վերջերը Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենն էր: Իր բոլոր ուժերն ու կարողությունները նպատակամղեց կոմբինատի առաջին հերթի շահագործումն իրականացնելուն: Նա կատարեց իր խոստումը հանրապետական և միութենական կառավարությունների առջև՝ ֆաբրիկան շահագործման հանձնելու հարցում: Հետագայում Ա. Շեգոլևն աշխատեց կոմբինատի գլխավոր ինժեներ:



ՏԻՄՈՖԵՅ ՄԱՔՍԻՄՈՎԻՉ ՉՈՆԵՆԿՈ

Ծնվել է 1910 թվականին Կրասնոդարի երկրամասի Պրիմորսկ-Ախտարսկի ստանիցայում, բանվորի ընտանիքում: 1920-1923 թթ. հոր հետ միասին, որպես վարձու բանվոր, աշխատել է տարբեր խուտորներում:

Պրիմորսկ-Ախտարսկի երկրորդ աստիճանի դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Մոսկվայի լեռնային ինստիտուտը: Ակտիվ խառնվածքի տեր անձնավորություն էր և դեռ ուսանողական նստարանից ներգրավվել է հասարակական աշխատանքների մեջ՝ բանգյուղտեսչության արտահաստիքային հրահանգիչ էր:

Ինստիտուտն ավարտելուց հետո գործուղվել է Օրենբուրգի մարզի Բլյավինսկի պղնձահանքեր, ուր 1935-1939 թթ. աշխատել է հերթափոխի պետ, հերթափոխի ինժեներ, հորիզոնագծի պետ, հանքի պետ, հանքի տնօրեն և գլխավոր ինժեներ:

1939 թվականին անձնական խնդրանքով տեղափոխվել է Չանգեզուրի պղնձի կոմբինատ, սակայն չորս ամիս անց ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի ժողկոմի հրամանով ուղարկվել է Ղազախական ԽՍՀ Ջեզկազգանի հանքվարչություն՝ գլխավոր ինժեներ, ապա՝ տնօրեն:

1943 թվականին նա դարձյալ Հայաստանում էր՝ Չանգեզուրի պղնձի կոմբինատի գլխավոր ինժեներ, որը հետագայում «Հայպղինձ» տրեստի ձևավորման հետևանքով վերակազմավորվեց՝ դարձավ Չանգեզուրի հանքվարչություն:

1948 թվականին անվանի լեռնագործը նշանակվեց Խաբարովսկի երկրամասի Ամուրի մարզի Ումալտինսկի հանքվարչության տնօրեն, ուր աշխատել է մինչև 1951 թվականի մայիսը:

Լեռնային արդյունաբերության մեջ հարուստ փորձ և ունակություններ դրսևորած Տ. Չոնենկոյին ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստրի հրամանով կրկին գործուղեցին Հայաստան՝ այս անգամ ստանձնելու Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենի պարտականությունները: 1951 թվականի նոյեմբերից մինչև 1954 թվականի մայիս նա ղեկավարեց կոմբինատի աշխատանքները՝ առաջնահերթ խնդիր ունենալով հանքերն ու կոմբինատն ապահովել որակյալ բանվորական և ինժեներատեխնիկական մշտական կադրերով: Արտադրական նորմաները կատարելու համար ձեռնամուխ եղավ հանքերում և շինարարական տեղամասերում աշխատանքները մեքենայացնելուն, հանքային արդյունահանման ծավալները և արտադրողականությունը ավելացնելուն:

Կոմբինատի առաջին հերթի գործարկումը 1951 թվականի վերջերին օրակարգի հարց էր, որին հսկում և հետևում էին միութենական և հանրապետական տարբեր կազմակերպություններ ու հաստատություններ: Այդ օրը չուշացավ: 1952 թվականի հունվարին կոմբինատը շահագործման հանձնվեց: Թերևս ամենապատասխանատու անձը Տ. Չոնենկոն էր, ով տոգորված էր անխառն վեհ զգացումով. չէ՞ որ այդ խոշոր կառույցը շահագործման էր հանձնվում իր օրոք, ժամանակին, առանց ձգձգումների, որը դառնալու էր երկրին պղնձի ու մոլիբդենի խտանյութի մատակարարման կարևոր հանգույց:

Տարիների փորձը և հարուստ գիտելիքները նա ի սպաս դրեց լեռնային արդյունաբերության մեջ՝ արժանանալով «Առաջին կարգի լեռնային տնօրենի» կոչման: Հայաստանում աշխատելու տարիներին նա ընտրվեց Ղափանի քաղխորհրդի պատգամավոր:

Խորհրդային կառավարությունը բարձր գնահատելով հանքարդյունաբերության մեջ Տիմոֆեյ Մաքսիմովիչ Չոնենկոյի խոշոր ծառայությունները, նրան պարգևատրեց «Աշխատանքի արիության համար» մեդալով և Գերազանցիկի կրծքանշանով:

ՀԻՄՔԸ՝ «ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ԳԻՐՔԸ (ԵՐԵՎԱՆ-2004)

Կոմբինատի առաջին հերթի գործարկումը 1951 թվականի վերջերին օրակարգի հարց էր, որին հսկում և հետևում էին միութենական և հանրապետական տարբեր կազմակերպություններ ու հաստատություններ: Այդ օրը չուշացավ: 1952 թվականի հունվարին կոմբինատը շահագործման հանձնվեց:

Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն, Մաքսիմ Հակոբյանը և Մատենադարանի տնօրեն (1982-2007թթ.) Սեն Արևշատյանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, 16 օգոստոսի 2003թ.

ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆ.
Նա տնտեսության հմուտ կազմակերպիչ չէր միայն, այլ մեր ազգային ու հոգևոր-մշակութային արժեքների նվիրյալ

Մաքսիմ Անուշավանի Հակոբյանի մասին դեռևս ամբողջական խոսք չի ասվել: Այս հրապարակմամբ էլ նման խնդիր չենք դրել մեր առջև: Մեր նպատակն է երկու կոնկրետ օրինակով ցույց տալ, թե որքան մտահոգ էր նա հայոց ազգային և հոգևոր-մշակութային արժեքների պահպանմամբ:

Հսկապես, ոչ միշտ է պատահում, երբ տնտեսության (այս դեպքում՝ հանքարդյունաբերության) հմուտ կազմակերպչին տեսնում ենք նաև հայ առաքելական եկեղեցու առջև ծառացած բազում խնդիրների լուծման տիրույթում կամ մեր ազգային մեծագույն արժեքներից մեկի՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարանի) հնարավորությունների բարելավման առաջնագծում:

Այսօր կարևոր ենք համարում այդ մասին խոսել՝ հիմնվելով վավերագրերի վրա:

Մեր ձեռքի տակ է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ծայրագույն պատրիարքի և Ամենայն հայոց կաթողիկոսի Օրհնության գիրը՝ «Այունյաց աշխարհ» թերթի 2002 թ. մայիսի 30-ի համարում տպագրված:

Ահա՝ *«Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր գնահատանքը, օրհնութիւնն ու ջերմ շնորհաւորանքներն ենք յղում ընկերութեան պատուարժան տնօրենին եւ բարեջան բոլոր աշխատակիցներին՝ ձեռնարկութեան հիմնադրման յոբելեանի երջանիկ առիթով:*

Ուրախ ենք, որ կոմբինատը փառաւոր ուղի է անցել՝ կէսդարեայ իր գործունէութեամբ նպաստելով Սիւնեաց աշխարհի շէնացմանն ու զօրացմանը:

Փառք Բարձրեալին, որ արարումի հայրենանուէր ոգով կոմբինատը շարունակում է իր առաքելութիւնը նաեւ վերջին տասնամեակում եւ օրհնեալ ներդրումը բերում նորանկախ մեր երկրի կայացմանն ու տնտեսական առաջընթացին՝ ստեղծելով այնքան անհրա-

ժեշտ շուրջ 2500 աշխատատեղ:

Սիրելիներ,

Մեծապէս գովելի է, որ արդար Ձեր աշխատանքի վաստակը ի սպաս էք դնում եկեղեցական ու ազգային մեր արժէքների պահպանմանը, որով ազնիւ մասնակցութիւն բերեցիք Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցմանը:

Մեր բարձր գնահատանքն ու օրհնութիւնն ենք բերում տնօրէն տիար Մաքսիմ Յակոբեանին, ձեռնարկութեան վարչութեանն ու բոլոր աշխատակիցներին՝ հայրենաշէն ու եկեղեցանուէր նախանձախնդրութեան համար:

Թող Բարին Աստուած երկար ու քաջառողջ կեանք պարգեւի ամենքիդ՝ շնորհելով գործոց մշտանորոգ յաջողություններ հայրենանուէր Ձեր գործունէութեան մէջ՝ ի փառս Աստուծոյ եւ ի բարգաւաճումն Հայրենի մեր երկրի:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ, ամէն»:

Մաքսիմ Հակոբյանի եկեղեցանվեր գործունեության ուշագրավ օրինակներից է, ինչպես նշված է Ամենայն հայոց կաթողիկոսի խոսքում, Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցմանն ունեցած ակտիվ մասնակցությունը:

Ահա, թե ինչ է գրում «Այունյաց աշխարհ» թերթը 2002 թ. հոկտեմբերի 15-ի համարում (հեղինակ՝ Վահրամ Օրբելյան). *«Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հիմնարկեքը կատարվել էր տակավին 1996-ի նոյեմբերի 26-ին՝ երջանկահիշատակ կաթողիկոս Գարեգին առաջինի ձեռամբ: Բայց մարզկենտրոնի հավատի տաճարի պատերը դժվարությամբ էին բարձրանում: Սյունիքի մարզպետ Էդիկ Բարսեղյանն իր պաշտոնավարության առաջին օրերից եկեղեցու շինարարությունն ավարտին հասցնելու վճռականությամբ գործի անցավ: Եկեղեցի ունենալու կապանցիների երազանքն իրականություն դարձավ հատկապես «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի ջանադրության շնորհիվ: Երկու այրերի եկեղեցանվեր գործունեությունն աննկատ մնալ չէր կարող: Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը նրանց արժանացրեց Հայ առաքելական եկեղեցու բարձր պարգևի՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի:*

Հոկտեմբերի 3-ին Մայր աթոռում Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին 2-րդը, Հայ առաքելական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների ներկայությամբ, նրանց հանձնեց շքանշանները:

Շնորհակալական իր խոսքում Մաքսիմ Հակոբյանն ասաց. «Հոգու բերկրությամբ եմ ընդունում Մայր եկեղեցու բարձրագույն պարգևը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը: Սա համարում եմ ինձ և իմ ղեկավարած 50-ամյա կոլեկտիվի բռնած ճանապարհին ուղղված օրհնություն: Հայրապետական շուքով կազմակերպված այս արարողությունը, Ամենայն հայոց կաթողիկոսի վեհիմաստ խոսքերը, համոզված եմ, կենարար լիցքեր են հաղորդելու և՛ մեզ՝ ներկաներիս, և՛ մեր գործընկերներին, նաև Սյունիքի հավատավոր ժողովրդին: Քիչ հետո տուն ճանապարհվելով՝ մենք չենք բաժանվելու իրարից: Այստեղ թողնելով մեր աղոթքը՝ մեզ հետ տանելու ենք սրբագործ այս տաճարի զորությունը»:

Մաքսիմ Հակոբյանն իր վարքով ու նկարագրով էր մերժում մետաղի կարծրությունը, նա համակ բարություն ու ջերմություն էր: Հատուկ թուլություն ուներ հայերեն գրքի, ձեռագրի, առհասարակ ազգային արժեքների նկատմամբ:

Մաքսիմ Հակոբյանի եկեղեցանվեր գործունեության ուշագրավ օրինակներից է, ինչպես նշված է Ամենայն հայոց կաթողիկոսի խոսքում,Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցմանն ունեցած ակտիվ մասնակցությունը:

Մաքսիմ Հակոբյանը տարիներ շարունակ սերտ առնչություններ է ունեցել նաև Մատենադարանի հետ...

Այդ մասին հանգամանալից տեղեկություններ ենք ստանում Սոս Դավթյանի հեղինակած «Մաքսիմ Հակոբյան. կյանքի պատմությունը» գնահատելի գրքից (Երևան-2014):

Ուշագրավ է այդ առիթով ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սեն Արևշատյանի գնահատանքի խոսքը. *«Մենք անչափ երախտապարտ ենք Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կոլեկտիվին, նրա գլխավոր տնօրեն պարոն Մաքսիմ Հակոբյանին՝ Մատենադարանի անսակարկ բարերարին, ով տարիներ ի վեր շարունակաբար լուրջ ներդրումներ կատարելով, մեծապես աջակցում է մեզ՝ հոգևոր անգին արժեքների, հնագույն մատյանների, ձեռագրերի, արխիվային փաստաթղթերի ձեռքբերման, դրանց պահպանության կազմակերպման և կորստից փրկելու գործում»:*

Մատենադարանի ղեկավարությունը 2011 թ.

օգոստոսի 31-ին կազմակերպեց Մաքսիմ Հակոբյանի մեծարման արարողություն: Ըստ էության դա գնահատանք էր՝ տարիների ընթացքում Մատենադարանի զարգացման ծրագրերի իրականացման գործում նրա ունեցած մեծ և անուրանալի ավանդի:

Այդ օրը Մաքսիմ Հակոբյանը պարգևատրվեց Մատենադարանի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալով: Իսկ Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանը երախտագիտության այսպիսի խոսք հնչեցրեց. *«Մատենադարանի կենդանի պատմությունը կերտել են նաև բարեգործները: Յուրաքանչյուր ձեռագրի հիմքում, սերնդեսերունդ շարունակվող նրա կենսագրության մեջ բազմաթիվ համեստ և խոնարհ բարեգործներ կան... Մենք այսօր հրավիրել ենք Մաքսիմ Հակոբյանին՝ մեր երախտագիտության խոսքն ասելու նրան, կոմբինատի ողջ անձնակազմին, նաև անցած ու գալիք սերունդների անունից, քանի որ Մատենադարանը վերակերտում է մեր անցյալն ու սերմանում ապագան»:*

Արարողության ժամանակ շնորհակալական խոսք ասաց Մաքսիմ Հակոբյանը. *«Մատենադարանի հետ կապվածությունս խորացել է դեռևս ուսանողական տարիներից: Երբ ազատ ժամանակ էի ունենում, ընկերներիս հետ քայլում էի դեպի Մատենադարան: Եվ իմ գիտակցական կյանքում կապվեցի գիտական համալիրի ներքին աշխարհին և ահա տասը տարի բարեկամություն եմ անում այս եզակի կառույցի հետ: Ես ինձ երջանիկ եմ համարում, որ կարողացել եմ համեստ ներդնում ունենալ Մատենադարանի նոր մասնաշենքի կառուցման գործում»:*

Մաքսիմ Հակոբյանի կյանքի վերոնշյալ դրվագներին և՛ Մայր աթոռը, և՛ Մատենադարանը վերստին անդրադարձել են նրա վաղաժամ մահվան կապակցությամբ:

Մատենադարանի խոսքում, թեև ցավակցական է, նորովի է իմաստավորվել Մատենադարանի երկար տարիների բարեկամ ու բարերար Մաքսիմ Հակոբյանի գործունեությունը:

Քաղվածք՝ այդ խոսքից. *«Երկար տարիներ վարելով Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենի, ապա տնօրենների խորհրդի նախագահի պատվավոր պաշտոնները՝ Մաքսիմ Հակոբյանը մշտապես կանգնած է եղել Մատենադարանի կողքին՝ սատարելով, օժանդակելով Մատենադարանի առաջնահերթ ծրագրերին՝ ինչպես նոր մասնաշենքի բարեկարգման, այնպես էլ հրատարակչական և ձեռագրական ֆոնդերի համալրման բազմաթիվ աշխատանքներին:*

Մաքսիմ Հակոբյանն իր վարքով ու նկարագրով էր մերժում մետաղի կարծրությունը, նա համակ բարություն ու ջերմություն էր: Հատուկ թուլություն ուներ հայերեն գրքի, ձեռագրի, առհասարակ ազգային արժեքների նկատմամբ: Հետամուտ էր հայ ժողովրդի բազմադարյան պատմությունն ու մշակույթը նշանավորող աշխատանքներին, ինչն էլ ապացուցվում է Մատենադարանի հետ համագործակցության ամենատարբեր ոլորտներում: Չի եղել մի դեպք, մի դիմում, որ անպատասխան մնար կամ դրական արձագանք չստանար Մաքսիմ Հակոբյանի կողմից: Նրա անունն ու գործը հավերժ կմնան Մատենադարանի պատմության էջերում»:

Մաքսիմ Հակոբյանը տարիներ շարունակ սերտ առնչություններ է ունեցել նաև Մատենադարանի հետ... Այդ մասին հանգամանալից տեղեկություններ ենք ստանում Սոս Դավթյանի հեղինակած «Մաքսիմ Հակոբյան. կյանքի պատմությունը» գնահատելի գրքից (Երևան-2014):

Ուշագրավ է նաև Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ցավակցական գիրը: Քաղվածք՝ այդ փաստաթղթից. *«Բարեհիշատակ Մաքսիմ Հակոբյանն ապրել եւ գործել է բարեպաշտ ոգով՝ իր կյանքում կարեւոր ու առաջնային համարելով աստվածասիրությունն ու եկեղեցասիրությունը, հայրենիքի հանդեպ նվիրումն ու ազգօգուտ գործերի իրականացումը:*

Այդ ոգով նա մեծ ներդրում բերեց Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցմանը, Սյունյաց աշխարհում հավատավոր հայորդիների հոգեւոր-եկեղեցական կյանքի առաջընթացին:

Լուսահոգի Մաքսիմ Հակոբյանը, լինելով «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի պատվավոր անդամ, մեծ ավանդ ունի ձեռագրերի ձեռքբերման եւ Մատենադարանի ֆոնդի համալրման կարեւոր առաքելության մեջ:

Մենք միշտ բարձր ենք գնահատել հոգելույս Մաքսիմ Հակոբյանի երկար տարիների նվիրյալ ծառայությունները, ազգօգուտ գովարժան բարեգործությունները՝ նրան շնորհելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշանը»:

Անշուշտ, ազգային արժեքների հանդեպ Մաքսիմ Հակոբյանի դրվատելի վերաբերմունքի օրինակների թվարկումը կարող ենք շարունակել, բայց բավարարվենք ասվածով՝ մեկ անգամ ևս փաստելով, որ աստվածասիրությունն ու եկեղեցասիրությունը, Մատենադարանի հանդեպ հոգածությունն այսօր էլ վեհություն են հաղորդում նրա կերպարին:

Մնում է ավելացնել, որ հայրենիք շենացնող, ազգային արժեքներ պահպանող հայի տեսակը, որի կրողն էր պայծառանուն Մաքսիմ Հակոբյանը, մեզ շատ է պետք հատկապես այսօր՝ հայ ժողովրդի դժվարություններով լեցուն ու ճակատագրական ներկա հանգրվանում: Եվ պատահական չէ, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 70-րդ տարեդարձի առիթով Մաքսիմ Հակոբյանին հիշեցինք հենց այդ տեսանկյունից և վավերագրերի վկայությամբ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

ՌՈՄԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. «Իմ կարիերայի գլխավոր «մեղավորները» եղել են կոմբինատի մարդիկ...»

ԼԻԼԻԹ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Հաջողության գրավականը՝ մասնագետ լինելն է: Միջակությունը յուրաքանչյուր աշխատանքում ընդունելի չէ, այն տանում է կործանման կամ հակառակ դեպքում՝ տեղում դոփելու:

– Պարոն Նավասարդյան, շնորհակալ ենք հանդիպման հնարավորության համար: Մեր զրույցը սկսենք ակունքներից՝ որտեղի՞ց են գալիս Նավասարդյան գերդաստանի արմատները:

– Ես եմ շնորհակալ, կփորձեմ հնարավորինս օգտակար լինել և պատասխանել Ձեր հարցերին:

Ծնունդով Եղվարդ գյուղից եմ, տեղի բնակիչներն այդտեղ եկել են և հաստատվել Պարսկաստանի Ղարադաղի շրջանից (հին հայկական աղբյուրներում հիշատակվում է որպես Իրանի տարածքում կազմավորված առաջին հայաշատ գավառ): Մայրս՝ Արաքսյա Սևաչյանը, վաստակաշատ մանկավարժ էր, ասեմ, որ աշակերտներին իր երեխաներից չէր տարբերում, ֆանատորեն սիրում էր իր աշխատանքը: Հայրս Մեծ հայրենականի հաշմանդամ էր, երեք եղբայրն էլ պատերազմի մասնակից էին, ցավոք, պատերազմից վերադարձել են երկուսը:

Պապս գյուղի կոլտնտեսության նախագահն էր: 1946 թվականին՝ Հայրենական մեծ պատերազմից հետո՝ սովի տարիներին, գյուղի պահեստներից հանել է հացահատիկի սերմացուն և որոշ մասը բաժանել գյուղացիներին, ինչի համար էլ պատասխանատվության է ենթարկվել՝ 10 տարի ազատազրկմամբ: Իր ճակատագրից երբևէ չբողոքող, չտրտնջացող մարդ էր: Երբևէ չբարձրաձայնեց, որ պատժվել է սովամահ լինող մարդկանց փրկելու համար, կամ որ՝ երեք տղան պատերազմի բովով են անցել: Այդքանը՝ իմ գերդաստանի մասին:

– 1960-ականներին Կապանի «Լեռնագործ» ֆուտբոլային թիմի դարպասապահն էիք, ինչպիսի՞ն էր այդ տարիների հայկական ֆուտբոլը:

– Իմ պատանեկության տարիներին բոլոր բակերում սպորտով զբաղվող պատանիների և երիտասարդների թիվն օրեցօր էր աճում: Ես շատ սիրեցի ֆուտբոլը, 16 տարեկանում՝ 10-րդ ավարտական դասարանում, «Լեռնագործ» ֆուտբոլային թիմի դարպասապահն էի: Եվ 1963 թվականին, առաջին անգամ մեր թիմը նվաճեց Հայաստանի գավաթը:

Հետագայում ևս իմ կյանքում շատ մեծ դեր է

ԱՅՑԵՔՍՈՏ

Ծնվել է 1947 թ. հունվարի 15-ին Կապանի շրջանի Եղվարդ գյուղում ծառայողի ընտանիքում:
1954-65 թթ. սովորել և ավարտել է Կապանի թիվ 3 ռուսական միջնակարգ դպրոցը: 1965 թվականին ընդունվել և 1970 թվականին ավարտել է Լենինգրադի լեռնային ինստիտուտի էլեկտրամեխանիկական ֆակուլտետը՝ ստանալով լեռնային ինժեներ-մեխանիկի որակավորում: Ինստիտուտն ավարտելուց հետո գործուղվել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատ: Սկզբում աշխատել է ճոպանուղում՝ հերթափոխի էլեկտրիկ, ապա՝ վարպետ:
1972-74 թթ. ծառայել է խորհրդային բանակում, զորացրվելուց հետո կրկին աշխատանքի անցել Զանգեզուրի կոմբինատի ճոպանուղում՝ արդեն որպես գլխավոր էներգետիկ: 1985 թվականին նշանակվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի փոխտնօրեն, ապա՝ գլխավոր ինժեներ: 1994-1998 թթ. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենն էր:
1998-2000 թթ. եղել է Սյունիքի մարզպետ:
Ամուսնացած է, ունի երկու զավակ, չորս թոռ:

ունեցել սպորտը. այն պայքարել էր սովորեցնում, անխնա աշխատել և արդյունքի հասնել: Մեզանից շատերը սպորտում հաջողության հասնելու մեծ պոտենցիալ ունեին, սակայն խորհրդային ժամանակներին բնորոշ՝ առաջնային էր կրթությունը, սպորտն ուղղակի հոբբի էր, որ սովորեցրեց ձգտել և հասնել առավելագույնի՝ կյանքի ամենատարբեր ոլորտներում:

– Կոմբինատում Ձեր աշխատանքային առաջին քայլերը...

– Լենինգրադում բուհն ավարտելուց հետո գործուղվեցի Քաջարանի կոմբինատ: Ծնողներս այստեղ էին, և ես մտադիր էի հետ գալ, աշխատել, նրանց մոտ լինել:

Սկսեցի բանվորությունից. էլեկտրիկ, հերթափոխի պետ, ապա՝ էլեկտրամեխանիկ, գլխավոր էներգետիկ: Քաջարանում կանանց աշխատանքով ապահովելու խնդիր կար, առաջարկ ստացա համակարգել տրիկոտաժի ֆաբրիկայի աշխատանքները: Այնուհետև կրկին կոմբինատ՝ որպես փոխտնօրեն, գլխավոր ինժեներ, ապա՝ կոմբինատի տնօրեն:

– Տասնամյակների հետ, բնականաբար, առաջընթաց է գրանցվել կոմբինատում, տեխնոլոգիական գործընթացի վերազինում և աշխատակազմի փոփոխություն, ո՞ւմ և ի՞նչ կհիշեք:

– Գիտե՞ք, ես համարում եմ, որ իմ կարիերայի հիմնական «մեղավորները» եղել են կոմբինատի մարդիկ՝ թե՛ մասնագիտական և թե՛ մարդկային առումներով: Նրանք այնքան նվիրված էին ձեռնարկությանը, որ մնում էր նույն նվիրվածությամբ աշխատել ու ղեկավարել: Այդպիսի միջավայրում, բնականաբար, հաճելի էր աշխատանքը, որտեղ բարեխղճությունն ու նվիրումը վեր էին ամեն բանից. այդ սկզբունքները կոմբինատի ստեղծման ակունքներից են եկել:

Հավանաբար լսել եք կոմբինատի ճոպանուղու տեղամասի մասին, որն ապամոնտաժվեց հետագայում: Այն հանքաքարն օդային ճանապարհով տեղափոխում էր ջարդման տեղամաս:

Այդտեղ աշխատանքը, ինչպես և մյուս արտադրական օբյեկտներում, ուշադրություն ու անվտանգության կանոնների հստակ պահպանում էր պահանջում: Վթարի դեպքում, երբ ճոպանուղին կանգնում էր, արտադրական պրոցեսը խաթարվում էր: Գիշեր-ցերեկ բանվոր ու ղեկավար անքուն մնալով՝ արտադրական պրոցեսի դժվարություններն էին հաղթահարում՝ ընդհանուր գործն առաջնային համարելով:

Եվ ողջ իմ պրակտիկայում մի անգամ էլ չլսեցի, որ վարձատրություն պահանջեն հավելյալ աշխատաժամանակի դիմաց: Նման մարդկանց հետ ճանապարհ անցնելը հաճելի էր և պարտավորեցնող:

– Աշխատանքային հաջողությունների Ձեր բանաձևը:

– Հաջողության գրավականը մասնագետ լինելն է: Միջակությունը յուրաքանչյուր աշխատանքում ընդունելի չէ, այն տանում է կործանման կամ հակառակ դեպքում՝ տեղում դոփելու:

Երկրորդ կարևորագույն պայմանը աշխատանքդ սիրելն է: Եվ դա վերաբերում է ցանկացած ոլորտի: Սիրել աշխատանքդ և նվիրվել. այս պարագայում գործում է բումերանգի էֆեկտը:

Հինգ տարի եղել եմ կոմբինատի փոխտնօրեն, տասը տարի գլխավոր ինժեներ, գրեթե հինգ տարի՝ կոմբինատի տնօրեն: Աշխատանքային առումով բավարարվածության զգացողություն ունեցել եմ միայն գլխավոր ինժեներ աշխատելու տարիներին: Ասեմ ինչու՝ արտադրությունում անբասիր ու մաքուր մարդկանց հետ ես աշխատում: Դա այն միջավայրն է, որտեղ երբեք քո խղճի դեմ ոչինչ չես անում:

– 1990-ականներին, երբ բարդ տարիներ էին կոմբինատի և հանրապետության համար առհասարակ, ինչպե՞ս հաջողվեց «փրկել» կոմբինատը, որոշակի պարապուրդից հետո շատ կարճ ժամանակամիջոցում վերագործարկել այն:

– Կոմբինատը ես չեմ «փրկել», այլ բանվորները: Հսկա ձեռնարկությունը պարապուրդի տարիներին օր ու գիշեր հսկել են բանվորները: Եվ կատարել են գործը՝ այնպիսի պատասխանատվությամբ, որ երկու տարի պարապուրդից հետո կարողացանք կոմբինատը վերագործարկել մեկ շաբաթում: Ստեղծման օրվանից կոմբինատի հիմքերն այդպես են դրվել. պետք էր շարժվել ըստ նրա դրվածքների, ավանդույթների, հարազատորեն: Այդ դեպքում՝ կոմբինատը քեզ կզգա և կընդունի:

– Ձեր ղեկավարման տարիների բացթողումներն ու դժվար ժամանակները:

– Իհարկե, արտադրական հսկան ղեկավարելը հեշտ չէր: Լինում էին պահեր, երբ իրավիճակը դուրս էր գալիս հսկողությունից, կամ, օրինակ, նույն 1990-ականներին՝ էլեկտրաէներգիայի սակավության պատճառով եղել են արտադրական բազում պարապուրդներ և այլն: Քաղաքը հոսանքազրկվում էր՝ էներգիան կոմբինատին փոխանցելու պատճառով, իսկ արտադրական հսկայի աշխատանքը երկրի քայքայված տնտեսության համար ստրատեգիական նշանակություն ուներ:

– 2022 թվականին լրացավ ընկերության գործարկման 70-ամյակը: Ձեր մաղթանքը կոլեկտիվին:

– Ինչպես արդեն նշեցի, երջանիկ եմ, որ այդ կոլեկտիվի ներկայացուցիչ եմ եղել, անդամագրվել եմ 22 տարեկանից, մեծացել ու կոփվել եմ այդ միջավայրում: Այն այսօր էլ հարազատ է ինձ:

Մաղթում եմ բոլոր աշխատակիցներին քաջ առողջություն, թող կարողանան պահպանել ի վերուստ կոմբինատի գործունեության հիմքում դրված բոլոր կանոնները: Ձեռնարկությունը միակն է, որ ստեղծման օրվանից պետության հանդեպ իր պարտքը կատարել և շարունակում է կատարել: Ինչպես գիտեք, դեռևս 1966 թվականին կոմբինատն արժանացել է ԽՍՀՄ բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի: Կարծում եմ՝ ժամանակն է այժմ էլ կառավարության մակարդակով ըստ արժանվույն գնահատել ընկերության ավանդը՝ կրկին երկրի բարձրագույն պարգևի արժանացնելով: Առողջություն՝ բոլորին, խաղաղություն՝ մեր երկրին: //

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Ողջ կյանքը՝ ինքնամոռաց աշխատանքի լավագույն օրինակ

Հայաստանի հանքարդյունաբերության հսկան՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ղեկավարած տնօրեններից առանձնանում է Ֆրունզե Պետրոսյանի անունը:

Երկու անգամ միևնույն գետը չես մտնի. հայտնի ձևակերպումն այս դեպքում կորցնում է իմաստը: Քանզի նա միակն է, ով երկու անգամ եղել է ձեռնարկության տնօրեն: Հայաստանի հանքարդյունաբերության երախտավորը 18 տարի ղեկավարել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը (1977-ից՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ), ևս տասը տարի՝ Հայաստանի գունավոր մետալուրգիայի վարչությունը: Այդ պաշտոնում իր ներդրումն է ունեցել գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների վերելքի, սոցիալ-տնտեսական խնդիրների իրականացման գործում:

Այդ ամենի հիմքերը դրվեցին անցյալ դարի կեսերին: Նախ ընդունվեց պոլիտեխնիկականի ճարտարապետության բաժինը, բայց նախախնամությունը նրա համար այլ ճակատագիր էր նախանշել: Լեռնագործի մասնագիտությունն իր իսկ բնօրրանում նոր և հետաքրքիր աշխատանք ունեցող հեռանկար էր բացում: Մանավանդ որ Քաջարանում դեռևս Մեծ հայրենականից առաջ սկսել էին լեռնային աշխատանքների նախապատրաստումը, որին պետք էր հաջորդեր հանքաքարը հարստացնող ֆաբրիկայի կառուցումը: Եվ ընտրեց հանքագործի մասնագիտությունը: *«Ազնիվ աշխատանքով ապրեցեք կյանքը»,* – Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի 1954 թ. շրջանավարտ Ֆրունզե Պետրոսյանը միշտ հիշում էր ֆակուլտետի դեկանի խոսքը: Իսկ իր ծննդավայրը, ավելի ստույգ՝ Քաջարանի կոմբինատը հմուտ բանվորների, տեխնիկների, ճարտարագետների կարիք էր զգում: Այն ժամանակ մատների վրա կարելի էր համրել նման լեռնային ինժեներներին: Բարձրացավ Գանձասար, անցավ լեռնային ճարտարագետի, արտադրության ղեկավարի աստիճաններով, նախ՝ որպես ստորգետնյա հանքում հերթափոխի պետ, այնուհետև նշանակեցին հանքի գլխավոր ինժեների տեղակալ, հորատման-պայթեցման աշխատանքների ղեկավար, գլխավոր ինժեներ, հանքի պետ: Հինգ տարում՝ հինգ՝ մեկը մյուսից պատասխանատու աշխատանք: Իսկ երբ Գանձասարի բաց և ստորգետնյա հանքերը միավորվեցին, վեց տարի գլխավորեց լեռնային արտադրամասը, երեք տարի՝ կոմբինատի արտադրատեխնիկական բաժինը:

Այդ տարիներին դրսևորվեցին ոչ միայն արտադրության կազմակերպչի հատկանիշները, այլև իրեն դրսևորեց որպես զգայուն ու սրտացավ լեռնագործ: Արդեն խունացած շրջանային «Պղնձի համար» թերթի 1971 թ. մարտի 18-ի համարում նրա մասին տպագրված ակնարկում կարդում ենք. *«Մեր նոր ղեկավարը՝ Ֆրունզե Պետրոսյանը, հոգի տղա է, ասես հանքերի համար է ծնված: Աշխատանքի ժամին հիվանդացա, այդ նկատեց հերթափոխի պետը, հանգիստ ինձ իջեցրեց էլեկտրաքարշի խցիկից, հասցրեց բուժկետ, հետո, ինքը մինչև հերթափոխի ավարտը վարեց էլեկտրաքարշը և հարյուրավոր տոննա հանքաքար տեղափոխեց պահեստարան»,* – այդ մասին գրում է նախկին լեռնագործ, էլեկտրաքարշավար Բաբկեն Թունյանը:

1967-ին վստահեցին կոմբինատի տնօրենի պաշտոնը: Նրա ինժեներական միտքն ուղղված էր այն բանին, թե ինչպես արդյունավետ շահագործել պղնձամոլիբդենային հանքավայրը, ավելի որակյալ հանքաքար արդյունահանել: Բայց ճակատագիրն անակնկալներ էր պատրաստել: 1968 թ. Քաջարանին պատուհասեց ստորերկրյա տարերքը: Իր գործին նվիրված լեռնային ինժեները ողջ կազմակերպչական ունակությունները ներդրեց երկրաշարժի հետևանքները վերացնելու և ձեռնարկության աշխատանքները բնականոն հուն վերադարձնելու համար: 1968 թ. հունիսի 9-ին (երկրաշարժի օրը) կոմբինատի տարբեր արտադրամասերում առաջացել էին վթարներ, ինչի հետևանքով մոտ մեկ շաբաթ խաթարվել էր ձեռնարկության աշխատանքը, իսկ որոշ օրեր նույնիսկ կանգ էին առել բոլոր արտադրական գործընթացները: Սակայն տնօրենի ձեռնարկած կտրուկ միջոցների շնորհիվ, կարճ ժամանակամիջոցում, վերացվեցին վթարները, աշխատանքները վերադարձան բնականոն հուն:

1970 թվական: Հիշարժան տարեթիվ նրա կենսագրության մեջ: Մոսկվայի լեռնային ինստիտուտի դասընթացներից մեկը լեփ-լեցուն էր: «Բարձրադիր բաց հանքերի շահագործման համակարգի ուսումնասիրումը» թեմայով թեկնածուական թեզ էր պաշտպանում ինստիտուտի հեռակա բաժնի ասպիրանտ Ֆրունզե Պետրոսյանը: Թեպետ հուզված էր անչափ, բայց խոսում էր վստահ: Ընդդիմախոսները բարձր կարծիք հայտնեցին երիտասարդ մասնագետի մասին: Գիտական խորհրդի նախագահը ջերմորեն սեղմեց ձեռքը:

– *Ժամանակակից լեռնահանքային արդյունաբերությանը Ձեզ նման գիտակներ շատ են անհրաժեշտ:*

Նույն թվականի օգոստոսին Ֆ. Պետրոսյանին շնորհվեց հանրապետության վաստակավոր ինժեների կոչում:

❶ *Ֆրունզե Պետրոսյանը (ձախից) ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի (աջից) և մի խումբ գիտնականների հետ*

❷ *Ձախից՝ ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստր Պյոտր Լոմակո, ավտոնորոգման գործարանի ինժեներ Ալբերտ Հակոբյան, կոմբինատի տնօրեն Ֆրունզե Պետրոսյան, ավտոնորոգման գործարանի տնօրեն Նորիկ Սաղաթելյան, 1968թ.:*

❸ *Ֆրունզե Պետրոսյանը (աջից) ՀՊՄԿ տնօրեն Մաքսիմ Հակոբյանի հետ:*

Ինչպես արդեն նշեցինք, մոտ տասը տարի ղեկավարեց հանրապետության գունավոր մետալուրգիայի վարչությունը: 1984-ին նա նորից ծննդավայրում էր, որ բազում հոգսեր ուներ, դանդաղ էին իրականացվում կոմբինատի կարողությունների ընդլայնումը, լուծվում քաջարանցիների սոցիալ-կենցաղային, կրթական-մշակութային խնդիրները: *«Մեր ամենագլխավոր հոգսերից մեկը Քաջարանի բնակչության սոցիալական հարցերի շուտափույթ լուծումն է»,* – սիրում էր կրկնել արտադրության ղեկավարը: Եվ, իրոք, նրա պաշտոնավարության օրոք կոմբինատը դարձավ քաղաքաստեղծ ձեռնարկություն: Ամենակարևորը՝ կարողանում էր մարդկանց ոտքի հանել, համախմբել, իր հետևից տանել, կազմակերպել և մինչև վերջ առաջնորդել, որ ղեկավարի համար առաջնային գործոն էր:

Այս դեպքում ևս՝ մի պատառիկ լեռնագործների հետ զրույցից՝ քաղված շրջանային «Դափան» թերթից. *«Երբեմն նորի արմատավորման ուղիների մասին խորհելու, կշռադատելու փոխարեն առանց մտածելու, ջանք թափելու՝ ասում ենք, չէ, դա հնարավոր բան չէ: Բոլորս գիտակցում ենք, թե ինչ է մեզնից պահանջվում, բայց երբեմն դժկամությամբ ենք ձեռնամուխ լինում խնդրի լուծմանը, որովհետև դեռևս մտածում ու գործում ենք ներցիայով, հնացած ու քարացած մեթոդներով: Հարկավոր է պահանջկոտություն և՛ կողքինների, և՛ ինքներս մեր հանդեպ»:*

Եվս մի ուշագրավ կենսագրական փաստ, մի լուսավոր կետ ակնարկի հերոսի կենսագրության մեջ: 1986-ին «Բարձրլեռնային հանքավայրերի հետախուզման ու շահագործման օպտիմալ եղանակի մշակման ու ներդրման համար» ուսումնասիրության համար արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի: Այս գյուտը հետագայում օգտագործվել է աշխարհի նույնանման պայմաններում շահագործվող հանքավայրերում: Իսկ ընդհանրապես նրա ռացիոնալիզատորական առաջարկությունները ձեռնարկությանը զգալի շահույթ են ապահովել: Որպես ռացիոնալիզատոր՝ արժանացել է ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի արծաթե և երկու բրոնզե մեդալների: Եվս մի ուշագրավ փաստ. 1954-ին, երբ ընդունվեց աշխատանքի, կոմբինատը տարեկան 900 հազար տոննա հանքաքարի հանույթ ուներ: Իր տնօրինության վերջին տարում այդ թիվը հասավ 9 միլիոն 200 հազարի:

Ֆրունզե Պետրոսյանի՝ կոմբինատի երկրորդ անգամ ղեկավարումը համընկավ մեր հանրապետության համար դժվարին այն տարիների հետ, երբ երկաթուղին շրջափակվել էր, և կոմբինատին անհրաժեշտ նյութերի մատակարարումն ու խտանյութի առաքումը դժվարացել, բայց նա արժանապատվորեն գլխավորեց ձեռնարկությունը: Դեռ ավելին, ազգային-ազատագրական շարժման տարիներին որոշ տաքգլուխներ հանրապետության ամենախոշոր ձեռնարկության աշխատանքը դադարեցնելու պահանջներ էին դնում, ինչն անընդունելի էր ողջ կյանքը լեռնահանքային արդյունաբերության մեջ անցկացրած մարդու համար: *«Կոմբինատը կանգնեցնելով լեռնագործին կզրկենք ապրուստի միջոցից՝ մի կտոր հացից, ինչը նշանակում է ջուր լցնել թշնամու ջրաղացին»,* – պատասխանում էր իր ընդդիմախոսներին: Նրա համոզմունքն այն էր, որ արտադրությունը պիտի գնա իր բնականոն հունով, քաղաքականությունը՝ իր: Եվ նրա ջանքերի ու նվիրումի շնորհիվ կոմբինատը չթալանվեց ու չփոշիացվեց, ինչպես հանրապետության որոշ հզոր ձեռնարկություններ, արեց հնարավորը, որ իրենից հետո կոմբինատը չհայտնվի ճգնաժամի մեջ:

Հարգանք ու հեղինակություն էր վայելում հանրապետության ինժեներատեխնիկական աշխատողների շրջանում: Նրան գնահատում և նրա հետ հաշվի էին նստում հանրապետության ղեկավարները: 1994-ից Հայաստանի Հանրապետության արդյունաբերության նախարարության ներկայացուցիչն էր Զանգեզուրի տարածաշրջանում, նաև եղել է առևտրի և արդյունաբերության



նախարարի խորհրդական:

Կոմբինատի ձեռք բերած նվաճումների համար պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով:

Ֆրունզե Պետրոսյանը մշտապես իրեն դրսևորեց որպես արտադրության հմուտ կազմակերպիչ, լեռնային գործի գիտակ: Աշխատանքում՝ պահանջկոտ, թերությունների և բացթողումների հանդեպ՝ անհանդուրժող, իսկ կյանքում մեղմ ու զգայուն, շրջապատի նկատմամբ ուշադիր մարդ էր: Մի անգամ շրջանային թերթի սկսնակ լրագրողս աշխատանքի բերումով եղել եմ տնօրենի աշխատասենյակում՝ 1986-ի՞ն, թե՞ 1987-ին: Բայց հիշողությանս մեջ թարմ է, թե նա ինչպես մանրամասն, որպիսի համբերատարությամբ ներկայացրեց աշխատասեղանի դիմացի պատին փակցված տեխնոլոգիական գծապատկերը, դրա յուրաքանչյուր գծի և սլաքի, էլեկտրոնային ազդանշանների նշանակությունը: Իսկ դրանք ցույց էին տալիս ձեռնարկության աշխատանքի ընթացքը՝ սկսած բաց հանքից մինչև խտանյութի ստացումը:

Գործի մարդ լինելուց զատ վաստակաշատ լեռնագործն ապրում էր հասարակական ակտիվ կյանքով, բազում նախասիրություններ ուներ: Ընթերցանությունը նրա համար ավելին էր, քան հոբբին: Խորագիտակ անձնավորություն էր. ինչ մասնագիտության տեր մարդու հետ էլ զրուցում էր, հանդես էր բերում քաջատեղյակություն, և նրան չճանաչողին մնում էր գուշակել, թե ինչ մասնագետ է՝ բժի՞շկ, ֆիզիկո՞ս, մեխանի՞կ, թե՞ տնտեսագետ: Մտերիմները պատմում են, որ նրա հետ սունկ հավաքելու գնալիս պարզապես զարմանում էին, թե ինչպես էր տալիս բոլոր բույսերի հայերեն անվանումները, պատմում յուրաքանչյուրի բուժական հատկությունների մասին:

Սպորտի սիրահար էր, տիրապետում էր մի քանի մարզաձևի, բայց լուրջ հաջողությունների հասել է ծանրամարտում: Դեռևս 1957-ին հանրապետական մրցումներում հաղթող է ճանաչվել, պարգևատրվել «Մետալուրգ» կամավոր մարզական ընկերության պատվոգրով: Վաստակած հանգստի գնալուց հետո մի զբաղմունք ևս գտավ՝ փայտափորագրություն: Իր հոգու ջերմությունն ու գորովը փոխանցում էր փայտին, որ նրա վարժ մատների շնորհիվ շունչ ու կենդանություն էր ստանում՝ դառնալով նախշազարդ բազկաթոռ, ծաղկաման, արձանիկ և սկահակ: Ժամանակ էր գտնում նաև նստել գրասեղանի առջև և թղթին հանձնել աշխարհից և կյանքից ստացած մտորումներն ու պատկերացումները, որոնք ամբողջացել են «Մտորումներ հասուն կյանքի ճանապարհին» գրքույկի մեջ:

Տարիների բազմազբաղ աշխատանքն ընտանեկան ջերմությունը վայելելու տեղ չէր թողնում: Պաշտոնները, որոնք վարել է, մեկը մյուսից պատասխանատու են եղել, կտրել ընտանիքից, երեխաներից: Երեք դստեր և որդու կրթության ու դաստիարակության գործն ընկել է մանկավարժ կնոջ՝ Ամալյայի ուսերին: Գուցե կուզենար, որ միակ արու զավակն ընտրեր իր մասնագիտությունը: Բայց ընտրեց մոր մասնագիտությունը՝ դարձավ էլեկտրաքիմիկոս: Թոռները ևս բարձր են պահում մտավորականի կերպարի հարգը...

Մինչև կյանքի վերջն ապրում էր հանքարդյունաբերության հոգսերով, հետևում այդ ոլորտի զարգացումներին, բարձրաձայնում բնապահպանական խնդիրներ: Գերագույն խորհրդի ամբիոնն օգտագործում էր խոսելու այն մասին, որ մարդու կողմից հանքահումքային պաշարների անխոհեմ շահագործումը խախտել է բնապահպանական հավասարակշռությունը, և պահանջում էր արտակարգ միջոցներ ձեռնարկել: Չէր կարող չխոսել Թեղուտի հանքավայրի մասին: Համոզված էր, որ այդ հանքավայրը չի կարելի բաց եղանակով շահագործել թե՛ բնապահպանական, թե՛ արդյունավետության տեսակետից: Մահվանից օրեր առաջ նամակով իր տեսակետներն էր հայտնել հանրապետության վարչապետին, հանքի արդյունավետ օգտագործման իր մոտեցումները ներկայացրել...

Կյանքից հեռացավ 2010 թվականին՝ 79 տարեկանում:

2013 թվականին, Մաքսիմ Հակոբյանի նախաձեռնությամբ, նրա հուշարձան-կոթողը տեղադրվեց Չանգեզուրի պղնձամոլիբդենայինի բակում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Վաստակած հանգստի գնալուց հետո մի զբաղմունք ևս գտավ՝ փայտափորագրություն: Իր հոգու ջերմությունն ու գորովը փոխանցում էր փայտին, որ նրա վարժ մատների շնորհիվ շունչ ու կենդանություն էր ստանում՝ դառնալով նախշազարդ բազկաթոռ, ծաղկաման, արձանիկ և սկահակ:

ՀԵՏԱՊԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Երազանք, որոնում, վաստակ

Հետ նայելը կյանքի առաջընթացի խթանիչներից է, հետևաբար նախկինների ապրած տարիների իմաստավորումը ապրողների պատվի գործն է:

Մտերիմները, տեխնիկական մտավորականության ավանդապահ սերունդը պատրաստվում են նշել լեռնային գործի նվիրյալ Համլետ Ոսկանյանի ծննդյան 75-ամյակը: Նրա կարճատև կյանքը վեցուկես տասնամյակ էր՝ խորհրդային ժամանակավարտին հավելված լինելով երկու տարի:

Ղեկավարի խոստումը, կարծես, ուրվագծված էր երիտասարդի ճակատագրում. Ղափանի թիվ 2 միջնակարգը, Երևանի հիդրոմելիորատիվ տեխնիկումը, պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտել է գերազանցությամբ: Տոհմիկ լեռնագործի նախասիրությունն առմիշտ նրան կապեց հայրենի Քաջարանին: Հնագույն հանքափորի լեռնային ճարտարագետ (ինժեներ) որդին 1956 թվականից սկսեց իր ամենամեծ քննությունը պղնձամոլիբդենային կոմբինատում:

Քսան տարի առաջ էր հայրը՝ Մանվել Տեր-Մարգարյանը, զոհվել շրջկենտրոնի հանքուղում, անշուշտ՝ աշխատանքի անվտանգության ցածր մակարդակի պատճառով: Եվ Համլետը, բնականաբար, արտադրություն եկավ որպես նորարար: Ստորգետնյա հանքի նորանշանակ ղեկավարն առաջնահերթ համարեց աշխատավորների անվտանգության խնդիրն ու արմատական վերակառուցման համապարփակ ծրագիր ներկայացրեց կոմբինատի ղեկավարությանը: Հետագա տարիներին այդ ամենը վերաճեց համակոմբինատային գործելակերպի, աշխատավորի նկատմամբ ուշադրությունը դարձավ ղեկավարման հիմնական չափանիշը: Ոչ այնքան կոմունիստ ղեկավարի ցուցադրական մարմաջը, որքան Համլետ Մանվելովիչի մարդկային էությունն էր թելադրում՝ դժվար պահին լինել բանվորի կողքին, քաջալերել ու օգնել նրան:

Երբ արդեն բաց հանքի կոլեկտիվի ղեկավարն էր, տարբեր առիթներով անգամ գիշերային հերթափոխին էր Գանձասար գնում, սաղավարտը գլխին լինում հանքիջանցքներում, հետամուտ լինում վթարների վերացմանը, աշխատանքային պայմանների բարելավմանը: Նախաձեռնեց աշխատանքների մեքենայացման-մոդեռնացման աննախընթաց ծրագիր, բարձրացավ ճոպանուղու հուսալիությունը: Արտադրամասերում սկսեցին գործել ճաշարանը, հանդերձարանը, բաղնիքը, քաղլուստունը:

Գործարկման ժամանակներից կոմբինատում խրախուսվում էին նորարարական առաջարկությունները: Փորձաշատ բանվորները մեքենայացման և արտադրության կազմակերպման այլ համակարգերում առաջարկում էին հեղինակային փոփոխություններ ու նորամուծություններ, որոնց արդյունքում ռեսուրսներ էին խնայվում՝ որոշակիորեն ազդելով արտադրանքի ինքնարժեքի իջեցման վրա: Ոսկանյանի ավանդն ավելի ծանրակշիռ եղավ: Նա դարձավ «Հանքահորիզոնից լեռնազանգվածի էջքի եղանակ», «Ապարի մանրատման եղանակ», «Կասկադային բաժանիչ» արտոնագրված գյուտերի հեղինակ:

Ստանձնելով կոմբինատի գլխավոր արտադրագետի պաշտոնը, կազմակերպեց գիտատեխնիկական ընկերություն: Արտադրության գործընթացին զուգահեռ պայմաններ ստեղծվեցին նորարարական-որոնողական աշխատանքների ծավալման համար. գրանցվեցին և արտադրության մեջ ներդրվեցին բանվորների ու ղեկավարների նորամուծությունները: Տեղական տեխնիկական միտքը երբեմն մերժում կամ մասնակիորեն էր ներդնում գիտահետազոտական կենտրոնների «պարտադրած» փոփոխությունները՝ չհամոզվելով դրանց շահավետության մեջ: Ըստ այդմ՝ ինչ-որ տեղ համբավանուն պղնձամոլիբդենայինը հիշեցնում էր կոմբինատ-ինստիտուտ:

Առանց արտադրությունից կտրվելու, Ոսկանյանն ընդունվեց ու ավարտեց Մոսկվայի լեռնային արդյունաբերության ինստիտուտի ասպիրանտուրան, խմբագրեց իր գիտական թեզը և ստացավ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1975-ին նա նշանակվեց կոմբինատի տնօրեն և մեկ տարի անց, երբ միավորվեցին Քաջարանի ու Ղափանի կոմբինատները՝ ՀՊՄԿ գլխավոր տնօրեն: Այդ բարձր պաշտոնում, երբ սովորաբար վրա է հասնում կաբինետային փակվածության անբացատրելի հակումը, ակադեմիկոսների վկայությամբ՝ Ոսկանյանը մնաց հույժ մարդամոտ ու մատչելի: Ընդսմին նա ձեռք զարկեց ավելի մեծ ծրագրերի: Ներկոմբինատային վերակառուցման սեփական ձեռագրի արդյունքում հանքաբարի հանույթը 16 հազար տոննայից հասավ 25-30 հազարի: Ոսկանյանին արդեն վիճակված էր «նստել ու վեր կենալ» ոչ միայն Երևանի, այլև Մոսկվայի ղեկավարների հետ: Պահպանվել է ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Դոլգիխի և նրա երկխոսությանը ներկա ակադեմիկոսի պատումը: «Բանիմաց է, իրազեկ ու հեռատես», – ասել էր Դոլգիխը Ոսկանյանի մասին:

Անձնական շփումը ղեկավար անձանց հետ օգտապաշտական ենթատեքստ ունի. որքան ղեկավարի աստիճանը բարձր է, այնքան շատ է ակնկալիքը: Ինչպես հիմա, դա էլ նախկինում լավ էին հասկանում տեղական ղեկավարները և կարողանում լուծել մի շարք հիմնարար հարցեր: Ոսկանյանը բացառություն չէր. նրա միջնորդություններով Քաջարանում բացվեցին տրիկոտաժի ֆաբրիկա, պրոֆտեխնիկական ուսումնարան, լայն թափ ստացավ հասարակական

Ժամանակի հորձանուտում Համլետ Մանվելովիչը երևելի անհատականություն էր: Բազմիցս ընտրվել է կուսակցական ու պետական մարմիններում, մասնակցել համագումարների, պարգևատրվել շքանշաններով: Հաշվի առնելով նրա կազմակերպչական փորձն ու ընդունակությունները, ժամանակի ոգուն համապատասխան կուսակցությունը նրան գործուղում էր դժվարին տեղամասեր...

կառույցների շինարարությունը:

Կոմբինատի բազմահազարանոց կոլեկտիվի համար հաճելի անակնկալ էր օժանդակ տնտեսության կազմակերպումը: Այն գյուղատնտեսական մթերքներ էր տրամադրում և մատակարարում աշխատավորներին:

Գլխավոր տնօրենը զգալի ավանդ է ներդրել ոչ միայն Քաջարանի, այլև Ղափանի (Կապանի) կառուցապատման մեջ՝ ավտոնորոգման գործարան, մարզահամալիր, հյուրանոց, մշակույթի պալատ, բնակելի տներ և այլն:

Ոսկանյանի կազմակերպչական ունակությունների դրսևորման փայլուն օրինակ էր նաև 1968 թ. Քաջարանում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքները վերացնելու աշխատանքների կազմակերպումը, որը դրվեց նրա վրա՝ որպես փոխտնօրեն: Նրա լարված ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակում բնակարանազուրկ քաջարանցիները ստացան ժամանակավոր տնակներ, դրանից հետո բուռն թափով սկսվեցին Ողջի ավանի (այժմ Քաջարան) կառուցապատման, ինչպես նաև կենսական կարևոր օբյեկտների և պրոբլեմների լուծման գործընթացն ու իրականացումը: Փայտե տնակներ ձեռք բերեց Ողջու, Վ. Հանդի ու Լեռնաձորի անօթևան մնացած բնակչության համար: Դրանք պետք է բերվեին Կարելիայից: Երկու անգամ մեկնեց Պետրոզավոդսկ, առաջին անգամ՝ պատվիրելու, իսկ երկրորդ անգամ՝ տնակները գնացք բարձելու և Հայաստան առաքելու նպատակով: Բեռը տեղ հասնելուն պես նրա ղեկավարությամբ սկսվեցին այդ տնակների հավաքման ու տեղադրման աշխատանքները:

Ուժերի ծաղկման շրջանում Ոսկանյանը «հանդուգն» երազող էր: Կոմբինատի ֆինանսական հնարավորությունների մեծացմանը համեմատ ընդլայնվում էր հայրենանվեր նախաձեռնությունների ցանկը: «Քաջարանշին» տրեստը Կապան ու Քաջարան քաղաքները վեր էր ածել համատարած շինհրապարակի: Լինելով միջավայրի էկոլոգիական խնդիրների հիանալի գիտակ, Ոսկանյանը լավ էր հասկանում, որ լեռնահանքային արտադրությունը, ի վերջո, ծանր հետևանքներ է թողնում մարդկանց ու բնաշխարհի վրա: Միշտ մտահոգ էր մայր գետի, ձորակների, լեռնալանջերի ու մթնոլորտի աղտոտվածության խնդիրներով: Ծրագիր ուներ՝ Նոր Քաջարան կառուցել Վահանավանքի հանդիպակաց արեգունիում՝ Աչաղու-Շհարջիկ տեղանքում: Այդ մասին, կարծես, նախնական համաձայնություններ ուներ Երևանի ու Մոսկվայի ղեկավարության հետ: Մի այլ մտահղացմամբ՝ ծանրաքաշ բեռնատարների երթևեկը քաղաքից հեռացնելու նպատակով, առաջարկում էր նոր ավտոմայրուղի կառուցել Շհարջիկ-Կավարտ-Շահուլյան հատվածով:

Ոսկանյանի գլխավորած կոլեկտիվը միշտ կատարել ու գերակատարել է պետական պլանները: Կառավարությունը հինգ անգամ կոմբինատին հաղթող է ճանաչել մրցության մեջ ու արժանացրել համամիութենական կարմիր դրոշի: Կոլեկտիվը երեք անգամ էլ պարգևատրվել է հանրապետական փոխանցիկ դրոշով: Այդ տարիներին էր, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի անունը գրանցվեց ԽՍՀՄ

Ոսկանյանի գլխավորած կոլեկտիվը միշտ կատարել ու գերակատարել է պետական պլանները: Կառավարությունը հինգ անգամ կոմբինատին հաղթող է ճանաչել մրցության մեջ ու արժանացրել համամիութենական կարմիր դրոշի: Կոլեկտիվը երեք անգամ էլ պարգևատրվել է հանրապետական փոխանցիկ դրոշով:

ժողտնտեսության նվաճումների ցուցահանդեսի պատվո տախտակին:

Ժամանակի հորձանուտում Համլետ Մանվելովիչը երևելի անհատականություն էր: Բազմիցս ընտրվել է կուսակցական ու պետական մարմիններում, մասնակցել համագումարների, պարգևատրվել շքանշան-

ներով: Հաշվի առնելով նրա կազմակերպչական փորձն ու ընդունակությունները, ժամանակի ոգուն համապատասխան կուսակցությունը նրան գործուղում էր դժվար տեղամասեր: Այդպես անտրտունջ նա կարճ ժամանակներով աշխատեց «Հայոսկի» արտադրական միավորման Զոդի կոմբինատի տնօրեն, Ղափանի պղնձահանքայինի գլխավոր արտադրագետ, կյանքի վերջին տարիներին, մինչև թոշակի անցնելը՝ ՀՊՄԿ սոցիալական հարցերով փոխտնօրեն:

Լավ է ասված՝ գործն է անմահ: Հիմա, երբ «ՀՊՄԿ» ՓԲ ընկերությունը համաշխարհային ճանաչման արժանացած ձեռնարկություն է և շեշտակի վերելքի մեծ հեռանկար ունի, տասնամյակներ առաջ տրվածը որքան համեստ, այնքան կարևոր ու մեծարելի է երևում:

ՎՈԼՈԴՅԱ ՈՍԿԱՆՅԱՆ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»,
N14(81), 18 ՀՈՒՆԻՍԻ 2003 Թ.

ՀԵՏՊՈՐՁ ՀԱՅԱՑՔ

Քաջարանի հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքների քրոնիկոն

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ 1925 թվականից սկսվում է հանքավայրի ուսումնասիրության նոր ժամանակաշրջան: Առաջին անգամ Վ. Գ. Գրուշևոյի կողմից կատարվում է հանքավայրի մեծ մասշտաբի երկրաբանական հանույթ: 1929 թ. Գրուշևոյն առաջարկում է Քաջարանի հանքավայրում իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ և սկսած 1931 թ. (ոչ մեծ ընդհատումներով) այն հետախուզվում է մինչև օրս:

1933 թ. Վ. Գ. Գրուշևոյը և Մ. Պ. Ռուսակովը հանքավայրը դասում են հեռանկարային մեծ պաշարներ ունեցող հանքավայրերի թվին: Իսկ 1936 թ. Վ. Մ. Կրեյտերը, լինելով հանքավայրում, հաստատում է հանքաքարի մեծ պաշարների առկայությունը:

1938 թ. հանքավայրի երկրաբանական ուսումնասիրությամբ և մանրամասն քարտեզագրությամբ զբաղվում է Ս. Հ. Մովսիսյանը՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով հանքաքարի կենտրոնական տեղամասի վրա: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքի և մետաղառաջացման հարցերով 1939-1945 թթ. զբաղվել է Ս. Ս. Մկրտչյանը: Նրա գլխավորությամբ կատարվել են Քաջարանի (Փիրդավդան) հանքավայրի մանրամասն երկրաբանական-հետախուզական աշխատանքներ և 1945 թ. ավարտվել է հանքավայրի պաշարների հաշվարկումը և հանքավայրի հանձնումն արդյունաբերությանը:

1939-1943 թթ. հանքավայրի երկրաբանական մանրամասն հետախուզություն են անցկացրել մետալուրգիական հումքի համամիութենական ինստիտուտի (ՎԻՄՍ) երկրաբաններ Կ. Ի. Լյագինը, Ա. Վ. Գուլյաևան, Զ. Վ. Ռուպասովան, Ա. Բ. Կաժդանը, Մ. Ա. Լիտվինը, Ա. Վ. Պեկը և ուրիշներ:

Երկրաքիմիայի և հանքաբանության հարցերով տարբեր ժամանակներում զբաղվել են մի խումբ հետազոտողներ, որոնցից կարելի է նշել Մ. Պ. Իսաենկոյի, Գ. Օ. Փիջյանի և Ա. Ս. Փարամազյանի անունները:

Քաջարանի հանքավայրի ուսումնասիրությանը զուգահեռ ռեգիոնի երկրաբանական հետախուզական և ուսումնասիրության գործում կարևոր աշխատանքներ են կատարել Կ. Ն. Պաֆենգոլցը, Հ. Գ. Մաղաքյանը, Ա. Տ. Ասլանյանը, Վ. Ն. Կոտլյարը, Շ. Ա. Ազիզբեկովը, Յու. Ա. Արապովը, որոնք որոշ չափով շոշափել են մեզ հետաքրքրող մարզում երկրաբանական կառուցվածքի հարցերը:

Կարևոր և ծավալուն երկրաբանահետախուզական աշխատանքներ են կատարել հանքաերկրաբաններ Ի. Ն. Չիրկովը, Գ. Մ. Հարությունյանը, Պ. Պ. Ցամերյանը, Թ. Թադևոսյանը, Ե. Պ. Չիլմանը, Ց. Ա. Գալստյանը, Ա. Ն. Դանիելյանը և ուրիշներ, ովքեր իրենց նպաստն են բերել հանքավայրի ճիշտ և շահավետ շահագործման աշխատանքներին (С. С. Мкртчян, К. А. Карапетян, Т. А. Аревшатян, «Каджаранское медно-молибденовое месторождение», Ер., 1969, стр. 9-10):

Հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքների ղեկավարման, նրա տարածաչափական, հանքաքարի որակական հատկությունների, ինչպես նաև հիմնական մետաղներից բացի այլ ուղեկցող օգտակար տարրերի առկայությունն ու պարունակությունը որոշելու գործում անձնուրաց աշխատանք են կատարել հանրապետության երկրաբանական վարչության Քաջարանի երկրաբանահետախուզական խմբի պետ Թադևոս Թադևոսյանը, հետագայում՝ Ցոլակ Գալստյանը և գլխավոր ինժեներ Եֆիմ Չիլմանը: Նրանք միաժամանակ հանքավայրի պաշարների հաշվարկի համահեղինակներ են՝ Թադևոսյանն առաջին, իսկ Ց. Գալստյանը և Ե. Չիլմանը՝ երկրորդ հաշվարկի:

Հանքավայրի շահագործման առաջին տարիներին հույժ կարևոր էր ստուգել և անհրաժեշտության դեպքում ճշտել ինչպես հանքաքարի որակական ցուցանիշները, այնպես էլ հանքային դաշտի հանքայնացման օրինաչափությունները: Այս խնդիրը հաջողությամբ լուծեցին կոմբինատի գլխավոր երկրաբան Ամոս Դանիելյանի և բաց հանքի երկրաբան Էդիկ Ավետիսյանի ղեկավարած ծառայությունները:

Քաջարանի հանքավայրի երկրաբանական հետախուզական ուսումնասիրությունների գործում ցուցաբերած եռանդուն մասնակցության համար բազմաթիվ երկրաբաններ, այդ թվում՝ Ի. Մաղաքյանը, Ս. Մովսիսյանը, Ս. Մկրտչյանը, Գ. Հարությունյանը և ուրիշներ, արժանացան պետական մրցանակների:

Հայաստանի կառավարությունը, հիմք ընդունելով ԽՍՀՄ երկրաբանական գլխավոր վարչության և գիտությունների ակադեմիայի կողմից 1930-ական թվականների ընթացքում կատարած ուսումնասիրությունները և

Քաջարանի հանքավայրի երկրաբանական հետախուզությունը, սկսվել է 19-րդ դարի կեսերին Գ. Վ. Աբիխի կողմից: Նրանից հետո Զանգեզուրի տարածքի, այդ թվում՝ Քաջարանի հանքավայրի ուսումնասիրությամբ զբաղվել են Գ. Դ. Ծուլուկիձեն, Արխիպովը, Խալաթովը, Ա. Կոնշինը և հատկապես Լ. Կ. Կոնյուշևսկին, ով դեռևս 1911 թ. առաջինն ուշադրություն դարձրեց Քաջարանի հանքավայրում մոլիբդենի առկայության վրա:

Գնահատելով Փիրդավդանի հանքավայրի ժողովրդական խոշոր նշանակությունը, 1938 թվականի ապրիլին ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմատի առջև հարց է բարձրացնում Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրում գործարանային արտադրություն կազմակերպելու, ինչպես նաև նախապատրաստական շինարարական աշխատանքների համար նախատեսված կապիտալ միջոցներն ավելացնելու մասին: Միութենական կառավարությունը հավանություն է տալիս Հայաստանի կառավարության առաջարկությանը: ՀԿ/բ/Կ 11-րդ համագումարի որոշմամբ Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի ուսումնասիրությունն ու արտադրատեխնիկական նախագծերի մշակումը դրվում է երկրաբանական վարչության ուշադրության կենտրոնում, իսկ դրա իրագործումը լայնորեն ծավալվում է երկրի ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյակի տարիներին:

Որոշվում է Հայաստանի պղնձարդյունաբերության հանքաքարի բազան նոր հանքավայրերի հաշվին ընդարձակելու համար առաջին հերթին ուժեղացնել երկրաբանական-հետախուզական աշխատանքների ավարտումը Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրում և ամենամոտ ժամանակում ձեռնամուխ լինել այդ հանքավայրի արդյունաբերական յուրացմանը: Ղափանի պղնձահանքային կոմբինատը լրացուցիչ սարքավորումներ ու մեխանիզմներ է ուղարկում Քաջարանի երկրաբաններին: Հետախուզահորեր փորելուց բացի, կազմակերպվում են նաև մեխանիկական եղանակով խոր փորման աշխատանքներ: Մոսկվայի գունմետ նախագիծ ինստիտուտի մասնագետները, նշելով Քաջարանի ծննդավայրի կարևորությունը, հարց են բարձրացնում այստեղ հանույթը կազմակերպելու բաց եղանակով: Հաշվվել էր բաց եղանակով հանքաքարի հանույթի բարձր արտադրողականությունը և ինքնարժեքը, որի կարողությունները պետք է տասն անգամ գերազանցեին Ղափանի հարստացուցիչ ֆաբրիկայի կարողությունները: Նախատեսվում էր կառուցել փորձնական ֆաբրիկա, ապա երկու տարի շահագործելուց հետո, դարձնել հիմնական: Փորձնական ֆաբրիկայի կառուցման նպատակն էր ուսումնասիրել պղնձի և մոլիբդենի կորզման տեխնոլոգիան և ապագա ֆաբրիկայի համար կադրեր պատրաստելու հնարավորություն ստեղծել: Նախատեսված էր խտանյութի ստացումը Քաջարանում կազմակերպել 1940 թվականից, իսկ 1942 թվականին շահագործման հանձնել ֆաբրիկան՝ իր կարողությունների 80 տոկոսի սահմաններում: 1940 թվականի օգոստոսից հետախուզական հանքերի վարչության հետ միասին այստեղ իր աշխատանքներն է սկսում նաև հանքերի շահագործման վարչությունը: Այդ նույն ամսում Քաջարանի հանքավայրում շահագործման է հանձնվում չորս հանքուղի, որից հանվող հանքաքարը կուտակվում է տեղում՝ հետագայում մշակելու համար: Ղափանից Քաջարան ճանապարհի բացակայությունը դժվարություններ էր առաջացնում խտանյութի տեղափոխման համար: Առաջ է քաշվում այդ հարցի լուծման երեք տարբերակ. առաջին՝ կառուցել Քաջարան-Ղափան ճոպանուղի, երկրորդ՝ խտանյութը տեղափոխել խողովակաշարով, երրորդ՝ կառուցել Ղափան-Քաջարան երկաթուղի:

Ճիշտ է, Ղափան-Քաջարան ավտոճանապարհի կառուցումն օրակարգի խնդիր էր և ավելի էժան, բայց մեքենաների պակասը չէր կարող ապահովել հանքաքարի տեղափոխումը ֆաբրիկա և այնտեղից խտանյութի տեղափոխումը Ղափան: Քննարկելով ներկայացված տարբերակները, որոշվեց կառուցել Քաջարան-Ղափան ճոպանուղին, որի շինարարական աշխատանքները պետք է կատարվեին երրորդ հնգամյակի ընթացքում: Այդ տարիներին Քաջարանում երկրաբանական-հետախուզական աշխատանքների համար հատկացվեց 5,3 միլիոն ռուբլի: Քաջարանում կառուցվող նոր պղնձաձուլական գործարանի կարողությունները 2,5 անգամ պետք է գերազանցեին Ալավերդու ձուլարանի կարողությունները: Այդ նպատակի համար հատկացվում է 12 միլիոն ռուբլի: Հարստացուցիչ ֆաբրիկա կառուցելու համար հատկացվում է 24,7 միլիոն ռուբլի: Համեմատության համար նշենք, որ Ղափանի հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման վրա ծախսվել է ընդամենը 4 միլիոն ռուբլի:

Քաջարանի պղնձաձուլական գործարանն ու հարստացուցիչ ֆաբրիկան էլեկտրաէներգիայով ապահովելու համար առաջ է քաշվում Որոտան (Բազարչայ) կասկադի կառուցման հարցը: Առավել մեծ դժվարություն էր ներկայացնում հանքերն ու գործարանն աշխատուժով ապահովելու խնդիրը: Նախնական տվյալների համաձայն, հանքերի շահագործման համար անհրաժեշտ կլիներ շուրջ 2300 մարդ, իսկ լրիվ կարողություններով աշխատելու դեպքում՝ 3000 մարդ: Եթե նկատի ունենանք, որ մոտ 2000 մարդ այդ ժամանակ աշխատում էր Ղափանի պղնձահանքերում, ապա ակնհայտ էր, որ Ղափանն այդ ժամանակ հնարավորություն չուներ 5000 մարդ ապահովեր շրջանի հանքարդյունաբերության համար: Հետևաբար, Քաջարանը բանվորական աշխատուժով ապահովելու համար անհրաժեշտ էր բանվորներ և մասնագետներ հրավիրել թե՛ հանրապետության տարբեր շրջաններից, թե՛ միութենական այլ հանրապետություններից: Եվ քանի որ հանքավայրին մոտ գտնվող Քաջարան, Ողջի, Աթկըզ, Վերին Հանդ գյուղերը հնարավորություն չունեին նախատեսվող մեծաքանակ աշխատողներին բնակարաններ հատկացնել, ուստի անհրաժեշտ էր սկսել նաև բնակարանային ծավալուն շինարարություն: Այդ նպատակի համար նախատեսվում է հատկացնել 18,2 միլիոն ռուբլի: Ընդամենը՝ Քաջարանի պղնձամոլիբդենային ծննդավայրի շահագործման, պղնձաձուլական գործարանի և հարստացուցիչ ֆաբրիկայի շինարարության համար երրորդ հնգամյակի տարիներին նախատեսվում էր հատկացնել 113 միլիոն ռուբլի:

Հիմք ընդունելով այդ հանքավայրի պղնձի, մոլիբդենի հարուստ պաշարները, ԽՍՀՄ ժողկոմատը և ՀԱԿ/բ/Կ կենտկոմը 1941 թվականի հունվարի 30-ին որոշում ընդունեցին Զանգեզուրում (Քաջարանի տարածք) պղնձամոլիբդենային կոմբինատ կառուցելու մասին: Դեռևս 1939 թվականին, նկատի ունենալով այդ խոշոր կառույցի շինարարության համար բանվորական ուժի սպասվելիք մեծաքանակ ներհոսքը, Հայաստանի կառավարությունը որոշում կայացրեց կազմել Քաջարանում կառուցվելիք բանվորական ավանի առաջին գլխավոր հատակագիծը: Աշխատանքներն սկսվեցին, սակայն վերահաս պատերազմի պատճառով շուտով ընդհատվեցին: Դրանք վերսկսվեցին միայն պատերազմից հետո, երբ լայն թափով սկսվել էին կոմբինատի կառուցման աշխատանքները:

Քաջարանի աշխարհագրական դիրքը, կլիմայական անբարենպաստ պայմանները, բարեկարգ ճանապարհների բացակայությունը բավականին մեծ դժվարություններ էին ստեղծում պղնձամոլիբդենային կոմբինատի շինարարության ծավալուն աշխատանքներն սկսելու՝ անհրաժեշտ շինանյութերի, սարքավորումների և մեխանիզմի փոխադրման համար: Այդ պատճառով որոշվեց առաջին հերթին կարգավորել ճանապարհները՝ Ղափան-Քաջարան ճանապարհը: Նոր ճանապարհի նախագծային փաստաթղթերը կազմելու համար ստեղծվեց պետական հանձնաժողով, որը գլխավորում էր Գունավոր մետալուրգիայի մինիստրության նախագծային ինստիտուտի գլխավոր ինժեներ Ա. Խոբոտովը: Հանձնաժողովը 1941 թվականի մարտի 12-ին մինիստրությանը ներկայացրեց Ղափան-Քաջարան խճուղային նոր ճանապարհի նախագծային փաստաթղթերը: Որոշվեց շինարարությունն սկսել նույն թվականի ապրիլից: Սակայն այդպես էլ շինարարությանն ընթացք չտրվեց:

Վերահաս պատերազմը հարկադրեց դադարեցնել բոլոր շինարարական աշխատանքները: Շրջանի լեռնահանքային արդյունաբերության համար ծանր պայմաններ են ստեղծվում. ռազմաճակատ է մեկնում առաջավոր և երիտասարդ բանվորների մեծ մասը, զգացվում է վառե-

լանյութի և հումքի սուր պակաս: Հանքաքարի հանույթի ծավալների կրճատման պատճառով Ղափանի հարստացուցիչ ֆաբրիկան աշխատում է թերծանրաբեռնվածությամբ: 1943 թվականին հանքաքարի հանույթը 1941 թվականին հանված հանքաքարի հանույթի համեմատությամբ կազմում էր 52, 3%:

Այնուհանդերձ, պատերազմ էր և երկրին ավելի ու ավելի շատ պղինձ էր անհրաժեշտ: Երկրի ռազմական արտադրության սպասարկման գործում Ղափանի և Ալավերդու պղնձաձուլական գործարանների դերն ավելի է մեծանում: Ռազմական արտադրության պահանջները կատարելու համար, ինչպես մյուս արդյունաբերական ձեռնարկությունները, պատերազմի ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան վերակառուցվում է նաև երկրամասի լեռնահանքային արդյունաբերությունը: Փոխվում է պղնձի տեսականին, կատարելագործվում են նաև արտադրության պրոցեսները: 1943 թվականից սկսած ավելանում է նաև հանքաքարի հանույթը, թեպետ մինչև 1945 թվականը ներառյալ այն չի հասնում 1940 թվականի մակարդակին: Պղնձի արտադրությունը մեծացնելու համար, որի կարիքն ավելի մեծ էր, քան երբևէ, երկրամասի լեռնագործները կրկնակի հերթափոխի են կանգնում ռազմաճակատ մեկնած իրենց աշխատանքային ընկերների փոխարեն: Ռազմաճակատ մեկնած տղամարդկանց փոխարեն հանքերում յոթ ամսվա ընթացքում աշխատանքի է ընդունվում ավելի քան 200 կին: Այդ երիտասարդ և լեռնային աշխատանքին քիչ տեղյակ աշխատողների համար կազմակերպվում է տեխնիկական ուսուցման 11 խմբակ:

Կրկին օրակարգի հարց են դառնում Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կառուցման աշխատանքները, ճանապարհի կառուցումը դառնում է օրվա հրամայականը:

1943 թվական, հունիսի 6: Հայաստանի կոմկուսի Կենտկոմում բյուրոյի նիստ էր: Կենտկոմի առաջին քարտուղար Գր. Հարությունյանի ընդունարանում նստած էր միջահասակ, նիհարադեմ մի մարդ: Շուտով ընդունարանում հայտարարվեց.

- Ո՞վ է Մելքումյանը, մտեք նիստերի դահլիճ:

Տղամարդը վեր կացավ, երկչոտ քայլերով մտավ նիստերի դահլիճ՝ մատնացույց արված դռնով: Հենց շեմից անմիջապես իր վրա զգաց Կենտկոմի բյուրոյի անդամների ուշադիր հայացքները: «Սրանք որտեղո՞վ մտան դահլիճ, որ ես չնկատեցի»,- առաջին պահին մտածեց Մելքումյանը:

- Նստեք, - կարգադրելու նման ասաց Կենտկոմի քարտուղար Աղասի Չարչոգլյանը: Նա կանգնած էր սեղանի գլխավերևում, ձեռքին լիքը թղթապանակ:

Առավել մեծ դժվարություն էր ներկայացնում հանքերն ու գործարանն աշխատուժով ապահովելու խնդիրը: Նախնական տվյալների համաձայն, հանքերի շահագործման համար անհրաժեշտ կլիներ շուրջ 2300 մարդ, իսկ լրիվ կարողություններով աշխատելու դեպքում՝ 3000 մարդ:

Մելքումյանը նոր միայն նստել էր, երբ Չարչոգլյանը զրնգուն ձայնով խոսեց, դիմելով ընդհանուրին.

- Հարց քսանչորս: Քաջարանշին վարչության պետ նշանակելու մասին: Առաջարկություն կա Քաջարանշին վարչության պետ նշանակել Սեդրակ Մելքումյանին: Նրան ուղղված հարցեր կա՞ն:

Բյուրոյի անդամներից մեկը հարցրեց.

- Քանի՞ տարեկան ես:

- Քառասուներեք, - ոտքի կանգնելով՝ պատասխանեց Մելքումյանը:

- Ինչո՞ւ ծառայության մեջ չես:

- Ծառայությունից նոր եմ վերադարձել, վիրավոր եմ, - մի տեսակ մեղավոր ու ամաչկոտ լսվեց պատասխանը:

Ուրիշ հարց տվողներ չեղան: Ոտքի կանգնեց Կենտկոմի առաջին քարտուղար **Գրիգոր Հարությունյանը:**

- Ընկերներ, դժվար ժամանակներ են, բայց մենք պարտավոր ենք այսօր մտածել մեր երկրի վաղվա մասին: Քաջարանի պղնձամոլիբդենային հանքերը շահագործելու և պղնձամոլիբդենային կոմբինատի կառուցումն սկսելու համար անհրաժեշտ է ծավալել շինարարական աշխատանքներ: Այդ աշխատանքներն սկսում ենք ճանապարհաշինությունից,- դիմելով արդեն Մելքումյանին, նա շարունակեց: - Հաշվի առնք, պատերազմն ավարտվելուն պես Քաջարանին կտրամադրվեն ծանր մեքենաներ, սարքավորումներ: Շնորհավորում եմ, կարող եք գնալ:

Սակայն, չնայած բյուրոյի որոշմանը, Ղափան-Քաջարան ճանապարհի շինարարությունն սկսվեց ավելի ուշ՝ 1944 թվականին: Նույն թվականից սկսվում են նաև Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կառուցման աշխատանքները: Ճանապարհի շինարարության համար շրջանի գյուղերից և հանրապետության տարբեր շրջաններից հավաքագրում են բանվորներ ու շինարարական աշխատանքների մասնագետներ: Ճանապարհի շինարարությունն առաջ էր գնում շատ դանդաղորեն: Ղափան-Քաջարան ճանապարհի կենտրոնական հատվածում տարածված էին գլաքարային բավական հզոր, տեղ-տեղ մի քանի մետրի հասնող շերտեր, որոնք լուրջ խոչընդոտ էին ճանապարհաշինության համար: Հորդառատ անձրևների ժամանակ գլաքարային շերտերի վրայով անցնում էին լանջերն ի վար սուրացող արագահոս առվակներ, որոնք քշում-տանում էին հողի շերտը: Քարերը մերկանում էին, երբեմն գլոր-գլոր, իրար զարկվելով, երբեմն էլ հեղեղվելով իջնում էին ճանապարհի վրա, կույտ-կույտ, բլուր-բլուր փակում ճամփան: Քարերը կոկ էին, բազմաձև, կարծր ու ծանր: Դրանց թափվելուց հետո ճանապարհի մաքրումը շատ դժվար էր ու աշխատատար: Քանիցս արդեն բացված ճանապարհը կրկին փակվել է սարերից իջնող հեղեղների բերած քար ու ավազով: Ճիշտ է, Ղափան-Քաջարան ավտոճանապարհը շահագործման էր հանձնվել և առաջին ավտոմեքենան Քաջարան էր մտել 1939 թվականի հունիսի 10-ին, որի կապակցությամբ շրջանային «Պղնձի համար» թերթը գրել է. «Ղափան-Փիրդավդան ճանապարհը 32 կիլոմետր է: Այդտեղ բնակվողներն այլևս իրենց կտրված չեն համարի շրջկենտրոնից, եթե հարկ լինի, ամեն մեկը մեկուկես ժամում կարող է գալ Ղափան, իսկ այնտեղից ինքնաթիռով մեկ ժամ 15 րոպեում հասնել Երևան»:

Սակայն Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի նախագծային հզորությունների ավելացման, ինչպես նաև տեխնիկական պայմաններին համապատասխանեցնելու նպատակով այդ ճանապարհի նախագծային փաստաթղթերը մի քանի անգամ փոփոխության ենթարկվեցին: 1947 թվականին Հայաստանի ճանապարհների և կամրջաշինության վարչության կողմից ներկայացվեց նոր նախագիծ: Սակայն, քանի որ այստեղ չէին ընդգրկված 1941 թվականի նախագծով նախատեսված որոշ ինժեներական կառույցների և լեռնային աշխատանքների վերաբերյալ նախնական գծագրերը, անհրաժեշտություն ծագեց կազմելու նոր նախագիծ: Աշխա-

տանքները դարձյալ ձգձգվեցին: Ի վերջո, 1949 թվականի հուլիսի 20-ին «Հայպղինձ» տրեստը քննարկման դրեց «Անդրգուլմետ» տրեստի թիվ 2 շինվարչության կողմից ներկայացված Կապան-Քաջարան ավտոմայրուղու կառուցման նոր նախագիծը: Ճանապարհի թողունակությունը ավելացնելու և հզորությունը մեծացնելու նպատակով կատարված մի քանի փոփոխություններով հանդերձ, նոր նախագիծն ընդունվեց: 1949 թվականի օգոստոսի 2-ին կայացած ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի նիստում որոշում կայացվեց հանձնարարել «Անդրկովկասգուլմետշին» տրեստի կառավարիչ Մ. Սարուխանյանին և թիվ 2 շինմոնտաժային վարչության պետ Հ. Թումանյանին՝ մինչև 1949 թվականի նոյեմբերի 1-ը ավարտել և շահագործման հանձնել Ղափան-Քաջարան ճանապարհը:

Մի քանի օր անց, օգոստոսի 8-ին, Քաջարանում կայացավ նոր խորհրդակցություն՝ ճանապարհի շինարարության ընթացքի վերաբերյալ: Խորհրդակցությունում Գունավոր մետալուրգիայի նախագծային ինստիտուտի տրանսպորտային բաժնի պետ Ա. Բրիմմերը ներկայացրեց այն անհետաձգելի աշխատանքները, որոնք անհրաժեշտ էր իրականացնել առաջին հերթին. ճանապարհի երկարությամբ որոշ տեղամասերում կառուցել բետոնե կամ հիմնաքարային հենապատեր՝ 4-5 մետր բարձրությամբ, ճանապարհի որոշ հատվածներում անցունակությունը լիարժեք ապահովելու համար նրա լայնությունը հասցնել մինչև 7 մետրի, ճանապարհի ամբողջ երկարությամբ ապահովել ջրահեռացման անցուղիներ և այլ: Ճանապարհի շինարարությունը, ժամանակին կատարված կապիտալ ներդրումների, ստացած անհրաժեշտ սարքավորումների և մեխանիզմների շնորհիվ, ընթացավ ավելի լայն ծավալներով՝ շահագործման հանձնվելով պղնձամոլիբդենային կոմբինատի կառուցման հետ միաժամանակ:

Բարեկարգ ճանապարհի բացակայությունը բացասաբար էր անդրադառնում Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կառուցման աշխատանքների վրա, որը վերսկսվելով 1944 թվականից, լայն թափ ստացավ հատկապես պատերազմի ավարտից հետո: Բելի յուրդ լեռան, որը վերանվանվեց Գանձասար, հարավային լանջին սկսվում են Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի փորձնական հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման աշխատանքները: Ապագա կոմբինատին էլեկտրաէներգիա մատակարարելու համար Ղափան քաղաքում քարածխի բազայի վրա կառուցվում է նոր ջերմակայան, իսկ Ողջի գետի վրա սկսվում են թիվ 1 և թիվ 2 հէկ-երի կառուցման աշխատանքները: Շրջանի գյուղերից և հանրապետության տարբեր շրջաններից (Գորիսից, Սիսիանից, Մեղրիից, Եղեգնաձորից, Վարդենիսից, Մարտունուց, Կամոյից և այլն), միութենական տարբեր հանրապետություններից Քաջարանի կոմբինատի շինարարությունում աշխատելու եկան մոտ 1500 մարդ, այդ թվում 18 տարբեր ազգերի ներկայացուցիչներ (ռուսներ, ուկրաինացիներ, բելառուսներ, ուզբեկներ, վրացիներ, ղազախներ և այլն): Այստեղ աշխատում էր նաև ռումինացիներից կազմված առանձին բրիգադ, որի նկատմամբ ցուցաբերվում էր առանձնահատուկ վերաբերմունք:

Ի դեպ, Ղափան-Քաջարան ճանապարհային տեղամասերից մեկի պետն էր Հայրենական պատերազմի տարիներին Պերեկոպի պարանոցի մարտերում իրեն փառքով պսակած, Խորհրդային Միության հերոս Ռուբեն Հակոբյանը: Անմիջապես նրա ղեկավարությամբ էր, որ ճանապարհի ամենաբարդ տեղամասերից մեկում՝ «Սուրի կապ» կոչված ահռելի ժայռի միջով, պայթեցնելով ու տեղահան անելով ժայռերը, ուղի բացեցին:

Ահա, թե ինչ է պատմում ինքը՝ Ռ. Հակոբյանը, այդ մասին: Պատմածը մեջ է բերում Գ. Արևյանն իր «Հանքաշխարհ» գրքում.

– Մեծ պայթեցումը մի հրաշք բան էր: Ժայռի կողերը փորելով 25 խոր հոր բացեցինք՝ բոլոր հորերն էլ խորքում լայնացնելով, 3-4 մետր տրամագծով անձավներ դարձրինք: Այնուհետև 250 տոննա պայթուցիկ նյութերը զգուշությամբ իջեցնելով, տեղավորեցինք անձավներում՝ յուրաքանչյուրում 3-4 տոննա, իսկ ավելի ընդարձակներում մինչև 10-20 տոննա: Բոլոր հոր-անձավները ծածկեցինք ամուր, տեխնիկական բոլոր կանոններով: Միացուցիչ էլեկտրալարերը տարվեցին հեռու, լեռան այն կողմը, հինգ կիլոմետրի վրա: Լեռը պատրաստ էր պայթեցվելու: Հեռվից կարմիր դրոշներով ազդանշան տրվեց: Ճիշտ ժամը 1-ին, լեռան մյուս կողմից էլեկտրատեխնիկը միացրեց հոսանքը:

... Հանկարծ վիթխարի լեռը բարձրացավ 200 մետր երկարությամբ և մոտ մեկ կիլոմետր բարձրությամբ մի առասպելական սյուն կանգնեց մեր առջև: Մոտ տասը փթանոց քարեր նետվել էին երկու կիլոմետր հեռավորության վրա: Պայթյունի վայրում, ուր վիթխարի լեռը կիսվել էր, գլխավոր ինժեները բացատրում էր բոլորին.

- Այս լեռը ճեղքելու և հիսուն հազար խորանարդ մետր հողային ու ժայռային աշխատանք կատարելու համար երկու հազար բանվոր պետք է աշխատեին քառասուն օր: Բայց ընդամենը մեկ ամսում 60 բանվոր բացեցին հոր-անձավները:

Մարդիկ, հաջող պայթեցումից ուրախ ու հուզված, մոտենում էին միմյանց, ողջագուրվում. այս կերպ շնորհավորելով հաղթանակը՝ հզոր ժայռի ճեղքումը:

Կոմբինատի շինարարության համար կառավարությունը հողահատկացումներ կատարեց շրջակա Ողջի և Քաջարան գյուղերի հողատարածքներից: Քաջարանշին վարչության պետ Ա. Օգանովի 1946 թվականի հունիսի 12-ի՝ Հայպղինձ տրեստին ուղղված գրությունից տեղեկանում ենք, որ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի շինարարության համար անհրաժեշտ է Ողջի և Քաջարան գյուղերի հողատարածքներն անջատել և Քաջարանշինին հատկացնել ընդամենը 65,9 հեկտար հող: Նույն թվականի մարտի 2-ի մի այլ գրության մեջ Ա. Օգանովը պահանջում է Քաջարանշինին հատկացնել 344,7 հա հողատարածք, որից 260,89 հեկտարը Ողջիի կոլտնտեսության, իսկ 83,8 հեկտարը՝ Քաջարանի կոլտնտեսության հողատարածքներից: Հայաստանի հողագործության մինիստրությունը առարկեց այդ հողահատկացումներին, համաձայնվելով հատկացնել միայն Քաջարանի կոլտնտեսության հողերից: Ողջի գյուղի կոլտնտեսության հողերից հողահատկացման վերաբերյալ հողագործության մինիստրությունը պնդում էր այն տեսակետը, որ Ողջի գյուղի կոլտնտեսությունից հողահատկացումը կատարվի աստիճանաբար՝ յուրաքանչյուր տարվա շինարարության պահանջներից ելնելով: Իսկ, որպեսզի շինարարությունը կանգ չառնի, մինիստրությունն համաձայնվում էր Ողջիի հողատարածքներից հատկացնել 15 հա հողամաս, միաժամանակ նաև առաջարկելով լրացուցիչ հողատարածքներ պահանջելու դեպքում հարցը քննարկել երկու գյուղերի կոլտնտեսությունների

Ի դեպ, Ղափան-Քաջարան ճանապարհային տեղամասերից մեկի պետն էր Հայրենական պատերազմի տարիներին Պերեկոպի պարանոցի մարտերում իրեն փառքով պսակած, Խորհրդային Միության հերոս Ռուբեն Հակոբյանը: Անմիջապես նրա ղեկավարությամբ էր, որ ճանապարհի ամենաբարդ տեղամասերից մեկում՝ «Սուրի կապ» կոչված ահռելի ժայռի միջով, պայթեցնելով ու տեղահան անելով ժայռերը, ուղի բացեցին:

ընդհանուր ժողովում:

Գրագրությունները, խնդրագրերն ու պահանջագրերն արդյունք չէին տալիս: Ի վերջո, Հայաստանի կառավարության միջնորդությամբ ԽՍՀՄ մինիստրների խորհրդի հանձնարարությամբ հողագործության մինիստրությունը տեղի տվեց:

Չնայած հատկացված խոշոր միջոցներին և աշխատուժով ապահովված լինելուն՝ կոմբինատի շինարարությունը դանդաղորեն էր առաջ ընթանում: Ցածր էր աշխատանքի արտադրողականությունը, չէր բավարարում փորձված բանվորական ուժը, վատ էր շինարարական կադրերի վերապատրաստումը: Աշխատանքի վատ կազմակերպման և աշխատանքային թույլ կարգապահության հետևանքով մասսայաբար թերակատարվում էին առաջադրանքները: 1946 թվականին գործավարձով աշխատող բանվորների 65,5%-ը չկատարեց աշխատանքային նորմաները: Դժվար էին առաջ գնում լեռնաշինարարական աշխատանքները: 300 աշխատանքային օրվա փոխարեն բանվորներն աշխատանքի էին դուրս եկել ընդամենը 240 օր: Կենցաղային վատ պայմանների ու անբավարար մատակարարման պայմաններում մեծանում էր աշխատողների արտահոսքը: Նույն 1946 թվականի ընթացքում «Քաջարանշինից» հեռացել էին 422 բանվոր-ծառայողներ, որոնցից 11-ը՝ մասնագետներ: Արտադրությունից ինքնակամ հեռացել էր 56 մարդ, տնտեսական դրության պատճառով՝ 182, սովորելու էր մեկնել 42, հիվանդության և այլ պատճառներով՝ 121 մարդ:

1947 թվականի հունվարի 1-ի դրությամբ Քաջարանի հանքերում, ֆաբրիկայի և ճանապարհների շինարարության մեջ ընդգրկված բանվոր-ծառայողների թիվը հասնում էր մոտ 1260-ի, որից բանվորներ էին 840-ը, ինժեներատեխնիկական անձնակազմը 118, ծառայողներ և այլ աշխատողներ՝ 300 մարդ: Զգացվում էր որակյալ բանվորների, հատկապես հանքափորների, ամրակապողների և վագոնավարների մեծ պահանջ: Դեռևս 1946 թվականի վերջում «Քաջարանշինում» ստեղծվեց ատեստացիոն հանձնաժողով, որի նպատակը մեկն էր՝ տալ առաջին և երկրորդ կարգի վարպետի կոչում: Ատեստացիայի ենթարկվեցին նաև բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող բանվոր-ծառայողները: Արդյունքում՝ բանվոր-ծառայողներից առաջ քաշվեցին 9 հերթափոխի ղեկավարներ, 5 ցեխի և բաժնի վարիչներ, 2 արտադրամասի վարպետներ, 4 հանքի երկրաբաններ և մարկշեյդերներ:

1947 թվականին հանրապետության մամուլում երևացին Քաջարանշինի առաջավորների անունները՝ Հ. Հարությունյանը և Գ. Թումանյանն իրենց աշխատանքային նորմաները կատարեցին 250 տոկոսով, Բ. Հարությունյանը և Ու. Գրիգորյանը՝ նորմաները կատարեցին 200%-ով, Ա. Հայրապետյանը, Լ. Մաթևոսյանը, Լ. Մարգարյանը, Ս. Պետրոսյանը՝ 150-200%-ով, իրենց ցուցանիշներով արդեն աչքի էին ընկել թիվ 5 և 6 հանքից Արտեմ Անտոնյանը, Աթանես Գրիգորյանը, թիվ 1 և 2 հանքից՝ Արշավիր Հովհաննիսյանը, Մարիա Վայցեկովսկայան:

Քաջարանի փորձնական հարստացուցիչ ֆաբրիկայի տնօրենն էր Գ. Ն. Բեզրոդնին, ով ղեկավարում էր ֆաբրիկայի կառուցման, արտադրամասերի ու հանքերի բնականոն աշխատանքները:

ՀԱՏՎԱԾ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ԳՐՔԻՑ (ԵՐԵՎԱՆ-2004)

ՀԵՏԱՂՐՔ ՀԱՅԱՑՔ

Նշանավոր մարդկանց այցը Քաջարան

1978թ. հոկտեմբերի 26-ին Քաջարան այցելեց ամերիկահայ անվանի գրող Վիլյամ Սարոյանը: Տպավորված Գանձասարում տեսածով՝ վարպետը հուզմունքով դիմեց ուղեկիցներին ասելով. «...Ես հարստություն է, ես հրաշք է: Ուրախ, երջանիկ եմ, որ իմ ժողովրդինն է ամենը: Քաջարանն անուշ քաղաք է, կերևա՝ մարդիկ էլ խիստ գործավոր են... Շատ հեռու կերթամ, բայց սիրտս ձեր քով կթողնիմ, իմ սիրտն իմ լեռներում է...»:

Անաստաս Միկոյանը հանրապետության ղեկավարության հետ Գանձասարում

ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հերթական այցը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, 1984թ.

ՌՍՖՍՀ մշակույթի հայտնի գործիչները Քաջարանում, 1987թ.

ԽՍՀՄ Գունավոր մետալուրգիայի մինիստր Պյոտր Լոմակոն Քաջարանում

ԽՍՀՄ Տիեզերագնաց-օդաչուները հյուրընկալվել են լեռնագործներին, 1987թ.

«Սյունիք» օդանավակայանի և 2023 թ. ապրիլի 26-ին իրականացված Երևան-Կապան չվերթի մասին

ՁՊՄԿ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ

2023 թ. ապրիլի 26-ին Կապանի «Սյունիք» օդանավակայանում Երևանի ժամանակով 10:58-ին բարեհաջող վայրէջք է կատարել L-410–UVP E20 չեխական արտադրության մարդատար օդանավը: Օդանավը «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից օդ է բարձրացել ժամը 10:10-ին:

Քաղաքացիական ավիացայի կոմիտեից տեղեկացրել են նաև, որ Կապանի օդանավակայանը վերանորոգվել է միջազգային չափանիշների համաձայն և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից սերտիֆիկացվել է 2020 թվականին: Ըստ հաղորդագրության՝ այս թռիչքը պատմական էր, քանի որ 90-ականներից Կապանի օդանավակայանում թռիչքներ չեն իրականացվել՝ բացառությամբ 2017 թվականին իրականացված մեկ մասնավոր թռիչքի:

Թե երբ կսկսվեն Երևան-Կապան և հակառակ ուղղությամբ կանոնավոր ուղևորափոխադրումները՝ դեռ հստակ չէ, բայց թռիչքը կտևի մոտ 45 րոպե:

Ի՞նչ կարժենա ավիատոմսը. այդ հարցին դեռ վաղ է անդրադառնալ. *«Այս փորձնական թռիչքից հետո պետք է ուսումնասիրվեն սխեմաները, ստացված բոլոր արդյունքները, եթե կարիք լինի լրամշակելու՝ կլրամշակվեն, նոր հետո կկարողանանք խոսել թռիչքների մասին»*, – նշել է Քաղավիացիայի կոմիտեի ներկայացուցիչը :

* * *

Ապրիլի 26-ին իրականացված Երևան-Կապան առաջին փորձնական չվերթն իրականացվել է «Նովեյր» ավիաընկերության կողմից՝ L410 չեխական արտադրության ինքնաթիռով, որը պատկանում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամին:

«Սյունիք» օդանավակայանի շինարարությունը, գույքի և ինքնաթիռի ձեռքբերումը, պահպանման ծախսերն իրականացվել են և այժմ իրականացվում են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի միջոցներով՝

- **2,5 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ՝** օդանավակայանի, թռիչքուղու և այլ ենթակառուցվածքների կառուցման,
- **300 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝** գույքի ձեռքբերման, վերապատրաստման և օդանավակայանի այլ ծախսերի,
- **7 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ՝** օդանավի ձեռքբերման և պահպանության ծախսերի համար:

Այսպիսով՝ ընդհանուր առմամբ օդանավակայանի շինարարության, գույքի և ինքնաթիռի ձեռքբերման համար ներդրվել է ավելի քան 10 միլիարդ դրամ՝ բացառապես Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից տրամադրված միջոցներով:

ՀԱՍԱՐԻ ԳՈՏՈՒԼԲՈՒԸ

Տեխնիկական վերազինման խնդիրները

Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը 2022-ին կրկնապատկել է հարկերը

Ըստ Պետեկամուտների կոմիտեի հրապարակման՝ 2022-ի 1000 խոշոր հարկատուների ցանկում առաջինը կամ Հայաստանի ամենամեծ հարկատուն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է՝ վճարած մոտ 144 միլիարդ դրամ հարկերով: 2021-ի համեմատ կոմբինատն ավելի քան կրկնապատկել է հարկերը:

Կոմբինատի կողմից հարկերի այսպիսի մեծացումը ենթադրաբար կապված է միջազգային շուկայում պղնձի բարձր գնի հետ: Բացի այդ, կառավարությունը 2021-ից հանքարդյունաբերողների համար սահմանել էր պղնձի, մոլիբդենի ու ֆեռոմոլիբդենի համար արտահանման տուրք: Սա իր հերթին նպաստել է ՀՊՄԿ-ի կողմից հարկերի ավելացմանը: Սրան պետք է գումարել նաև 15 միլիարդ դրամի վերականգնումը, որ իրականացրել է պղնձամոլիբդենայինը՝ ՊԵԿ-ում քննվող քրեական գործի շրջանակում:



«ՀՊՄԿ» ՓԲԸ կողմից վերջին 5 տարիներին ՀՀ պետական բյուջե վճարվող հարկերի ծավալը /մլրդ դրամ/

Համարի բովանդակությունը

«ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ԲԱԺՆԵՏԵՐԸ

«Գեոպրոմայնինգ» ընկերությունը. 15 տարի՝ Հայաստանի տնտեսության առաջատարների մեջ 2

Մենք պատմություն ենք կերտում (ռեսուրսներ ի բարօրություն) 3

«Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության տնօրենությունը 4

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

«Գեոպրոմայնինգ» ընկերության նախագահ, «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիյի շնորհավորանքը «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հիմնադրման 70-ամյակի առթիվ 6

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի շնորհավորանքը «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ 70-ամյակի առթիվ 8

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Վարդան Ջհանյան. «Առանց զարգացած տնտեսության մենք չենք կարող ունենալ հզոր բանակ, հզոր պետություն» 9

Արթուր Նիկողոսյան. «Չանգեզուրի պղնձամոլիբդենային իսկապես Հայաստանի տնտեսության գոհարն է» 12

Արմեն Ստեփանյան. «Ուզում ենք՝ մեր ծրագրերը լինեն ոչ միայն բարեգործական՝ ֆինանսական աջակցության տեսքով, այլ դառնան կայուն զարգացման հիմք» 14

Արման Վարդանյան. «Մինչև 2041 թ. հանքաքարի արդյունահանումը կատարվելու է այս պահին գոյություն ունեցող բացահանքում՝ առանց այն ընդլայնելու» 17

ԶՊՄԿ և ՀԱՄԱՅՆՔՆԵՐ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ

Հուշագիր՝ «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության և Սյունիքի մարզպետարանի միջև 26

ԶՊՄԿ և ՀԱՄԱՅՆՔՆԵՐ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ

Չանգեզուրի պղնձամոլիբդենային ու Քաջարան քաղաքը երկվորյակներ են և միասին են անցել 70-ամյա ճանապարհը (հարցազրույց Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի հետ) 21

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Արայիկ Մարգարյան. «Մենք բաց ենք բոլոր լրատվամիջոցների համար և սիրով կաջակցենք ԶՊՄԿ-ի աշխատանքները լուսաբանողներին» 51

Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի համայնքային ներդրումները 2022-ին կազմել են մոտ 3.5 մլրդ դրամ 26

Սիսիանում վերագործարկվեց քարի արդյունահանման և մշակման ընկերությունը 59

«Սյունիք» օդանավակայանի և 2023 թ. ապրիլի 26-ին իրականացված Երևան-Կապան չվերթի մասին 93

ԲԱՑԱՀԱՆՔ

Բացահանքը՝ Չանգեզուրի պղնձամոլիբդենայինի առանցքային օղակ 27

1830 հորիզոնականում. հայացք ներսից 31

ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆԻ ԲԱԲԱԽՈՂ ՍԻՐՏԸ

Հարստացուցիչ ֆաբրիկան, որ հանքարդյունաբերական հսկայի բաբախող սիրտն է 33

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Անալիտիկ կամ քիմիական լաբորատորիան, որ Չանգեզուրի պղնձամոլիբդենայինի հայելին է 36



ԶՊՄԿ և ՀԱՄԱՅՆՔՆԵՐ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ

Չանգեզուրի պղնձամոլիբդենայինի՝ Կապան համայնքի համար ունեցած կարևորության մասին (հարցազրույց Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի հետ) 24

Համարի բովանդակությունը



ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Մաքսիմ Հակոբյան. նա տնտեսության հմուտ կազմակերպիչ չէր միայն, այլ մեր ազգային ու հոգևոր-մշակութային արժեքների նվիրյալ 77

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձանգեզուրի կոմբինատն առերեսվում է բնապահպանական ռիսկերի հետ և դրանք կառավարելուն, մեղմելուն միտված հիմնավոր քայլեր ձեռնարկում 40

Տնկարանային տնտեսությունը 44

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվտանգության ապահովում. իմաստավորված գործելակերպ 46

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Արայիկ Մարգարյան. «Մենք բաց ենք բոլոր լրատվամիջոցների համար և սիրով կաջակցենք ՁՊՄԿ-ի աշխատանքները լուսաբանողներին» 51

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հանքագործների շահերի և իրավունքների պաշտպանության դիրքերում. ահա արհմիութեանական կազմակերպության տեղն ու դերը 54

ՀԱՆՔԱԳՈՐԾԻ ՏՈՆԸ՝ ԱՎԱՆԴՈՒՅԹ

Հանքագործի և մետալուրգի օրը վերածվեց տոնակատարության 57

ՏՐԱՆՍՊՈՐՏ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՕՂԱԿԸ

Ալեքսանդր Ալավերդյան. «Արտադրության ծավալների մեծացմանը զուգահեռ ավելացվում են նաև տրանսպորտի դեպարտամենտի հնարավորությունները» 61

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերության ամենագլխավոր և ամենաթանկ կապիտալը մարդկային ռեսուրսն է (հարցազրույց «ՁՊՄԿ» ՓԲԸ վարչական դեպարտամենտի մարդկային ռեսուրսների բաժնի ղեկավար Լիզա Իսրայելյանի հետ) 63

ՆԱԽԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ

Ցուցահանդես՝ նվիրված «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության 70-ամյակին 65

Ձանգեզուրի պղնձամոլիբդենայինի «Գտնված երազ»-ն ու «Մանկության մոլորակ»-ը 66

Քաջարանյան մշակույթը՝ կոմբինատի տեսադաշտում 68

Ձանգեզուրի կոմբինատը մշտապես մարզիկների կողքին է 70

«Սյունիք» ֆուտբոլային ակումբ. նոր հնարավորություններ և հեռանկարներ 72

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Նրանք են գլխավորել կոմբինատի 70-ամյա երթը 74

Ձանգեզուրի պղնձամոլիբդենայինի առաջին երեք տնօրենները 75

Ռոման Նավասարդյան. «Իմ կարիերայի գլխավոր «մեղավորները» եղել են կոմբինատի մարդիկ...» 80

Ողջ կյանքը՝ ինքնամոռաց աշխատանքի լավագույն օրինակ (ակնարկ Ֆրունզե Պետրոսյանի մասին) 82

Երազանք, որոնում, վաստակ (ակնարկ Համլետ Ոսկանյանի մասին) 85

Քաջարանի հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքների քրոնիկոն 87

Նշանավոր մարդկանց այցը Քաջարան 92

ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈԱԼԲՈՄԸ

Տեխնիկական վերազինման ճանապարհով 94

Ձանգեզուրի պղնձամոլիբդենայինը 2022-ին կրկնապատկել է հարկերը 95

Քաջարանի հանքավայրը 98

Քաջարան. հանքագործների բնօրրանը 99

ՀԱՄԱՐԻ ՇԱՊԻԿԸ

Առաջին էջ՝ Քաջարան քաղաքի համայնապատկեր

Վերջին էջ՝ Եղիշե Չարենց, Ես իմ անուշ Հայաստանի, (Կապուտջուղ լեռան ֆոնի վրա)

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը շնորհակալություն է հայտնում «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ Արայիկ Մարգարյանին, բաժնի պետի տեղակալ Լիլիթ Իսրայելյանին, լուսանկարիչներ Նվեր Ձելյային, Հայկ Թադևոսյանին և, իհարկե, Սոս Դավթյանին՝ համարի պատրաստման ընթացքում ցուցաբերած աջակցության և բարձրորակ լուսանկարներ տրամադրելու համար:

Սյունյաց երկիր

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի3:

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Գրանցման վկայական՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 12,5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000: Ստորագրված է տպագրության 15.05.2023թ.:

ՔԱՋԱՐԱՆԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԸ

ՔԱՋԱՐԱՆ.
ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ԲՆՕՐԱՆԸ

Քաջարան քաղաքի հիմնը

ԽՈՍՔԸ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝
ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Լեռների լամջին թիկնած քարե հրաշք
Ուսերիդ ամպերի ճերմակ շղարշ
Քեզ են վստահված հայոց գանձերն անգին,
Որ պահես ու տաս սերունդներին:

Ողջ աշխարհն է հիմա քեզ ճանաչում,
Ջանգերիդ ղողանջի հետ անունդ է ամենուր հնչում,
Դու հնուց ի վեր հայտնի միշտ քաջերի ավան,
Որ դարձել ես չքնաղ մի Քաջարան:

Քեզ համար թող արևը միշտ ժպտա անմար,
Երկնքում աստղերդ թող կապեն կամար,
Քո գրկում ապրած օրերը թող դարեր դառնան,
Որ ապրես հավերժ, հպարտ իմ Քաջարան:

Մեր համառ աշխատանքով մենք կհաղթենք չարին,
Եվ թող Զորք ու Գանձասար՝այս անունները հին,
Մեծ փառքի ճամփա հարթեն հերոս քո որդիներին:

Քեզ համար թող արևը միշտ ժպտա անմար,
Երկնքում աստղերդ թող կապեն կամար,
Քո գրկում ապրած օրերը թող դարեր դառնան,
Որ ապրես հավերժ, հպարտ իմ Քաջարան:

Հայոց Արտավազդ թագավորն արքունի գանձերը թշնամիներից պաշտպանելու համար թաքցնում է մի լեռան մեջ և այն կոչում Գանձասար:
Գանձասարի բանալին արքան հանձնում է լեռների տիրակալ Արջին, որն այն պետք է տար միայն նրանց, ովքեր այդ հարստությունը կօգտագործեն ի նպաստ հայ ժողովրդի: Արջն իրեն պահ տված բանալին վստահում է քաջարանցիներին՝ պատգամելով լեռների գանձերն օգտագործել հայոց աշխարհի շենացման համար:
Գանձասարի առասպելական Արջի արձանը գտնվում է Կապան - Քաջարան մայրուղու ձախ կողմում, Ողջի գետի աջ ափին: Կառուցվել է 1966 թվականին: Քանդակագործ՝ Մարատ Նուրիջանյան:

ԿՈՒԼԱՅՈՎ ՏՂԱՆ
Գտնվում է Քաջարան քաղաքում:
Քանդակագործ՝ Դավիթ Բեջանյան

Ես իմ անուշ Հայաստանի

Եղիշե Չարենց

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում։

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև,
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում։

Ո՛ւր էլ լինեմ - չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՞մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՞ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան - յա՛րն եմ սիրում։

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր՝ Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում։



Կապուտջուղ, բարձրությունը՝ 3905մ

Լուսանկարը՝ Աղասի Մարտիրոսյանի